

Ա. Հայրոր

Ն.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆ

Դէմքեր եւ  
Յուշեր



**ՀՄԸՄ-ԱԿԱՆ**

**ԴԵՄՔԵՐ**

**ԵՒ**

**ՅՈՒՇԵՐ**

# Հ.Մ.Ը.Մ.

ՍՈՒՐԻՒՅՑ ԵՐԶ. ՎԱՐՉՈՒԴԻՒՄ



2019

## *ՅԱՌԱՋԱԲԱՆ*

Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած ոգեկոչական բազում միջոցառումներու շարքին, Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ հրատարակուած ներկայ հատորը կը պարփակէ հոյլ մը համեստ, խոնարհ, բայց նուիրեալ եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.-ական երէց եղբայրներու մենագրութիւնները, ինքնակենսագրութիւնները, յուշագրութիւնները, որոնք դաստիարակիչ եւ ուսանելի դասեր, թանկագին յորդորներ ու պատգամներ կը բովանդակեն, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի տոհմիկ, ջերմ, բարոյակերտ եւ մարդակերտ հայատրոփ երդիքին տակ անցեալին ապրուած երանելի օրերու անկրկնելի քաղցրութիւնն ու անմոռանալի յուշերը կը հաղորդեն համակիր թէ ընթերցող հանրութեան, ու յատկապէս՝ այդ անգուգական վեհապանծ կազմակերպութեան շարքերուն վերջերս միացած նորընծայ պատանի եւ երիտասարդ միութենականներուն, եւ այդ՝ միշտ առաջնորդուելով «Բարձրացիր, Բարձրացուր» վսեմ ու հիասքանչ նշանաբանով, Հ.Մ.Ը.Մ.-ին բնորոշ ու առանձնայատուկ՝ վեհանձն, հայրենասնուէր ու ազգաշէն ոգիով:

Ինչ որ հրամցուած է սոյն գրքի էջերով պարզապէս առինքնող պատատիկներ, հոգեհարազատ եւ յանկուցիչ դրուագներ կը կազմեն Սուրբիոյ շրջանին մէջ Հ.Մ.Ը.Մ.-ի ծաւալած բազմաճիւղ, բազմաբեղուն եւ բազմաբովան-

դակ գործունեութենէն՝ մարզական, սկաուտական եւ քարոյադաստիարակչական բնագաւառներով:

Արդարեւ, երկկի Հ.Մ.Ը.Մ.-ական մշակները իրենց եղունգներով հերկեցին եւ հարթեցին խոպան դաշտերը, մաքրեցին ամէնուրեք յայտնուած տատասկներն ու խութերը, ապա լիաբուռն ցորեն ցանեցին բացուած ակօսներուն մէջ՝ վաղուան ատոք հասկեր քաղելու արդար ակնկալութեամբ:

Այդ դաժան ժամանակներուն, հայուն վիճակուած էր դժխեմ ճակատագիր, բայց, 1920-ական թուականներուն վերապրած սերունդը անընկճելի կամքով, անսասան հաւատքով, անսպառ կորովով, մշտանորոգ յոյսով եւ ապագայի նկատմամբ սնուցած իր վարդագոյն երազներով կարողացաւ գործել հայավայել ընդունակութեամբ, բարձր գիտակցութեամբ եւ արժանատւութեամբ: Իսկ այսօր, անվարանօրէն կարելի է ճակատաբաց յայտարարել՝ թէ այդ սերունդը յաջողեցաւ իր տեսլականներն ու առաջադրանքները լաւագոյնս եւ լիարժէքօրէն կենսագործել:

Այս սահմանափակ էջերով, Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերուն զինուորագրուած նուիրեալներու հսկայական բանակին բոլոր անդամները, բնականաբար, անհնար է ներկայացնել եւ անոնց ծառայութիւնն ու նուաճումները լոյսի բերել: Առ այդ, Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան հրաւերով ներկայ աշխատասիրութիւնը պատրաստելու կոչուած յոբելենական յանձնախումբը յարմար դատեց՝ սոյն հատորով լոյս ընծայել միայն մեզմէ առ յաւէտ բաժնուած բազմերախտ եւ արժանատւոր

Հ.Մ.Ը.Մ.-ական դեմքերու աղերսուած գրութիւններ (նոյնինքն այդ դեմքերու գրիչին պատկանող կամ անոնց մասին այլոց կողմէ գրառուած): Միաժամանակ խոստանալով՝ նոյնքան արժանաւոր եւ նոյնքան երախտաւոր ու առայսօր իրենց ասդենական կեանքը շարունակող վաստակաշատ թէ շքանշանակիր Հ.Մ.Ը.Մ.-ականներու մասին եւս մօտիկ յառաջիկային նոր հատորով մը անպայման հանդէս գալ ու հանգամանօրէն անդրադառնալ անոնց դրուատարժան վաստակին ու շնորհակալ գործունէութեան:

Այս հատորին մէջ լայնօրէն օգտագործած ենք «Մարզիկ» ամսաթերթի, «Գանձասար» շաբաթաթերթի մէջ տարբեր ժամանակներու ընթացքին լոյս տեսած յօդուածներն ու ուսումնասիրութիւնները, նոյնպէս օգտագործած ենք հանգուցեալ Եղբ. Սուրէն Նազարեանի շատ հարուստ եւ հետաքրքրական անհատական արխիւները:

Հուսկ, նորահրատակ ներկայ գրքին էջերը կը ներփակեն Հ.Մ.Ը.Մ.-ի առօրեայէն քաղուած յիշարժան, ուշագրաւ դէպքերու եւ իրադարձութիւններու հետաքրքրական ու հոգեգրաւ պատառիկներ, որոնք հաւանաբար կազմեն գեթ փոքր մասնիկ մը Հ.Մ.Ը.Մ.-ի մէկդարեայ յաղթապանձ երթի մասին ոչ հեռաւոր ապագային գրուելիք ամբողջական պատմութեան ստաղծին: Պատմութիւն՝ որ անտարակոյս կոթողային ու գերազանցապէս գնահատելի աշխատանք մը պիտի հանդիսանայ եւ ներշնչման աղբիւր՝ ներկայ եւ գալիք Հ.Մ.Ը.Մ.-ական սերունդներուն համար:

## ԱՆՄԱՀՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան նուիրական տարեդարձին առիթով, երբ նորէն յուշերուս յանձնուած՝ կը փորձեմ վերականգնել այդ փառաւոր անցեալին կարգ մը գեղեցիկ երեսները, դարձեալ կը վերապրիմ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ական կեանքը:

Թող յարգելի ընթերցողը ներողամիտ գտնուի, եթէ իմ ապրումներուս խանդավառութիւնն ու ոգեւորութիւնը յաճախ կ'առնեմ Հալէպի հայ կեանքէն: Բայց կարծեմ, որ իմ ոգեւորութիւնս այնքան ալ առանց հիմքի եւ առանց դրական պատճառի չէ: Ինծի համար այդ կեանքը բացառիկ իմաստ, բացառիկ արժէք ունի: Հալէպ քաղաքը եղաւ ջարդէն վերընձիւղուող հայութեան օրրանը: Եղաւ հանգիստի այն կայանը, ուրկէ անցան ջարդը ապրած բազմահազար հայ բեկորներ: Հո՛ն, մարդու սրտին խօսող, հոգին յուզող շատ բաներ կան: Եւ ես համոզուած եմ, որ բոլոր անոնք, որոնք 1940-էն մինչեւ 1960 թուականները Հալէպ ապրած, հոն գտնուած կամ Հ.Մ.Ը.Մ.-ի Նաւասարդեան խաղերուն ներկայ եղած ու վայելած են այդ հոգեգրաւ մթնոլորտը, անպայմա՛ն կը հասկնան այս հոգեվիճակիս տուն տուող շարժառիթը:

Ըսեմ անմիջապէս, որ այս առիթով Հալէպի մասին պիտի չխօսիմ: Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի կեանքին մասին գրելը նաեւ իմ կարողութենէս վեր աշխատանք մըն է: Մանաւա՛նդ շատ լայն ծանօթութեան եւ շատ խոր ուսումնասիրութեան կը կարօտի: Որքա՛ն օգտակար գործ տեսնուած պիտի ըլլար, եթէ ազնիւ հայորդի մը

ձեռնարկեր այդ աշխատանքին: Իմ փորձելիքս պարզապես այդ անոյշ կեանքէն, այդ փառաւոր անցեալէն փրցուած պատառիկներու՝ ինծի համար մասունք դարձած յուշերու վերապրումը պիտի ըլլայ: Ինծի համար իրապէս մեծ ուրախութիւն, հոգեկան բաւարարութիւն է անդրադառնալ այդ գեղեցիկ անցեալին բաբախուն էջերուն եւ անոնց հուրով վարակել նաեւ մեր նորահաս երիտասարդութիւնը:

Ապերախտութիւն եւ մեղանցում պիտի ըլլար անդրադառնալ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 100-ամեայ երթին ու գործունէութեան եւ չխօսիլ այն երկու անմոռանալի դէմքերուն մասին, որոնք իրենց զօրաւոր դրոշմը դրին սուրբահայ, բայց ի մասնաւորի հալէպահայ Հ.Մ.Ը.Մ.-ական կեանքին վրայ:

Երկու հայորդիներ, երկուքն ալ հայութեան արքայի, ջարդի սերունդէն: Երկուքն ալ հայութեան տառապանքը տեսած, հայութեան կոտորածը ապրած տղաք:

Հալէպ քաղաքը, որ իր պատմութեամբ ծանօթ է իբրեւ լրջութեան եւ մտքի քաղաք, հայութեան համար եղաւ գաղափարական մարդու կերտումի եւ թրծումի քաղաք: Հալէպի այդ հնամեայ բերդին մօտ ներկայ էր քարէն աւելի ծանրակշիռ ու աւելի խոհուն Հրաշք: Մտքի ու ազնուութեան այդ քաղաքին մէջ թէեւ կար սրտի տէր աննման Գապաբեանը, բայց առանց Լուտերի ու առանց Նշանի՝ Հալէպի հայկական դիմագիծը կը մնայ թերի ու անկատար:

Իսկ այսօր, երբ դարձեալ հպարտօրէն կը տօնենք Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 100-րդ տարեդարձը, արդար



է եւ տեղին, որ առաջին հերթին անդրադառնանք վաստակին այս երկու եղբայրներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.-ի արժանի դրօշակիրները եղան:

Անոնք պզտիկ տարիքէն եկած էին Հ.Մ.Ը.Մ.-ի օճախը: Աշխատանքի ծարաւ էր իրենց հոգին: Հետաքրքրութիւն մը, պահանջ մը կար իրենց ներաշխարհին մէջ: Բայց գաղափարին հուրը շատ շուտ կը բռնկեցնէր իրենց հոգին, կը լուսաւորէր իրենց էութիւնը եւ թռիչք կու տար իրենց երեւակայութեան:

Ու անոնք, հազիւ երիտասարդութեան սանդղամատին ոտք դրած, արդէն ձեռք կառնէին պատասխանատուութեան խոշոր բաժին: Ե՞րբ կազմեցին կեանքի իրենց փիլիսոփայութիւնը: Ե՞րբ ստացան գաղափարի, գոհողութեան այդ կրակը:

Ե՞րբ ամբարեցին հոգեկան այդքան գիտակցութիւն, մտքի այդքան պաշար, որ կրցան հազարները հմայել իրենց անձով, իրենց շունչով: Անոնք եղան խոնարհ ու բոլորանուէր առաքեալները իրենց գաղափարին, հայութեան եւ իրենց հաւատքին, իրենց յարատեւ աշխատանքին շնորհիւ՝ հայ պատանիներու հոգիներուն մէջ յաջողեցան ներմուծել հուրը Հ.Մ.Ը.Մ.-ի գաղափարին, սէրը հայութեան, գիտակցութիւնը եւ ազնուութիւնը նուիրումին:

Թող տարօրինակ չթուի եթէ ըսենք, թէ այս տղաքը որոշ ուսում ալ չունէին: Նշանը նախակրթարանի մը սեղաններէն իջած էր գործի շուկայ: Իսկ Լուսերը՝ հազիւ երկրորդականի մը երեսը տեսած: Բայց հայութեան

նուիրուելու արտակարգ սեր մը, արտակարգ խմորում մը կար երկուքին ալ հոգիին մէջ:

Կարծես հայ մարդուն կրած տառապանքը, քաշած ցաւը եղած էր խթան, եռանդ եւ գործունէութեան ոգի իրենց համար: Եւ անոնք բացառիկ գիտակցութեամբ մը, բացառիկ համոզումով լծուած էին միութենական աշխատանքին:

Այս երկու հայորդիները իրենց անձը մոռցած, գիշերը ցերեկին խառնելով՝ ծրագրեցին, տքնեցան եւ իրենց յարատեւ կամքին, իրենց յարատեւ աշխատանքին շնորհիւ՝ հայ համեստ խաւերէն ապագայ մարդը, ապագայ հայր կերտեցին: Իրենք հիւժեցան, սպառեցան, բայց շատ բան տուին հալէպահայութեան: Եւ այդ ճամբով՝ շատ բան տուին հայութեան:

Նիւթականացած այս դարուն մէջ. անոնք հոգեկան գեղեցկութիւն փնտռեցին եւ, ինչպէս անխոնջ մշակ, հոգիներու մէջ հոգեկան ազնուութեան սերմեր ցանեցին: Անցեալէն մինչեւ այսօր գաղթաշխարհի ամբողջ տարածքին, հայութեան ծառայող. հայութիւնը առաջնորդող շատ-շատ ղեկավարներու դարբնումը, պատրաստութիւնը կը պարտինք այս երկու նուիրեալներու թափած քրտինքին ու աշխատանքին:

Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի սկաուտութիւնը ունեցաւ շատ խմբապետներ, որոնք տարիներով սկաուտութեան մականը իրենց ձեռքին՝ շարունակ տողանցքներ առաջնորդեցին: Նշաններով ու աստղերով ծանրաբեռնուած շատ մը վարիչներ խելայեղ ծափերու արժանացան: Ուրիշներ պատուանշաններ կախեցին ու փայլեցան

ամպիոններու վրայ, բայց Նշան Թիւսիւզեանը մնաց Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտութեան ամէնէն տիրական, ամէնէն սիրուած ու ամէնէն երդուեալ սկաուտը: Հ.Մ.Ը.Մ.-ի ֆութպոլի խումբը տարիներ շարունակ բաժակներ շահեցաւ, երկար տարիներ Հալեպի ախոյեանութեան տիրացաւ: Շատ մը աթլետներ խոյանք առին եւ դափնիներ իլեցին, բայց Լուտեր Մասպանճեանը մնաց այդ բոլորին ներշնչման աղբիւրը, այդ բոլորին անխոնջ ղեկավարը: Հ.Մ.Ը.Մ.-ի Հալեպի մասնաճիւղը կազմակերպեց բազմաթիւ բանակումներ, այլազան խաղեր: Տարիներ շարունակ մեծ յաջողութեամբ պսակեց Նաւասարդեան տօները եւ հպարտանք տուաւ, պատիւ բերաւ հայութեան: Բայց եթէ պահ մը կենանք այդ բոլորին քով, եթէ պահ մը թղթատենք Հ.Մ.Ը.Մ.-ի Հալեպի պատմութիւնը, պիտի տեսնենք, որ այդ բոլորին մոլիչ ուժը, այդ բոլորին եռանդն ու կորովը, այդ բոլորին միտքն ու ոգին առաւելաբար կերթար կա՛մ Նշանին, կամ ալ Լուտերին:

Թէեւ անոնք երկու մարմին էին՝ բոլորովին տարբեր խառնուածքով ու բոլորովին տարբեր բնատրութեամբ, բայց աշխատանքի ճամբուն վրայ մէկ էին՝ զիրար ամբողջացնող միաւորներ: Առանձինն առած՝ անոնցմէ իւրաքանչիւրը տարբեր նկարագրով տէրն ու տիրականն էր իր յանձն առած գործին, իրեն յանձնուած պարտականութեան, բայց երկու տարբեր ուղիներով նոյն տեսլականին առաջնորդող քուրմեր էին անոնք: Առանձինն առած՝ ամէն մէկը վարպետն էր իր արուեստին -թող բառը ծանր չգայ- դարբինն էր իր

դարբնացին, բայց խորքին մէջ անոնք համադրողն ու կառուցողն էին գաղափարի բազինին:

Չեմ ուզեր թուել, թէ անոնք ի՞նչ տուին Հ.Մ.Ը.Մ.-ին: Կը խուսափիմ այդ թուումը ընելէ. անոնց անունը արդէն խօսուն է եւ շատ բան կը խորհրդանշէ: Ի՞նչ ըսեմ, երբ անոնց ամբողջ կեանքը եղաւ միութենական ապրում, Հ.Մ.Ը.Մ.-ական սէր, ուժեղ հաւատք եւ նոյնքան զօրաւոր կիրք:

Անոնք մարդ էին, բայց բոլորովին տարբեր մարդիկ, տարբեր մշակներ, ինչպէս որ Հալէպի միութենական կեանքը տարբեր էր՝ իր կարգապահական ու բարոյական ըմբռնումներով: Անոնք սուրբեր կամ ճգնաւորներ չէին, բայց իտէալը, խօսքը կը մարմնաւորէին իրենց սէրով ու հոգիով, իրենց ապրումին օրինակով: Թէեւ մարդ էին ու իրենք ալ սխալական:

Նշանը պարտականութեան վրայ կարգապահ, օրէնքի մարդ, աններող, անշեղ, խստապահանջ: Նշանը՝ համակ կիրք ու ջիղ, ամբողջութեամբ վազք ու գործ: Նշանը՝ մարդամօտ, սիրտ ու սէր, անկեղծ, մաքուր՝ ինչպէս բիրեղ:

Լուտերը՝ համեմատաբար աւելի խոհուն, վարպետ թիավար, որուն կարելի էր վստահիլ: Լուտերը՝ լաւ խմբավար, զօրաւոր կամք, որ կրնար գաղտնիք մը պահել մինչեւ մահ:

Ու անոնք, իրենց մանկութենէն «մինչեւ շունչ վերջին» մնացին հաւատարիմ իրենց ուխտին, մնացին աւանդապահը իրենց տեսլականին ու գացին այս աշխարհէն, երբ դեռ պարտականութեան վրայ էին:

Անոնք տուին իրենց լաւագոյնը: Հ.Մ.Ը.Մ.-ը իր քարձրագոյն նշանով վարձատրեց զիրենք: Հազա ր պատիւ իրենց վաստակին, իրենց ոգիին:

Ու հիմա, իր ծնունդէն տասնամեակներ ետք, Հ.Մ.Ը.Մ.-ը կրնայ հպարտօրէն ըսել, թէ հակառակ կեանքի աննպաստ պայմաններուն, հակառակ հայրենագուրկ իր վիճակին, ինք կրցաւ լաւապէս ծառայել իր նպատակին, հայ ժողովուրդին:

Ինք կրցաւ Նշան, Լուտեր եւ Յովհաննէս Շահինեան տալ հայ ժողովուրդին:

Անոնք թէւ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադիրները չէին, բայց հայ ժողովուրդին իրենց տուածով ու կերտածով՝ արժանի են Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադիրներու շարքին դասուելու: Իրենց անունը հազա՛ր ապրի:

Համեմատաբար կարճ ժամանակամիջոցի մը մէջ անօրինակ յաջողութիւն ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ը: Ոչ միայն սերունդ դաստիարակեց ու հայրենիքի սէր ներշնչեց, ոչ միայն «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ»ը տիրական դարձուց, այլեւ՝ ազգին անդամներուն մէջ եղբայրական կապ հաստատեց, կը բաւէ որ մէկը ըսէ թէ ժամանակին Հ.Մ.Ը.Մ.-ական եղած է, անոր հանդէպ սէր ու վստահութիւն կը տածեն իր հեռաւոր ու մօտաւոր ընկերները: Ու այս բանը փոքր յաղթանակ մը չէ:

*ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ*

*ՄԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ*

*ԻՆՔՆԱ-*

*ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ*

*ԵՒ*

*ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ*

## ԵՂԲ ԱՆԴՐԱՆԻԿ ԱԹԹԱՐԵԱՆԻ

Օ նաժ եմ 1910-ին՝ Քիլիս (Թուրքիա), Հալէպէն 65 քլմ. հիւսիս:  
Հայրս՝ Գրիգոր, մայրս՝ Մարիամ մահացած են բնական մահով:

Հազիւ հինգ տարեկան էի՝ երբ տեսայ 20-րդ դարու մեծագոյն սպանողը՝ կազմակերպուած թուրք ջարդարարներու կողմէ՝ հայ ազգին դէմ: Մենք, աւելի՛ բախտաւոր եղանք բաղդատմամբ միւս հայրենակիցներուն: Մենք մեր սեփական ծախսով, գաղտնի, ուղղակի Հալէպ եկանք, մինչդեռ միւս քիլիսցիները աքսորուեցան մինչէւ Մասն (Յորդանան), ուր մեծ մասը ջարդէն կամ անօթութենէն մեռան: Մենք ալ, Հալէպի մէջ, այնքան հանգիստ չէինք: Մեր ընտանիքը բազմանդամ էր՝ քսանմէկ հոգիէ բաղկացած: Թուրք ոստիկաններու եւ գործակալներու ուշադրութիւնը վրիպեցնելու համար հինգ-վեց ամիսը անգամ մը, բնակավայր, թաղ կը փոխէինք՝ մեր հետքը կորսնցնելու նպատակով: Դէպք մը, մինչէւ հիմա, անջնջելի է մտքիս մէջ: Նայեալ թաղը նոր եկեր էինք: Մեր բնակած տունին կից՝ անաւարտ շէնքին գետնայարկը հայ գաղթական քանի մը ընտանիք ապաստաներ էին: Այս վերջիններուն ինձի տարեկից տղոց հետ կը խաղային իրենց դրան առջեւ: Յանկարձ ուրկէ՞ եկան՝ չտեսանք, միայն իմացանք, թէ թուրք ոստիկաններով պաշարուած ենք: Ես, անմիջապէս ամէն բան ձգելով վազեցի դէպի տուն: Հազի՛ւ տուն հասած եւ

քանի մը աստիճան բարձրացեր էի, ոստիկան մը ետեւէս հասաւ եւ արաբերէն ըսաւ.

- Հոն ֆի՞ մուհաճիբին (հոս գաղթականներ կա՞ն):

Իմ միակ գիտցած արաբերէն բառով պատասխանեցի «լա՛» (ո՛չ): Մինչ այդ, մեծ հայրս, որ լաւ արաբերէն գիտէր, մեր ձայնը լսելով դուրս եկաւ եւ սկսաւ ոստիկանին հետ արաբերէն խօսիլ եւ համոզեց զայն, թէ մենք հալէպցի էինք: Ահաւասիկ իմ գիտցած մէկ արաբերէն բառով մեր ընտանիքը ազատեցի: Իսկ միւս՝ գետնայարկ բնակող հայերը, միեւնոյն օրը աքսորուեցան, թէ ո՞ր չեմ գիտեր, անպայման Տէր Զօրի անապատները: Եղեռնի մասին շատ բաներ կան գրելիք, բայց իմ գրիչս անգոր է զանոնք նկարագրելու, կը ձգեմ ուրիշ աւելի՛ բեղուն գրիչներու:

1918-ին, թուրքը պարտուեցաւ եւ զինադադար հռչակուեցաւ: Անգլիան գրաւեց Սուրիան եւ Կիլիկիան, սակայն կարճ ժամանակ ետք, անգլիական հոգատարութիւնը փոխանցուեցաւ Ֆրանսայի: Մենք ալ, ուրիշներու պէս, վերադարձանք մեր պապենական օճախը՝ Քիլիս: Հազիւ երկու տարի մնացինք մեր ծննդավայրը: Ֆրանսացիները պարպեցին Կիլիկիան: Հայութիւնը, երկրորդ անգամ ըլլալով, գաղթականի ցուպը ձեռքը առաւ՝ թափուր ձգելով պապենական օճախը: 1922-ին եկանք՝ Հալէպ հաստատուեցանք: Հայկազեանի երկրորդ դասարանը ընդունուեցայ: 1925-1926 տարեշրջանին շրջանաւարտ եղայ: Ֆրանսական «Միսիոն Լայիք» վարժարանին վաճառականական ճիւղը ւարտեցի: Այս դպրոցը, այդ ժամանակ, Պապ Էլ Ներսայ



թաղին մուտքին էր: Փոխադրական միջոցի չգոյութեան պատճառով, մինչև այդտեղ քալելով կերթայինք:

1934-ին, Մաքսատան պաշտօնեայ եղայ եւ 26 տարի ետք, այսինքն՝ 1960-ին, հանգստեան կոչուեցայ: 25 Դեկտեմբեր 1938-ին, ամուսնացայ օր. Արաքսի Պասաճեանի հետ եւ հինգ զաւակներու հայր եղայ, չորսը՝ մանչ եւ մէկը ամէնէն կրտսերը՝ աղջիկ, հետեւեալ անուններով եւ տարիքի կարգով՝ Գրիգոր, Պերճ, Վահէ, Հրանդ եւ Հուրի:

Հպարտութեամբ պէտք է յիշենք, որ ֆութպոլը հայերը բերին Հալէպ: 1922-ին, երբ Հալէպ հաստատուեցանք, հետեւեալ մարզական միութիւնները կային.- Համազասպ, Արարատ, Ուսումնասիրաց, Բարեգործականի որբանոցի եւ Արծիւ խումբերը: Հոս, ի պատիւ Այնթապցիներուն, ըսեմ, որ վերոյիշեալ խումբերը, բացի Բարեգործականի կազմէն, բոլորն ալ այնթապցի էին: Այս խումբերէն լաւագոյնը՝ Արծիւն էր, խմբապետութեամբ՝ Ֆերտինանտ Սահակեանի: Հալէպի լաւագոյն խաղցողները այս խումբին մաս կը կազմէին: Յաճախ, ֆրանսական բանակի ֆութպոլի խումբերուն հետ կը մրցէին եւ ընդհանրապէս յաղթականը իրենք կըլլային: Դժբախտաբար, այս խումբին կեանքը կարճ եղաւ: Խաղացողներուն մեծամասնութիւնը քաղաքը լքեց եւ հեռացաւ: Յիշենք թէ, վերը յիշուած խումբերը, հագուադէպօրէն մրցում կը կազմակերպէին, անոնք՝ իրենք իրենց փորձ ընելով կը գոհանային: Մենք ալ, Հայկազեան վաժարանի երկրորդ եւ երրորդ դասարանի սաները, իրարու քով գալով, խմբապետութեամբ՝ Վաղինակ Ճինապեանի, Կայծակ անունով խումբ մը

կազմեցինք: Շաբաթական մեկ պարդուտ վճարելով՝ դրամ հաւաքեցինք, գնդակ մը գնեցինք եւ եղանք խումբ եւ սկսանք խաղալ: Յետագային, շապիկ ալ ունեցանք: Սկսանք մրցումներ կազմակերպել մեզի տարեկից եւ մեզմէ աւելի հասակաւոր խումբերու դէմ եւ միշտ կը յաղթէինք:

Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան ճշգրիտ թուականը չեմ յիշեր: Որքան կը յիշեմ՝ պէտք է ըլլայ 1925-ի աշնան, որովհետեւ հիմնադրութենէն քիչ ետք, գրեթէ քանի մը շաբաթ ետք Կայծակ խումբի բոլոր խաղացողներս միացանք Հ.Մ.Ը.Մ.-ին եւ երկրորդ խումբ համարուեցանք, բացի երկու խաղցողներէ՝ Անդրանիկ Գաբլանեան (այժմ՝ մահացած) եւ Վաղինակ Ճինապեան, որոնք տարիքով աւելի մեծ ըլլալով, առաջին խումբ անցան:

Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան պատիւը եղբ. Լուտերին կ'իյնայ: Ինքը՝ Համազասպ Մարգական Միութեան ատենապետն էր եւ այս խումբը եղածին պէս Հ.Մ.Ը.Մ. եղաւ: Եղբ. Լուտերի հետ, իբր հիմնադիր, կը յիշեմ մարզիչ Լեւոն Աբգարեանը, Միհրան Կարապետեանը, եւ Սահակ Խաչատուրեանը, որ Հարաւային Ամերիկա գաղթեց: Ուրիշ անուններ չեմ յիշեր, ո՛չ ալ ասոնցմէ զատ ուրիշ վարչականներ, որովհետեւ այդ թուականէն ասդին 58 տարիներ անցած են:

Հ.Մ.Ը.Մ.-ը երբ հիմնուեցաւ՝ ակումբ չունէինք: Երկու անգամ անդամական ընդհանուր ժողով ըրինք եկեղեցույ կից՝ մանկապարտեզի սրահին մէջ: Մեր առաջին

ակումբը եղաւ Հոգետան մէջ պզտիկ սենեակ մը, որ տարիներով մեզի ծառայեց իբր ակումբ: Երբ քաղաքէն հեռացայ դեռ ակումբ էր:

Ամենէն էական բանը, որ կը պակսէր մեզի, այդ ալ խաղավայրն էր: Վերջապէս, Սիւլէյմանիէ շրջանին մէջ լքուած դաշտ մը գտանք (ներկայ Կարաժ Մուպայյէտին տեղը) գառիվայր, քարքարուտ, ամէն տեսակով անյարմար՝ ֆութպոլի համար, բայց ստիպուած էինք մեր ունեցածով գոհանալ:

1927-ին, Զատկէն մէկ շաբաթ առաջ, լուր ունեցանք, թէ Պէյրութի Հ.Մ.Ո.Մ.-ի առաջին խումբը Հալէպ պիտի այցելէ եւ մրցի Հալէպի առաջին խումբին հետ: Հալէպի մարզական պատմութեան մէջ, առաջին անգամն է, որ կը պատահի, խումբ մը օտար քաղաքէ մը կու գայ ֆութպոլ խաղալու Հալէպ:

Առաջին խումբը անկազմակերպ վիճակի մէջ էր: Վարչութիւնը, շրջաբերականով Ա. եւ Բ. խումբերու խաղողները հրաւիրեց փորձի: Ահա այս փորձի ժամանակն էր, որ ես Ա. խումբի կազմին յետսապահ ընտրուեցայ, հակառակ անոր, որ այդ ժամանակ հասակս կարճ էր, նիհար եւ տարիքս 17-ն էր, այս ընտրութեան, ընկերներս բոլորն ալ զարմացան, նոյնպէս ես: Երբեք յոյս չունէի, որ ես՝ իբր յետսապահ պիտի խաղայի առաջին խումբին մէջ, մինչդեռ երկրորդ խումբին մէջ ես յառաջապահ էի:

Պէյրութցիները, Շաբաթ օրը կէսօրէն ետքը, շոգեկառքով Հալէպ պիտի հասնէին: Մենք ալ՝ հինգ-վեց հոգի, հաւաքուեցանք ու զիրենք դիմաւորելու գացինք:

Պրն. Լուտեր եւ միւս վարչականները մեզմէ առաջ արդէն կայարան հասեր էին: Դեռ կայարան չհասած, Ճեմիլիէ՝ մեծ կամուրջին վրան ենք, երբ Վոամշապուհ Դերձակեան (Ոսկեան)՝ առաջին խումբին բերդապահը, որ քաղաքէն բացակայ ըլլալով տեղեակ չէր, որ ես առաջին խումբին մէջ պիտի խաղայի եւ զիս ալ չէր ճանչնար, ըսաւ.

- «Տո՛, Անդրանիկ (խօսքը Անդրանիկ Գաբլանեանին ուղղելով) ես վաղը պիտի խաղամ, բայց չեմ գիտեր թէ որո՞նք են խաղընկերներս»:

Գաբլանեանը քանի մը խաղցողի անունը տալէն ետքը, զիս ալ ցոյց տուաւ եւ ըսաւ. «Այս երիտասարդն ալ յետսապահ պիտի խաղայ»:

Վոամշապուհ շատ լաւ եւ բարի ընկեր էր, սիրտը շատ մաքուր, բայց միեւնոյն ատեն ալ չափէն աւելի ջղային էր: Զիս վերէն վար չափեց, տեսաւ որ ես՝ նիհար, ճղճիմ մարմնով մէկն եմ, երբե՛ք առաջին խումբին մէջ խաղացողի տեսք չունիմ, անակնկալօրէն ջղայնացած եւ թրքերէն պոլսավարի հայհոյանք մըն ալ հասցէիս, ըսաւ. «Ես չօճուիս պիտի չխաղցնե՛մ եւ վաղը պիտի չխաղա՛մ»: Բայց, հետեւեալ օրը խաղաց եւ մէկ կողով պարտուեցանք եւ այդ պարտութեան մէջ ինքը մեծ բաժին ունէր: Ինչպէս վերը ըսի, ինքը որքան ջղային էր՝ նոյնքան ալ բարի սիրտ ունէր: Երկուշաբթի եկաւ եւ ներողամտութիւն խնդրեց իր Շաբաթ օրուան ընթացքին համար եւ զիս քաջալերելու համար ըսաւ, որ ես խաղցողներուն մէջ լաւագոյններէն էի:

Մրցումը տեղի ունեցավ Պաղտատ Կայարանի սեփականությունը եղող դաշտին վրայ, որ Հալեպի լաւագոյն դաշտն էր՝ գերեզմաններու ճամբուն քով, չորս կողմէ պաշտպանուած բնական պարիսպներու ձեւով՝ բարձրություններով: Առաջին անգամ ըլլալով մուտքը տունսակով եւ վճարովի եղաւ: Հալեպի Վարչութեան կողմէ բաժակ մը յատկացուած էր, որ յանձնուեցաւ Պէրյութի յաղթական խումբին, տոքթ. Ալթունեան- որդիի (քափթէյն) կողմէ: Ես ինքզինքս շատ հպարտ կը զգամ, որ մասնակցեր եմ առաջին Միջ-մասնաճիւղային մրցումին: Իմ հետ խաղացողներէն ո՛չ ոք Հալեպ է: Ոմանք մահացեր են, ուրիշներ՝ հազիւ քանի մը հոգի, քաղաքը ձգելով՝ հեռացեր են:

Վերջապէս, դաշտի խնդիրն ալ լուծուեցաւ: Հիմակուան թենիսի դաշտին շարունակությունն էր, գարի ցանելու համար հերկած էին: Մենք, բաւական աշխատանք թափեցինք դաշտը հարթ-տափարակ դարձնելու եւ խաղավայրի վերածելու համար: Դաշտին շուրջ փշաթելեր քաշեցինք, սոյն աշխատանքը, մենք՝ անդամներս, առանց ռեւէ մէկուն դրուշ մը վճարելու ըրինք: Դաշտին տարեկան վարձքը 16 օսմանեան ոսկի էր: Վարչութիւնը, այս ծախսերուն տակէն ելլելու համար, բոլոր հայ խումբերուն միջեւ ախոյեանական մրցում մը կազմակերպեց եւ բաժակ մը յատկացուց: Բոլոր խումբերը, սիրայօժար, մասնակցեցան առանց որեւէ նիւթական ակնկալութեան: Մասնակցող խումբերէն կը յիշեմ Արարատը, Նուպարեանը, Վասպուրականը եւ «Լիկա»ն: Մրցումները վեց ամիսէն աւելի տևեցին եւ նիւթապէս լաւ օգտուեցանք: Ֆինալիստ մենք եւ «Լիկա»ն

մնացինք, երկու զօրաւորագոյն խումբերը: Փակագիծի մէջ ըսեմ, թէ մենք իրաւարարի տագնապ ունէինք: Խաղի մը երկու անգամ ներկայ եղողին կամ երկու գնդակ զարնողին ձեռքը սուլիչը կու տայինք եւ զինքը դաշտ կը հրաւիրէինք՝ իբր իրաւարար: Լիկայի մրցումին՝ ճիշդ վերը ըսածիս պէս ըրինք: Տրանսսացի զինուոր մը բերինք եւ զինքը իրաւարար կարգեցինք: Լիկայի հետ մեր առաջին մրցումը հաւասարութեամբ վերջացաւ՝ 1-1 արդիւնքով: Մրցումը յետաձգուեցաւ յաջորդ Կիրակիին: Երկրորդ մրցումը սկսանք նորէն միեւնոյն իրաւարարով: Առաջին կողմ մենք ստացանք: Խաղին թափը աւելի սաստկացաւ: Մենք՝ տասը հոգիով սկսանք յարձակիլ: Մինչեւ հիմա աչքիս առջեւն է այդ պատկերը: Մեր յառաջապահներէն Վահրամ Վարժապետեանը գրոհեց: Գնդակը՝ ոտքը, հագիւ երեք մէթր մնացած էր իր եւ հակառակորդ բերդապահին միջեւ, երբ Յարութիւն Խաչատուրեանը, որ Լիկայի յետսապահն էր, մեր խաղացողին շապիկէն բռնեց, քաշեց եւ կռնակին վրայ պառկեցուց: Իրաւարարը սուլեց եւ 11 մէթրնոց տուգանային կէտը ցոյց տուաւ: Տրանսսական բանակի մարզական պատասխանատու սպան -մեր խումբին չեմ գիտեր ինչո՞ւ հակառակ էր եւ չէր սիրեր- միջամտեց եւ ըսաւ. «Քանի որ եղածը ձեռքի «ֆաուլ» չէ, այսինքն՝ ձեռքով չէ բռնած գնդակը, իրաւունք չունինք 11 մէթրէն հարուածելու, այլ՝ «ֆաուլ» եղած տեղէն եւ խաղացողներն ալ պիտի կենան գնդակին դիմաց»: Մեր իրաւարարն ալ, որ պարզ զինուոր էր, ենթարկուեցաւ իր մեծաւորի հրամանին: Մենք, ուրեմն, մէկ կողմով պարտուած էլանք դաշտէն: Յետագային, գրեցինք

Ֆրանսական ֆետերասիոնին՝ Փարիզ. խնդիրը եղածին պէս պարզեցինք: Մեզի իրաւունք տուին: Հարիւրին հարիւր «փենալթի» (տուգանք):

Ասոր նման, նորէն իրաւարարի հետ առնչութիւն ունեցող ուրիշ դէպք մը տեղի ունեցաւ Ինիոն Սփորթիվի հետ:

Ֆրանսացի սպայ մը, բաժակ մը դրաւ Հ.Մ.Ը.Մ.-ի եւ Ինիոնի միջեւ: Երեք խաղ պիտի խաղցուէր, երկու յաղթանակ տանող խումբը տէր պիտի դառնար բաժակին: Առաջին խաղը տեղի ունեցաւ Ինիոնի դաշտին վրայ (այսօրուան Մեպիլէն պատով մը բաժնուած), իրաւարարութեամբ անգլիացի մըսթըր Բասթըլի, Հալէպի լաւագոյն եւ անկողմնակալ իրաւարարը: Սոյն խաղը մենք յաղթեցինք երեք-զերոյով: Հակառակ եղած համաձայնութեան, թէ մըսթըր Բասթըլ պիտի ղեկավարէր երեք խաղերն ալ, մերժուեցաւ Ինիոնին կողմէ: Այս վերջինը, միշտ ի նպաստ իրեն իրաւարար կը փնտռէր, ամէն ինչ կուգէր խարդախութեամբ գլուխ հանել, որով՝ մէջտեղ դրաւ թեկնածութիւնը Ժոզէֆ Ղուկաս անունով՝ ֆրանսական բանակի սուրիացի սպայի մը, որ միեւնոյն ատեն Ինիոնի անդամ էր: Մեր կողմէն, իր թեկնածուն մերժուելու պարագային՝ սպառնաց խաղէն քաշուիլ: Մենք՝ ստիպուած, ընդունեցինք եղած առաջարկը եւ խաղը տեղի ունեցաւ մեր դաշտը: Իրաւարարին կողմնակցութիւնը բացայայտ էր: Մեզ՝ անպայման, դաշտէն պարտուած պիտի դրկէր եւ ահա խաղը լրանալու երկու վայրկեան մնացած, անտեղի «փենալթի» մը շնորհեց Ինիոնին եւ մենք մէկ «փենալթի»ով պարտուած ելանք դաշտէն: Երրորդ խաղը,

որ աւելի ճակատագրական պիտի ըլլար, յաղթողը պիտի տիրանար բաժակին, այս անգամ, մենք ալ մեր կարգին մերժեցինք Ժողէֆ Ղուկասին իրաւարարութիւնը: Բայց, այս վերջինը, խաբեբայութեամբ կը համոզէ Լուտերը, թէ ինք ծագումով հայ է եւ այնթապցի, երդում կ'ընէ իր զինուորական պատուին, որ անաչառ պիտի ըլլայ: Այսպիսի խօսքերով կը համոզէ Լուտերը եւ այս վերջինն ալ մեզ՝ ըսելով թէ մարդը պատուոյ խօսք տուած է անկողմնակալ ըլլալու: Ես, նոյն շրջանին, խումբին խմբապետն էի, չհամոզուեցայ, բայց, ստիպուած՝ տեղի տուի: Այս պայմաններուն տակ երրորդ խաղը սկսանք, իսկ մեր իրաւարարը, պատիւը, արժանապատուութիւնը եւ հայութիւնը դուրս ձգած, դաշտ իջաւ: Մեր ժամանակ, դարպասները առանց ֆիլէի (ցանց) էին, ատոր համար ամէն դարպասի ետին մէկ ֆրանսացի զինուոր կեցած կ'ըլլար, իբր դարպասի իրաւարար: Իրենց պաշտօնն էր ըսել միմիւայն թէ կոլ եղա՞ւ թէ ոչ: Խաղն սկսանք յաղթելու վճռականութեամբ: Հազիւ տասնհինգ վայրկեան անցած էր, երբ մեր կողին առջեւ ինծի գնդակ մը եկաւ: Ես, փոխանակ ոտքով զարնելու, նեղ կացութեան մատնուելով, ստիպուած եղայ ծունկով հեռացնելու գնդակը, ճի շոյ իրաւարարին աչքին առջեւ: Յանկարծ, այն զինուորը, որ մեր կողին ետեւը կեցեր էր, դաշտ իջաւ, որ իրաւունք չունէր, եւ իրաւարարին զիս ցոյց տալով ըսաւ թէ ես, որպէս թէ ձեռքով զարկած էի գնդակին: Մեր մարդուկն ալ, արդէն ասանկ առիթի կը սպասէր: Խաղը կեցուց եւ «փենալթի» որոշումը տուաւ: Անշուշտ, մենք չընդունեցինք իր որոշումը, ինքն ալ տեսաւ, որ անիրաւ է, ուզեց շարունակել տալ խաղը առանց «փենալթի»ի,



ասկայն, մենք պնդեցինք, որ ինք փոխարինուէր ուրիշ իրաւարարով մը, եւ ասանկով խաղը վերջ գտաւ:

Գալով իմ խաղաշրջանիս, գրեթէ եօթը տարի առաջին խումբին մէջ խաղցած եմ, իբր յետսապահ, 1927-էն մինչեւ 1933: Ունեցած եմ շատ մը խաղընկերներ, որոնցմէ հազիւ թէ կը յիշեմ հետեւեալները.- Վռամշապուհ Դերձակեան (Ոսկեան), Շաւարշ Պէքեարեան, Գաբլանեան եղբայրք (Անդրանիկ եւ Մկրտիչ), Փանոս Խաչգըզեան, Անդրանիկ Արսլանեան (1929-ին Հարաւային Ամերիկա գաղթած), Կարապետ Փօլատեան (ազգային գործիչ եւ գրող - Մարսէլ), Կարապետ Սաաթճեան, Վահրամ Վարժապետեան, Արմէն Արգարեան, Յարութիւն Խաչատուրեան, Կարապետ Թորոսեան, Զաւէն Չորպաճեան, Սարգիս (Պէրպէր) եւ Կարապետ Գոճաօղլանեան եղբայրք եւ ուրիշ շատեր, որոնց անունները, թող ներուի, որ չեմ յիշեր:

Շրջան մը եղայ թէ՛ վարչական, թէ՛ Ա. խումբին խմբապետ:

Տութպոլի առընթեր՝ եղած եմ մարզիկ (աթլէթ):

Հ.Մ.Ը.Մ.-ի կազմակերպած ողիմպիական խաղերուն շահած եմ հեռաւորութիւն ցատկելու Ա. մրցանակը, իսկ 100 մ. վազքի եւ բարձրութիւն ցատկելու՝ երկրորդ մրցանակները:

Մասնակցած եմ միջ-դպրոցական աթլէթիզմի խաղերուն, կազմակերպուած՝ Ամերիկեան Գոլէժին կողմէ, մասնակցութեամբ Հալէպի երեք բարձրագոյն դպրոցներու՝ Միսիոն Լայիք, Սուլթանիէ (այժմ՝ Թէճհիզ-Ճէմիլիէ) եւ Ամերիկեան Գոլէժ: Խաղերը կը դեկավարեր

Լուի Հեքիսեան, դեղագործ, որ այդ թուականներուն Ամերիկեան Գոլէժի մարզանքի ուսուցիչն էր: Ես երեք առաջնութիւն շահեցայ (100 մ., երեք քայլ ուստում եւ բարձրութիւն ցատկել) եւ օրուան ախոյեան հռչակուեցայ:

Մեր ժամանակ, Հ.Մ.Ը.Մ.-ի ամենէն ազդեցիկ անդամը Լուտերն էր եւ հիմնադրութեան ամենէն մեծ պատիւը իրեն կերթար, կրնամ ըսել՝ առանց Լուտերի, այդ թուականներուն, այդ պայմաններուն մէջ, շատ դժուար էր այսպիսի միութիւն մը հիմնել: Տիրական դէմքը ի նքն էր, ամէն ինչ իրմէ կախեալ էր, ամէն որոշում իրմէ պիտի ելլէր, մէկ խօսքով՝ Հ.Մ.Ը.Մ.-ը Լուտերն էր: Ասիկա շարունակուեցաւ մինչեւ 1933, երբ ես, այդ տարուան կիսուն, պաշտօնիս բերումով, փոխադրուեցայ քաղաքէն եւ այսպիսով ալ՝ քաշուեցայ մարզական կեանքէն: Սակայն, անցեալս, անջնջելի կերպով դրոշմուած կը մնայ հոգւոյս մէջ:

-Հայ ժողովուրդը ձեր լաւ կեցուածքին, ձեր յաջողութիւններուն պէտք ունի, որովհետեւ դուք միայն Հ.Մ.Ը.Մ.-ի խումբ չէք: Դուք հայութեան խումբն էք: Թէեւ դժուար եւ քրտինք ու զոհողութիւն պահանջող պատասխանատուութիւն է, բայց վճռական ու ազնիւ իմացականութեամբ հետապնդեցէք ձեզի յանձնուած պարտականութիւնը, որպէսզի մեր միութեան, մեր ժողովուրդին արժանի խումբը ըլլաք: Եւ հաւատացէք, թէ կը յաջողի՛ք...:

*ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԻՆԵԱՆ*

*ՅՈՒՇԵՐ՝ ՀԱԼԷՊԻ Հ.Մ.Ը.Մ.-Ի ԿԵԱՆՔԷՆ ԿԸ ՊԱՏՄԷ  
ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ՊԱՐԻԿԵԱՆ*

**Օ** նած եմ Հալէպ, 1920-ին: Յաճախած եմ Ազգ. Հայկազ-եան Վարժարանը՝ մանկապարտէզէն սկսեալ. թերաւարտ եմ՝ Ե. կարգէն:

1936-ին ընդունուած եմ Սուրիական Երկաթուղային Ընկե-րութեան աշխատանոցը՝ իբրեւ մեքենիստ, եւ ցոյց տուած ճարտարութեանս շնորհիւ, գնահատուելով ունեցած եմ աստիճանի բարձրացում՝ կոչուելով Ա. կարգի վարպետ: 14 տարի, նոյն գործին մէջ, բարւոք ծառայութիւններէ ետք, ամսաթոշակս անգոհացուցիչ գտնելով, հրաժարած եմ երկաթուղային ընկերութենէն եւ ընդունուած պետական Անասնաբուժական Սպասարկութիւն՝ իբրեւ պաշտօնէայ եւ 30 տարի պաշտօնավարութենէ ետք՝ 1980-ին, հանգստեան կոչուած եմ, իբրեւ թոշակառու:

Պատանի տարիքէս մասնաւոր սէր եւ հետաքրքրութիւն ունեցած եմ մարզանքին հանդէպ, որուն առաջին սերը իմ մէջ արթնցուց Հայկազեան Վարժարանի մարմնամարզի նուիրեալ ուսուցիչ՝ Լեւոն Արգարեանը: Մեր սերունդին սիրելի ուսուցիչը եղաւ ան՝ իր կարճ տաբատով եւ սկառուտական գրաւիչ տարագով: Իրմով է, որ մեր մէջ արթնցաւ, առաջին օրէն, փափաքը սկառուտ ըլլալու եւ ծառայելու մեր ժողովուրդին, հայրենիքին եւ համայն մարդկութեան՝ ազնիւ եւ առաքինի ընթացքով:

Ճիշդ թուականը յիշողութենէս վրիպած է, հաւանաբար 1930-31-ի՞ն, սակայն լաւ կը յիշեմ, որ շատ կանուխէն ճիգ թափուած է սկաուտական շարժումին հիմը դրուելուն: Եւ առաջին հրապուրողներէն մէկն ըլլալով, եղայ սկաուտ եւ անոր հետ, նաեւ, մաս կազմեցի ֆութպոլի խաղերուն, կը յիշեմ թէ ինչպէ՛ս օրուան պատասխանատուները 11 պատանիներ հաւաքելով կազմեցին ֆութպոլի խումբ մը, որուն մաս կազմող բախտաւորներէն եղայ նաեւ ես:

«Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» նշանաբանը եղաւ մեր առաջնորդը: Այսօրուան պէս, աչքիս առջեւէն չի՛ հեռանար այն խանդավառութիւնը, որով դաշտ կիջնէինք, մարզասէր հանդիսատեսներու բազմութեան մը առջեւ միշտ փորձեր կընէինք: Յաջողութիւնը տակաւ կաւելնար եւ անոր հետ նաեւ, կաւելնար խաղացողներու թիւը: Պէտք չէ մոռնալ, որ տարագիր ժողովուրդի մը զաւակներն ըլլալով, հիւրընկալ եւ եղբայր արաբ ժողովուրդին գիրկը միշտ բաց եղած է մեզի, եւ միշտ ալ քաջալերած է ան մեր մարզական շարժումները: Սակայն ապրուստը դժուար էր: Հայ ծնողները թոյլ չէին տար, որ իրենց փոքրիկները տունէն դուրս ելլէին, հեռու պահելու համար զանոնք աւելորդ ծախսերէ եւ իրենց հասակակիցներուն ազդեցութիւններէն: Մեր ժողովուրդին այդ օրերու ըմբռնումները՝ կեանքի հանդէպ տարբեր էին: Բայց անհրաժեշտ էր կեանքի ճշմարտութիւնն ու գեղեցիկ ուղին ցոյց տալ, բացատրել եւ համոզել ծնողները, որ իրենց զաւակները ապրէին ընկերային հաւաքական կեանքի մէջ՝ առողջ միտքով եւ մարմնով:

Ես, այսօրուան պէս, լիս կը յիշեմ թէ ինչպէ՛ս Լուսեր Մասպանաճեան, Լեւոն Արգարեան եւ Նշան Թիւսիւզեան տունէ-տուն կ'այցելէին՝ համոզելու համար ծնողները, որ իրենց զաւակները վստահէին Հ.Մ.Ը.Մ.-ին: Անոնք կը բացատրէին Հ.Մ.Ը.Մ.-ի եւ Հայ Արիներու վեհ նպատակը: «Փողոցը,- կըսէին անոնք,- կ'ապականէ եւ մոլորութիւններու կառաջնորդէ մեր զաւակները, մինչդէռ մեզի վստահելով, անոնք կը մեծնան ընկերային մաքուր մթնոլորտի մէջ եւ կըլլան մտքով ու հոգիով առողջ ու կայտառ հայրենասէրներ»:

Արդարեւ, գեղեցիկ էր գաղափարը: Եւ ահա այսպէ՛ս է, որ ես դարձայ սկաուտ: Յետագային, ինծի պէս, ուրիշներ եւս եկան, շատցանք եւ ճիւղաւորուեցանք: Սկաուտական Խորհուրդը, նկատի ունենալով չքաւոր ընտանիքներէ եկած տղոց պարագան, ճրիօրէն մէյ-մէկ ձեռք սկաուտական տարագով զգեստաւորեց զանոնք եւ մեզմով կազմեց քաղաքի սկաուտութիւնը: Երբ սկաուտական շարքերը խտացան նորեկներով, Սկաուտ Խորհուրդը յառաջացուց Նոր Գիւղի շրջանի սկաուտութիւնը՝ խմբապետութեամբ եղբ. Արսէն Դանիէլեանի:

Ես, դէռ փոքր տարիքէս, մասնաւոր սէր ունէի մարզական կեանքին հանդէպ: Եւ երբ սկաուտ եղայ, այդ սիրով ալ աշխուժութեամբ կ'ապուեցայ սկաուտական չարքաշ կեանքին: «Ոչ» ըսելը օտար էր ինծի համար: Մեծերուս պատուէրն ու տրուած պարտականութիւնները սիրով կը կատարէի, ու այդ պատճառով ալ սիրուած էի խմբապետներէն:

Օր մը, սկաուտական հաւաքոյթ մը կազմակերպուած էր հոգետունի շրջափակին մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.-ի ակումբին մէջ, ուր սկաուտական քայլերգէն ետք, Նշան Թիւյսիւզեան կարդաց անունները այն սկաուտներուն, որոնք աստիճանի բարձրացում պիտի ստանային: Հրաւիրեց Գեղամ Մուրատեանը, զիս եւ Պետրոս Այվազեանը՝ համախմբուած սկաուտներու առջեւի շարքը եւ մեր կուրծքերը զարդարեց աստիճանի բարձրացման ճերմակ ժապաւեններով: Մեր երջանկութեան յիշատակելի պահն էր ասիկա: Այս արարողութենէն ետք, մենք՝ երեք տասնապետներս բարեւի կեցանք եւ անցանք մեր տեղերը:

Հոգետունը եւ իր ակումբը մեր հարազատ տունն էր: Թէեւ ակումբը պզտիկ էր, սակայն ամէն օր, հոն ներկայ կըլլայինք եւ փինկ-փոնկ կը խաղայինք եւ կամ, հոգետունի բակը, ուր այդ օրերուն ջրհոր մը կար, կափարիչով կը գոցէինք ջրհորին բերանը եւ գնդակի խաղով հաճելի ժամեր կանցընէինք:

Տօնական օրերուն, ակումբը զարդարելու պարտականութիւնը հաճոյք էր ինձի եւ Լեւոն Պայրամեանին համար: Յատկապէս նշանակալից էր Ամանորի տօնակատարութեան պատրաստութիւնը: Նոր Տարիէն առաջ, Կաղանդի ծառը կը հայթայթէինք ու կը զարդարէինք գոյնզգոյն լապտերներով ու ժապաւեններով: Տօնակատարութեան օրը մեզի հետ կըլլար նաեւ Սկաուտական Խորհուրդը, որուն մաս կը կազմէին Միսաք Պժեան, Տիգրան Յովակիմեան եւ Գրիգոր Իւլիպէեան:

Անկախ տօնական օրերու խրախճանքներէն, գեղեցիկ սովորութիւն էր, երբեմն, եղբայր սկաուտներու կազմակերպած մտերմիկ երեկոյթները՝ իրենց տուներէն ներս: Այդ հաւաքոյթներէն կը յիշեմ խմբապետ եղբ. Թադէոս Թիւթէլեանի անուանակոչութեան տօնը՝ իր տան մէջ: Տունը կը գտնուէր քաղաքիս հին թաղերէն եւ այդ օրերուն հայաբնակ՝ Աքապէ: Ուրիշ օր մըն ալ հրաւիրուեցանք Հրանդ եւ Ազատ Տէր Մանուէլեան եղբայրներուն բնակարանը՝ Հայկազեան Վարժարանի շէնքին մէջ: Բոլոր այս հրաւեր-հանդիպումները կանցնէին մեծ հիւրասիրութեամբ եւ ջերմ մթնոլորտի մէջ՝ երգ, պար ու խաղով, որ կը տեսէր մինչեւ ուշ գիշեր: Ասոնց կարգին, յիշողութեանս մէջ, անջնջելի քաղցրութեամբ վատ կը մնայ եղբ. Արսէն Դանիէլեանին յարկին տակ, Նոր Գիւղ, կազմակերպուած մտերմիկ խրախճանքի երեկոն, մեզի՝ սկաուտական ֆութպոլի առաջին խումբի խաղացողներուս համար: Չմեռ օր մըն էր: Սենեակը տաք էր, տաք՝ մեզ հիւրասիրող եղբ. Արսէնին վերաբերումին պէս: Իր մօր նահապետական առատ հիւրասիրութիւնը, եւ այս մթնոլորտին մէջ մեր երգն ու զուարթ խօսակցութիւնը՝ մինչեւ ուշ գիշեր եւ ապա մեր հոն քնանալը: Առաւօտուն՝ մեր արթննալուն հետ, անտեղեակ դուրսի աշխարհէն, մեր դուրս գալը հիւրասէր այս յարկէն եւ ի՛նչ անակնկալ... գիշերը առատ ձիւն տեղացեր է եւ բոլոր ճամբաները ծածկուեր են ձիւնի սպիտակ ծածկոցով: Յիշատակնէ՛ր անցելատոյգ, որոնք, սակայն միշտ ալ մեզի հետ են, իրենց ապրուած պահերով եւ սիրելի դէմքերով:

Խօսիլ, այստեղ, սկաուտական բանակումներու մասին, ինծի համար առանձին հաճոյք մըն է: Անոնց պատրաստութեան համար, շաբաթներով կը ծրագրէինք յատուկ յայտագիրներ: Օրինակ, կը յիշեմ բանակումի մը պատրաստութիւններէն մէկը, երբ ես, Լեւոն Պայրամեանը, Գեղամ Մուրատեանը եւ Գեորգ Շարոյեանը, միասին, քաղաքիս Գոց-Շուկան կերթայինք բանակումի վրաններ եւ սկաուտներու համար կոնակի պայուսակներ ապսպրելու: Յետոյ, մոռնալով ամէն յոգնութիւն, նոր եռանդով թմբուկներուն կաշիները կը նորոգէինք եւ դեռ, ջուրի տիկեր, վրանի ցիցեր եւ գաւաթներ կը գնէինք:

Բանակումի մեկնումի գիշերը ո՞վ կրնար քնանալ: Ծրագիրներ կորոճայինք, յայտագիրներ կը նախապատրաստէինք եւ գրոյցն ու կատակները, ծիծաղն ու խնդուքը իրար կը յաջորդէին մինչեւ խումբին ճամբայ ելլելը:

Ես սկաուտական բանակումներուն մասնակցեցայ, յաջորդաբար, 1932, 1933 եւ 1934 թուականներուն:

Բանակումի մեկնումը կը կատարուէր Հոգետունէն, ուր հաւաքուած կըլլային սկաուտները: Մեզ փոխադրող մարդատար ինքնաշարժը կ'առնէինք Թիլէլ փողոցէն՝ Մելեան դեղարանի դիմաց: Մեզի հետ կըլլար Լեւոն Աբգարեանը: Անոր ազդանշանին վրայ կը տեղաւորուէինք փոխադրակառքին մէջ ու ճամբայ կ'ելլէինք սկաուտական քայլերգով:

1932-ին Անտիոքի ճամբով հասանք Քեսապ, ուր Հայր Քեռին տեսնելէ ետք, Քեսապի մուտքին գտնուող հայ բողոքականաց անառաստաղ, հին դպրոցին կից մեր վրանները լարեցինք: Խմբապետ Նշան Թիւսիւզեան,



անմիջապես իւրաքանչիւր սկաուտի պարտականութիւններ տուաւ՝ շուկայ երթալու եւ գնումներ ընելու: Ուրիշներ, խոհանոցի մէջ, կերակուր պիտի պատրաստէին եւ դեռ ուրիշներ ալ պահակ պիտի կենային, սահմանապահ պիտի ըլլային եւ կամ սկաուտներու վրայ պիտի հսկէին: Այս կարգադրութեամբ՝ ամէն ինչ կատարեալ էր: Ճիշդ զինուորներու պէս, անթերի կերպով պիտի կատարէին իրենց վստահուած պատասխանատուութիւնները:

1932-1934 թուականներուն, Քեսապը, կենցաղային աւանդութիւններով հայկական հարազատ գիւղ մըն էր, թէեւ բնակչութիւնը քիչ էր, բնակարանները հիւղակներ էին ցանցառ ու կորսուած՝ մացառներու մէջ եւ անտառներու մօտ:

Քեսապ, բնական արտադրութեան տեսակէտով հարուստ չըլլալով, աղքատ էր եւ միակ եկամուտը, գիւղացիին միակ շահու աղբիւրը խնձորենիներն էին՝ ընդարձակ պարտէզներով:

Քեսապցին բնաւորութեամբ հեզ էր ու բարի, տոկուն, բայց հանդարտ՝ շրջապատը եզերող լեռներուն եւ անտառներուն պէս:

Մեր երեւումը իրենց կու տար խանդավառութիւն եւ մեզմով կ'ապրէին իրենց հայկականութիւնը:

Անոնք այժ մը նուիրեցին մեզի: Խմբապետ Լէւոն Պայրամեանի եւ Պետրոս Թագէլեանի գլխավորութեամբ եւ մեր ալ մասնակցութեամբ, անմիջապէս երկու խոշոր քարեր քով-քովի դրինք՝ օճախի ձեւով եւ մօտակայ անտառի եզերքէն ցախ ու խոի հաւաքելով, երկու

քարերուն միջեւ խրեցինք: Ապա, մորթուած եւ մաքրուած այծին կռնակէն հաստ, գերանանման ձող մը խոթեցինք եւ վիզէն դուրս հանելով, այծը դրինք օճախին բորբ կրակին վրան ու կամաց-կամաց դարձուցինք ճիշդ «չավուրմայ»ի միսին պէս: Ճենճերող այծին ճաշը պատրաստ էր:

Ապա, սկաուտական խումբը, «ֆանֆառ»ի մասնակցութեամբ, պտոյտ մը կազմակերպեց քեսապցիներուն խանդավառ ծափերու տարափին տակ, որմէ ետք, Քեսապի գեղեցիկ մէկ պարտեզին մէջ ճաշակեցինք այծին համեղ միսը: Ճաշին ներկայ էին, անբացատ կերպով, բոլոր խմբապետներն ու սկաուտները: Ձիու վրայ նստած՝ եկաւ Հայր Քեռին, եկան նաեւ այլ հրաւիրեալներ, որոնցմէ կը յիշեմ Սուրէն Բաբախեանը, Սօսէ Մայրիկը, Սիմոնի Տասնապետեանը:

Մեր ճաշկերոյթը ծաղկեցուց Սուրէն Բաբախեանը, իր հմայիչ ձայնին արձագանգով թնդացնելով բարձր լեռները: Ան երգեց «Ալազեազ բարձր սար ա»ն՝ գերելով մեր հայրենակարօտ հոգիները:

Ուրիշ օր մը, սկաուտական թատերախումբը հանդէս եկաւ ծիծաղաշարժ փիէտով մը, որուն անունը չեմ յիշեր: Դերակատարներն էին Վարդգէս Գաբրիէլեան, Եղուարդ Ճինոյեան, Լեւոն Սարգիսեան, Պետրոս Թագլեան եւ Զօհրապ Տէր Ղազարեան:

Քեսապի մեր բանակումը վերջ գտաւ խարուկահանդէտով, որուն ներկայ եղաւ քեսապահայութիւնը: Ճարձատող խարոյկին շուրջ, հայկական երգ ու պարին

յաջորդեցին հայրենաշունչ արտասանութիւնները՝ կատարողութեամբ սկաուտներու:

Գիշերուան մինչեւ ուշ ժամերը տեւող խրախճանքը վերջ գտաւ ընդի. խմբապետ Լեւոն Աբգարեանի հրամանով, քանի որ ուշ գիշերին ճամբայ պիտի ելլէինք դէպի Ճէպէլ Աքրա (Կասիոս) հասնելու համար Պիթիաս: Երկու ջորեպաններ պիտի ըլլային մեր ուղեցոյցները: Ուրեմն, քակեցինք վրանները եւ մեր ուտելիքներն ու ապրանքները բեռցուցինք ջորիներուն վրայ: Լեռնային ուղեւորութիւնը վտանգաւոր ըլլալով, յարմար տեսնուեցաւ, որ մեջքի չուանները քակենք եւ իրարու հանգուցելով բոլոր սկաուտները լեռ բարձրանալու ժամանակ չուանէն բռնեն՝ վար չիյնալու համար: Այս կարգադրութիւնը հարկ տեսնուեցաւ անոր համար, որ երբ մեզմէ ոեւէ մէկուն ոտքը սահելու, փոսը կամ ալ կիրճը իյնալու վտանգի պարագային, քովի սկաուտը կը զգայ եւ անմիջապէս անհրաժեշտ զգուշութիւնը ձեռք կառնէ:

Ահա ա՛յս նախազգուշական միջոցներով, լուսնի լոյսով ճամբայ ելանք մագլցելու համար Ճէպէլ Աքրայի սեպ գագաթը:

Հասանք կէս ճամբան, ուր դասթալ-աղբիւր մը կար: Մեր ծարաւը յագեցուցինք եւ քիչ մը հանգչեցանք: Յետոյ, կրկին մեր ճամբան շարունակեցինք՝ մացառներու մեջէն: Մեր ամէն քայլափոխին հանդիպեցանք կէչիպոյնուզու եւ վայրի բազմակուտ պտուղներու թուփերուն: Մեծ հաճոյքով քաղեցինք պտուղները եւ կերանք այնքա՛ն ախորժակով: Արդէն հասած էինք Ճէպէլ Աքրայի

գագաթը, ուրկէ պիտի սկսէր մեր վայրէջքը՝ դէպի Պիթիաս: Մենք, քանի մը ընկերներով, խումբին առջեւէն կիջնէինք, երբ առաւօտեան արեւի առաջին ճառագայթները դիմաւորեցին մեզ: Լերան կէտը հասեր էինք արդէն: Յանկարծ, մեզ մեր տեղը անշարժութեան մղեցին նախազգուշական պոռչտութիւնք եւ ձեռքերու շարժումներ: Շուարումի մատնուած էինք: Լերան կողին օգնութեան ճիչերու տխուր արձագանգներ կը հասնէին մեզի... հա՛սէ՛ է՛ է՛ք, հասէ՛ք...: Առանց երկմտութեան օգնութեան կանչին կողմը դիմեցինք: Տեսարանը ահաւոր էր: Բեռնատար ջորին փոսը ինկեր էր եւ աւազին մէջ խրեր... մինչեւ վիզը: Այս տեսարանին ի տես, ամէն գլուխէ ձայն մը սկսաւ, երբ ի վերջոյ ջորեպանը զգաստութեան հրաւիրեց մեզ եւ հրաւիրեց բոլորս օգնութեան՝ երթալ մօտիկ անտառը եւ ծառերէն հաստ ճիւղեր կտրել եւ բերել: Այդպէս ալ ըրինք: Բերուած հաստ եւ տոկուն ճիւղերը ջորիին փորին տակէն անցուցինք եւ հարայ-հրոցով ջորին աւազին մէջէն դուրս հանեցինք եւ սկսանք մեր ճամբան շարունակել՝ ջորիները եւ ջորեպանները մեր առջեւէն, իսկ մենք՝ անոնց ետեւէն իջնելով:

Վերջապէս հասանք Պիթիաս, ուր մեր վրանները կանգնեցուցինք եւ կարգին՝ ամէն սկառուտ անցաւ իր պաշտօնին գլուխը: Իսկ անոնք, որ զերծ էին պաշտօնէ, ազատութիւն տրուեցաւ որ պտտին գիւղին մէջ եւ լողան գետին մէջ: Ուիլսըն Թամզարեանը եւ Յակոբ Փանոյեանը, խումբէն բաժնուելով, մտեր էին պարտէզ նուռի գողութեան: Աւելի ուշ, այս երկուքը յանցանքի վրայ բռնուելով՝ խմբապետին կողմէ պատժուեցան:

Այդ օրը Աստուածածնայ տօնն էր: Հալեպէն Պիթիաս եկած էին Հ.Մ.Ը.Մ.-ականներ եւ շարքային դաշնակցականներ՝ ասանդական Հերիսային ժողովրդական խրախճանքներուն ներկայ ըլլալու համար:

Պիթիասի սրճարանին մէջ պարապ տեղ չէր մնացած: Հոս էին Սուրէն Բաբախեանը՝ իր ընկերներով, որոնք բոլորուած էին սեղանի մը շուրջ: Բաբախեան սկսաւ երգել «գետակին վրայ թեքուել է ուռին»ը, իսկ գիւղացիներ ծաղկեցուցին օրուան յայտագիրը՝ իրենց «տաւուլ-գունայ»ով: Ո՞վ կրնար դուրս մնալ ընդհանուր խանդավառութենէն: Ահա եւ մե՛նք՝ սկառուներս շուրջպար բռնեցինք՝ ձեռք-ձեռքի, առաջնորդութեամբ Սովսէս Տէր Գալուստեանի, որ ձեռքի թաշկինակը շարժելով թափ ու չափ կու տար մեզի՝ պարողներու: Մեր շուրջպարին մասնակից եղան, նաեւ, Սուրէն Բաբախեանը, Նշան Թիւսիւզեանը եւ ընդհ. Սկառուտապետ Լեւոն Աբգարեանը եւ դեռ ուրիշներ:

Յաջորդ օրը կատարեցինք մեր խարուկահանդէսը եւ ճամբայ ինկանք ամառուան կիզիչ արեւուն տակ՝ դէպի Խտրբայէկ եւ այսպէս, միշտ քալելով եւ այցելելով շրջանի գիւղերը:

Խտրբայէկի մուտքին, խոշոր, հաստաբուն կաղնի մը կար: Մենք՝ սկառուներս, 24 հոգի ձեռք-ձեռքի բռնած ծառին շուրջ շրջանակ կազմեցինք՝ գրկելու միամտութեամբ, բայց կարելի չեղաւ, դեռ քանինէր պէտք էին ծառը գրկելու համար: Միեւնոյն ատեն մեր զարմանքը այն եղաւ, որ հսկայ այդ ծառին բունը պարապ էր: Յետոյ միայն տեղեկացանք, որ գիւղա-

ցիները, ատեն մը, ծառին խոշոր խոռոչը խանութի տեղ գործածած են, իսկ աւելի ուշ, նոյնիսկ ախոռի վերածած են, թէւ ծառին սաղարթները, իրենց կանաչ տերեւներով ամէն դիտողի զարմանք պատճառած են: Եւ այս ծառը աւելի քան երեք հարիւր տարեկան է կըսէին: Այս ծառին ստորոտէն գետ մը կը հոսէր, որուն հանդիպակաց եզերքներուն վրայ երկու սրճարաններ կային, մէկուն մնայուն այցելուներն ու յաճախողները եղած են Դաշնակցականները, իսկ միւսինը՝ Հնչակ-եաններ:

Երբ մեր խումբը գետն անցաւ, մեր խմբապետը գիւղին գգիրը տեսաւ եւ գիշերելու կարգադրութիւն ըրաւ: Գիշերն անցուցինք գիւղի դպրոցին մէջ: Յոգնած մեր խումբը խորունկ քուն մը քաշեց եւ յաջորդ օր, առաւօտ կանուխ, ճամբայ ելանք դէպի Եողուն Օլուք եւ յաջորդաբար այցելեցինք Հաճի Հապիպլիք, Չէվլիք, Քէպպուսիէ: (Հոս է Ճէպէլ Մուսան):

Քէպպուսիէ գիւղը հասանք՝ արդէն յոգնած եւ գովանալու համար մտանք ծով: Ծովին մերձակայքը փապուղի մը կար, որուն ներքին որմերուն վրան լատիներէն արձանագրութիւններ կային, որոնք, ստուգապէս, հռոմէական շրջանէն մնացած դամբարաններ կրնային ըլլալ:

Աթըքը լուռ եւ ստուերախիտ անտառներով գեղեցիկ գիւղ մըն էր, որուն բնակչութիւնը, համեմատաբար, միւս գիւղերէն աւելի քիչ էր: Գիւղն ուներ սառնորակ հանքային ջուր: Այստեղ կար Տէրէ Պահչէ անունով անտառը: Կրնայիր, աչքիդ կտրածին չափով, զարմանքով դիտել գետին թափած անտէր ընկոյզներու անչա-

փութիւնը, որ ոչ տէր ունէր եւ ո՛չ ալ՝ տիրական: Հոս եւ ամէն տեղ եւ միշտ Ուիլսըն Թամզարեանն էր, որ իր գուարճախօսութիւններով եւ կատակներով կը դառնայ օրուան փնտռուած մարդը:

Թաւուտ անտառին հեռաւոր բացատին վրայ վառեցինք խարոյկը, որուն բոցերուն շառայլով դիտեցինք հեռուներու անսահմանութեան մէջ բարձրաբերձ լեռներուն վեհութիւնը:

Ապա քալեցինք դէպի Սօուզ Օլուք, որ օղափոխութեան սքանչելի վայր մըն է, որուն Գնալը Թէփէ ըսուած բարձունքին վրայ լարեցինք մեր վրանները: Բարձունքը ծածկուած էր շոճի ծառերով, ուրկէ վար կը տեսնուէին ահաւոր անդունդներ եւ նեղ կիրճեր ու հովիտներ:

Սօուզ Օլուքի մէջ տողանցք կատարեցինք, որպէսզի տեղի հայութիւնը իմանար Հ.Մ.Ը.Մ.-ի սկաւտներուն իրենց տուած այցելութիւնը: Արդարեւ, քիչ ետք, Օթել Այվազեանէն, որուն տէրն ու տնօրէնը համանուն պատուական հայ մըն էր, խոշոր կաթսաներով սմբուկի եւ դդումի լիցք, ինչպէս նաեւ կանաչեղէններ եւ պտուղներ դրկած էր մեզի: Նոյնպէս Գրիգոր եւ որդի Գառնիկ Ազիրեաններ եւ Աթըզ գիւղի Գարապաճաքեան աղան՝ միշտ ալ եղան սկաւտական մեր բանակումներուն բարերար ձեռքերը՝ դրկելով մեզի մսացու ոչխար եւ այծ:

Սօուզ Օլուքի մէջ եւս ունեցանք մեր խարուկահանդէսը, զուարթ երգ ու պարով, վերջակէտ տալով տարեկան մեր բանակումին եւ վերադարձանք Հալէպ:

Ժամանակ մը ետք, ինձի շնորհուեցաւ սկաուտ Առաջնորդի աստիճան: Հանդիսաւոր երդման արարողութիւնը կատարուեցաւ Հայկազեան Վարժարանի բակին մէջ:

Այս շրջանին, Սկաուտական Խորհուրդը յաջողօրէն ֆութպոլի բարեկամական մրցում մը, Ալեքսանտրէթի մէջ, Ֆրէրներու վարժարանին առաջին խումբին դէմ: Մրցումը տեղի պիտի ունենար Կիրակի օրը, ուստի, մեր մեկնումէն օր մը առաջ, ակումբ հաւաքուեցանք (հոգետուն) վերջին կարգադրութիւններու մասին խորհրդակցելու համար: Սակայն, ինչպէս կըսեն. եփած տաք ապուրին վրան պաղ ջուր թափեցաւ, երբ տեղեկացանք, որ Ալեքսանտրէթի մրցումը տեղի պիտի չունենայ, տրուած ըլլալով, որ Արսէն Տէր Ղուկասեան, Արմէն Աբգարեան եւ Մանուէլ Գաթըրճեան Հ.Մ.Ը.Մ.-էն հեռանալով մաս կազմած են Ալեքսանտրէթի խումբին եւ մեզի դէմ պիտի խաղան: Թէեւ այս անհաճոյ իրականութիւնը մեզ խորապէս յուզեց, սակայն, տրուած որոշումը բեկանելը նոյնքան անտեղի գտնելով, Նշան Թիւսիւզեան պնդեց, որ ինչ ալ եղած ըլլան պատճառները, սկաուտական խումբը պէտք է մեկնի Ալեքսանտրէթ եւ իր լաւ խաղարկութեամբ եւ յաղթողի վճռակամութեամբ աղոտր դաս մը տայ մեզմէ հեռացած տղոց: Եւ որոշումը գործադրուեցաւ, ու մենք, մարդատար խոշոր ինքնաշարժով ճամբայ ելանք դէպի Ալեքսանտրէթ:

Կիրակի կէսօրին հասանք Ալեքսանտրէթ եւ իջեւանեցանք Օթէլ Ստանպուլ: Պանդոկը կը գտնուէր ծովեզերքի մօտ: Մեր գոյքերը տեղաւորելէ ետք, գացինք



ճաշարան, համով ճաշ մը ճաշակեցինք եւ վերադարձանք պանդոկ՝ հանգստանալու: Խոր քունի մէջ էինք, երբ ընդոստ արթնցանք ահռելի ձայնի մը պատճառով: Պանդոկի սպասեակները մեզ հանդարտեցուցին, ըսելով՝ որ հսկայ շոգենաւ մը եկած է խարսխելու նաւահանգիստի մօտակայքը: Առ ի հետաքրքրութիւն, ինձի հետ նաեւ ուրիշներ, հագուստնիս հագնելով դիմեցինք ծովափ, որովհետեւ մինչեւ այդ օրը ո՛չ ծով տեսած էի եւ ո՛չ ալ՝ շոգենաւ: Հետաքրքրական էր, նաեւ, ձկնորսներուն ծովէն ձուկի կարթերը քաշելը, անոնց ուղկաններուն մէջ տեսանք հարիւրաւոր ու բազմատեսակ ձուկեր, ողջ-ողջ, որոնք կը ցատկոտէին ուղկանին մէջ: Հեռուն, իր հսկայ սպիտակ մարմնով կանգնած էր շոգենաւը: Մեզի արտօնուեցաւ շոգենաւ մտնել եւ պտտիլ անոր յարկաբաժինները: Ի՛նչ մեծ ուրախութիւն եղաւ մեզի համար, երբ նաւակներով մեզ փոխադրեցին «Լա Մարթին» ֆրանսական շոգենաւը, որուն նաւապետէն մինչեւ յետին նաւաստին խափշիկներ էին: Սկառու Ղազար Շահպազեան բաժնուած էր մեր խումբէն եւ ծով մտած: Ան լաւ լողորդ էր, արդարեւ: Շոգենաւէն կը դիտէինք զինք: Քիչ ետք, ա՛ն ալ միացաւ մեզի: Մենք հետաքրքրութեամբ պտտեցանք շոգենաւի բոլոր յարկաբաժինները: Յետոյ, դարձեալ նաւակներով, վերադարձանք ծովեզերք եւ աճապարեցինք դէպի պանդոկ: Քիչ ետք, մեզ դիմաւորելու եկաւ Ֆրէրներու վարժարանէն երկսեռ խումբ մը եւ մեզ առաջնորդեց դպրոց, որ գեղեցիկ պարտեզի մը շրջափակին մէջ կը գտնուէր: Հոս, պատրաստուած էր, մեզի համար, ճոխ զինեսեղան մը՝ առատ պտուղներով: Վարժարանի

տնօրէնը, բարի գալուստի իր խօսքէն ետք, բաժակ վերցուց մեր կենացը: Ապա, մեկնեցանք մարգադաշտ: Երբ մեր շապիկները հագնելով խաղավայր մտանք, հոն էին Արմէնը եւ Արսէնը, բայց երբեք չխօսեցան մեզի հետ: Մեզմէ հեռացած այս տղաքը, հակառակորդ խումբին յառաջապահ խաղացողներն էին: Իրաւարարի ազդանշանին վրայ՝ խաղը սկսաւ երկուստեք կատաղի յարձակումներով եւ յաղթութիւնը ապահովելու վճռակամութեամբ, մինչեւ իսկ եղան կոշտութիւններ: Սակայն, կիսախաղը վերջացաւ առանց արդիւնքի: Երկրորդ կիսախաղին մեր խումբը ցոյց տուաւ աւելի ճկուն եւ հաւաքական խաղարկութիւն եւ մրցումը վերջացաւ ի նպաստ մեզի, զերոյի դէմ մէկ կէտի առաւելութեամբ:

Նոյն խումբին երկրորդ հանդիպումը, մեր հրաւերով, տեղի ունեցաւ մեր դաշտին վրայ: Ձմեռ օր մըն էր եւ տեղատարափ անձրեւը ծածկած էր ամբողջ դաշտը: Խումբին Հալէպ ժամանումէն օր մը առաջ, դաշտին մէջ փոսեր փորեցինք եւ ծովացած անձրեւի ջուրը դաշտի ջրհորին մէջ լեցուցինք: Այդ օրերու մեր տղաքը պէտք է յիշեն, որ մեր դաշտին մէջ ջրհոր մը ունէինք: Դաշտը չորցուած էր արդէն: Մրցումը տեղի ունեցաւ Կիրակի կէսօրէն ետք, սակայն 1-0 արդիւնքով մենք պարտուեցանք այս անգամ:

Ահա այսպէս էին օրերը՝ երանելի ապրումներով: Սկաուտական մեր առաջին խումբը շատ բան կը պարտի եղբայր Արսէն Դանիէլեանին: Ան ստեղծած էր ներդաշնակութիւն տղոց յարաբերութիւններուն մէջ, շնորհիւ իր ազնիւ բնաւորութեան:

Խմբապետ Նշան Թիւսիւզեանի շրջանին, ամէն Ծնունդի եւ Մեծ Զատկի օրերուն, եկեղեցի (խօսքը Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ մասին է - Սալիպէ) կ'երթայինք խումբով՝ կարգապահութեան հսկելու համար: Եկեղեցիի փողոցի գլխաւոր դուռէն սկսելով, երկու կողմով շարուած, կրկին եկեղեցիին մէջ ալ շարունակելով հսկողութիւնը: Սրբազան Արտաւազդ Արք. Միրմէեան, մեր առաջնորդութեամբ, կը մտնէր եկեղեցի: Այսպիսի օր մըն էր, որ Սրբազան Հայրը թէյասեղանի հրաւիրեց բոլոր աստիճանաւորները, որոնց կարգին նաեւ զիս: Արտաւազդ Սրբազանը, այդ առիթով, մեզի տուաւ իր հայրական օրհնութիւնները: Ի՛նչ յիշատակելի օրեր էին:

Ֆրանսացիներու օրով, երբ Հ.Մ.Ը.Մ.-ի սկաւտները քաղաքին մէջ տողանցքի կ'ելլէին նուագախումբով եւ եռագոյն դրօշակը պարզած, Թիլել պողոտայէն մինչեւ Ճեմիլիէ, ժողովուրդը խումներամ կը հաւաքուէր մայրերուն վրան ու կը ծափահարէր մեզ՝ գովասանական խօսքերով:

Իսկ, Իպրահիմ Հանանոյի օրով, Հ.Մ.Ը.Մ.-ի սկաւտները հրաւէր ստացան մաս կազմելու ընդհանուր տողանցքին, ազգային հերոս Իպրահիմ Հանանոյի զէնքի ընկերներուն հետ: Տողանցեցինք Խանտէք պողոտայէն մինչեւ Պապ էլ Նասրը եւ հոնկէ ալ դէպի Զաքարիա մեծ մզկիթը, ուր տեղի ունեցան ճառախօսութիւններ: Ապա, ուշատեն, նոյն ճամբով վերադարձանք ակումբ:

Մեր սկաւտական ֆութպոլի Ա. խումբը, յաճախ, մրցումներ կունենար Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբին դէմ: Մեր

խումբը այնքան զօրաւոր էր, որ Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբը չէր կրնար յաղթել մեզ: Պատահած են այնպիսի ճակատագրական պահեր, որ ա՛լ յուսահատութեան մէջ, պրն. Լուտերը եւ Աշճեանը թելադրէին մեզի, որ առիթ տանք Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբին, յաղթանակ արձանագրելու մեր դէմ: Սակայն, մենք, կարծես աւելի՛ կը հերոսա-նայինք մեր յարձակումներով եւ արդիւնքը կը վերջանար մեր յաղթանակով:

Ուրեմն, մեր այս խումբն էր, որ յետագային, լման կազմով, բացառութեամբ Յարութիւն Մարութեանի եւ ինձի, կազմեց Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբը, անվերջ յաղթանակներ արձանագրելով եւ ժողովրդային քաջալերութեան արժանանալով: Ես, անկէ ետք, մաս կազմեցի Նոր Գիւղի Ա. խումբին եւ մինչեւ որոշ ժամանակ խաղացի այս խումբէն:

Սկաուտական մեր ֆութպոլի Ա. խումբին կազմը, 1933-1934-ին, կը բաղկանար հետեւեալ խաղացողներէն.

Լեւոն Սարգիսեան	բերդապահ
Գեորգ Շարոյեան	յետսապահ
Մանուէլ Գաթըրճեան	յետսապահ
Ստեփան Մելիքսէթեան	միջնապահ
Կարապետ Գարայեան	միջնապահ
Արսէն Դանիէլեան	կեդրոնի միջնապահ
Վազգէն Տէր Ղուկասեան	կեդրոնի յառաջապահ
Կարպիս Պարիկեան	աջ մէջ
Յարութիւն Մարութեան	աջ ծայր
Համագասպ Արզումանեան	ձախ մէջ

Յակոբ Աֆարեան

ձախ ծայր

Ես մասնակցած եմ բոլոր դաշտահանդեսներուն եւ բոլոր մարզական խաղերուն: 100 մէթր վազքի մէջ առաջնութիւն շահած եմ, ինչպէս նաեւ՝ արգելարշաւի առաջնութեան տիրացած:

Պատմութեան համար կու տամ հետեւեալ տեղեկութիւնները:

Սկաուտական «ֆանֆառ»ի կազմը, 1932-1936, առաջնորդութեամբ խմբապետ Լեւոն Պայրամեանի կը բաղկանար հետեւեալ Հ.Ս.Շ.Ս.-ականներէն.-

#### Փողահարներ

Լեւոն Պայրամեան, Պետրոս Թագէլեան, Գեղամ Սուրատեան, Կարպիս Պարիկեան, Անդրանիկ Չոլաքեան, Պետրոս Կանաչեան եւ Յովհաննէս Խաչատուրեան:

#### Թմբկահարներ

Գեորգ Շարոյեան, Լեւոն Սարգիսեան, Պետրոս Այվազեան, Եղուարդ Ճինոյեան, Սեպուհ Սիսեռեան եւ Համազասպ Արզումանեան:

#### Խոշոր թմբուկ

Գեորգ Առաքելեան (շատ գեր ըլլալուն՝ Բարթոշ անունով կը ճանչցուէր)

#### Ծնծղայ

Սարգիս Սրապեան

*ՅՈՒՇԵՐ՝ ՀԱԼԷՊԻ Հ.Մ.Ը.Մ.-Ի ԿԵԱՆՔԷՆ ԿԸ ՊԱՏՄԷ  
ԵՂԲ. ՄՈՎՍԷՍ ԷԼԷՅՃԵԱՆ*

Օ նած եմ Այնթապ, 1920-ի Մարտի 12-ին: Ապրիլ 1-ին, մայրս շուկան կըլլայ: Գնումի ժամանակ, խառնաշփոթութիւն մը կը ստեղծուի՝ թուրքերուն կողմէ ծրագրուած: Վերադարձի ճամբուն վրայ, թուրք մը «կեաւուր» ըսելով հարուած մը կու տայ մօրս: Տուն հասնելով կը պատմէ իր տեսածները: Տնեցիները կ'ըսեն. «Նախ, ա՛ն, սա չօճուխին կա՛թ տուր, կ'ուլա՛յ, կը ճչայ»: Զիս գիրկը կ'առնէ, կուրծքը կը հանէ, որ արհիւններուն մէջն է: Անմիջապէս հիւանդանոց կը տանին: Հոն յայտնի կըլլայ, որ ուսէն ստացածը դաշոյնի հարուած է եղեր: Այս մասին Այնթապի ինքնապաշտպանութեան գիրքին մէջ գրուած է՝ «առաջին վիրաւորուողը Մարիամ Էլէյճեանը եղաւ»:

Ինչպէս բոլոր Այնթապցիները, ծնողքս ալ գաղթական կը հասնին Սուրիոյ Հալէպ քաղաքը: Նախ, Համիտիէ կոչուած թաղամասին մէջ (հիւղաւանպարաքա) բնակեցանք տախտակէ եւ թիթեղէ շինուած տան մը մէջ, ուր ապրեցանք մինչեւ 1929: Յետոյ, Նոր Գիւղ կոչուած շրջանի՝ առաջին թաղամասին մէջ տուն մը շինեցինք:

Յաճախած եմ Ուսումնասիրաց դպրոցը՝ մինչեւ չորրորդ դասարան: Քանի մը արհեստ փոխելէ ետք, դերձակութեան հետեւեցայ, 8,5 տարի աշխատելով Անտոնեան եղբայրներուն քով: 1938-ին ունեցայ

առանձին խանութ՝ Ազիզիե թաղամասին մեջ: Շատ լաւ էր գործու:

1944-ին ամուսնացայ օր. Մարի Կեօկշէնեանին հետ: Աստուած մեզ երեք զաւակով ուրախացուց՝ Զարեհ, Անի, Շաբէ: Երեքն ալ ամուսնացած են: Ունինք 5 թոռնիկ:

1955-ին, խանութիս տէրը ամբողջ շէնքը փլելու որոշում տուաւ: Տեղը խանութ պիտի չշինէր: Իմ անկեղծ բարեկամներս՝ եղբ. Նշան Թիւսիւզեան եւ Եուսուֆ Շիրիլեան թելադրեցին, որ Պէրուրթ հաստատուիմ: 1956 Փետրուար 3-ին, Պէրուրթի Պապ Իտրիս պողոտային վրան վարձեցի գործատեղիս: 1975-ի քաղաքացիական պատերազմին՝ կողոպտուեցաւ եւ քանդուեցաւ: Նիւթական ծանր վնասի ենթարկուեցայ: 14 տարի այլազան վտանգներէ եւ ստոյգ մահէ փրկուեցանք. ու այսպիսով անձնական գործս քանդուեցաւ:

58 տարի է, որ այս արհեստը կընեմ: Իմ փորձառութիւնս ունեցող, հաւանաբար քիչ կը գտնուի, ասոր համար ալ, լաւ վարձատրութեամբ մը ֆապրիքի մը մոտելները կը պատրաստեմ:

Ուսումս շարունակեցի անհատ ուսուցիչներու եւ գիշերային դպրոցներու միջոցաւ:

«Ազդակ», «Արեւելք», «Նայիրի» եւ այլ թերթեր ու գրքեր եղան իմ համալսարանս:

1933-ին, արձանագրուեցայ Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտ, թելադրութեամբ եւ երաշխաւորութեամբ՝ Լեւոն Էքմէքճեանի:

Նոր Գիւղի շրջանին մէջ, իբրեւ խաղավայր, չորս տեղ փոխեցինք: Ակումբնիս՝ Զուարեան վարժարանի քանի մը սենեակներն էին:

Իմ անմիջական ընկերներս էին, եղբայրներ՝ Յակոբ Ճրճեան (չէթէ Յակոբ կըսէին), որ Հայաստան ներգաղթեց, Արսէն Դանիէլեան, Յարութիւն Տուգճեան, Յարութիւն Տէրվիշեան, ապա, Լեւոն Պազգալեան, Նորայր Տիպերեան, Յարութիւն Բարսեղեան, Զարեհ Երկաթունի, Փարամազ Տէր Ղազարեան, եւայլք: Ասոնք՝ Նոր Գիւղի շրջանէն:

Առաջնորդ էի, երբ զիս քաղաքի պատասխանատու նշանակեցին: Հոն էր եղբ. Նշան Թիւյսիւզեանը: Երբեմն, եղբ. Լեւոն Աբգարեանը կու գար: Դպրոցներու մէջ մարզանքի ուսուցիչ էր: Չափական մարզանքները ինք սորվեցուց մեզի: Յետոյ, եղբ. Լեւոն Պապլուզեանը ընդի. խմբապետ նշանակուեցաւ: Շրջան մը չափական (ռիթմիք) մարզանքներ Պապլուզեանը եւս սորվեցուց:

Ղեկավար եղբայրներ էին՝ տոքթ. Ատուր Գապագեան, Լուստեր Մասպանաճեան, տոքթ. Յակոբ Գասապեան, տոքթ. Վազգէն Սելեան, Սուրէն Սուրատեան (Տ. Մկրտիչ քինյ. Սուրատեանի որդին), Գրիգոր Իլիւպէեան, Կարապետ Աշճեան, Յարութիւն Պազարպաշեան, Տիգրան Յովակիմեան, Յովհաննէս Փափագեան, Վահէ Չոքկարեան եւայլք:

Հոգետան մէջ (Թիլէլ) սենեակ մը՝ իբրեւ ակումբ կը գործածուէր: Հոնկէ փոխադրուեցանք նոր ակումբ (Թիլէլ պողոտայի վրայ), ուր մեզի տրամադրեցին երկու



սենեակ՝ յարակից մասերով, գոյքերու եւ սկաուտական տարազներու համար յատուկ մթերանոց (մակազէն):

Թուականները լաւ չեմ յիշեր, սակայն, աստիճանի բարձրացում ունեցած եմ 1934-ին՝ փոխ-առաջնորդ, 1939-ին՝ վարիչ առաջնորդ, իսկ 1943-ին՝ փոխ խմբապետ:

Մասնակցած եմ՝ 1933-1936, տարեկան բանակումներուն: Առաջինը՝ եղբ. Նշան Թիւսիւզեանի ղեկավարութեամբ, երկրորդը՝ եղբ. Լուսեր Մասպանաճեանի: Այս բանակումներէն անձնական տպաւորութիւններս էջեր լեցնող նիւթեր կը կազմեն: Հաւանաբար, օր մը փորձեմ գրել՝ Քեսապի եւ Պիթիասի մասին, իրենց գիւղերով:

1942-ին, զիս պատասխանատու նշանակեցին: Շոգեկառքով գացինք Շթորա, Զահլէ, Ռայաք եւ Պաալպէք: 22 սկաուտ էինք, օգնական եղբայրներ՝ Նորայր Տիլպերեան եւ Յովհաննէս Խաչատուրեան:

1943-ին, նորէն նոյն ձեւով պատասխանատու նշանակեցին զիս, այս անգամ 44 սկաուտներով: Եղբ. Լեւոն Պայրամեանը՝ մեզի օգնական: Շատ զգոյշ պէտք է ըլլայինք իրեն բոլոր շարժումներուն, զորս զսպել անկարելի էր, քանի որ ալքուամով էր: Եղբ. Արսէն Դանիէլեանը եւ եղբ. Լեւոն Պապլուզեանը այցելութեան եկան մեզի, առաջինը՝ տարագով, իսկ երկրորդը՝ սիվիլ:

1944-ին, Սուրիոյ նախագահ Շիւքրի Քուլաթլիի ապաքինման առթիւ, Դամասկոսի մէջ, մեծ տողանցք մը կազմակերպուած էր՝ զինուորական, սկաուտական եւ մարզական: Հ.Մ.Ը.Մ. 50 սկաուտ աստիճանաւորներով մասնակցեցաւ: Պատասխանատուն ես էի: Հալէպէն

Դամասկոս շոգեկառքով գացինք: Արաբ սկաուտապետ Նեշէթ Ուարրազը Հալէպի ընդհանուր պատասխանատուն էր: Թրքերէն լաւ խօսելուն համար շատ մօտ էի իրեն: Անոր փոխանորդն էր Եահեա Չուխատար, իսկ Սուրիոյ ընդի. սկաուտապետը՝ Ալի Տէնտէշին էր, որուն հետ բարեկամացայ Դամասկոսի մէջ: Մեր բոլոր գործերուն մէջ օրինաւոր եւ կարգապահ ըլլալնուս համար, 3-4 օր աւելի պահեցին մեզ, իրենց հաշուոյն: Եւ առաջնութիւնը տուին մեզի:

Այլազան արշաւներու մասնակցած եմ եւ երբեմն կազմակերպած զանոնք:

Տարիներով Սկ. Խորհուրդի մաս կազմած եմ:

1957-ին, Պէյրութի Սկ. Խորհուրդին անդամ էի, եւ Միջ-մասնաճիւղային հանդիպումին կը գլխաւորէի Հալէպ ժամանող սկաուտները՝ Չատկուան տողանցքին մասնակցելու համար:

Պէյրութ ծանօթացայ պետական սկաուտական քննիչ Ապտալլահ Տապաուսի հետ, որ օր մը, այցելեց սկուսմբ եւ գովեստով խօսեցաւ մեր գործունէութեան մասին:

Տարիներով, Հալէպի մէջ մակազէնի (սկ. Տարազներու մթերանոց) պատասխանատուն էի: Բոլոր հաշիւները կը կատարէի մուտքի եւ ելքի ստացագիրներով: Տիգրան Յովակիմեանը եւ Գրիգոր Իւլիւպէեանը հաշիւներուն կ'օգնէին: Չէի ուզեր, որ տարագներէն պակաս բան ըլլայ: Ամէնէն դժուարը գլխարկի հարցն էր: Սկ. Խորհուրդը լիազօրեց Յովհաննէս Փափազեանն ու զիս, որպէսզի պատրաստենք նոր, մեզի յատուկ գլխարկներ:

Քանի մը մոտելներ շինեցի, վերջապէս, ներկայիս գործածուող նմուշին տրուեցաւ նախա-պատուութիւնը: (Այս ձեւը գործածուեցաւ մինչեւ պետական գլխարկին պարտադրութիւնը՝ 1953-ին):

Ինչպէս ամէն անձ նախասիրած մէկը կ'ունենայ, ես՝ աւելի, եղբ. Նշանը գործունեայ եւ իրատես ղեկավար ճանչցած եմ, ընդունելով մէտեղ, որ մեր բոլոր ղեկավարները անձնուրաց մարդիկ էին: Եթէ գրելու ըլլամ իւրաքանչիւրին մասին, երկար պիտի ըլլայ: Աստուած հանգուցեալներուն հոգիները լուսաւորէ եւ մնացողաց՝ երկար կեանք տայ:

25 տարի գործօն դեր ստանձնած եմ եւ գործած՝ կարողութեանս ներած չափով, Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական շարքերուն մէջ: Եղբ. Նշանին հետ, միշտ ալ, կապս նոյնը մնաց մինչեւ անոր մահը: Ինք, Լիբանանի Ազգ. Առաջնորդարանի Տնտեսական Խորհուրդի ատենապետն էր, ես ալ՝ Ս. Նշան Մայր Եկեղեցոյ թաղական: 18 տարի է ի վեր թաղական եմ: Քանի տարի է ատենապետ եմ: Դժբախտաբար, մեր շրջանի հայութեան թիւը, օրէ-օր կը պակսի, մարդու սով կայ: Կը ներեք, որ նիւթս շեղեցայ: Ազգային ցաւեր են ասոնք:

Հ.Մ.Ը.Մ.-ը երկու սերունդի ազգային ոգի ներշնչեց՝ ինքնավստահութիւն եւ ձեռներեցութիւն սորվեցուց, նամանաւանդ, ի՛մ նմաններուն համար նաեւ, դպրոցի դեր կատարեց: Գաղթական պատանիներու դաստիարակութեան ի խնդիր ամէն ճիգ ի գործ դրաւ իր կազմակերպած դասախօսութիւններով:

Կը յիշեմ կարմիր զօրանոցը: Սըր Պէյտըն Փաուլի յաջորդը պիտի գար Սուրիա եւ այցելէր Հալէպ: Նէշէ՛թ Ուարրազը մեզի ալ տեղ մը տուաւ, որպէսզի զարդարենք եւ պատշաճ ձեւով ընդունինք գալիք մեծաւոր հիւրը: Հոն, տեղ տրուած էր Հալէպի բոլոր մարզական եւ սկաուտական կազմերուն: Իւրաքանչիւր խումբ իր տեղը մաքրեց եւ կամարներ շինեց՝ կանաչ ճիւղեր բերելով: Հիւրը քանի մը օր, ճշգրիտ չեմ յիշեր, հաւանաբար շաբաթ մը ուշացաւ: Բոլորին կանաչութիւնը չորցաւ, մերինը երթալով աւելի՛ լաւ եղաւ, որովհետեւ, մերինը, թաղարներու մէջ՝ գետինը փորելով գետեղած էինք. Նշանին ֆապրիքէն բերուած էին բոլորն ալ, օթոներով: Ջուր ալ կու տայինք: Չեմ մոռնար, Նէշէ՛թ Ուարրազը զարմացած ըսաւ.

- «Ուրիշ տեղ կանաչութիւն, ծաղիկ չմնաց, հոս, Նոր վարդ, մեխակ կը բացուի»:

Նաեւ, աշտարակ շինած էինք: Մարդը (գնդ. Ուիլսըն) վրան բարձրացաւ: Հոն, առաջնութիւնը մեզի տրուեցաւ:

Գործակից աստիճանաւոր եղբայրներս եղան Յովհաննէս Խաչատուրեան, Նորայր Տիլպէրեան, Ճորճ Բարսեղեան, Սարգիս Պապօղլեան, Խորէն Նազարեան, Սեդրակ Քիլոյեան, Եդուարդ Ճինոյեան, Վարդգէս Կիւրեղեան, Յովհաննէս Թերճանեան...

Երկու խօսք ալ՝ 1942 եւ 1943 թուականներու բանակումներուն մասին:

1938-ին, սուրիական Սանճաքը Թուրքիոյ տրուեցաւ: Չորս տարի, սկաուտներս, տարեկան բանակում-

ներէ գրկուեցանք: Բանակումը, պատասխանատու աստիճանաւոր պատրաստելու, դաստիարակչական դպրոցի դեր կը կատարէր:

Ժողովի մը ընթացքին, եղբ. Նշանի քաջալերանքին վրայ, լուրջ աշխատանքի սկսանք՝ բանակումը Լիբանան կայացնելու՝ Շթորա, Զահլէ, Ռայաք, Պաալպէք: Նախ, բոլոր խումբերուն բացատրեցինք: Արդիւնքը քաջալերական չէր: Ստիպուեցանք ծնողներուն այցելել եւ մեր բացատրողական խօսքն ըսել: 22 սկաւուտ արձանագրուեցան, երբ, մենք, այն ատեն 1500 սկաւուտ ունէինք: Իսկապէս, որ քաղաքական կացութիւնը տակաւին յստակ չէր: Միակ առարկութիւնը՝ ծնողներուն, ա՛յս էր: Անկեղծ ըլլալու համար, Հ.Մ.Ը.Մ.-ի վարչութիւնն անգամ համաձայն չէր: Միա՛կ անձը եղբ. Նշան Թիւսիւզեանն էր, որ մեզ կը քաջալերէր, բարոյական եւ նիւթական ամէն զոհողութիւն յանձն առնելով:

Բանակումի թուականէն չորս շաբաթ առաջ, սկսանք շաբաթական երկու օր՝ երգեր սորվեցնել, ինչպէս նաեւ, մեր ընելիք ծրագիրը պատրաստել: Նիւթական ապահովելու համար «Թիւ 6 խելագարը» կատակերգութիւնը պատրաստելու փորձերու ալ սկսանք:

Ամէն ինչ օրինաւոր ձեւով կը կատարուէր՝ ապաւինելով մեր ժողովուրդին՝ սկաւուտիզմին հանդէպ ունեցած գուրգուրանքին:

Շոգեկառքով ճամբայ ելանք Հալէպէն: Մեր առաջին բանակատեղին հաստատեցինք, Շթորա, Օթել Մասսապքիին դիմացը հոսող ջուրին քով: Այն ժամանակ արտ էր,

հիմա հսկայ ծառերով զարդարուած է: Սկ. Խորհուրդը զիս պատասխանատու նշանակեց: Օգնականներս էին Նորայր Տիլպերեան եւ Յովհաննէս Խաչատուրեան: Մեր բարեւին իմաստը լրիւ կը գործադրէինք: Բթամատը մեծ եղբօր պարտականութիւնը կատարող, իսկ ճկոյթ մատը՝ հնազանդող:

Առաջին օրէն, զիշեր եւ ցերեկ, պահակութեան կանոնաւոր դրութիւն հաստատեցինք՝ զիշերուան կարգախօսերով (փարոլա), նաեւ հերթապահի, մատակարարի, խոհարարի, հերթով, կարգ ու կանոնով, մէկ խօսքով՝ սկաուտական տիսիպլինը լրիւ կը գործադրէինք: Շատ ուրախ եւ խանդավառ էինք բոլորս ալ, փաստը՝ 1943-ին, 44 հոգի մասնակցեցան, առանց դժուարութեան:

Երկրորդ օրը, շարքով, երգելով մօտակայ Ըժտեթա գիւղը ելանք: Վերադարձի ճամբուն վրայ, ժանտարմըրիի ոստիկաններ մեզ կեցուցին, հարց ու փորձ ըրին եւ ըսին, որ վաղն առաւօտ, ժամը 9-ին, իրենց կեդրոն ըլլամ ներկայանալու քոմանտանին: Շթորա ունէինք պրն. Գրիգոր Գուտուլեանը, որ իր զաւակներով միասին մեզի օգտակար կ'ըլլար: Անմիջապէս մօտը գացի եւ պատմեցի պատահարը:

- «Մի՛ մտահոգուիր, գնա՛ իր մօտ եւ հետը թրքերէն խօսիր, որովհետեւ, ան՝ թրքական ընտանիքէ սերած է եւ շատ կախորժի» պատասխանեց ան:

Տրուած ցուցմունքին համեմատ շարժեցայ: Շատ ուրախացաւ մեզի վախ պատճառած քոմանտանը, ընդունելութիւնը եղաւ սիրալիր, նոյնիսկ՝ առաջարկեց,

որ բանի մը պէտք ունեցած պարագայիս՝ իրեն դիմեմ: Երբ յաղթական վերադարձայ բանակատեղին, ուրախութիւնը կատարեալ եղաւ: Իրապէս ալ, բոլորս շատ մտահոգուած էինք: Երթալէ առաջ, մէկը փողկապս կը շտկէր, միւսը տաբատս կը խոզանակէր: Սիրով եւ յարգանքով կապուած էինք բոլորս՝ իրարու:

Մեր պատրաստած «Թիւ 5 խելագարը» ներկայացուցինք Շթորա, հայ բողոքականաց սրահին մէջ, արտօնութիւն առնելով Խնամակալութենէն:

Երեք սկաուտներ՝ Նորայր Տիլպերեան, Վարդգէս Կիրեղեան եւ Յարութիւն Վարդանեան, գիշերները՝ լամբի լոյսով տոմսակները կը պատրաստէին, քանի որ շատ գեղեցիկ եւ մաքուր գիր ունէին:

Ներկայացումը տեղի ունեցաւ կոկիկ բազմութեան մը ներկայութեան: Ամենէն պատուական, նշանաւոր հիւրերնիս՝ Հայաստանի Հանրապետութեան կրթական նախարար՝ Նիկոլ Աղբալեանն էր: Անձամբ չէինք ճանչնար զինքը: Մոմով լամբ բռնած ձեռքը՝ եկաւ: Ժողովուրդը ոտքի ելաւ: Հասկցանք եկողին ով ըլլալը՝ կարճահասակ, մօրուքաւոր: Յուզումով՝ բացման խօսքը կարդացի: Հանդէսէն վերջ, տեսնուեցանք հետը: Խոստացաւ, օր մը ետք, մեզի այցելել: Բանակատեղիին մօտ, ջուրի ակ մը կար, հո՛ն ընդունեցինք պրն. Նիկոլ Աղբալեանը: Ամէնքս ալ թրջուած շապիկներով նստեցանք գետինը: Ինքն ալ քարի մը վրայ նստաւ, պրն. Գրիգոր Գուտուկեանը հետն էր: Խանդավառութեամբ երկու ժամէն աւելի խօսեցաւ: Քաջալերական խօսքերով՝ մեզ այդ վիճակին մէջ տեսնելով սկսաւ.

-«Շատ կը լսէինք Պոլսոյ Հ.Ս.Ը.Մ.-ի գործունէութեան մասին, պատանիներու ֆիզիքական եւ բարոյական կրթութեան գծով: Ուրեմն, մենք՝ որպէս Հայաստանի կառավարութեան կրթական մինիստր (նախարար) գիր ուղարկեցինք Պոլիս, Հ.Ս.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան, որպէսզի մեզի քանի մը մարզիչ պատասխանատու երիտասարդներ ուղարկեն, քանի որ, լսելով Հ.Ս.Ը.Մ.-ի աշխոյժ եւ կենսունակ գործունէութեան մասին, շատ կը հրճուէինք: Հ.Ս.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը ընդառաջեց մեր առաջարկին եւ մեզ ուղարկեց երեք մարզիկներ, յանձինն՝ Չերազի, Խոյեանի եւ Եազմաճեանի»:

Էջեր պէտք են, որ գրեմ ընդհանուր խօսածներուն համար: Խօսելու աստուածային շնորհք կար վրան, հանդարտ, սահուն, հասկնալի: Այնքա՛ն անոյշ կը խօսէր, որ մենք կարծեցինք, թէ ընդամենը քառորդ ժամ խօսեցաւ:

Բանակատեղին՝ նախաճաշին, ճաշին եւ ընթրիքին, տեսաբար անձ մը մեզ կը դիտէր: Օր մը, սկաուտներուն ըսի, թէ այդ մարդը օտարականի կը նմանի: Երկու հոգի գացին հետը խօսեցան: Անգլիացի ծովային ամիրալ է եղեր: Օր մը, զինք նախաճաշի հրաւիրեցինք: Միբով ընդառաջեց մեր փափաքին: Նախաճաշին խօսեցաւ, թէ ինքն ալ սկաուտ եղեր է: Պատերազմին վիրաւորուած՝ հանգստանալու երկեր է Օթել Մասսապքի: - «Հիմա, թոռնիկներս սկաուտ են», - ըսաւ:

Ես անունը չիշեցի, հաւանաբար յիշողներ ըլլան: Մենք ալ, մեր մասին լայն տեղեկութիւն տուինք իրեն:



Նաեւ, պատկերագարդ գրքոյկներ: Մեր ժողովուրդին մասին ալ խօսեցանք:

Շթորայէն դէպի Չահիլէ խումբը ճամբայ ելաւ, պայուսակները կոնակնիս, լրիւ, մաքուր սկաուտական տարագով: Եղբ. Խաչատուրեանը կ'առաջնորդէր այս անգամ, դէպի մեր բանակատեղին, որ Ուատի սրճարանին մօտ պիտի ըլլար: Ես յետսապահ էի, չըլլայ որ տղաքը բան մը ձգեն ճամբան: Ուշադիր կը հսկէի: Չահիլէի մուտքին, ժանտարմաները մեզի չարտօնեցին, որ Ուատի ելլելով շարունակենք մեր ճամբան...:

- «Խէյր իշալլա՛հ, եա՛ շէպէպ», - ըսին որ ժեներալ Տը Կօլը պիտի գայ:

Ստիպուած՝ պայուսակները իջեցուցինք՝ սպասելու համար: Մէյ մըն ալ տեսայ, որ սեքթօր մոթօսիքլէթով Շթորայի Ժանտարմըրիի քումանտանը եկաւ:

-«Պատրա՛ստ, պատուի կա՛ց»- հրահանգս տուի: Ձիս քովը կանչեց, հետաքրքրուեցաւ: Ըսի, որ մեզի չեն արտօներ, որ անցնինք: Անմիջապէս «Մուհամմէտ Ալի» կանչեց եւ թելադրեց, որ մեզ մինչեւ Ուատի առաջնորդեն:

Յաղթական՝ «Հ.Մ.Ը.Մ. հայ արիներ, հերոսներու դատին ժառանգ» երգելով, ճամբուն մեջտեղէն քալելու սկսանք: Երկու կողմերը շարուած հայերը, ժեներալ Տը Կօլի տեղ, մեզ դիմաւորեցին: Ազգային ոգին բարձրացաւ: Բաւական բազմութեամբ Ուատի ելանք: Բոլորը կուգէին մեզի ձեռով մը օգտակար ըլլալ: Սրճարանին տիրոջ հետ խօսեցան: Ամէնէն լաւ տեղը ընտրեցին մեզի համար:

Խաղող, ձմերուկ, սեխ բերին: Քանի մը հոգի, մինչեւ վերջ, մեզի օգտակար եղան:

Զահլէի մէջ, մեզ հիրասիրեց տիկ. Սեզա Քիւփէլեանը: «Բարձրացիր, բարձրացուր» նշանաբանին պատմականը եւ իմաստը ընդլայնուած ձեռով բացատրեց: Ամուսինը, Ռայաք, պետական բժիշկ էր: Մեզի շատ օգտակար եղաւ, որովհետեւ երբ Զահլէն Ռայաք գացինք, հո՛ն բաւական հայութիւն կար, հո՛ն ալ «Թիւ 5 խելագարը» ներկայացուցինք:

Այն տեղէն Պաալպէք գացինք: Երեք օր մնալէ ետք, ուրախ-գուարթ տրամադրութեամբ վերադարձանք Հալէպ, անշուշտ, հո՛ն ալ ժողովուրդին խարուկահանդէս մը ներկայացուցինք՝ բուրգ, արտասանութիւն, երգ եւայլն:

Իրարմէ չբաժնուած, խօսք տուին սկառուները, որ 1943-ի բանակումին, կրկնապատիկ թիւով պէտք է ընենք տարեկան բանակումը: Իրապէս ալ, 1943-ին, 44 հոգի էինք:

1943-ին, դարձեալ ես էի պատասխանատուն:

Այս բանակումին նշանակալից դէպքեր եղան:

Այնճար երթ ու դարձ՝ քալելով: Այդ օրերուն Լիբանանի խորհրդարանական առաջին ընտրութիւնները տեղի ունեցան եւ պրն. Մովսէս Տէր Գալուստեան ընտրուեցաւ երեսփոխան: Մենք գացինք, տողանցք ընելով, խանդավառեցինք ժողովուրդը: Շատ յոգնեցուցիչ արշաւ մըն էր, նամանաւանդ ճամբան քալած ատեննիս,

զինուորական ինքնաշարժներու սրարշաւ երթելէկը՝ մեծ մտահոգութիւն էր մեզի համար:

Եղբ. Արսէն Դանիէլեանը եւ եղբ. Լեւոն Պապլուզեանն ալ եկան, առաջինը՝ տարագով, երկրորդը՝ սիվիլ, տիկինով միատեղ: Նաեւ, եղբ. Լեւոն Պայրամեանը կար մեզի հետ: Պէյրութէն մեզի այցելեց եղբ. Օննիկ Մելիքսէթեանը:

Այս բանակումներուն մասնակցած սկաուտներէն եղան՝ Վարդգէս Կիրեղեան, Հրայր Գապագեան, Ճորճ Բարսեղեան, Նշան Փալանճեան, բոլորն ալ յետագային՝ բժիշկ, եւ Հրաչ Տասնապետեան՝ Փալանճեան ճեմարանի ներկայ տնօրէնը:

1946-ին, Լիբանան գացինք՝ 300 սկաուտով: Զահերով տողանցքներ կազմակերպեցինք: «Ֆանֆառ»ի խումբը, լրիւ կազմով մեզի հետ էր՝ եղբ. Յովհաննէս Խաչատուրեանի ղեկավարութեամբ: Ես, ընդհանուրին մատակարարն էի: Մեր բանակատեղին, Պուրճ Համուտ, հայ կաթոլիկներու եկեղեցոյ բակն էր: Պրն. Յակոբը՝ «Ֆանֆառ»ի ուսուցիչն ալ մեզի հետ էր:

1946-ին, ներգաղթ տեղի կունենար: Ամբողջ ժողովուրդը եռացող կաթսայի կը նմանէր: Հ.Ս.Շ.Ս.-ի սկաուտներս ալ կուզէինք ձեռով մը, գաղթողներուն օգտակար ըլլալ: Ժամադրութեամբ՝ ներգաղթի կոմիտէի ներկայացուցչին հետ մասնաւոր հանդիպում ունեցանք: Ես, Յովհաննէս Խաչատուրեանը, Ճորճ Բարսեղեանը լիազօրուած էինք: Դժբախտաբար, պրն. Երուանդ Պապոյեանը, շատ հասարակ ձեռով խօսեցաւ մեզի հետ: Աւելի ծանր բառ գործածել չեմ ուզեր: Պատմութիւնը

պէտք եղածը կըսէ այդօրինակ ռիսակալ Կոմիտէի անդամներուն մասին: Այս մասին իր տպաւորութիւնները կրնայ գրել եղբ. Յովհաննէս Խաչատուրեանը:

Շատ խորհրդաւոր եւ տպաւորիչ էր սկաւտներով Օնունդի, կէս գիշերին, եկեղեցի երթալնիս: Ակումբ կը մնայինք սկաւտներս, իբրեւ թէ պիտի քնանանք: Ժամը 1-ին կ'երթայինք եկեղեցի: Շատ պաղ կընէր: Փոխն ի փոխ Առաջնորդարան կ'երթայինք՝ վառարանին քով տաքնալու՝ երջանկայիշատակ Ջարեհ Վեհափառի արտօնութեամբ: Սկաւտներս՝ Առաջնորդին գուրգուրանքին առարկան էինք: Չեմ գիտեր, թէ արդեօք, այդ սովորութիւնը ներկայիս ալ կը շարունակուի :

Ես, այսօրինակ, շատ մը նախաձեռնութիւններու եւ միջոցառումներու պատասխանատուութիւնը ստանձնած եմ:

### ՆԵՐԱԾԱԿԱՆ.-

*Մինչեւ 20-րդ դարու յիսունական թուականները, եղբ. Մովսէս Էլէյճեան եղաւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի աստիճանաւորական կազմին տիրական ղեմքերէն մէկը:*

*Օրինեալ ժամանակաշրջան մըն էր, երբ մեր գաղթական ժողովուրդին համար, հայ լեզուն հազարամեայ գանձ մըն էր, իսկ հայրենի բարքերը՝ իսկական ապրում: Նման մթնոլորտի եւ շրջապատի մէջ գործող ղեկավար ամէն անձ կը ջանար իր լաւագոյնը տալու իր հայրենակիցներուն բարօրութեանը համար,*

նամանաւանդ, տիպար հա՛յ մարդ դառնալու ազնիւ ձգտումը առգոյ էր բոլորին մէջ, բառիս ազնուական իմաստով: Մովսէս Էլէճճեաններուն թիւը, բարեբախտաբար, շա՛տ էր այդ օրերուն եւ ա՛յդ ալ եղաւ իսկական պատճառը, որ Հ.Մ.Ը.Մ. վերածուէր մարդակերտումի անատիկ ամբողջի մը, որ կարողացաւ հայարտօրէն տոկալ, ներգաղթի նման նուիրական օրերուն, բոլոր տեսակի ամօթալի եւ պժգալի խաչակրութեանց դէմ՝ շղթայազերծուած վատանուն հայերու կողմէ:

Հաւատաւոր եւ անձնուրաց այդ սերունդին մէջ, սիրելի դէմք մըն ալ ինք էղաւ: Իր հաղորդական խառնուածքին համար կեղրոնական ու շէնշող ներկայութիւն էր: Ո՛ր որ մտնէր՝ հոն կը ստեղծուէր գուարթ մթնոլորտ, շարժում, երգ ու պար ու նաեւ՝ ինքնավստահութիւն:

Իր հակիրճ այս յուշագրութիւնը կը փաստէ, թէ ինչպիսի՛ խմորէ շինուած է այս համեստ արհեստաւոր տղան, որ ո՛չ մեծ ուսում ունի, ո՛չ ալ մանկավարժի տիտղոս, սակայն, օժտուած է, ի վերուստ, պերճախօսի, պատրաստաբանի, եւ հոգեբան-մանկավարժի աստուածային շնորհքով:

Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ը, նման զոհարերոյ անհատներու, մասնաւորաբար սկառուտական շարքերուն մէջ հասակ նետող պատասխանատուներու կը պարտի իր առաքելութեան անշէղ յառաջընթացն ու իր հաստարմատ գոյութիւնը:

*ՈՂԲԱՅԵԱԼ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐՎԻՇԵԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ*  
(1919-1994)

Այս պահուս, եթէ շուրջ հարիւրամեակ մը ետ երթանք մտքով, գտնելու համար սերունդի մը տղաքը, որոնք, իրենց շահ տ համեստ կարողութիւններով, իմաստ տուին այդ օրերու մեր հասարակական կեանքին, կեանք մը, որ վարդագոյն ըլլալէ շահ տ հեռու էր: Այդ կեանքը նման էր ամպակուտակ երկնքի մը՝ ձմեռնային տխրութեամբը թաթաւուն: 1922-1925, Հալէպ: Օտարութիւն, անորոշ ներկայ, անապահով ապագայ, միջավայրին յարմարուելու անբացատրելի հոգեվիճակ, այլեւ, գաղթական հայու դժխեմ առօրեայ՝ Հալէպի հիւղաւաններու տխուր համայնապատկերին մէջ: Տեսնել Եղեռն, ջարդ ու տարագրութիւն, ապա, ապրիլ Կիլիկեան սարսափներու անդոհանքը, ու այնուհետեւ մտածել վերստին գոյատեւելու մասին, կրկին, ծիծեռնակի նման բոյն շինել, միշտ յիշելով հայրենի հարազատ գոյնը: Ահա, այդպիսին էր այդ օրերու հայ բեկորներուն վերապահուած ճակատագիրը: Անհուն ու անյատակ ողբերգութիւն մը, որուն տարողութիւնը միայն հայը կրնայ զգալ ու տոկալ՝ հոգիի անբացատրելի հզօրութեամբ:



Ահաւասիկ, հայկական այս ողբերգութեան մէջ իսաչուող տղոցմէ մէկն ալ եղաւ եղբ. Յարութիւն

Տերվիշեան: Ան ապրեցաւ 80 տարի, որուն առաջին տասնամեակը դարձաւ իրեն եւ իրեն նման պատանի տղոց, լեռնակուտակ տառապանք, իսկ, իր կեանքի վերջին տասնամեակը, այս անգամ, տառապանքի տարբեր տեսակ մը, որուն մէջ մատ չունեցաւ թուրքը: Տարիներու բեռան տակ կքելէ ետք, յանկարծ, դառնայ անդամալոյծ, կորսնցնել ո՛չ միայն շարժելու, այլեւ խօսելու կարողութիւնը, ահաւասիկ կեանքին պարզեւած վերջին «նուէր»ը այն մարդուն, որուն իրաւունքն էր, գոնէ, վայելելու իր զաւակներուն օրինաբեր ներկայութիւնը՝ բարօր պայմաններու մէջ:

Քսանական եւ երեսնական թուականներու հայութեան համար, որ մատնուած էր ահռելի չքաւորութեան, զուրկ՝ մարդկային տարրական հանգստաւետ պայմաններէն, ապրելու միակ միջոցը պայքարիլն էր, եղունգներով ու ատամներով, համեստ օրապահիկ մը ճարելու, քարէն հաց հանելու, որպէսզի չենթարկուէր հայուն համար նախատինք նկատուած... մուրացկանութեան: Պատանի Տերվիշեան եւս, իր կարգին, կը նետուի կեանքի ասպարէզ՝ ի խնդիր պատառ մը հացի, լքելով դպրոց ու դասընկեր, խաղ եւ «հաճոյք», ու տարիներով կը պայքարի, իր սերունդի տղոց նման, ճակատագրին կողմէ իրենց վերապահուած բոլոր տեսակի դառնութիւններուն դէմ՝ առանց ընկրկելու, դիւցազնաբար:

Արդ, այդ խաչուած հայութեան համար, եթէ երբեք եղան կաթիլ մը մխիթարութիւն պարզեւող երեւոյթներ, ազգային կեանքին մէջ, ատոնցմէ կարեւորագոյնը կրնանք նկատել Հ.Մ.Ը.Մ.-ի ծնունդը՝ Հալէպի մէջ: Ճիշդ է,

որ նախապես գործած են մարզական միութիւններ, խումբեր, եղած է մարզական շարժում՝ դպրոցներուն մէջ, որոնք, անկասկած որ դրած են իրեն դրական դրոշմը այդ օրերու «մանկութիւն չունեցող տղոց» վրայ, սակայն, պետք է շեշտել, թէ Հ.Մ.Ը.Մ. բերաւ, մարզանքի եւ մարմնակրթանքի կողքին, բոլորովին տարբէ՛ր բան մը, այնպիսի՛ շունչ մը, որ վերանորոգող էր, նկարագիր կերտող, յոյս ու կամք ներշնչող, մահուան աչքերուն մէջ շեշտակի նայելու վճռականութիւն պարտադրող, վաղուան կեանքին համար անբացատրելի լաւատեսութիւն պարգեւող: Վաղուան հայութեան կերտումին համար սքանչելի նախադրեալներ շնորհող, միով բանիւ, հրաշքի համագօր երեւոյթ մը: Թող այս ըսուածներ սնապարծութիւն, չափազանցութիւն չնկատուին: Մենք, բարեբախտաբար, շա՛տ հեռու ենք նման պոռոտախօսութիւններէ: Միայն, ապրողը կրնայ կշռադատել կատարուածին դատողութիւնը: Հ.Մ.Ը.Մ.-ի 100-ամեակը խօսուն փաստն է ըսուածին: Անոր համագաղութային կառոյցը, 110 մասնաճիւղերը, աւելի քան հազար հաշուող անդամները եւ աշխարհով մէկ սփռուած՝ գաղափարապաշտ պատանեկութեան եւ երիտասարդութեան առկայութիւնը՝ բոլոր գաղութներուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-ի կանչը, ուրեմն, այդ շրջանի մեր ազգային-հասարակական տխուր կեանքին մէջ, նմանեցաւ եկեղեցւոյ զանգին հոգեպարար, անոյշ դօղանջին, հոգիներուն թեթեւութիւն բերող, մեր կամքերն ամրապնդող՝ ինչպէս հրաշագօր մարտակոչի:

Եւ շուտով, անոր դրօշին տակ համախմբուեցան, նախ, կարծէք, միա՛յն պայքարելու համար սահմանուած



փոքրաթիւ տղաք, որոնք չէին գիտեր իսկ, թէ ինչպիսի՛ առաքելութեան մը համար զօրակոչուած էին:

Եղբ. Յարութիւն եղաւ այդ աննման տղոցմէ մէկը: Ի դէպ, ինչպէ՛ս չի՞շել, այս պահուս, Յարութիւն Տուզճեանը, Թադէոս Թիւթիւելեանը, Պետրոս Թագգելեանը, Չոհրապ Տէր Ղազարեանը, Յովհաննէս Առաքելեանը, Չարեհ Երկաթունին, Նորայր Տիլպերեանը, ու ասոնց հետ, առաջնորդողի դերին մէջ, Լուտեր Մասպանաճեանը, Նշան Թիւյսիւզեանը, Լեւոն Արգարեանը եւ ուրիշներ, յիշելու համար, միայն, սկառուութեան մէջ գործող վաստակաւորները:

Տակաւին, 13-14 տարեկան պատանի, եղբ. Յարութիւն կը դառնայ սկառու: Կը սորվի սկառուական դաւանանքի ոսկեայ պատուիրանները, եւ երդումին խորհուրդը՝ Ծառայել Ազգին եւ Հայրենիքին, եկեղեցւոյ եւ իր նմանին: Ի՛նչ հոյակապ ու սուրբ խօսքեր, Աւետարանի երկնային պատգամներէն աւելի՛ քաղցր ու խրախուսող: Եւ այս քանի մը խօսքերը բաւ եղան այս անհայրենիք տղոց համար, որպէսզի ինքզինքնին ճանչնային ու նետուէին աշխատանքի ընդարձակ դաշտը, գոնէ, վրէժխնդիր ըլլալու թուրքին հանդէպ, ու պատրաստէին վաղուան ինքնագիտակից, արժանապատուութեան տէր եւ գաղափարապաշտ սերունդները:

Եղբ. Յարութիւն ինկած էր, ճի՛շդ, պարարտ հողի մէջ: Կարճ ատեն ետք, ինքն ալ կը ստանձնէ համեստ պաշտօններ ու կը սկսի իր դաստիարակչական առաքելութիւնը:

Ողբացեալը համեստ ուսման տէր ըլլալով, իր խօսածներն ալ, իրեն հոգածութեան վստահուած գայլիկ փոքրիկ տղոց ուղղուած, շատ համեստ խօսքեր էին, մոգական քաշողականութեամբ, յանկցուցիչ, սրտառոտ և խօսքեր: Ան կը սէր:

- Հ.Մ.Ը.Մ.-ի գայլիկը սուտ չի՛ խօսիր:

Ան կը սիրէ եւ կը յարգէ իր ծնողքը, իր ընկերները:

Ան կը բարեւէ իր մեծ եւ փոքր սկաուտ եղբայրները:

Հայ տղան պէտք է ըլլայ այսպէ՛ս, եւ ո՛չ՝ այնպէս:

Հայ տղան պէտք է տարբե՛ր ըլլայ ուրիշ տղոցմէ, ի՛ր քալուածքով, ի՛ր խօսուածքով, ի՛ր մտածելակերպով:

Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտը չի՛ ծխեր, մի՛ խմեր, սինսօմա չէրթար: Ու մանաւանդ Հ.Մ.Ը.մ.-ի սկաուտը թրքերէն չի՛ խօսիր: Ամօ՛թ այն տղուն որ հայերէն չի խօսիր:

Ու շարանը՝ նման ոսկեայ պատուէրներուն, այն տղոց, որոնք երբեք չէին լսած նման անոյշ խօսքեր: Եւ այդ փոքրիկ տղաքը, հլու եւ հնազանդ, կը գործադրէին իրենց տրուած պատուէրները, ամենայն ճշգրտութեամբ, զիրար գերազանցելու մրցակցութեամբ:

Արդարեւ ալ, այդ օրերու Հ.Մ.Ը.Մ.-ական սկաուտը յայտնի կըլլա իր քալուածքով, ճակատը բարձր, հպարտ, ձեռքերը գրպանէն դուրս, բարեւելով իր սկաուտ եղբայրը: Անոր ժամադրավայրն էր Զաւարեան Վարժարանը: Հոգետունի ակումբը եւ կամ Հ.Մ.Ը.Մ.-ի քարքարոտ դաշտը:

Ի դեպ, այդ օրերու մեր զանգուածներուն մեծագոյն ամօթը կը նկատուէր թրխաքօսութիւնը: Դարերու ընթացքին, պարտադրանքի տակ, թրքախօս դարձած այդ ընտանիքներուն սկաւուտ տղաքը (մեծամասնութեամբ՝ այնթապցի) իրենց կամքի ուժով կըրցան պարտադրել իրենց ծնողներուն, որպէսզի հայերէն խօսիլ սորվին: Յիշեալ ժամանակաշրջանի սկաւուտ տղաքը հայերէնով կը պատասխանէին իրենց թրքախօս ծնողներուն, որոնք ի վերջոյ, հնազանդիլ գիտցան իրենց տղոց «զինուորական» հրահանգներուն: Արդարեւ, այդ օրերու տարագաւոր սկաւուտը, մեր անհայրենիք ժողովուրդին համար, վաղուան Հայաստանի, կամ, Կիլիկիոյ մանրանկար զինուորն էր, որուն զէնքը իր սկաւուտական գաւազանն էր, եւ հրահանգը՝ պատգամ:

Ահա, այսպիսիներէն էր ողբացեալը: Պարտականութեան գլուխը՝ կարգապահ, իսկ մտերմիկ շրջանակներու մէջ՝ միշտ լրջախոհ, միշտ լաւին ձգտող ու գործող: Բայց, զարմանալիօրէն, խրախճանքի մը պահուն, կը կերպարանափոխուէր յանկարծ: Կը բարձրանար բեմ ու պահ մը կը մնար անխօս, աչքերը յառած կէտի մը, ու կը սկսէր, հարբուխէ բռնուած մէկու մը նման, փռնգտալ, քիթը մաքրել, արցունքները սրբել ու... խեղճանալ: Եւ այս բոլորը կընէր այնքա՛ն հարագատ կերպով որ երբեմն... կը խաբուէինք:

1957-1958-ին, Հալէպի Սկ. Խորհուրդի անդամ էր եւ հաշուապահը: Այս բարեմիտ ու կենսուրախ մարդը, յանկարծ կը դառնար բիրտ, երբ տղոց մօտ նկատէր քիչ մը... շոայլութիւն: Հա՛րկ էր յարգը զիտնալ ֆրանք-ֆրանք

հաւաքուած այդ աննշան գումարներուն, միութեան դրամին:

Ողբացեալ Յարութիւն Տերվիշեանը ժամանակաշրջանի մը հարազատ պատկերն է, սերունդի մը մարմնաւորութիւնը: Մէկը, որ իր համեստութեան բերումով անձանօթ մնաց շատերուն, ու երբ այսօր, կ'անդադառնանք իր մասին, կ'ափսոսանք, որ իրմէ ետք եկողները զայն չճանչցան բնաւ: Որովհետեւ, եթէ մարդիկ չեն ճանչնար քեզ, ծանօթ չեն քու ազգանուէր ու հանրանուէր ծառայութեանդ պիտի չգնահատեն քեզ, որքա՛ն ալ արժանաւոր ըլլաս, որքան ալ կեանքդ նուիրած՝ ազգիդ: Եւ ուրեմն՝ յաւիտեանս դատապարտուած պիտի մնաս մոռացութեան փոշիներուն տակ: Ցաւօք, ողբացեալ եղբայրն ալ «արժանացաւ» այս ճակատագրին:

Ան մնաց գաղափարապաշտ այն տղան, որ մինչեւ մահ, խուսափեցաւ փառքի «տառապանք»էն, սիրեց իր ժողովուրդը, ծառայեց նուիրումով, անսակարկ սիրով:

Արդա՛ր արժանեաց շքանշան, յետ մահու:

Կը մնայ մաղթել, որ նորահաս սերունդներ եղբ. Տերվիշեանի հայադրոշմ օրինակով, շարունակեն իրենց վստահուած սուրբ գործը՝ Հ.Մ.Ը.Մ.-ի դրօշին տակ ու միշտ յիշեն անոր համեստ խօսքերը.

Հ.Մ.Ը.Մ.-ի գայլիկը մաքուր հայերէն կը խօսի...:

ՆԵՐԱԾԱԿԱՆ.-

Ստորեւ կը ներկայացնենք Հ.Մ.Ը.Մ.-ի նախկին սկաուտ պատասխանատու խմբապետներէն՝ եղբ. Սարգիս Ճապաղջուրեանի յուշերը, գրուած քիչ մը յետին մանրամասնութիւններով, բայց պարզ ու հեզասահ ոճով:

Եղբ. Սարգիս Ճապաղջուրեան եղած է Հ.Մ.Ը.Մ.-ի ամենակարգապահ եւ օրինակելի սկաուտ պատասխանատուներէն մէկը: Նկարագրով անբասիր, եկեղեցասէր, բարիին հաւատացող, ու մանաւանդ հայ գեղջուկ մարդու հայրենասիրութեամբ տոգորուած: Իր յուշերուն մէջ, տեղ մը, ամենայն համոզումով կըսէ.

- Միրելի՛ հայ ծնողք, տո՛ւր զաւակդ Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական շարքերուն՝ առանց վարանումի եւ առանց սակարկութեան: Սկաուտութիւնը քեզի կը վերադարձնէ տղադ՝ մաքուր նկարագրով, ազնիւ, աշխատասէր եւ հնազանդ երիտասարդ մը:

Ճիշդ ու ճիշդ ինքն է, այո՛, զաւատացի հայ մարդր, որ կը հաւատայ գլխազիր մարդուն:

## ԵՂՔ. ՄԱՐԳԻՍ ՃԱՊԱՂՋՈՒՐԵԱՆ

Օ նած եմ 1923-ին, Բալուի Կրպօ Մազրէ գիւղը: Ինչպէս քրտական բոլոր գիւղերը, մեր գիւղն ալ դպրոց չունէր եւ ոչ ալ հայերէն խօսող, քանի որ արգիլուած էր հայերէն խօսիլը: Մեր գիւղը քրտաբնակ էր, հայ ըլլալով միայն մեր տունն է եղած: Մենք՝ մանուկներս, երբ խօսելու սկսանք, մեր առաջին բառն եղած է քրտերէն: Ուրեմն, մենք հայ ըլլալնիս անգամ չէինք գիտեր, քանի որ մեր ծնողները իրենց վախէն չէին կրնար յայտարարել թէ իրենք հայ էին: Մենք մեծցանք քիւրտի վարքով բառիս լման առումով:



1929-ի Հոկտեմբերի վերջաւորութեան, կէսօրէ ետք մը, զինուորներ եկան իմացնելու, որ մէկ ժամէն պատրաստ ըլլանք մեզմէ կէս ժամ հեռու գտնուող ուրիշ գիւղ մը երթալու համար, քանի որ այնտեղ ոստիկանատուն կար: Երբ գիւղէն դուրս ելանք, բաւական ժամանակ անցած էր եւ մթնած: Ճամբու կիսուն սկսաւ տեղատարափ անձրեւ մը: Գիւղը մնացինք մէկ ամիսի չափ, մինչեւ որ հօրեղբայրներս տուն վերադարձան, որպէսզի ծախեն հողերն ու անասունները (անշուշտ կէս գինով):

Ամիս մը ետքը, այդ գիւղի հայերուն հետ ճամբայ ելանք, եւ երկու օրէն Խարբերդ հասանք: Քաղաքը,

կարծես «խառն բերդ»ը, մրջինի բոյն եղած էր: Խարբերողի, Բալուի, Խոչաթի եւ Չարսանճագի գիւղերէն՝ հոն եկած էին, որպէսզի իրենց արտօնագրերն առնեն՝ Հալէպ երթալու համար: Հօրեղբայրս, մէկ ամիս ետքը, մեր արտօնագիրն առաւ:

Հետեւեալ օրը բեռնատար ինքնաշարժ մը բերին: Մենք՝ փոքրերս, շատ ուրախ էինք, որ Հալէպ պիտի երթայինք, իսկ մեր ծնողները կու լային: Երբ ամէն բան պատրաստ եղաւ, բոլորս ալ տեղաւորուեցանք՝ Մարտին երթալու համար, որովհետեւ, այն ժամանակ, միայն Մարտին քաղաքն էր, որ շոգեկառքով կապուած էր Հալէպի հետ: Մենք, ճամբու ընթացքին պիտի հանդիպէինք Տիգրանակերտ: Մէկ օրուան ճամբորդութենէ ետք, հասանք Տիգրանակերտ: Պանդոկ չկար, պանդոկի տեղ՝ խաներ կային: Հօրեղբայրս՝ Մուշեղը, որ Հայաստան ներգաղթած է 1947-ին, Թէլ Պրաքէն, եւ որ այսօր ողջ է եւ 110 տարեկան (մահացած՝ 1988-ին), հազար ու մէկ դժուարութեամբ տեղ մը ճարեց: Մէկ սենեակի մէջ թխմուեցանք 35 հոգի:

Շաբաթ մը մնացինք Տիգրանակերտ, ապա շարունակեցինք մեր ճամբան եւ հասանք Մարտին: Քաղաքը եւ կայարանը իրարմէ շատ հեռու չէին: Մարտինի մէջ հօրեղբայրներս վեճ ունեցան շարժավարին հետ, որ չէր ուզեր մեզ կայարան հասցնել: Վեճը հասաւ ոստիկանատուն եւ հոն հարցը հարթուեցաւ: Հասանք կայարան. բաւական ուշ էր: Ճամբորդութեան տոմսերը առնելէն ետքը, ժամը 10:00-ին, շոգեկառքը ճամբայ ելաւ: Յաջորդ օրը, իրիկուան ժամը 10:00-ին Հալէպ հասանք: Հալէպի կայարանի

մուտքին, ինձի համար անմոռանալի դեպք մը պատահեցաւ: Երբ վար իջանք շոգեկառքէն, մեծ հօրեղբայրս՝ Մուշեղը արտօնագիրը տուաւ տնօրէնին, քանի որ արտօնագիրներուն վրայ գետեղուած նկարներուն հիման վրայ ներս կ'առնէին անձերը: Իմ չար բախտէս մարդը նկարս չտեսաւ, դէմքս շատ պզտիկ ելած ըլլալուն համար: Տնօրէնը ձեռքէս բռնեց եւ ըսաւ. «Այս ձեր զաւակը չէ, զինքը ներս չեմ կրնար առնել»: Ես, առանց բան մը հասկնալու, մօրս ձեռքէն բռնած կու լայի: Այդ միջոցին կայարան եկած էին Տ. Կորիւն եւ Տ. Նշան քահանաները (Տ. Կորիւն Քհնյ. Աղաճանեան եւ Տ. Նշան Քհնյ. Մարգարեան Խարբերդէն գաղթած էին Հալէպ): Իրենք ալ սկսան ստուգել արտօնագրերը եւ վերջապէս նկարս տեսան եւ ներս առնուեցայ:

Այդ գիշեր, կայարանի դրան առջեւ պառկեցանք, մեզի պէս հարիւրներ: Առաւօտեան, մեր կնքահայրը եւ մեզի ծանօթ կին մը, որոնք մեզմէ առաջ եկած էին Հալէպ, մեզ տարին Նոր Գիւղ՝ Զէյթուն խան: Հոն, մեզի սենեակ մը ճարեցին: Սենեակը ոչ պատուհան եւ ոչ ալ դուռ ունէր, ամէն տեղ բաց էր, եղանակն ալ պաղ՝ գարնան շրջանն էր: Անկողին ալ չունէինք եւ 30-35 հոգի մէկ սենեակի մէջ: Ժամանակ մը այդ մէկ սենեակին մէջ անցուցինք: Երեք-չորս ամիս ետք, երկու հօրեղբայրներս իրենց համար մէկական սենեակ գտան եւ գացին, ապա պզտիկ քոյրս ալ բաժնուեցաւ մեզմէ: Մնացինք մեծ քրոջս հետ՝ հինգ զաւակներով:

Օր մը, մայրս ձեռքէս բռնեց եւ դպրոց տարաւ, Ազգ. Սահակեան վարժարանը: Դպրոցի տնօրէնը՝ սասունցի պարոն Արտաշէս Յովհաննէսեանն էր: Ինչպէս որ վերը



յիշած եմ, ես հայերէն չէի գիտեր: Տնօրէնը քրտերէն սկսաւ խօսիլ հետս: Դասարանի աշակերտները խնդալու սկսան: Տնօրէնը անոնց հասկցուց որ ես հայերէն չէի գիտեր: Ինձի տեղ մը տուին եւ ես նստեցայ, կարծեք ասեղի վրայ նստած ըլլայի: Դասարանը շատ պզտիկ եկաւ: Գիւղի մէջ ծնած տղայ մըն էի: Չորս կողմ կը նայիմ, ես զիս վայրենի գագան մը կարծեցի՝ մաքուր հագուած եւ մագերնին սանտրուած տղոց եւ աղջիկներուն քով: Այսպէս անցան քանի մը ամիսներ: Վարժուեցայ դպրոցական կեանքին եւ սորվեցայ հայերէն խօսիլ:

Նախակրթարանի երկրորդ դասարանն էի: 1933 թուին, իրիկուն մը դպրոցէն տուն եկայ: Գարնան պաղ եղանակն էր, կրակարանին քով նստած՝ կը մտածէի: Կարճ տաբատով, կարմիր փողկապ, կողքին կախուած սուլիչ-դանակ՝ հետն ալ չուանը, զիս իրենց քաշած էին այդ գեղեցիկ հագուստով տղաքը: Ես, երեւակայութեամբ, տղոց հետն էի, երբ մայրս իրիկուան ժամերգութենէն տուն եկաւ.

-Սարգի՛ս, ըսաւ,- այսօր գեղեցիկ հագուած տղաներ եկեղեցի եկած էին, դո՛ւն ալ գնա՛ եւ գրուի՛ր անոնց պէս:

Ուրախութենէս ոտքի ցատկեցի եւ կրակարանին զարնուեցայ: Կրակարանը դարձաւ եւ ոտքս այրեցաւ: Մինչեւ այսօր տեղը յայտնի է:

Չորեքշաբթի իրիկուն մը գացի Զաւարեան դպրոցը: Եղբ. Արսէն Դանիէլեանը զիս արձանագրեց: 1933-ի Մարտ ամսուն եղած եմ սկաուտ: Շատ ուրախ էի եւ հպարտ: Կիրակի օրերը մարզանքի կերթայի դաշտ՝ սկաուտական տարագ հագուած: Չորեքշաբթին դասա-

խօսութեան օրն էր: Լուր տրուեցաւ, որ Կիրակի օրը, տարագ հագուած, կանուխ, դաշտ պէտք է ըլլանք՝ արշաւի երթալու համար դէպի Հէլլան: Կիրակի օրը, կանուխ, 3-4 հարիւր սկաուտներ՝ Քաղաքի եւ Նոր Գիւղի, տարագաւորուած, Նոր Գիւղի դաշտին վրան, կազմպատրաստ, ճամբայ ելլելու հրահանգի կը սպասէին: Ընդհանուր խմբապետը՝ եղբ. Նշան Թիւյսիւզեանը, սուլիչով համախմբուելու ազդանշանը տուաւ, ապա ճամբայ ելլելու հրահանգ տրուեցաւ: Ամէն խումբ կամ խմբակ ճամբայ ելաւ իր պատասխանատու աստիճանաւորին առաջնորդութեամբ: Մեզմէ բաւական առաջ հետախոյզներ գացած էին, որպէսզի մեր երթալիք բանակավայրը որոշէին: Հետախոյզները իրենց ետեւ կը ձգէին նշաններ, որոնք դրուած կըլլային աջ կողմը՝ ճամբուն եզերքը կամ քարերուն եւ ծառերուն վրան: Մեր յառաջապահները այդ նշաններով, իսկ ընդհանուր խումբն ալ անոնց հետեւելով կը յայտնաբերէինք մեր բանակավայրը: Ես տակաւին չէի հասկնար գետնի վրայ դրուած նշաններուն իմաստը:

Արեւածագէն առաջ հասանք մեր արշաւին վայրը: Ամէն խմբակ, իր աստիճանաւորին հետ, յարմար տեղ մը որոշեց: Մեր խումբին վարիչն էր եղբ. Յարութիւն Տէրվիշեան, որ օրուան խոհարարները որոշեց, յետոյ, մեզ՝ մնացեալներս ազատ արձակեց, անշուշտ, ընդհանուր բանակավայրի սահմանէն դուրս չէլլելու պայմանաւ: Ընդհանուր խմբապետին հրահանգով ամէն խումբ երկու սկաուտ պիտի տար: Հսկողութեան համար պահակներ պիտի դրուէին բանակավայրին շուրջը: Մեր խումբէն՝ բախտը ինծի եւ Զարեհ Երկաթունիին

վիճակուեցաւ: Ես շատ հպարտ զգացի ինքզինքս, երբ անունս տրուեցաւ: Ներկայացանք եղբ. խմբապետին: Ամէն սկաուտ գնաց իրեն որոշուած տեղը պահակ կենալու՝ իր անբաժան գաւազանովը: Երկու ժամ պիտի մնայինք մեր պարտականութեանը վրան, մինչեւ որ մեր տեղը գային ուրիշներ: Մեր ժամանակը լրացաւ: Կէսօրուան մօտ, սկաուտ խմբակ մը վիճաբանութիւն ունեցաւ պարտիզպանին հետ: Խմբակին փոխառաջնորդն էր Հայկ անունով սկաուտ մը, որ Պարսկաստանէն եկած էր: Վիճաբանութիւնը իրարանցում առաջ բերաւ: Պահակներու միջոցաւ խմբապետին լուր տրուեցաւ: Խմբապետը հրահանգեց, որ ոչ մէկ սկաուտ չմասնակցի կռուին: Արդիւնքն այն եղաւ, որ մեզի հետ եկող նկարիչ Գուրգէնին (Գալուստեան) ականջի բլթակը վրայ տուինք: Պարտիզպանը մարդուն ականջը խածած եւ բլթակը փրցուցած էր: Սկաուտները, շուարած կը սպասէին վերջաւորութեանը: Խմբապետին ձայնը մեզ արթնցուց: Կէս ժամ ետք ճամբայ պիտի ելլէինք: Ընդհանուր լռութեան մէջ սուլիչը ազդանշեց եւ մէկ մարդու պէս առաջ շարժեցաւ սկաուտական բանակը: Սկաուտը բացատրութիւն չուրէց իր պատասխանատուներէն թէ ինչո՞ւ կէսօրուան այդ տաքին ետ կը դառնան առանց ճաշի, հազիւ կէս ժամ անցած էր մեր վերադարձի մեկնարկէն, երբ մեր դիմացն ելան Նոր Գիւղի ոստիկանութիւնն ու հայ երիտասարդութիւնը՝ սկաուտներուն ծնողներուն հետ: Եղբ. Երուանդ Յովհաննէսեան հեծիկով զացած եւ Նոր Գիւղի ոստիկանութեան լուր տուած էր պատահարի մասին: Երուանդը Հ.Մ.Ը.Մ.-ի Սկաուտական Պատուոյ Առաջինի կեդրոնի լաւագոյն

խաղացողն էր (այժմ մահացած): Մեզի հետ ետ դարձան թե՛ ստիկանները եւ թե՛ ծնողները: Ասիկա իմ սկաուտութեան, առաջին քանի մը ամիսներուն մէջ պատահած ամենայատկանշական դէպքն էր:

Կիրակի օրերը, սկաուտական տարագ հագած, մարզանքի կերթայինք: Աստիճանաւոր սկաուտները, իրենց աստիճանի ժապաւեններով, հպարտօրէն կը քալէին: Իմ մէջս բարի նախանձ մը արթնցաւ, թէ ես ե՞րբ այսպէս աստիճանաւոր պիտի ըլլամ: Ժամանակ մը ետք յայտարարուեցաւ՝ թէ անոնք, որոնք կ'ուզեն փոխառաջնորդի քննութեան մասնակցիլ, թող պատրաստուին: Մէկ ամիս միջոց կար: Ես սկսայ պատրաստուիլ: Եկաւ քննութեան օրը: Զուարեան դպրոցի մեծ սրահին մէջ քննութիւն տուինք: Ամիս մը ետք աստիճաններ ստացան անոնք, որոնք յաջողած էին: Ես ալ արժանացայ աստիճանի եղբ. Արսէն Դանիէլեանի ձեռքով: Կիրակի օր մը, դրօշակի արարողութենէն ետք, ընդհանուր սկաուտներուն ներկայութեան տեղի ունեցաւ աստիճաններու տուչութիւնը: Տուն եկայ: Կը քալէի պատերազմէն յաղթական վերադարձող զինուորականի մը պէս: Մօրս ուրախութիւնը չափ ու սահման չունէր: Երբ զիս տեսաւ կուրծքիս կախուած ժապաւենովը, ձեռքերը վեր բարձրացուց, երկինք նայեցաւ եւ «փա՛ռք քեզ, Տէ՛ր Աստուած» ըսաւ: Ես մինչեւ այսօր կը մտածեմ թէ ինչո՞ւ ըսաւ «փա՛ռք քեզ»:

1934-ի<sup>օ</sup> թէ 1935-ի մեծ Զատկին Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի եւ Պէյրութի Ա. խումբերը հաւասար մնացին, այնպէս որ Հալէպի խումբը Պէյրութ պիտի երթար հոն խաղալու համար: Սկաուտներ ալ պիտի երթային: Եղբայրս զիս ալ

դրկեց: Առաջին անգամն էր, որ Հալեպէն դուրս պիտի ելլէի: Մասնակցող սկաուտներուն թիւը 50-60-ի կը հասներ: Գիշերը, ուշ ժամուն ճամբայ ելանք եւ յաջորդ օրը՝ կէսօրին հասանք Պէյրութ: Հ.Մ.Ը.Մ.-ի դաշտը իջեցուցին մեզ, իսկ խաղացողները՝ պանդոկ: Վրանները լարուեցան: Պէյրութի սկաուտական կազմը եկաւ եւ իրենք ալ իրենց վրանները լարեցին: Պահակներ որոշուեցան, որոնցմէ մէկն ալ ես էի:

Յաջորդ օրը, պահակ կեցող պէյրութցի սկաուտէն հրաման առինք դուրս ելլելու համար: Ես, Նշան Տէր Յովակիմեանը եւ Արծիւ Իւլիպէեանը ուղղակի ծովեզերք գացինք, հոն նաւակ մը վարձեցինք Անթիլիաս երթալու եւ Բարզէն Արքեպիսկոպոսը տեսնելու: Երեքս ալ, ծովու վրայ, գլխու պտոյտ ունեցանք, սակայն մտադրած էինք, անպայման, հասնիլ մեր նպատակին: Սրբազան Հայրը մեզ շատ սիրով ընդունեցաւ, առանձին-առանձին մեր անունները եւ ո՞ր տեղացի ըլլալը հարցնելէ ետքը ոտքի ելանք, Աջը առինք եւ դուրս եկանք: Նոյն նաւակով ալ վերադարձանք: Մինչեւ մեր կեդրոն հասնիլը, կէսօրին, բաւական ժամանակ անցած էր: Եղբ. Նշան Թիւսիւզեան մեր ուշացումին պատճառը իմանալէն ետքը մեզ ազատ արձակեց:

Նշան Տէր Յովակիմեանի սկաուտական գուլպան պատռած էր: Գացինք գուլպայ առնելու: Մեր վերադարձի ճամբան կորսնցուցինք եւ մինչեւ լոյս դուրսը մնացինք: Գիշերը, մեր բացակայութիւնը բաւական իրարանցում պատճառած էր: Առաւօտեան, դրօշակի արարողութենէն ետք, խմբապետը մեզ կանչեց եւ հարցաքննեց եւ քանի որ

մեր երկրորդ յանցանքն էր, մեզ պատժեց չորս ժամ պահակ կեցնելով:

1940-ին, ես Նոր Գիւղի սկսուտական ֆուբայոլի առաջին խումբի խմբապետն էի: Հ.Մ.Ը.Մ.-ի միջ-խմբային խաղերուն՝ Նոր Գիւղի Սկ. Պատուոյ Առաջինը ակոյեան հանդիսացաւ:

Կիրակի մը, Նոր Գիւղի խաղավայրը սկսուտական մարզահանդէս մը տեղի ունեցաւ: Ես այդ մարզահանդէսին խումբիս առաջնութեան բաժակը եւ Առաջնորդի աստիճանս ստացայ: Առաջնորդ ըլլալէս ետք՝ անցայ Ա. խումբ, որուն վարիչն էր եղբ. Լեւոն Պազգալեանը: Առաջնորդի աստիճանով մնացի մինչեւ 1943:

1944-ին, երբ անգլիական բանակը Սուրիա կը գտնուէր, կարգ մը սկսուտներ աստիճանի բարձրացում կրեցին, սինեմա Հալէպի մէջ: Ներկայ էր, անգլիական բանակէն, անգլիացի սկսուտ խմբապետ մը: Եղբ. Լեւոն Պապլուզեանը բեմ հրաւիրեց այն սկսուտները, որոնք աստիճանի բարձրացում պիտի ունենային երդման արարողութեան պահուն: Երդումը կատարեց եղբ. Յովհ. Թերճանեանը: Վարիչ-Առաջնորդի աստիճան ստացան հետեւեալները. Լեւոն Մերճանեան, Տօնապետ Ճապաղջուրեան, Մանուկ Յովհաննէսեան, Մովսէս Էլէյճեան, Տիգրան Սանճեան եւ ես: Մնացի Ա. խումբին մէջ, որուն վարիչ Առաջնորդներն էին Գրիգոր Անտոնեան եւ Յովհաննէս Շահինեան: Վարիչի աստիճանովս շարունակեցի մինչեւ 1947:

Նոր Գիւղի սկսուտները միօրեայ արշաւի գացին Այնթէլի կողմը՝ ջրաղացին քով: Հոն, փոխ-խմբապետի

աստիճան ստացայ, իսկ եղբ. Կարապետ Գըլըճեանը՝ Առաջնորդի:

1951-ին ամուսնացած էի եւ առաջին աղջիկ զաւակս մէկ տարու էր, ուրեմն՝ որոշեցի հրաժարիլ պաշտօնէս: Տարի մը եւս շարունակեցի մինչեւ որ հրաժարականս ընդունուեցաւ:

Այժմ չորս զակի հայր եմ՝ երեք աղջիկ եւ մէկ մանչ: Երկու մեծերս՝ Մարի Ռոզը եւ Այտան ամուսնացած են: Երրորդը՝ Սիլվան՝ անգլերէն լեզուի եւ գրականութեան վկայեալ՝ Հալէպի պետական համալսարանէն, իսկ Համբարձում տղաս սկաուտ է եւ գայլիկներուն պատասխանատու: Աշխատած է Սկաուտական Խորհուրդի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի Վարչութեան մէջ: Շրջանաւարտ եղած է 1977-ին Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանէն: Հոս պիտի պատմեմ պզտիկ դրուագ մը:

1943-ին էր, կարծեմ, երբ անգլիական բանակը Իրաքէն՝ Գամիշլիի ճամբով Սուրիա մտաւ: Ես այդ ժամանակ կը գտնուէի Թէլ Պրաք, որուն գիւղապետը քրոջս ամուսինն էր: Այդ շրջանին արգիլուեցաւ հացահատիկի փոխադրութիւնը: Ես, քոյրս Հալէպ պիտի բերէի, որով՝ հետս մէկական պզտիկ տոպրակ ցորեն, սիսեռ, ոսպ եւ ցաւար առի եւ շոգեկառք նստեցայ: Այդ ժամանակ շոգեկառքը Թուրքիոյ մէջէն կանցնէր՝ Նիւսէյպիներն (Մծբին) Չոպանպէյ, ապա կը մտնէր սուրիական հողը: Սահմանին վրայ «Ախթերին» կայարանը սուրիացիները կը քննէին, մաքսատան քննիչ պաշտօնէան ներս մտաւ եւ երբ տոպրակները տեսաւ, հարցուց թէ ի՞նչ էին ատոնք: Առանց ծածկելու

իրականութիւնը ըսի: Քննիչը գրաւեց տոպրակները եւ գնաց: Քիչ ետք ներս մտաւ ընդհանուր պատասխանատու քննիչը (Հալէպի Իւնիոնի խումբի խաղացողներէն՝ Ջարուր, Հ.Մ.Ը.Մ.-ի միակ մրցակից եւ հակառակորդ ակումբն էր Իւնիոն Սփորթիւր) եւ յանկարծ... բարեւի կեցաւ: (Միջանկեալ ըսեմ, թէ այդ ժամանակները, առանց բացառութեան, բոլոր Հ.Մ.Ը.Մ.-ականները - սկաուտ եւ մարզիկ- իրենց կուրծքին վրան կը կրէին Հ.Մ.Ը.Մ.-ի նշանը): Շուարած վիճակս տեսնելով հարցուց թէ ի՞նչ ունէի: - Տոպրակներս վերադարձուց ինձի եւ կուրծքիս նշանը մատնանշելով. «Չե՞ս ճանչնար, այս մեր խմբապետն է», (ո՛չ թէ ես, այլ՝ նշանը): Այս ցոյց կու տայ թէ որքա՛ն մեծ էր Հ.Մ.Ը.Մ.-ի վարկը Սուրիոյ մէջ:

20 տարուան սկաուտութեանս շրջանին շատ արշաւներու մասնակցած եմ եւ երեք մեծ բանակումներու: Պիտի խօսիմ միայն մէկ հատին մասին:

Առաջին բանակումս եղաւ 1937-ի Սեպտեմբեր 17-ին, Ալէքսանտրէթի Աթըզի շրջանը, եղբ. Լեւոն Պապլուզեանի խմբապետութեամբ, նաեւ եղբ. Լեւոն Պայրամեանի: Այն օրերուն, ակումբը հոգետան մէջն էր: 30-35 սկաուտներ, Շաբաթ գիշեր ճամբայ ելանք եւ յաջորդ օր, կէսօրէ առաջ հասանք Աթըզ, որու մուտքին մեզ դիմաւորեցին հոն օդափոխութեան գացած հայ երիտասարդներ, որոնք մեզ տարին շրջանէն քիչ մը անդին՝ բարձր բլուր մը: Հոն ալ հայ կաթոլիկ խումբ մը երիտասարդներ եկած էին՝ իրենց վարդապետներով: Ասոնք իրենց տեղը մեզի ձգեցին: Բլուրը Աթըզի հիւսիսային կողմը կ'իյնար: Աթըզ պզտիկ գիւղ մըն էր, գեղեցիկ պարտեզներ ուներ եւ համով պտուղներ՝ տանձ,



խնձոր, սալոր, դեղձ ու նամանաւանդ ջուր՝ առողջարար եւ պաղ: Տեղացիք կըսէին թէ մարդիկ թիթեղներով ջուր կը տանին մինչեւ Եգիպտոս: Աղբիւրը, մեր բանակավայրէն հազիւ 50 կամ 60 մեթր հեռու էր: Ամէն առաւօտ, շարքով կիջնէինք հոն՝ լուացուելու:

Կէս ժամէն վրանները լարուած էին: Սկաուտները բանակավայրին սահմանը ճշդեցին քարերով, ապա սկաուտական գաւազաններ ցիցի պէս գետին գամեցին եւ չուաններով իրարու կապեցին: Մուտքի դուռը շինուեցաւ եւ գետինը յարդարուեցաւ: Ճիշդ բանակավայրին մէջտեղը երկայն եւ հաստ ձող մը կանգնուեցաւ, որուն վրան լամբ մը, ժամացոյց մը եւ ցուցակ մը, ուր ցոյց կը տրուին պահակներուն, խոհարարներուն եւ մատակարարներուն անունները:

Մենք, Հալէպէն, մեզի հետ մեծ սել շուն մը տարած էինք Տիանա անունով: Տիանան, օրուան բոլոր ժամերուն, պահակ էր՝ բոլոր պահակ կեցողներուն հետ:

Մեր բանակավայրին արեւելեան կողմը կանաչութեամբ ծածկուած լեռնաշղթայ մըն էր, արեւմտեան կողմը՝ միջերկրական ծովը, հարաւային կողմը՝ Աթրզը, Հիւսիսէն ճամբայ մը, որ եգիպտացորեն ցանուած արտը երկուքի բաժնելով դէպի Ալեքսանտրէթ կէրթար: Բանակավայրը, օրը քանի մը անգամ մշուշով կը ծածկուէր՝ զիրար չտեսնելու աստիճան:

Իրիկուն մը, սկաուտները ցուցատախտակին վրան կարդացին թէ վաղը՝ առաւօտեան կանուխ արշաւ կար դէպի Իսկէնտերուն, բացի պզտիկներէն եւ Հ.Մ.Ը.Մ.-ի

նախկին վարչական Տիգրան Յովակիմեանէն (այժմ՝ մահացած):

Ժամանակէն առաջ, արշաւի գացող սկաուտները պատրաստ կը սպասէին: Նախ՝ Տաղ լեռը պիտի երթայինք, յետոյ Իսկէնտերուն պիտի իջնէինք: Տաղը բաւական բարձր լեռ մըն է: Լեռան բարձունքին՝ մեր խումբը անձրեւի բռնուեցաւ: Յուրտէն դողալու սկսանք: Այդ վիճակով կարելի չէր շարունակել ճամբան: Հանգիստի հրամանը տրուեցաւ խմբապետին կողմէ: Կրակ վառելու համար չորցած ծառի ճիւղեր հաւաքեցինք: Կրակը վառեց եղբ. Լեւոն Պայրամեանը եւ սկաուտները թէ՛ տաքցան եւ թէ իրենց հագուստները չորցուցին: Մինչ այդ, անձրեւը կեցած էր: Օրուան խոհարարը մեր նախաճաշը պատրաստեց՝ մէկական հաց եւ տուփի միս: Նախաճաշէն ետք շարունակեցինք մեր ճամբան մինչեւ լեռան գագաթը: Արեւը բաւական բարձրացած էր եւ օդն ալ տաքցած: Իսկէնտերուն քաղաքը եւ ծովը մեր աչքերուն առջեւն էին եւ շատ ալ մօտ: Այդպէս կէրելեր մեզի, բայց բաւական ճամբայ ունէինք քալելու: Կէսօրուան մօտ հասանք քաղաքը: Տեղացի հայ երիտասարդներ մեզ տարին ծովեզերք՝ սրճարան մը: Այն սկաուտները, որոնք լողալ գիտէին, խմբապետին հրամանով հանուեցան եւ ջուր իջան: Կէսօրուան ճաշը ըրինք նոյն սրճարանին մէջ: Ժամը երեքին, բանակավայր դառնալու համար ճամբայ ելանք: Քաղաքէն կէս ժամ հեռաւորութիւն ունեցող ճամբուն վրայ, կանաչութիւնով ծածկուած հոսուն առուակ մը կար: Բարձր ծառերուն շուքին տակ նստեցանք: Մեզի մէկական հաց եւ կտոր մը պանիր տրուեցաւ խոհա-

րարին կողմէ: Սկառուներ, օրուան յոգնութենէն ետք, կանաչութեան վրան փռուելով քնացան: Խմբապետն ու փոխ-խմբապետը եւս քնացան:

Ես, Ղազար Շահպազեանը եւ Համբարձում Խտրալեանը նստած էինք: Առիթէն օգտուելով, որոշեցինք անմիջապէս երթալ քաղաք, պատառ մը ուտելու, այն յոյսով, որ շուտով կը վերադառնանք եւ կը հասնինք խումբին ու միասին ճամբայ կ'ելլենք, առանց մեր փախուստը զգացնելու: Երեքս միասին ուղղուեցանք քաղաք: Մեր հանդիպած առաջին խանութպանէն ուտելիք ուզեցինք: - Չկայ, ըսաւ: Մէկական պաղ օշարակ խմեցինք ու ետ դարձանք: Հայ երիտասարդ մը տեսնելով մեզ ըսաւ. «Ձեր ընկերները գացին»: Մենք արագացուցինք մեր քայլերը, բայց չհասանք իրենց: Մտածելու սկսանք թէ ո՞ր մէկ ճամբով գացած էին, քանի որ բանակավայր երթալու համար երկու ճամբայ կար՝ լեռնային եւ դաշտային: Եթէ դաշտի ճամբով երթան՝ ուրեմն ինքնաշարժ պիտի առնեն: Սկառուտը, երբ բանակավայրէն դուրս արշաւի կ'ելլէ, անպայման քալելով կ'երթայ: Մենք ընտրեցինք առաջինը եւ շարունակեցինք մեր ճամբան լեռներու կածաններով: Առաջին գառիվերը կտրելէ ետք հասանք լեռան գագաթը, որմէ ետք մեր առջեւ գառիվար էր, բայց վտանգաւոր: Օրը բաւական յառաջացած էր: Չորին երկու կողմերը եզերող լեռներուն մութը սկսաւ թանձրանալ: Ո՛չ սկառու եւ ո՛չ ալ անոնց հետքը տեսանք: Վախնալու սկսանք: Մեր վախէն իրարու հետ չէինք խօսեր, լուռ ու մունջ կը քալէինք: Չորին երկու կողմերէն կը լսէինք թուրք հովիւներուն ձայները: Քանի թրքերէն կը խօսէին,

Ղազարը հարցուց: Թե՛ մեզի պէս հագուած մարդոց հանդիպեցա՞ն: - Ո՛չ, պատասխանեցին,- քայց երբ որ հասկցան թե՛ մենք Աթըզ պիտի երթանք, տարեց հովիւր մատնանշեց ըսելով.

- «Այս ճամբան շիտակ Աթըզ կը տանի»:

Մենք արագացուցինք մեր քայլերը: Համբարձումը ձեռքի լուսարձակ մը ունէր, մեր առջեւէն կ'երթար, ես՝ մէջտեղէն, իսկ ամենավերջը՝ Ղազարը: Կէս ժամի չափ քալեցինք եւ հանդիպեցանք քանի մը բնակարանէ բաղկացող գիւղի մը: Կին մը սաճի վրայ հաց կ'էփէր: Հացին անոյշ հոտը մեր ախորժակը գրգռեց: Դարձեալ Ղազարը հարցուց թրքերէնով՝ թե՛ մեզի պէս հագուած մարդիկ տեսա՞ն:

- «Այո՛, պատասխանեց, կէս ժամ եղաւ որ անցան»:

Մեզի սաճի տաք հաց տուաւ: Մեր տխրութիւնը ուրախութեան փոխուեցաւ: Մէկ ժամի չափ ալ քալեցինք: Համբարձումը կ'եցաւ եւ լուսարձակը մօտեցուց: Առաւօտեան մեր տեսած աղբիւրն էր: Ուրախացանք, որ շիտակ ճամբով քալած էինք, յետոյ որ սկսուտները նոր անցած էին, ջուր խմած ու քարը թաց էր: Բայց, տակաւին ունէինք մեզի մտավախութիւն պատճառող վտանգաւոր ճամբայ մը, որուն մէջէն պիտի անցնէինք: Մեր առջեւ կար արտ մը, ուր եզիպտացորեն ցանուած էր: Եզիպտացորենը բաւական բարձր էր եւ գլուխը՝ լեցուած: Մեր մեծերէն լսած էի, որ արջը թշնամի է եզիպտացորենին: Գիշերները կը մտնէ արտ, թե՛ կ'ուտէ եւ թե՛ ալ կը կոխկոտէ եւ գետնի հաւասար կընէ: Այդտեղէն ալ անցանք առանց վտանգի: Բանակավայրի կեդրոնը

սարքուած գլխաւոր ձողին վրայ կախուած լապտերը տեսանք, այլեւս ազատած էինք, բայց կարեւորագոյնին մասին չէինք մտածած թէ ինչպէ՞ս բանակավայրէն ներս պիտի մտնէինք, քանի սկաուտական կանոնագրին դեմ գործած էինք: Երբ բանակավայր հասանք՝ ներս առնուեցանք: Եղբ. խմբապետը պատուիրած էր պահակին, որ մեզ ներս առնէր: Օրուան պահակը՝ Ստեփան Մելիքսէթեանն էր, Հալէպի Հ.Ս.Շ.Ս.-ի սկաուտական Պատուոյ Առաջին ֆութպոլի խումբի խաղացողը (այժմ՝ ոչ եւս է): Ներս առնուելէն ետքը զգացինք մեր անօթութիւնը: Խոհանոցէն չէինք կրնար ուտելիք առնել, քանի խոհարարը քնացած էր (եղբ. Խորէն Նազարեանը՝ այժմու սկաուտ ընդհ. խմբապետը):

Առաւօտուն, դրօշակի արարողութենէն ետք, նախաճաշի նստեցանք: Ամէն սկաուտ միշտ միեւնոյն տեղը պիտի նստէր: Ես գետինը փռուած սփռոցին ծայրը կը նստէի, իսկ խմբապետը՝ դիմացս, միւս ծայրը: Լուռ կը սպասէինք: Երբ նախաճաշը պատրաստուեցաւ, խմբապետը հրահանգեց որ աղօթեմ, քանի 15-օրեայ բանակումի օրերուն ես էի, որ կ'աղօթէի եւ ասոր համար բանակումին մասնակցող սկաուտները զիս «Տէր Հայր» անունով կը կանչէին եւ մինչեւ այսօր, եղբ. Խորէն Նազարեանը երբ հանդիպի «Օրհնեա՛, Տէր» կըսէ, իսկ ես՝ «Ողջո՞յն հայոց մեծագոր քաջացն քաջին՝ Խորէն Խորխորունիին...»:

Միւս երկու բանակումները, որոնց մասնակցած եմ, եղած են 1939 եւ 1942 թուականներուն, եղբ. Պապլուզեանի շրջանին:

Վերել ներկայացուած տողերով փորձեցի հարազատօրէն ուրուագծել 1933-էն մինչեւ 1952 երկարող շուրջ քսան տարուան սկաուտական տարիներու անմոռանալի յուշերը:

-Հ.Մ.Ը.Մ.-ը հայ իրականութեան մեջ ամենամեծ կազմակերպութիւնն է: Իսկ Ամենամեծ կազմակերպութիւնը ունի ամենամեծ պատասխանատուութիւնը: Եթէ արտերկրում ունէք ձեր կազմակերպուածութիւնը պահելու, ձեր կազմակերպութիւնը իբրեւ Հ.Մ.Ը.Մ. իր էութեամբ, գաղափարախօսութեամբ, բարոյախօսութեամբ համակուած պահելու առաքելութիւն, որպէսզի այն ոչ մի անգամ չպարպուի իր բովանդակութիւնից, ապա Հայաստանում ունէք այս կազմակերպութիւնը տարածելու, կայացնելու, նրա միջոցով անկախ Հայաստանի քաղաքացի դաստիարակելու, մեր դաւանած արժէքները տարածելու, քաղաքացիական հասարակութիւն ստեղծելու, մթնոլորտը աւելի բարոյականացնելու առաքելութիւն:

### *ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ*

-Դուք, սիրելի հայ արիներ, դուք հայրենիքի յոյսն ու լոյսն էք: Ձեր բարոյական զինուորագրութիւնը գործունէութեան լայն ու գեղեցիկ դաշտ մը ունի իր առջեւ: Կազմակերպուեցէք, ազնուացէք որքան կրնաք, լեցուցէք Ձեր սիրտն ու միտքը, վասնզի դուք պիտի ըլլաք վաղուան սրբազան հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւները:

*ԶԱԻԷՆ ԱՐՔ. ՏԷՐ ԵՂԻԱՅԵԱՆ Պատրիարք Պոլսոյ*

## ԵՂԲ. ՕՀԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ծնած եմ Խարբերդ, 1922 թուականին, ծնողքիս հետ ներգաղթած եմ ասպնջական Սուրիոյ Հալէպ քաղաքը, 1929-ին: Կը յիշեմ եւ յիշողութեանս մէջ թարմ է Ազգ. Սահակեան Վարժարանի հին շէնքը, որուն մուտքի ճակատին մարմարի վրայ գրուած էր հիմնուած 1927-ին:



Ծնողքս փութացած էր զիս արձանագրել մեր տան մօտ գտնուող այդ դպրոցը, այսինքն Ազգ. Սահակեան Վարժարան, որ մինչեւ օրս դարձած է մեր շատ սիրելի եւ ազգօգուտ վարժարաններէն մէկը:

Անցնելով դպրոցական կեանքէն, ջանանք հակիրճ պատմութիւնը ծանօթացնել Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական կենաքին:

Հազիւ թեւակոխած պատանեկութեանս սեմին ջանացած էի ունենալ ընկերական շրջանակ մը: 1936 թուականն էր, այդ օրերուն յաճախ կը տեսնէի սկաուտներ, ու ներքնապէս շատ կը ցանկայի մաս կազմել անոնց շարքերուն: Երկար մտածելէ ետք, ի վերջոյ գտայ ելքը, ու փափաքս յայտնեցի իմ այդ օրերու ընկերներէս եղբ. Սարգիս Ճապաղջուրեանին, որ ինձմէ առաջ մտած էր այդ շրջանակին մէջ:

Շատ սիրով ընդառաջելով փափաքիս եղբ. Ճապադջուրեանը զիս ծանօթացուց այդ օրերու Նոր Գիւղի բաժնին (1936) շատ երիտասարդ խմբապետ եղբ. Արսէն Դանիէլեանին, որուն թելադրութեամբ լեցնելով դիմումագիր մը, այդ օրերէն սկսեալ երաշխաւորութեամբ եղբ. Սարգիսի, ընդունուեցայ այդ մեծ ընտանիքէն ներս, եւ կոչուեցայ եղբ. Օհան Մանուկեան: Ուրախութիւնս իր գազաթնակէտին հասած էր, քանի որ ինձի համար այդ շատ սիրելի ընտանիքէն ներս ընդունուած էի, կատարելու համար իմ ազգային պարտականութիւնս այդ թուականէն սկսեալ:

Մեծ փափաքով եւ անթերի կը հետեւէի որեւէ հրահանգի որ կը պարտադրուէր սկաուտներուս: Հազիւ թէ նորեկ սկաուտ, կը յիշեմ թէ ինչ աշխատանքներ կը տանէինք այդ օրերուն: Օրինակ քաղաքի Հ.Մ.Ը.Մ.-ի դաշտը որ փշաթելով շրջապատուած էր, յետոյ թիթեղով, ինչ հոգածութեամբ կը տանէինք մեր աշխատանքները, կը բաւէր որ հրահանգ մը տրուէր ու ըսէին մեզի թէ այդ դաշտի բոլոր մանր ու խոշոր խճաքարերը պէտք է մաքրուին ու ահա խումբ առ խումբ շարուելով մրջինի պէս աշխատելով կը մաքրէինք առանց տրտնջալու, շատ սիրով: Մեզի համար հաճոյք կը պատճառէր այդպիսի այլ հրահանգներ գործադրել: Քաղաքի դաշտէն վերջ կարգը կու գար Նոր Գիւղի Նաւասարդ դաշտին, կրկին նոյն աշխուժութեամբ աշխատելով մեր պատասխանատուներուն ու ծնողներուն կը ներկայացնէինք ներկայանալի դաշտ եւ այլ գործունէութիւն:

Այդ օրերու իմ փոխ առաջնորդ էր եղբ. Մովսէս Էլէճեան, նախանձելի խումբ մը ունէինք, որովհետեւ



երբեք չէինք թերանար մեր պարտականություններուն մէջ, մեր երէց եղբայրներէն սորված էինք թէ գործի մը յաջողութիւնը պայմանաւորուած է հնազանդութեամբ:

Ունէինք ուրիշ եղբայր վարիչներ ալ, որոնք վերջերս դարձան փոխ խմբապետներ եւ խմբապետներ, օրինակ եղբ. Յարութիւն Տերվիշեան, Եղբ. Յարութիւն Տուզճեան, Եղբ. Լեւոն Պազգալեան, Եղբ. Նորայր Տիլպերեան (այժմ մահացած), որ վերջերս մեր խումբի վարիչ առաջնորդը եղած էր: Թուածներս Նոր Գիւղի բաժինէն են:

Այդ օրերու Հալէպի սկաւտական ընդհանուր խմբապետն էր եղբ. Նշան Թիւսիւզեանը, որուն հովանաւորութեամբ տեղի ունեցած գրաւոր քննութեան մը առիթով ստացայ փոխ առաջնորդի աստիճան: Որքան կը յիշեմ 1937 կամ 1938 թուականին էր, յետոյ յաջորդաբար աստիճանի բարձրացում կրեցի՝ առաջնորդ, վարիչ առաջնորդ եւ դեռ աւելի վերջ փոխ խմբապետ, այս աստիճանները անշուշտ ինծի համար պարծանք չէին, կը բաւեր որ հոգեկան գոհացում ստանայի ազգիս ծառայելով:

Շատ օգտուեցայ իմ կեանքիս մէջ, ծառայելով ազգիս, ցուցմունքներովը եղբ. խմբապետներուս, որոնք բոլորն ալ անխտիր սորվեցուցին մեզի մեր նշանաբանին՝ « Բարձրացիր Բարձրացուր»ի իմաստովը ապրիլ:

Նկարագութիւնս ընդհանրապէս Նոր Գիւղի մասնաճիւղի կը պատկանի, թէեւ նաեւ կ'ունենայինք քաղաքիս այլ շրջաններու մէջ միօրեայ կամ երկօրեայ արշաւներ ու բանակումներ եւայլն: Ամբողջ օրը կը գուարձանայինք, նաեւ գործի լծուած կը լարէինք

վրաններ, կը պատրաստէինք ճաշեր, եւ այսպէս իւրաքանչիւր խումբ իր ստանձնած դերը լրիւ կը կատարէր:

Բանակումներու կամ հաւաքոյթներու ընթացքին կը լսէինք մեր երեցերուն յորդորներն ու քաջալերանքները, որոնց կողքին նաեւ ինչու չէ երբեմն յանդիմանութիւններ ու դեռ աւելին յանցանքով ապտակուած եղբայրներ ալ կ'ունենայինք, այդ յանդիմանութիւններն ու ապտակները մեզի համար օգտակար կըլլային, անոր համար որ կը գիտակցէինք մեր սխալներուն ու անգամ մըն ալ նոյն փորձութեան մէջ չիյնալով բարի օրինակ կը դառնայինք մեր յաջորդներուն: Նման պարագաներու ներկայ գտնուելով, տեսած եմ թէ ինչպէս եղբայր մը քաջալերանքի արժանի դարձած է կամ ուրիշ եղբայր մը ապտակուած: Կը յիշեմ՝ թէ ինչպէս ընդի. խմբապետ եղբ. Լեւոն Պապլուզեան (այժմ մահացած Ամերիկա) ապտակեց սկաուտ մը, ինչպէս ըսի այդ ապտակներն ու յանդիմանութիւնները ամենայն համեստութեամբ կը տանէր ունէ սկաուտ եղբայր: Եւ ահա հոս էր մեր յաջողութեան ու վեհութեան գաղտնիքը- ենթարկուիլ:

Կրնամ շատ մը պտոյտներու, արշաւներու, հանդէսներու եւ տողանցքներու պատմութիւնը ընել, շարանը երկար է այս մեծ ընտանիքի գործունէութեան, միայն բոլորիս համար ամենասիրելի ու ամենասպասուած օրը Մեծ Զատկուայ Երկուշաբթին էր, երբ բոլոր շրջաններէն եկած սկաուտներու թէ Հ.Մ.Ը.Մ.-ական մարզիկներու մասնակցութեամբ հաւաքաբար տեղի ունեցած ընդհանուր տողանցքէն էր, որ մեր ժողովուրդին ու մեր ծնողներուն աչքերէն աջունքներ կը խլէր ի տես այս աւանդական դարձած տողանցքին, որ

ծովու պէս կը լեցնէր դաշտը, սկաուտ-արծուիկ-գայլիկ-կակուղ թաթիկ եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.-ական եղբայրներ: Շատ անգամ մեր ծնողները տեղատարափ անձրեւի տակ առանց ցրուելու նստած ու դիտած են մեզ:

Զմոռնամ ըսելու, թէ այդ օրերուն ստանձնած էի Առիւծ խումբը, ինծի հետ աշխատող աստիճանաւոր եղբայրներն էին՝ Կարապետ Քեօսէեան, Վարդան Ալապոզանեան, Անդրանիկ Տալգլըճեան, Սահակ Տօնիկեան, որ վերջերս ստանձնեց խումբի պատասխանատուութիւնը: Արտօնեցէք որ դէպք մը պատմեմ իմ խումբիս միօրեայ բանակումէն, դէպք մը, որուն ընդմէջէն պիտի անդրադառնամ հնազանդութեան մասին: Դէպի՛ Հէօլիւկ կոչուած արուարձանէն քիչ հեռու վայր մը՝ «Այնթէլ-Կեօզի» անունով, միօրեայ բանակումի մը ընթացքին խումբէս երկու սկաուտներ Պօղոս Պալոյեան եւ Կարապետ Պէքեարեան վէճ մը ունեցած էին իրարու հետ, կանչեցի զիրենք, երկուքն ալ շատ ամօթխածութեամբ մօտեցան քովս, իրենց արարքին համար յանդիմանելէ վերջ ապտակեցի զանոնք, եւ այդ եղբայրները ոչ մէկ դիմադարձութիւն ցուցաբերեցին, զիրար համբուրել տուի ու այդ ձեւով հաշտուեցան, ահա վեհութիւնը մեր սկաուտական կեանքին: Այդ եղբայրները որքա՞ն բարձր գնահատանք ունեցան իրենց օրինակելի ընթացքով, մինչեւ օրս ինծի համար այդպիսի սկաուտներ վեհ անձնաւորութիւններ են: Ինչպէս որ մենք ալ մեր մեծերուն յանդիմանութիւններուն կենթարկուէինք: Ստացած եմ յանդիմանութիւն մը Հ.Մ.Ը.Մ.-ական եւ ընդհ. աստենապետ Լուսեր Մասպանաճեանէն

(այժմ մահացած Թորոնթօ): Այսպես կը սորվէինք - հնագանդիր որ հնագանդին քեզի:

1941-ին կամաւոր կերպով արձանագրուեցայ ֆրանսական բանակի ծառայութեան մէջ որպէս զինուոր:

Այս զինուորական շրջանիս կը ջանայի ազատ առիթներս օգտագործել սկաուտական պարտականութեամբ:

Ինչպէս ըսի, 1941-ին զինուոր էի, այդ օրերուն պարտականութեամբ մը բանակի կողմէ Տէր Զօր դրկուեցայ ընկերոջ մը հետ, այդ ընկերն ալ սկաուտ եղբայր մըն էր, Յովհաննէս Գոլթուքեան: Ուր որ ալ ըլլայի չէի կրնար մոռնալ սկաուտական ոգի ներշնչել ինձմէ փոքր եղբայրներու, ինչ որ մենք ներշնչուած էինք մեր երեց եղբայրներէն: Եղբ. Արսէն Դանիէլեանի ու իր նման եղբայրներու շունչին տակ մեծցած ու սկաուտական ոգիով դաստիարակուած սկաուտներ ըլլալով, չէինք կրնար ձեռնաձալ նստիլ երբ առիթ կը ներկայնար:

Տէր Զօրը ինձի համար այդ օրերուն անձանօթ քաղաք մըն էր, փնտռեցի եւ ուզեցի գտնել հայեր ու ծանօթանալ իրենց հետ, նպատակ ունենալով սկաուտական գործ մը կատարել: Առիթ ունէի նման գործի մը ժամանակ յատկացնելու: Ուզեցի իմ սորված նշանաբանիս՝ «Բարձրացիր-Բարձրացուր»ի ճամբով հոգեկան գոհացում ստանալ ազգիս ծառայութեան նուիրուելով:

Շատ ուրախացայ որ առաջին ծանօթացողը եղաւ ինձի Տէր Զօրի ազգայիններէն պրն. Ղեւոնդ Նալպանտեանը (Սարգիսեան), որ այդ օրերուն պատասխանատու

դեր ստանձնած էր Տէր Զօրի ազգային կեանքէն ներս, իսկապէս որ Պրն. Ղեւոնդը ինծի համար շատ սիրելի դէմք մը եղաւ: Ծանօթացուցի ինքզինքս, թէ «Ես, թէեւ զինուոր, բայց նոյն ատեն Հալէայի Նոր Գիւղի մասնաճիւղէն ներս վարիչ առաջնորդի աստիճանով սկաուտ մըն եմ, եւ կ'ուզեմ այս գաղութին մէջ ալ ձեռնածալ չմնալ, եւ կարելի եղած չափով օգտակար դառնալ տեղւոյն փոքր կամ պատանի տղոց, սկաուտութեան ճամբով:

Պրն. Ղեւոնդի երաշխաւորութեամբ հայ ծնողները վստահեցան իրենց զաւակները ինծի, որպէսզի նախօրօք սկսուած այդ շարժումը աւելի կազմակերպուի ու թափ առնէ:

Այդ օրերէն սկսեալ խմբապետ սկաուտ կը կոչէին զիս, հակառակ անոր որ յաճախ կըսէի թէ ես խմբապետ չեմ, այլ՝ սկաուտ վարիչ մը, ինծի համար կարեւորութիւն չունէր տիտղոսը, ինծի գործ պէտք էր:

Նաեւ շուտով ծանօթացանք մեր բոլորին յարգելի ընկ. տոքթ. Գասպար Գասպարեանին, որ կրկին գործօն դեր ստանձնած էր տեղւոյն հայկական կեանքէն ներս: Այլեւս ծանօթ էի Տէր Զօրի համայն հայութեան, այդ օրէն սկսեալ բոլորն ալ կը ճանչնային եղբ. սկաուտ խմբապետ Օհան Մանուկեանը:

Սկսայ գործի, ունեցայ մօտաւորապէս հարիւրէ աւելի սկաուտներ, որոնք սորվեցան մարզանքներ՝ չափական, ռիթմիկ, շուէտական, զաւազանով եւ այլ խաղեր, ինչ որ իմ կարողութեանս սահմաններէն ներս էր: Անոնց կարգին ունեցանք ֆուրպոլի խումբ մըն ալ, որ

նոյնիսկ Միջ-մասնաճիւղային մրցումներուն, Հալէպի մէջ երկրորդական դասակարգի առաջնութիւնը խլելով բաժակի տիրացած է:

Կազմակերպելով սկաուտական խումբեր, ունեցանք միօրեայ արշաւներ եւ նաեւ բանակումներ: Այդ բանակումները տեղի կ'ունենային ընդհանրապէս պարտէզներու մէջ, կը հրաւիրէինք ծնողները վայելելու համար իրենց սկաուտ զաւակներու գործունէութիւնը եւ ձեռային աշխատանքները: Կունենայինք լողալու արշաւներ Եփրատ գետի խաղաղ շրջաններուն մէջ, այն Եփրատը՝ որ մինչեւ օրս մեր պապերուն արեան հոտը դէռ ունի իր մէջ:

Միջանկեալ ըսեմ թէ՛ այս շրջանէն վերջն էր, որ սկաուտ փոխ խմբապետի աստիճանի բարձրացում ունեցայ Հալէպի մէջ, ընդհանուր խմբապետ եղբ. Լեւոն Պապլուզեանի օրով, եւ Նոր Գիւղի խմբապետ եղբ. Արսէն Դանիէլեանի ներկայութեամբ, անշուշտ ներկայութեան նաեւ բարձր աստիճանաւորներու եւ սկաուտներու: Նոյն օրը եղբ. Սարգիս Ճապաղջուրեան նաեւ փոխ խմբապետի աստիճանի բարձրացում ունեցաւ:

Տէր Զօրի սկաուտական կեանքէն ներս որպէս սկաուտական գործունէութիւն պատրաստեցի հայ սկաուտական ընդհանուր մարզահանդէս մը: Տէր Զօրի սինեմաներէն մէկուն բացօդեայ բակին մէջ, տեղի ունեցան մարզանքի տեսակներ, բուրգեր եւ այլ խաղեր, բոլորն ալ սուլիչի հրահանգներով, նաեւ գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, շատ գոհ ձգելով

ծնողները, եւ նաեւ արաբ միութիւններէն հրաւիրուած անձնաւորութիւններ:

Իմ Տէր Զօրի սկաուտական կազմի անունները յիշել քաւական դժուար պիտի ըլլար, սակայն յիշողութեանս մէջ թարմ մնացած անուններ կան, որոնք կրնամ յիշել:

Աբրահամ Աւրնեան, որ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի նշանաւոր եւ լաւագոյն ֆութպոլիստը եղած է, ու նաեւ իր եղբայրները՝ Յակոբ, Անդրանիկ եւ Գեորգ: Խոստամալից սկաուտ Անդրանիկ Ստեփանեան եւ եղբայր Կարալիս Նալպանտեան (Սարգիսեան), որ իրաւաբանի կոչում ուներ եւ ժամանակ մը Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի տնօրէնութիւնը վարեց: Լեւոն Երանոսեան, այս եղբայրը իր զինուորութեան շրջանին մուքատտամ, վերջը աքիտի (գնդապետ) աստիճանով Սուրիոյ ֆութպոլի պատասխանատուն եղաւ: Առաւել՝ իր եղբայրները՝ Տիգրան եւ Գարեգին: Անոնց կարգին Գեորգ Ապուլապութեան, Աւետիս Էօրէնճեան: Թող ներէն բոլոր Տէր Զօրի այն սկաուտները, որոնց անունները յիշողութենէս վրիպելով կը դժուարանամ մէջբերել զանոնք:

Սկաուտական ծառայութեանս շրջանը եղած է 1936-1948: 1943 տարեշրջանէն վերջ շարունակած եմ պարտականութիւնս Հալէպի մէջ, կրկին ստանձնելով սկաուտական խումբ: Մասնակցութիւնս բերելով Հալէպի եւ Պէյրութի մէջ կազմակերպուած Միջ-մասնաճիւղային տողանցքներու եւ մրցումներու:

Այս սկաուտական գործունէութեանս թերի կամ անթերի կողմերով առընթեր կուզէի ձեր տրամադրութեան տակ դնել յիշատակի սոյն նկարները:

Շնորհակալութեամբ՝ նախկին փոխ խմբապետ  
Օհան Մանուկեան

Ծանօթ.-

Հ.Մ.Ը.Մ.-ի Յուշամատենի, Տէր Զօրի բաժնին մէջ Շրջանային Վարչութեան նամակ մը ուղղուած է, ուր որպէս Ատենադպիր ստորագրուած է Ղ. Սարգիսեան: Ատկէ տարիներ վերջ Ղեւոնդին մականունը փոխուած է եւ եղած է Ղ. Նալպանտեան:

Ս. Բախտիկեան վերոյիշեալ նամակէն վերջ յաճախ յիշած է նկարներու մէջ կամ այլուր Ղ. Նալպանտեան այս անգամ առանց փակագծի մէջ առնելու (Սարգիսեան մականունը):

Արդ՝ Ղ. Սարգիսեան եւ Ղ. Նալպանտեան նոյն անձն է:


-Մարգանք, մրցում, մրցանակ, խլուած բաժակներ, բանակում՝ երկրէ երկիր, ոգետրութիւն՝ հոգիէ հոգի, իր ներկայութեան, իր անցքէն ետք՝ միշտ երիտասարդութիւն: Այդ ամէնուն մշտանորոգ աղբիւրն է, այդ ամէնքն է այս միութիւնը եւ հայ միութիւն մը ըլլալուն՝ աւելին է այդ ամէնքէն: Պարզ արձանագրութեամբ անդամ չեն ըլլար անոնք, ուխտը պայման է եւ ուխտագրին առաջին յօդուածը կազմուած է մեզի համար վիմական ամրութիւն ունեցող «Ազգիս ու հայրենիքիս» վրայ:

*ՊՕՂՈՍ ՄԱՍՊԵԱՆ*



## ՄԱՆՈՒԷԼ ՄԱՐՔԷԵԱՆ

Ծնած եմ Այնթապ, 1920-ին: Հազիւ մէկ տարեկան՝ փոխադրուած եմ Հալէպ: Նախնական ուսումնս ստացած եմ Հալէպ՝ Այնթապցիներու Կրթասիրաց երկսեռ վարժարանին մէջ, հազիւ 12 տարեկան՝ ուսումնս կիսատ ձգելով հետեւած եմ ինքնաշարժանորդութեան (մեքանիք) արհեստին՝ մինչեւ 1938: Նոյն տարուան Յունիսին, ֆրանսական 4-րդ զօրագունդին մաս կազմելով, այդ բանակին յատուկ նուագախումբին նուագած եմ զանազան գործիքներ:



1935-1975 մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքին:

1945-1978-ին մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.-ի «Ֆանֆառ»ին:

1957-ի Յունուարին փոխադրուած եմ Գամիշլի՝ գործով եւ հոն, առաջին նախաձեռնութիւնս եղած է կազմակերպել Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական կազմը եւ նոյն ատեն հիմը դնել սկաուտական «Ֆանֆառ»ին: 1957-1961՝ շատ փայլուն շրջան մը եղաւ Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ.-ի կազմին համար: Ունեցանք 60 հոգիոնց սկաուտական նուագախումբ մը՝ իմ ղեկավարութեամբ:

Ունեցանք 150 սկաուտ, 120 գայլիկ, 160 արծուիկ:

1957-ին երբ Գամիշլի փոխադրուեցայ, Հալեպի Հ.Մ.Ը.Մ.-ի Վարչութեան եւ հանգուցեալ եղբ. Լուտեր Մասպանաճեանի գրաւոր հրահանգին անսալով, ստանձնեցի Գամիշլիի սկաուտական կազմը վերակազմակերպելու պարտականութիւնը եւ կեանքի կոչեցի Սկաուտական Խորհուրդ մը, եօթը հոգիէ բաղկացեալ իմ ատենապետութեամբս:

Անմիջապէս գործի լծուելով կազմեցինք սկաուտական խումբեր:

Մեր առաջին գործը եղաւ կազմակերպել դասախօսութիւններ, արշաւներ եւ բանակումներ: Սոյն աշխատանքը տարինք մինչեւ 1961-ի Սեպտեմբեր ամիսը, այդ սէւ օրերը:

1978-ին վերստին փոխադրուեցայ Հալեպ, ընտանեօք: Սկսայ աշխատիլ Սուրիոյ Պաշտպանութեան Նախարարութեան ամենամեծ ռազմական գործարանին մէջ (Սֆիրէ, մասմէլ տիֆաս, 790), իբր մասնագէտ պատասխանատու՝ մեծ շարժակներու տեղաւորման (մոնթաժ), մինչեւ 1980-ի վերջաւորութիւնը:

1978-1980 երեք տարի նոյն գործարանին մէջ աշխատելէ ետք, 1981-ի Յունուարին սկսայ աշխատիլ սիմենթի նոր ֆապրիքին մէջ (Միւսլիմիէ-Իսկէն Ասկարիէ, թիւ 312), նոյն պաշտօնով:

## ՖՐԱՆՍԱԿԱՆ ԶՕՐԱԳՈՒՆՐԻ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

1914-1918-ի համաշխարհային պատերազմը վերջ գտաւ դաշնակիցներու յաղթանակով եւ Թուրքիոյ ու Գերմանիոյ չարաչար պարտութեամբ: Այս պարտութեամբ Թուրքիա հրաժարեցաւ իր ունեցած իրաւունքներէն իր իշխած Միջին Արեւելքի արաբական երկիրներէն: Թուրքիան, քաշուելով Միջին Արեւելքի արաբական երկիրներէն, յաղթական դաշնակիցները իրենց միջեւ բաժնեցին արաբական աշխարհը: Յաղթական դաշնակից Ֆրանսայի բաժին ինկաւ Սուրիան եւ Լիբանանը: Ֆրանսան, երբ հաստատեց իր իշխանութիւնը եւ ստանձնեց Սուրիոյ եւ Լիբանանի հոգատարութիւնը, իր առաջին գործն եղաւ կազմակերպել նորաստեղծ ֆրանսական նոր բանակը, իր ֆրանսացի բարձրաստիճան սպաներով ու նաեւ թրքական բանակէն դասալիք եղած կարգ մը արաբ բարձրաստիճան սպաներով: Նոյն շրջանին կոչ ուղղեցին սուրիացի արաբ ժողովուրդին գալ եւ մաս կազմել ֆրանսական նորաստեղծ բանակին, որուն անունը դրին Միջին Արեւելքի 4-րդ զօրագունդ (Troupes Du Ledant 4eme Sataillon): Նոյն ժամանակամիջոցին կազմակերպեցին, բանակի կողքին, զինուորական նուագախումբը՝ Հալէպի մէջ:

Հոգատար պետութեան կոչին ընթացք տալով, այդ նուագախումբին մաս կազմեցին կարգ մը հայեր, որոնք,

նախապես, մաս կազմած էին թրքական բանակի զինուորական նուազախումբին:

Ստորեւ կը ներկայացնենք Հայկալի նորաստեղծ ֆրանսական բանակի 4-րդ զօրագունդի նուազախումբին հիմնադիր առաջին հայ զինուորներուն անուանացանկը:

- 1- Մանուկ Մանուկեան
- 2- Աւետիս Չուլճեան
- 3- Խաչեր Սաճոնեան,
- 4- Աւետիս Սանճեան
- 5- Անտոն Ունճեան
- 6- Մանուէլ Ունճեան
- 7- Հայկազ Թաշճեան
- 8- Յակոբ Քէշիշեան

Ապա, տարիներու ընթացքին ուրիշներ եւս եկան միանալու նորակազմ նուազախումբին՝ մինչեւ Սուրիոյ անկախութեան հռչակումը, 1946 Ապրիլ 17: Իսկ Սուրիոյ անկախութենէն ետք անոնք փոխանցուեցան սուրիական նորակազմ բանակին յատուկ զինուորական նուազախումբին եւ՝ իրենց ծառայութիւնը շարունակեցին մինչեւ իրենց հանգստեան կոչուիլը: Անոնցմէ կը յիշենք.

Ֆրանչիս Ունճեան, Վահրամ Էմմիեան, Մամուէլ Ֆրանկեան, Աբրահամ Տիւտիւմեան, Գրիգոր Սուրատեան, Պարգեւ Պոյաճեան, Լեւոն Միքայէլեան, Անտոն Սաճոնեան, Կարապետ Քէօյլեան, Յարութիւն Մալճեան, Յակոբ Կիւկիլիւճեան, Աբրահամ Քէշիշեան, Շիւքրիւ Քէշիշեան, Յովհաննէս Սուրատեան, Շիւքրիւ Սուրատ-

եան, Յովհաննէս Խաչատուրեան, Գրիգոր Արսլանեան, Յովհաննէս Թովալաքեան, Արամ Աստարճեան, Յարութիւն Գապատայեան, Արսէն Գապատայեան, Յարութիւն Մանուկեան, Յարութիւն Տիւտիւմեան, Պետրոս Տարագճեան, Գէորգ Ճապուրեան, Պօղոս Պասմաճեան, Գէորգ Յակոբեան, Մանուէլ Մարքէեան, Յովսէփ Ետալեան, Կարապետ Գոճաօղլանեան, Յարութիւն Պալեան, Յակոբ Աստարճեան, Սարգիս Զաքոյեան, Յարութիւն Չիրիշեան, Կարապետ Պալեան, Լեւոն Գիզիրեան, Նազար Քէշիշեան:

-Այսպէս կը ճառագայթէ սերունդ մը, որուն հոգիին մէջ հաւատքի ջահեր կան, այսպէս յաղթաքայլ ու հպարտ կանցնի երիտասարդութիւն մը, որուն սիրտը կը տրոփէ ցեղին համար ու ցեղին ուժով: Մենք շատ ենք, մենք ուժեղ ենք, մենք բարձր ենք: Մենք գաղափարապաշտ ենք. հայրենասէր ենք, մենք յաղթական ենք, մեր դրօշին ծալքերուն հետ կը ծփայ մեր ոգին, մեր թոքերուն ընդերքներէն կշռոյթ կ'առնէ գաղափարի մեր երգը, մեր աչքերուն մէջ կը ծփայ յաւիտենական հայրենիքին անոյշ պատկերը: Մեր հայրենիքին, իրական հայրենիքին, որուն հարազատները մենք ենք, ու կը մնանք նոյնիսկ այս օտար հողին վրայ: Ահա թէ ինչու մեր տղաքն ու աղջիկները կանցնին անտառներու խռովքով ու ծովերու փոթորիկով: Կանցնին յաղթական ու դրդացնելով հողը իրենց ոտքերուն տակ, կը գոչեն.

- Ճամբա՛յ բացէք, Մենք ենք ահա՛ ...:

*Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ*

## ԵՂԲ. ԳՐԻԳՈՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ

Ի սկսկան նուիրեալ մը՝ բառին լիարժէք իմաստով:  
Ծնած է 1927-ին, Հալէպ: Նախակրթական եւ միջնա-կարգ ուսումը ստացած է Հալէպի Միխիթարեան Հայրերու Վարժարանին մէջ: Տիրապետած է հայերէն, ֆրանսերէն, արաբերէն եւ թրքերէն լեզուներուն:

Հ.Մ.Ը.Մ.-ին անդամակցած է 1937-ին, նախ՝ որպէս գայիկ, ապա դարձած՝ սկաուտ եւ մարզիկ:

Մարզական կեանքի ընթացքին հետեւած է հետեւեալ մարզաճիւղերուն.

-Ֆութպոլ՝ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայացուցչական Ա. Խումբին, որպէս պահեստի խաղացող:

-Պասքեթպոլ՝ եղած է Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբի հիմնական եւ փայլուն խաղացողներէն:

-Թենիս՝ 1947-76 մասնակցած է Հալէպի ախոյեանական մրցաշարքերուն ու քանիցս առաջնութեան տիրացած: 1964-ին, Դամասկոսի մէջ, մասնակցած է թենիսի Սուրիոյ զոյգի ախոյեանական մրցումներուն եւ օրդ. Անի Ազկիւլեանի հետ դարձած Սուրիոյ ախոյեան:

-Փինկ-փոնկ՝ կիրարկած է երկար ժամանակ, բայց որպէս պարզ խաղացող:

-Աթլէթիզմ՝ 1945-էն սկսեալ հետեւած է 100 եւ 200 մետր վազքի, դրօշարշաւի եւ բարձրութիւն ցատկելու մարզաձեւերուն, յաճախ մասնակցելով Հ.Մ.Ը.Մ.-ի

կազմակերպած Զատկական Միջ-մասնաճիւղային մար-  
զախադերուն եւ ողիմպիական մրցումներուն, միշտ ալ  
գրաւելով առաջատար դիրքեր եւ արժանանալով արծաթ-  
կամ պրոնզ մետալներու: 1946-ին Պէրյուրի մէջ կայացած  
ողիմպիական խաղերուն մասնակցած են մեծ թիւով  
անուանի աթլէթներ, որոնց շարքին նաեւ եղբ. Գրիգոր  
Մովսէսեան՝ արձանագրելով առաջնակարգ փայլուն  
արդիւնքներ:

Եղբ. Մովսէսեան մաս կազմած է նաեւ մարզական  
զանազան յանձնախումբերու, ինչպէս՝ պասքէթպոլի (6  
տարի), թենիսի (25 տարի), փինկ-փոնկի (2 տարի):

1959-ին անդամակցած է Համազգային Հայ Կրթա-  
կան եւ Մշակութային Միութեան:

Եղած է Ուրֆայի Հայրենակցական Միութեան  
վարչութեան անդամ եւ ատենապետ 1964-1974 երկարող  
տասնամեակին: Նոյն կազմին մէջ պաշտօնակից-  
գործընկեր ունեցած է Հրաչ Զալեանը, Խորէն Շամլեանը,  
Վարդգէս Ուրիշեանը եւ Վարդգէս Հայրապետեանը:

1963-ին գլխաւորաբար իր ջանքերով կը հիմնուի  
Համազգայինի «Զուարթնոց» քառաձայն երգչախումբը:  
Հիմնադիր կազմին մէջ յիշատակութեան արժանի են  
նաեւ Սարգիս Սարգիսեանի, Զաւէն Տէրվիշեանի եւ  
Կարապետ Աստուրեանի անունները: Տասը տարի  
շարունակ ձեռնհասօրէն կը վարէ «Զուարթնոց»ի  
վարչութեան ատենապետի պաշտօնը:

Եղբ. Գրիգոր Մովսէսեան շուրջ քսան տարի ծառա-  
յած է Հալէպի Հայ Ծերանոցին, իբրեւ այդ մարդասի-

րական հաստատութեան երիտասարդական յանձնախումբի անդամ:

1934-1980 ժամանակաշրջանին 46 տարի շարունակ մաս կազմած է Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ դպրաց դասին՝ Գեորգ Աճեմեանի, Յովհաննէս Թովալեանի, Արսէն Սայեանի, Գեորգ Սերայտարեանի, Յարութիւն Տէրեանի եւ կարգ մը այլ մտոցուած անուններու դպրապետութեան օրերուն: Նպաստած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շինութեան եւ դարձած՝ այդ եկեղեցւոյ Ա. տարուայ ջրօրհնէքի կնքահայր:

Ութը նստաշրջան եղած է Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ դպրաց դասի վարչութեան ատենապետ՝ Արտաւազդ Միրմէեան, Զարեհ Փայասլեան, Ղեւոնդ Չէպէեան, Տաթև Սարգիսեան եւ Սուրէն Գաթարոյեան Արքեպիսկոպոս Սրբազաններու Առաջնորդութեան օրերուն:

1948-ին կը մահանայ հայրը եւ 1978-ին՝ մայրը, որոնց աւանդապահ, տոհմիկ դաստիարակութիւնը մեծ անդրադարձ կ'ունենայ եղբայր Մովսէսեանի հանրանուէր գործունէութեան ու մարդասիրական ազնիւ վարքին վրայ:

Մասնակցած է միութենական թէ ազգային բազում հանգանակութիւններու՝ գործնապէս եւ նիւթապէս օժանդակելով անոնց յաջողութեան:

Կը փրկէ Տիգրան անունով ուրֆացի տղոյ մը կեանքը, զայն հիւանդ ու անյոյս վիճակով փոխադրելով Պէյրութ եւ յանձն առնելով անոր դարմանումի եւ ինամատարութեան բոլոր ծախսերը: 15 տարուան



ընդմիջումէ ետք տղան կը ներկայանայ եղբ. Գրիգորին՝ իր անխառն երախտագիտութիւնն ու անսահման շնորհակալութիւնը յայտնելու:

Վասպուրականի երբեմնի հանրայայտ ֆութպոլիստ եղբ. Աբրահամ Քէշիշեան (Այրանճի), հրաժեշտ տալէ ետք ֆութպոլի ասպարեզին, իբրեւ թենիսմէն կանդամակցի Սէրքլ կաթոլիկ ակումբին, եւ մասնակցելով բազում մրցումներու կարճանագրէ փայլուն յաղթանակներ՝ խլելով ախոյեանական հպարտառիթ տիտղոսներ: Սակայն Սէրքլի պատասխանատուները ակնկալուած գնահատանքն ու կարեւորութիւնը չեն ընծայեր եղբ. Աբրահամին՝ ակնյայտօրէն վշտացնելով զայն: Այս պարագան կը մղէ եղբ. Մովսէսեանը, օգտուելու առիթէն եւ համոզելու եղբ. Աբրահամը, որպէսզի լքէ Սէրքլը կաթոլիկը եւ միանայ Հ.Մ.Ը.Մ.-ին: Նախաձեռնութիւնը կը յաջողի եւ եղբ. Աբրահամ մուտք կը գործէ Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանիքէն ներս, կը ստանձնէ թենիսի աղջկանց եւ մանչերու խումբերուն մարզումի պատասխանատուութիւնը, շուրջ 20-ամեակ մը Հալէպի թէ Սուրիոյ մակարդակով շարունակական յաղթանակներ ապահովելով մեր պանծալի միութեան:

Հ.Մ.Ը.Մ.-ը ազգային, բարոյական, ապահովագրական ընկերութիւն է: Ծնողներ պէտք է իրենց զաւակները անդամագրեն Հ.Մ.Ը.Մ.-ին, եթէ կուզեն որ իրենց երեխաները ոչ միայն հայ մնան, այլեւ՝ ընտանիքի հասկացողութեան մէջ մնան, ապագային իրենց ծնողքին հանդէպ սէր ունենան: Հ.Մ.Ը.Մ.-ը դպրոց է, մթնոլորտ է, եկեղեցի է:

**ԿԱՆՕ ԹԻՒԹԻՒՆՆԵԱՆ**

## ՎԱՐՊԳԷՍ ԶՕՊԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գ իտե՛նք, որ մահը բռնորիս է եւ տարօրինակ ոչինչ կայ այստեղ: Տարօրինակն այն է, սակայն, որ երբեմն, մահեր «շոնդալից» կըլլան, երբեմն ալ՝ անադմուկ ու աննշան կ'անցնին: Կը թուի, թէ Վարդգէսին մահն ալ, դժբախտ դասաւորումով մը, նմանած է այս վերջին պարագային, ճիշդ իր բնաւորութեան նման:

Վարդգէսը, Հալեպի մէջ ծանօթ, Զօպեան գերդաստանի շառաւիղներէն էր, ծնած՝ 1931-ին: Յաճախած է տեղւոյն Կրթասիրաց Վարժարանը, որուն ընթացքն աւարտելէ ետք, նետուած է կեանքի ասպարէզ՝ ի ինդիր պատառ մը հացի: Շրջան մը աշխատած է Շահվէրիլեաններուն մօտ, ապա, զբաղած է առեւտուրով:

Ներգաղթի տարիներուն (1945-1947) եղած է Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտ եղբ. Խորէն Նազարեանի խումբին մէջ: Նիհար, խելօքիկ ու անխօս պատանի մը: Իր խումբի շաբաթական գործունէութեան կողքին կը հետեւէր նաեւ, այդ օրերուն, մեր նորակազմ «Ֆանֆառ»ի փորձերուն: Պայքարի շրջան էր: Խելագա՛ր մարդիկ կը ջանային կազմալուծել ու քանդել Հ.Մ.Ը.Մ.-ը, «թաղել լ ու ոչնչացնել զայն ի սպառ»: Հրաժարականներ ր ու հրաժարականներ, տեսակ մը անամօթ խաչակրութիւն՝ մեր միութեան դէմ: Արդ, այդ դժուարին տարիներուն, անհրաժեշտ էր ունենալ զօրաւոր հաւատք՝ իր գաղափարականին հանդէպ եւ պողպատեայ կամք՝ պայքարելու համար այդ օրերու հայանուն վատերուն դէմ: Իսկ Վարդգէսը, այդ

վտիտ ու անխօս տղան մնացած է իր շարքերուն մէջ եւ դարձած՝ Հ.Մ.Ը.Մ.-ի այդ տխուր շրջանի գիտակից եւ պայքարունակ տղաներէն մէկը:

Կը նուագէր Թրումփէթ: Շատ չանցած, դարձաւ իր ճիւղին մէջ աչքառու նուագողներէն, եթէ ոչ՝ լաւագոյնը: Ի բնէ օժտեալ արուեստագետ, խորունկ սեր ունէր երաժշտութեան հանդէպ եւ օրէ օր զայն կը զարգացնէր իր մէջ: Երբ իր ընկերները կը գործածէին միութեան նուագարանները, Վարդգէս գնեց եւ ունեցաւ իր անձնական թրումփէթը, գոր յաճախ, իր թելին տակ դրած, կը պտըտցնէր իր հետ: Կիմանանք, որ ահաւասիկ, ա՛յս թրումփէթն է, որ իր սիրելիները նուիրած են Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի մասնաճիւղի «Ֆանֆառ»ի խումբին: Եւ, ի՛նչ լաւ ըրած են:

Տարիներու ընթացքին, Վարդգէս կը սկսի ճանչցուիլ հրապարակի վրայ, իբրեւ լաւագոյն Թրումփէթ նուագող: Անդամ էր Հալէպի Գործիքային Արուեստի Յանձնախումբին հովանիին տակ գործող՝ «Տիգրանեան» նուագախումբին, որ 1957-ին եւ 1959-ին տուաւ նուագահանդէսներ: Կը նուագէր, նաեւ «Ճէպէճեան» նուագախումբին:

1960-էն ետք, աշխատանքի բերումով, յանկարծ քաշուեցաւ հրապարակէն: Ատենը մէկ կ'երեւէր, ներկայ կ'ըլլար «Ֆանֆառ»ի փորձերուն: Այսօրուան մեր «Ֆանֆառ»ի վերակազմութեան ժամանակ, 1975-էն ետք, իր պատուաբեր օժանդակութիւնը բերաւ խումբի վերականգնումին իր նախկին նուագող եղբայրներուն հետ:

Ահաւասիկ, կարճ կենսագրական մը: Մեզի համար, սակայն, կարելորդ, իր կենսագրականէն աւելի, իր

բարոյական մարդու հագուագիւտ տիպարն էր: Արդարեւ, եղբ. Զօպեան ճանչցուած էր իբրեւ մաքրամաքուր մարդ: Հեգահամբոյր, զգացական ազնիւ աշխարհի տէր, բարութեան մարմնացում անձնաւորութիւն մը: Սկաուտական շարքերուն մէջ՝ հնազանդ ու կարգապահ: Գործունէութեան ընթացքին՝ աշխատասէր, մի շտ առաջին գծի վրայ: Ընկերական շրջանակի մէջ՝ ծանրախոհ եւ սակաւախօս: Երաժշտական մարզին մէջ՝ խնամուած պատրաստութիւն եւ անյազ սէր՝ դէպի նուագը: Այլ ի՞նչ կրնանք աւելցնել այս բարեմասնութեանց վրայ: Վարդգէս, բարիներուն մէջ եղաւ լաւագոյններէն, իսկ, համեստներուն մէջ՝ համեստագոյնը: Մրջինի վրայ չկոխող, աստուածավախ, օրինակելի Հ.Մ.Ը.Մ.-ական սկաուտ, տիպար՝ հայ տղայ մը:

-Հ.Մ.Ը.Մ.-ականն ու հայ սկաուտը իրե՛նցը պէտք է ընեն ապրումները հայութեան, գործեն անոր բարօրութեան եւ ազգային-քաղաքական արդար իրաւունքներու իրականացման համար, սկաուտական իրականութեան ազնուացրնող ապրումները կիրարկեն անոր ծառայութեան գծով, ու միշտ հաւատարիմ իրենց նշանաբանին, ջանան տեւաբար ԲԱՐՁՐԱՆԱԼ, բայց ԲԱՐՁՐԱՑՆԵ՛Ն մանաւանդ:

Ծանր է այս կրկնակ կոչումը թերեւս, բայց հպարտադիօ: Ծանր է հայութեան եւ անոր ծառայելու կոչումը ինքնին, բայց շքեղօրէն գեղեցիկ:

*ՀՐԱՉ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ*

## ՊԱՐՈՅՐ ԳԱՅՍՊԱԼԵԱՆ

Երկայ սերունդին համար, Պարոյրը կատարեալ անձանօթ անուն մըն է: Հալէայի Հ.Ս.Ը.Մ.-ի 1940-60-ական թուականներու գործունէութեան լուստեղեակներուն համար, միայն, անիկա կը համարուի, մասնաւորաբար ֆուրբպոլի մարզին մէջ, ժրաջան ու անխոնջ աշխատող ձեռքերուն լուսագոյններէն մէկը, այսինքն՝ ամէնօրեայ ներկայութիւն մը, ըլլա՛յ ակումբ, թէ դաշտերուն վրայ:



Պատանէկութենէն մաս կազմած է Հ.Ս.Ը.Մ.-ի շարքերուն ու մեծցած՝ անոր դրօշին տակ, անոր նուիրական մթնոլորտին մէջ: Իսկական ոսկի սիրտ մը: Միշտ ժպտերես, ընկերասէր ու... ներող: Կատարեալ նուիրեալ մը՝ իր միութեան ու հետեւաբար ալ, թող չափազանցութիւն չնկատուի մեր ըսածը, այսօր պէտք է գայն դասել, առանց վարանելու, Հ.Ս.Ը.Մ.-ը կանգուն պահող խոնարհ հերոսներուն շարքին:

Երբէ՛ք փառք չփնտռեց այս տղան, ո՛չ իսկ ցանկաց բարձր աթոռներու: Խմորումով համեստ ծնած է ու մնաց այդպիսին՝ մինչեւ կեանքին վերջը: Տէրվիշ մը: Կարմիր Խաչի տուփը ձեռքին, կամ գնդակ մը, եւ կամ շապիկներու կապոց մը թելին տակ, ան ներկայ էր միշտ ֆուրբպոլի մեր առաջնակարգ եւ երկրորդական խումբե-

րուն թե՛ փորձերուն եւ թե՛ մրցումներուն, մոռնալով անձնական հանգիստ ու գործ, որպէսզի իր միութեան անունը բարձր մնար, իսկ մարզիկ տղաքն ալ օգտուէին իր ծառայութիւններէն: Եւ այս գոհողութիւնը, այս հեւ ի հեւ վազքը՝ տարինէ՛ր ու տարիներ: Ո՛վ որ եղած է Հալէպ, այդ թուականներուն, ա՛ն կրնայ միայն գնահատել տարուած աշխատանքին կարեւորութիւնը եւ եղբ. Գայապալեանին բերած թանկագին ծառայութեան արժէքը:

Պարոյր ծնած է Հալէպ, 1921 թուականին, կէսարացի ծնողքէ: Հայրը՝ ոչխարի վաճառական, քաջածանօթ ըլլալով Կեսարիայէն մինչեւ Պաղտատ տանող բոլոր ճանապարհներուն, կրցած է ձեռով մը մահուրնէ փրկել իր ընտանիքը եւ հաստատուիլ Հալէպ, 1918-ին:

Յաճախած է Ազգ. Կիւլպէնկեան վարժարանը, ուրկէ հազիւ շրջանաւարտ, կը նետուի կեանքի ասպարեզ, որպէսզի նեցուկ կանգնի իր ծնողքին:


16 տարեկանին կարճանագրուի Հ.Մ.Ը.Մ.-ի անդամ, նախ՝ որպէս արջեր կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.-ի ողիմպիական խաղերուն, վազելով 100 եւ 200 մեթր, ապա, որպէս ֆութպոլիստ՝ աչքի կը զարնէ իր մաքուր խաղարկութեամբ եւ ցուցաբերած մարզիկի բարձր ոգիով: Մաս կը կազմէ Նոր Գիւղի առաջին խումբին, որ այդ օրերուն, միութեան զօրաւորագոյն խումբերէն էր: Կը դառնայ պատասխանատու խմբապետ ֆութպոլի երկրորդական խումբերէն՝ «Նաւասարդ»ի, «Շանթ»ի եւ «Անդրանիկ»ի: Յետագային կը գործէ ֆութպոլի յաջոր-

դական յանձնախումբերուն մէջ, իսկ յաճախ, կը նշանակուի իրաւարար՝ միջ-մասնաճիւղային խաղերու ժամանակ:

1946 թուին փափաքեցաւ, շատերուն նման, մեկնիլ հայրենիք, բայց ետ կեցաւ իր մտադրութենէն երբ իրմէ ալ պահանջեցին.... «հրաժարական»: Յետագային ալ չուզեց Ֆրանսա հաստատուիլ իր ազգականներուն մօտ, այդ երկիրը նկատելով անհարազատ միջավայր՝ իր հոգիին համար: Բայց, զարմանալիօրէն իր երեք զուակներու ընկերակցութեամբ մեկնեցաւ Գանատա (Մոնթրէալ), ուր, հազիւ տարի մը բոլորած, չդիմանալով օտար միջավայրին եւ իր սիրելիներու կարօտին, վաղահասօրէն իր մահկանացուն կնքեց, 1983-ի Յունուար 30-ին:

Եղբ. Գայապալեան եղաւ այն երախտարժան նուիրեալներէն, որոնք գիտցան իրենց երիտասարդական աւիւնը ի սպաս դնել Հ.Մ.Ը.Մ.-ի հզօրացման եւ հայ պատանիին դաստիարակութեան շնորհակալ աշխատանքին՝ դառնալով մարմնացումը զոհաբերութեան: Եկաւ օր մը, երբ ան քաշուեցաւ իր սիրած միութենական ասպարեզէն, գործի բերումով, եւ ատոր հետեւանքով ալ... մոռցուեցաւ շատերէն: Սակայն, եղբ. Պարոյր կատարեց իր պարտականութիւնը անձանօթ զինուորի մը նման, առանց որեւէ ակնկալութեան, ինչ որ եղաւ իր մեծագոյն առաքինութիւնը:

Օ նած եմ 1909-ին Քիլիս, անունս Արամ Տեր Ղուկասեան է, հօրս անունը՝ Ռուբէն, մօրս անունը՝ Եսթեր Քէշիշեան: Մէկ տարի յաճախած եմ Քիլիսի մանկապարտէզը, որմէ ետք կը հասնի 1915-ի ջարդը: Մենք ալ տուն տեղ ձգելով փախստական ճամբաներէ Հալէպ կ'ապաստանինք:



Հօրեղբայրս 1910-էն ի վեր կը բնակէր Հալէպ, պատսպարուեցանք իր տունը, Հարթ Էլ Մուհիպ (Ճիտէյտէ): Հօրեղբայրս 1912-ին գործի մտած է Պաղտատի կայարանը իբրեւ դեղագործ: Շնորհիւ իրեն հինգ ընտանիքներ փրկուեցանք ջարդէ:

Օր մը ինծի շուկայ տարաւ Ճիտէյտէ, առաւօտ կանուխ գնումի համար, շուկային պատերուն տակ տեսայ մեռած մարդիկ, վրան գոց կառք մը եկաւ հաւաքեց ամէնը ու տարաւ: Մեծ մայրս երբ մահացաւ, դարձեալ կառքը եկաւ ու տարաւ, ոչ հայրս եւ ոչ ալ հօրեղբայրս կրցան իրենց մօր ետեւէն երթալ: Կըսուի թէ՛ Ճէնկիէի մօտ տեղ մը մեծ փոս մը փորած են եւ հոն կը տանին ու կը նետեն մեռեալներու դիակները:

Թուրք ոստիկաններ օր մը անակնկալօրէն մեր բնակարանը խուզարկեցին՝ մայրս հիւանդ պառկած էր, ներս մտան մօրս սենեակը, հարց տուին թէ ինչու պառկած է: Հիւանդ է պատասխանեցինք, ասիկա «քուլե-



րա» եղած է ըսին, առին ու տարին անձանօթ հասցեով, երկու-երեք ամիս ոչ կրցանք հետքը գտնել ոչ ալ լուր մը առնել իր մասին, յոյսերնիս կտրած էին: Ձմեռը եկաւ, կը ձիւնէր, կէսօրուայ մօտ էր, մայրս իր շալին փաթթուած եկաւ, մագերը կտրած էին, ես ու քոյրս մօրս գիրկը կու լայինք մեր ուրախութենէն:

Ուրեմն մայրս տարեր են բերդին քովը հիւանդանոց մը, հիւանդանոցին բժիշկը Հայ Այնթապցի Տոքթ. Մօրքիրեան կը մօտենայ մօրս, կը հարցնէ անունը-մականունը, կը ճանչնայ հօրեղբայրս եւ մօրս ծնողքը, իրեն ընձեռուած հնարաւոր խնամքը կը տանի մինչեւ որ կատարեալ առողջանայ, մենք մեր մօր կեանքին փրկութիւնը կը պարտինք տոքթ. Մօրքիրեանին, որուն համար մեծապէս երախտապարտ ենք:

1918-ին, ամառուայ վերջաւորութեան կէսօրուայ մօտերը, Հալէպի երկինքին վրայ երեւցան, անգլիական 3 ռազմական օդանաւ, վարէն գերմանացիները կը կրակէին, վերէն ալ օդանաւերը կը ռմբակոծէին կայարանը եւ զինուորական կեդրոնները, 4-5 օր վերջը գերմանացիները եւ թուրքերը հեռացած էին Հալէպ քաղաքէն, յաջորդ օրը սկսաւ կողոպուտը, թալանը, զինուորական գործատեղիներ, մթերանոցներ, ներառեալ Պաղտատի կայարանը եւ մթերանոցը, բայց ոչ խանութներ կամ տուներ: Քաղաքը մնաց 2-3 ամիս անիշխան: Նախ եկան Շերիֆի զինուորները, յետոյ եկաւ անգլիական բանակը, առաջնորդութեամբ ժեներալ Ալէմպիի: Հայ ժողովուրդը սկսաւ դառնալ իր ծննդավայրը, հազիւ շունչ մը առած՝ 3-4 տարի վերջ ֆրասացիները սկսան պարպել Կիլիկեան եւ հայ ժողովուրդը նորէն գաղթականի ցուպը ձեռքին

եկաւ հաստատուելու Հալէպ կամ Սուրիոյ այլ քաղաքներ եւ կամ սահմանի վրայ գտնուող գիւղեր: Ունեւորները կը գաղթէին Ամերիկա, Ֆրանսա, Լիբանան, Եգիպտոս, Յունաստան եւ Պալքանեան երկիրներ:

Հալէպի մէջ ես կը յաճախէի Հայկազեան Վարժարանը, որուն ընթացքը աւարտեցի 1926-ին:

Հալէպի մարզական կեանքը կը սկսի 1912-էն, հայկական հինգ խումբեր կային՝ Համազասպ, Արարատ, Ուսումնասիրաց, Արծիւ եւ Նուպարեան (Բարեգործականի խումբը որ կազմուած էր որբերէ): Ամենագորաւոր խումբը Արծիւն էր, որուն խմբապետը Ֆերտինանտ Սահակեանն էր, այս խումբը կը խաղար ֆրանսական զինուորական խումբերու հետ եւ գրեթէ միշտ կը յաղթեր: Կը յիշեմ Կիրակի մը, երբ կը խաղար գորաւոր զինուորական խումբի մը հետ, առաջին կիսախաղին Արծիւ խումբը պարտուած էր 2 կոլով, խաղցողներէն Յարութիւն Սահակեան ուշացած էր, երկրորդ կիսախաղին միացաւ խումբին եւ 3-2 Արծիւ յաղթական աւարտեց մրցումը շնորհիւ Յարութիւնին՝ որ 3 կոլ նշանակեց:

Կային նաեւ երկրորդական խումբեր, որոնք մեծամասնութեամբ դպրոցականներէ կը բաղկանային, ինչպէս՝ Կայծակ, Շանթապառած, Որսորդ... խումբերը: Կայծակ խումբը յետագային ամբողջութեամբ միացաւ Հ.Մ.Ը.Մ.-ին: Հ.Մ.Ը.Մ.-ը կազմուեցաւ 1926-ի առաջին ամիսներուն, ղեկավարութեամբ Պ. Լուտեր Մասպանաճեանի, Պ. Միհրան Կարապետեանի, Սահակ Խաչատուրեանի, Գեղամ Ազկիլեանի, Սուրէն Գալենտերի,

Լեւոն Արզարեանի: Նոյն թուականին, եւ, Անդրանիկ Աթթարեան, Անդրանիկ Քէշիշեան եւ ուրիշ դպրոցական ընկերներ արձանագրուեցանք Հ.Մ.Ը.Մ.-ին: Առաջին վարչութեան ժողովները կը գումարուէին եկեղեցոյ մանկապարտեզի սենեակներէն մէկուն մէջ: Բակին մէջ կային մարզական գործիքներ, որոնց վրայ Փանոսը, Եզեկիէլը եւ ուրիշներ փորձեր կը կատարէին: Նորակազմ Հ.Մ.Ը.Մ.-ին կը պակսէր նիւթականը: Նոյն տարին մարզահանդէս մը տրուեցաւ Սինեմա Օրիանթալի մէջ, Յուլիս կամ Օգոստոս ամսուն: Պ. Անդրանիկ Աթթարեան ունի նկար մը առնուած բուրգի փորձի պահուն, 22 Յուլիս 1926 թուակիր, ուր կերելին բաւական ծանօթ պատանիներ եւ երիտասարդներ: Աթթարեանը, Անդօ Գափլանեանը, Նշան Թիւսիւիզեանը, Տոքթ. Թուխման-եանը, Յով. Առաքելեանը, Մարգիս Հիսարլեանը եւ ուրիշներ՝ մեծամասնութեամբ դպրոցականներ:

1930-ին գնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի մարզադաշտը, որուն շինութեան աշխատանքը տարին Հ.Մ.Ը.Մ.-ի անդամները, անոնք մեծամասնութեամբ դպրոցական մանուկներ եւ պատանիներ էին: Դաշտի շինութիւնը աւարտեցաւ 1930-ի վերջաւորութեան:

Մարզադաշտի կառուցումը աւարտելէն ետք Հ.Մ.Ը.Մ.-ը կազմակերպեց հայկական խումբերու միջեւ ախոյեանական մրցումներ: Մասնակից խումբերն էին՝ Հ.Մ.Ը.Մ., Լիկա, Արարատ, Վասպուրական եւ Նուպարեան:

Այս մրցումները բաւական երկար տևեցին, աւարտականի հասան Հ.Մ.Ը.Մ.-ն ու Լիկան: Առաջին մրցումը 1-1, հաւասար արդիւնքով վերջացաւ, մրցումը յետաձգուեցաւ յաջորդ կիրակի օրուան: Յաջորդ Կիրակի մրցումը սկսաւ իրաւարարութեամբ ֆրանսացի զինուորականի մը: Խաղի առաջին պահերուն Լիկան յաջողեցաւ նշանակել իր առաջին կէտը, երկրորդ կիսախաղին Հ.Մ.Ը.Մ.-ը սկսաւ ճնշել հակառակորդին բերդը: Հ.Մ.Ը.Մ.-ի յառաջապահ գիծէն Վահրամ Վարժապետեանը ճեղքեց Լիկայի պաշտպանողական գիծը, հազիւ կոլէն 7-8 մեթր մնացած Լիկայի յետսապահ Յարութիւն Խաչատուրեանը Վահրամին թելէն բռնելով քաշեց եւ գետին փռեց:

Իրաւարարը փենալթի սուլեց, Լիկան դէմ եկաւ, բաւական վիճաբանութիւններէն վերջ առանց արդիւնքի խաղը կիսաւարտ մնաց: Հ.Մ.Ը.Մ.-ը նիւթականով օգտուեցաւ այս խաղերէն:

Տոքթ. Յակոբ Գասապեան 1935-ին զիս քովը կանչած էր, ինձմէ խնդրեց որ անդամավճարները ես գանձեմ, այս գործը քանի - քանի անդամներու վստահուեցաւ համեմատական շահոյթի կամ վարձատրութեան փոխարէն, բայց առանց արդիւնքի: Ես այս գործը, մէկ տարի ստանձնեցի: 95 ս.ո. հաւաքեր էի: Հ.Մ.Ը.Մ.-ի ընդհանուր ժողովին, որ տեղի կունենար եկեղեցւոյ մանկապարտէզի սրահը, տոքթ. Գասապեանը ժողովի անունով շնորհակալութիւն յայտնեց, որ մինչեւ հիմա ոեւէ մէկը այսքան գումար չէր կրցած հաւաքել: 1942-ին հոգետունէն փոխադրուեցանք Թիլէլի ակումբը: Վարչութեան որոշումով կազմուեցաւ հինգ հոգիւնց

զանձիչ յանձնախումբ մը, որուն ատենապետը եւ զանձապահը եւ էի: Յանձնախումբին անդամներն էին, Արամ Տէր Ղուկասեան, Օնիկ Տէր Յովհաննէսեան, Մովսէս Գազանճեան, Հաճօ Տնկիկեան, իսկ հինգերորդ անդամին անունն ու մականունը չեմ յիշեր: Մէկ տարուայ մէջ քանի մը ժողովներ ունեցանք, միշտ 2-3 հոգի կու գար ժողովի, վերջապէս 2 հոգի մնացինք եւ եւ Հաճօն, քանի մը տարի վերջ եւ առանձին մնացի եւ գործը շարունակեցի մինչեւ 1954 թուականը: Օր մը եւ եւ Ճէմիլ Քեահքէճեանը միութեան ատենապետին ըսինք՝ թէ եղբայր Երուանդ Յովհաննէսեանը կ'աշխատի միութիւնը պատակտել, փոխանակ մանրամասնութիւնները հասկնալու դարձաւ պատասխանեց, թէ դուք անոր դիրքին կը նախանձիք, արդէն շատ չուշացաւ եւ սասունցիները հեռացան, զատ ակումբ եւ զատ ֆութպոլի խումբ հիմնեցին: Մակայն պրն. Երուանդը այս ալ յաջողցնել չկրցաւ եւ նետուեցաւ Բարեգործականի գիրկը: Հոգետունէն փոխադրուած բոլոր դիմումագիրները եւ վաւերաթուղթերը, այբենական կարգով տեղաւորեցի առանձին-առանձին տոսիէներու մէջ, 1926-էն մինչեւ 1954 թուականը, ասկէ վերջ ինչ եղած է լուր չունիմ: Եթէ պահուած են այդ տոսիէները, այդ պարագային կարելի կըլլայ գաղափար մը կազմել Հ.Մ.Ը.Մ.-ի կազմութեան մասին: Գիտցածներս ամփոփ ասոնք են:

## ՅՈՒՇԵՐ, ՅԻՇԱՏԱԿՆԵՐ ՀԱԼԷՊԷՆ

Զարեհ Տերվիշեան

Թորոնթօ

**Կ**ար ժամանակ, երբ Հալէպի Հ.Ս.Ը.Մ.-ը ունէր իր «Նաւասարդեան» դաշտը, հիմնուած՝ 1947-ին:

Նոր Գիւղի հայահոծ թաղամասերուն մէջ գտնուող թիթեղապատ «Նաւասարդեան» դաշտը հաւաքավայրն էր Հ.Ս.Ը.Մ.-ի Նոր Գիւղի սկաուտական կազմերուն, ֆութպոլի դաշտը՝ Հ.Ս.Ը.Մ.-ի երկրորդական խումբերուն, մարզադաշտը՝ Նաւասարդեան խաղերուն եւ Հ.Ս.Ը.Մ.-ի ասանդական Միջ-մասնաճիւղային մրցումներուն:

Հոն էր, որ պատմական օր մը, 1948-ին, Դրօ իր պատգամը կը փոխանցէր Հ.Ս.Ը.Մ.-ի սկաուտներուն եւ մարզիկներուն:

Կը յիշեմ, երբ դեռ փոքր, անհամբեր կը սպասէինք Կիրակի օրուան, որպէսզի երթայինք «Նաւասարդեան» դաշտը եւ սկաուտական մեր խումբի աշխատանքներուն մասնակցեինք: Հոն կըլլային գայլիկներն ու կակուղ թաթիկները, սկաուտական խումբերը՝ «Առիւծ», «Կաքաւ», «Կռունկ», «Մեղու», «Ձի», «Աքլոր» եւ Երէցներ: «Արծիւ», «Նապաստակ», «Մեղու», «Եղնիկ» եւ «Վագր» խումբերը կը հաւաքուէին քաղաքի Հ.Ս.Ը.Մ.-ի դաշտը: Չեմ գիտեր ինչո՞ւ բոլոր խումբերն ալ կենդանիներու անուններ կը կրէին:

Դրօշակի արարողութենէն ետք, խումբերը կը ցրուէին դաշտին զանազան կողմերը եւ կը սկսէին չափական մարզանքի, որմէ ետք տեղի կունենային սկաուտական խաղերն ու արշաւները:

Հ.Մ.Ը.Մ.-ի Միջ-մասնաճիւղային մրցումներու նախօրեակին, սկաուտական բոլոր խումբերը, ամէն Կիրակի առաւօտ, կը սկսէին տողանցքի փորձերուն, որպէսզի ասանդական փակման հանդիսութեան, բազմահազար հանդիսականներու ծափողջոյններու որոտին հետ, համաչափ քայլերով տողանցեն հպարտօրէն առաջնորդութեամբը Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի նշանաւոր շեփորախումբին:

Մեր տունը ունէր բակ մը, ուր կ'ապրէին նաեւ հօրեղբօրս ու հօրաքրոջս ընտանիքները: Զատկուան շրջանին տարօրինակ եւ հաճելի եռուզեռ մը կըլլար այդ բակին մէջ: Մեր տուններուն մէջ կընդունէինք Պէյրութէն, Դամասկոսէն, Գահիրէէն եւ այլ շրջաններէ ժամանած սկաուտներ եւ արենոյշներ, ու երբ խմբովին՝ տասէ աւելի սկաուտական տարազներով հպարտօրէն դուրս կ'ելլէինք մեր բակէն՝ երթալու համար «Նաւասարդեան» դաշտ կամ քաղաքապետարանի դաշտ՝ տողանցքի, շատերուն նախանձը կը շարժէինք: Փոքր բանակ մըն էինք կարծես:

Մեր օրերուն, Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտ ըլլալը բացառիկ առանձնաշնորհում մըն էր: Մեր խմբապետները խիստ էին մեր կենցաղին, մեր խօսակցութեան, մեր վարուելակերպին հանդէպ: Մեզի արտօնուած չէր նարտ խաղալ, ճամբան ձեռքերը գրպանը դրած քալել, սինեմա երթալ, հայիոյել եւ կամ ճամբան քալած ատեն կուտ ուտել, ինչ

որ հալեպցիներուն սովորութիւնն էր այդ օրերուն: Ճամբան երբ հանդիպէինք մեր խմբապետին, անպայման սկաուտական բարեւոյժ պէտք էր բարեւէինք զինք եւ ստանայինք իր փոխադարձ սկաուտական բարեւը:

Հալեպի Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական կազմերը ունէին նաեւ հաւաքական իրենց ֆութպոլի երեք խումբերը: Քաղաքը ունէր «Անդրանիկ» խումբը, իսկ Նոր Գիւղը՝ «Նաւասարդ» եւ «Սկաուտական Պատուոյ Առաջին» խումբերը:

«Սկաուտական Պատուոյ Առաջին» խումբը տարիներ շարունակ եղաւ Հ.Մ.Ը.Մ.-ի երկրորդական խումբերու ախոյեան, շնորհիւ խաղացողներու միջեւ տիրող փոխադարձ յարգանքին եւ խումբին պարտադրած կարգ ու կանոնին եւ կարգապահութեան:

«Սկաուտական Պատուոյ Առաջին» խումբը, որուն կրտսերագոյն խաղացողն էի եւ միակ ուսանողը, իր փորձերը կը կատարէր «Նաւասարդեան» դաշտին վրայ, ամէն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6-ին: Այդ օրերուն Հալեպի ելեկտրական ընկերութեան փողը կը զարնէր նոյնպէս ժամը 6:00-ին եւ եթէ պատահէր, որ խաղացող մը փողին զարկէն վերջ դաշտ մուտք գործէր, կենթարկուէր մէկ սուրիական ոսկի տուգանքի: Կունենայինք նաեւ հերթական մեր ժողովները, ամէն Ուրբաթ երեկոյեան, Զաւարեան Վարժարանի դասարաններէն մէկուն մէջ: Հոս եւս երբ խմբապետը ըսէր, «ժողովը բաց է» եւ յանկարծ խաղացող մը ներս մտնէր, դարձեալ կենթարկուէր տուգանքի, բայց այս անգամ՝ կէս սուրիական ոսկի: Մրցումէն առաջ բոլորիս պարտա-



դրրուած էր դաշտ ներկայանալ մաքուր եւ արդուկուած ֆութպոլի տարագով, առաւել՝ մեր կօշիկները պէտք է ըլլային ներկուած, այլապէս մեզի կարգիլուէր մրցումին մասնակցիլ: Տուգանքներէ հաւաքուած գումարը կը ծախսուէր խումբին պէտքերուն:

Մրցումէն առաջ դաշտ մուտք գործելով, բոլորս միասին վազելով կէրթայինք դէպի դաշտին մէջ ձողին վրայ պարգուած Հ.Մ.Ը.Մ.-ի դրօշակը եւ սկաուտական «Պատուի առ»էն ետք իւրաքանչիւրս կը գրաւէինք մեր տեղերը եւ մրցումը կը սկսէր:

Մեր խումբի տղաքը իրարու հանդէպ միշտ յարգալից էին: Խաղի ընթացքին իրարու վրայ չէին պոռար, չէին համարձակէր զիրար վիրաւորել, որովհետեւ խումբին մաս կը կազմէին Խմբապետներ, Վարիչ Առաջնորդներ, Առաջնորդներ, Փոխ Առաջնորդներ եւ ոչ աստիճանաւոր սկաուտներ: Հետաքրքրական էր տեսնել մեր խումբին խաղացողները երբ մեզմէ մէկը կոլ մը նշանակէր: Մենք մեր ուրախութիւնը չէինք արտայայտէր ողջագուրումով, ոչ ալ բացականչութիւններով, այլ՝ սկաուտական ձախ ձեռքով կը ձեռնուէինք կոլ նշանակած եղբօր հետ, բացայայտելով մեր ուրախութիւնը:

«Սկաուտական Պատուոյ Առաջին» խումբին մաս կը կազմէին Նոր Գիւղի եւ քաղաքի սկաուտներու լաւագոյն ֆութպոլիստները, որոնցմէ լաւագոյնները հետագային պատիւն ու փառքը կունենային մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ.-ի առաջին խումբին եւ թիւը այդ խաղացողներուն տասնեակներով էր եւ միշտ կաւելնար:

«Նաւասարդեան» դաշտը խոտ չունէր: Մեր փորձերը կը կատարէինք քարքարուտ դաշտին վրայ, իսկ Կիրակի կէսօրէ ետք, երբ մրցում մը կամ մրցումներ պիտի կայանային, սկաուտները առաւօտուն կը հաւաքէին դաշտին մէջ ցայտուն կերպով յայտնուած քարերը:

Բնականաբար, Հ.Մ.Ը.Մ.-ի երկրորդական բոլոր խումբերն ալ, ինչպէս «Զաւարեան», «Վրէժ», «Համագասպ», «Աւարայր», «Փոթորիկ» եւ այլն, յաճախ թաղային խումբեր ըլլալով, ունէին իրենց համակիրները, իսկ «Անդրանիկ», «Նաւասարդ» եւ «Սկաուտական Պատուոյ Առաջին» խումբերը կը քաջալերուէին բոլոր սկաուտներուն կողմէ: Մրցումները կը կազմակերպէր ֆուրփոլի յանձնախումբը:

Այդ օրերուն, տարբեր էր խանդավառութիւնը, գոհողութիւնը, կարգ ու կանոնը, պատասխանատուններուն հանդէպ յարգանքն ու ակնածանքը: Մեզմէ շատեր միայն նախակրթարան աւարտած Հ.Մ.Ը.Մ.-ականներ էին, որոնց մէջ վառ էր հայու անխոնջ ոգին, ապրելու կամքն ու յաղթելու վճռակամութիւնը: Հ.Մ.Ը.Մ.-ը դարձած էր իրենց դպրոցը, ուր սորված էին հայերէն եւ ապրած՝ հայօրէն:

Կար ժամանակ՝ երբ Հալէպ ունէր իր «Նաւասարդեան» դաշտը: Այսօր այդ սերունդէն շատեր մեկնած են անդարձ եւ կամ կապրին այլ գաղութներու մէջ, «Նաւասարդեան» դաշտի յիշատակներով:

## ՌԱՖՖԻ ՏԷՐՅԱԿՈՒԲԵԱՆ

Ծնած է Հալեպ 1951-ին:

Նախնական ուսումը ստացած է Ազգային Հայկազեան Վարժարանէն ներս, ապա Ազգային Քարէն Եփփիէ Ճեմարան՝ միջնակարգ բաժինը:


Մանուկ տարիքէն իր քայլերը նետած է ՀՄԸՄ-ի պարտեզէն ներս, սիրած է մարզական աշխարհը եւ պասքէթպոլը ընտրած՝ որպէս մարզական ճիւղ:

Աւելի քան կէս դար պասքէթպոլը եղած է իր սիրելի աշխարհը: ՀՄԸՄ-ի պատանեկան խումբերէն բարձրացած է Ա. Խումբ, ուր երկար տարիներ եղած է խմբապետ եւ հանրաժանօթ դարձած՝ «Քէբթըն» անունով: Եղած է նաեւ ՀՄԸՄ-ի աղջկանց Ա. Խումբի մարզիչ:

Իր մարզական կեանքի ընթացքին արժանացած է բազմաթիւ անհատական մետալներու եւ բաժակներու:

Եղած է ՀՄԸՄ-ի Սուրիոյ Երջանային Վարչութեան անդամ: Իր անսակարկ ծառայութեան եւ բժախնդիք աշխատանքին շնորհիւ 2016-ին արժանացած է «Ծառայութեան Եքանշան»-ին:

1976-ին անցած է ՀՅԴ-ի շարքերը եւ ուխտած՝ ծառայել իր պաշտած կազմակերպութեան, որուն հաւատարիմ զինուորը եղած է մինչեւ մահ եւ



ստանձնած՝ իրեն վստահուած գանազան պարտակա-  
նութիւնները:

2007-ին Բերիոյ Թեմի Ազգային Վարչութեան կողմէ  
նշանակուած է Հալէպի Ս. Գեորգ եկեղեցւոյ թաղակա-  
նութեան անդամ, ապա կարճ ժամանակ մը ետք  
ստանձնած է յիշեալ թաղականութեան Ատենապետի  
պաշտօնը:

Սուրիոյ եւ մանաւանդ Հալէպի տագնապի տարի-  
ներուն, իր սիրայօժար մասնակցութիւնը բերած է  
ժողովուրդի անմիջական կարիքներուն հասնելու  
մարդասիրական աշխատանքին:

1984-ին, կազմած է իր հայադրոշմ ընտանիքը:  
Վերջերս գաղթած է Գանատա եւ կարճ ժամանակ մը  
ետք կնքած է իր մահկանացուն 2018-ի Դեկտեմբերին,  
յետ կարճատեւ հիւանդութեան:


-Մեր այբուբենին մէջ ամենէն աւելի սիրեցի Հ. գիրը, որով  
կը սկսէին Հայը, Հայկը, Հայրենիքը, Հայաստանը, Համա-  
գասպը, որմէ պիտի ծնէր Հ.Ս.Ը.Մ.-ը Հալէպի մէջ: Վերջինն  
ալ Հ-ով կը սկսէր: Հպարտութիւնը ինքն ալ կը սկսէր զինք  
բնորոշող տառով:

Իրաւունք ունէր բանաստեղծը (Վահան Թեքէեան) ըսելու  
որ մենք հացի, օղի ու ջուրի չափ պէտք ունէինք  
Հպարտութեա՛ն:

*ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆԵԱՆ*

## ՄԻՀՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

**Ե**ղբ. Միհրան Կարապետեան ծնած է Հալէպ 1943-ին: Նախնական ուսումը ստացած է Ազգային Հայկազեան Վարժարանէն, որմէ ետք մղուած է արհեստի ասպարէզ եւ դարձած է ինքնաշարժի ներկարար:



Փոքր տարիքէն անդամակցած է ՀՍԸՄ-ի մեծ ընտանիքին, որպէս գայլիկ ապա սկաուտ, յետագային եղած է սկաուտական խումբի պատասխանատու, Արի Միաւորի պատասխանատու, Մասնաճիւղի խմբապետ, Մասնաճիւղի Խորհուրդի անդամ, Մասնաճիւղի Վարչութեան անդամ, մաս կազմած է էքիզօլուխի բանակավայրի շինարարական յանձնախումբի:

Եղբ. Միհրան մեր բոլորին կողմէն ճանչցուած է, որպէս տիպար, աշխատասէր եւ միութենական հաւատարիմ եղբայր մը, երկար տարիներ լծուած է սերունդներ դաստիարակելու աշխատանքին, իր խումբին անդամակցած սկաուտները այսօր կը տեսնենք պատասխանատու դիրքերու վրայ, որոնք նոյն շունչով ու կորովով միութեան դրօշը բարձր կը պահեն այնտեղ որ իրենք կը գործեն:

Եղբայրը եղած է նաեւ Փողերախումբի յանձնախումբի ատենապետ, շրջան մը գործած է Մխիթարեան

Վարժարանի սկաուտ խումբերու վերակազմութեան աշխատանքներուն:

Իր երկար ու նուիրական ծառայութեան համար միութեան 85 ամեակի առթիւ արժանացած է միութեան «Ծառայութեան Շքանշան»-ին:

Մահացաւ Հալէպ, 2019-ին:

Ո՛չ միայն խաղերու եւ մարզանքի մէջ, այլ՝ ամէն գործի մէջ, ինչ որ կըսեն, օրէնքները յարգէ, գիտցիր որ օրէնքը բռնաբարելով շահուած խաղ մը կամ մարզանք մը շահուած չէ, այլ գողցուած է:

Մի վախնար եւ մի քաշուիր ճշմարտութիւնը ըսելու, եթէ մինչեւ իսկ քեզի աննպաստ ըլլայ: Ինքզինքիդ մեծ հովեր տալ այնքան ծիծաղելի պիտի ըլլար, որքան եթէ պարծենայիր թէ երկու մեթր հասակ ունիս:

Մի վախնար պաշտպանելու բարեկամ մը, գոր դուն կը ճանչնաս իբր ուղղամիտ եւ լաւ մարդ, մինչեւ իսկ եթէ բոլորը իրեն հակառակ ըլլան: Ապերախտութիւնը ամենամեծ յանցանքներէն մէկն է:

Ընելիքիդ վրայ մի պարծենար, կրնայ ըլլալ որ չյաջողիս եւ ծիծաղելի դառնաս, մինչեւ իսկ ըրածիդ մի պարծենար, պարծենկոտը վստահութիւն չի ներշնչեր ուրիշներուն:

Յոյսդ բնաւ ուրիշին վրայ մի դներ, վստահէ կարողութեանդ, ամենանեղ վայրկեաններուդ իսկ պէտք չէ յուսահատիս, համբերութիւն, կամք, աշխատասիրութիւն եւ յարատեւութիւն միշտ յաղթող եղած են: Եթէ ձեռնարկած գործդ անյաջող ընթանայ, մի թուլնար, լաւ խորիէ եւ այնպէս մը պատրաստուէ, որ առիթը ներկայանալուն օգտուիս, այսպէսով է որ միշտ պիտի կարենաս յաջողիլ:

**ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ**

## ԳԷՈՐԳ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Ծ Նած է Հալեպ 1935-ին:

Նախնական ուսումը ստացած է Ազգային Զուարեան Վարժարանէն ներս, այնուհետև ուղղուած է գործի ասպարէզ, որպէս արհեստաւոր: Փոքր տարիքէն մուտք գործած է ՀՄԸՄ-ի շարքերը, որպէս սկաուտ եւ փողերախումբի անդամ: ՀՄԸՄ-ի մարզական կեանքէն անմասն չմնալով հետեւած է աթլետի մարզաձեւին եւ իր աշխոյժ մասնակցութիւնը բերած է աթլետի մրցումներուն: Եղած է նաև ՀՄԸՄ-ական լողորդ եւ մինչև յառաջացած տարիքը շարունակած է լող մարզաձեւը: Ինչպէս նաև եղած է ֆութպոլ խաղացող եւ Ա. խումբի վարչական կապ:



Պատանի տարիքին անդամակցած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ իր ներդրումը բերած է ազգային կեանքէն ներս:

Իր ծառայասէր նուիրումով, հայրենասէր բնավորութեամբ, անկարելին կարելի դարձնելով աչալուրջ աշխատանք տարած է միութենական կեանքէն ներս: Օրինակ հանդիսացած է մատղաշ սերունդներուն, անոնց մէջ սերմանելով գաղափարական ոգին:

Հալեպահայութեան ազգային կեանքէն ներս ան մաս կազմած է Ազգ. Զուարեան Վարժարանի հոգա-

բարձուրեան կազմին: Երկար տարիներ ՀՍԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան: Երկու շրջան նշանակուած է ՀՍԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ: Իր ներդրումը բերած է Քեսապի Էքիզոլուխ շրջանի Միութեանս բանակավայրի նորոգութեան աշխատանքներուն: Մասնակցած է Համա-ՀՍԸՄ-ական ներկայացուցչական ժողովներուն:

1998-ին պարգևատրուած է «Ծառայութեան Շքանշան»ով, առ ի գնահատանք իր բժախնդիր եւ անսակարկ ծառայութեան:

Եղբ. Գեորգ Խաչատուրեան իր մահկանացուն կնքեց 2019-ին Հալէպի մէջ:

-Այսօրուան սկաուտը վաղուան ազգային, եկեղեցական շարժումներուն արթուն պահակն է, ինչպէս երեկի սկաուտը կը տեսնենք այսօրուան ազգապահպանման հիմներուն խառնուած տոկուն ժայռ:

Քննեցէ՛ք արտասահմանի բոլոր միութիւնները ու պիտի հաստատէք, որ անպայման այսինչ վարչականը ժամանակին եղած է Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտ:

Տարիներու ընթացքին Մեծ Նշանաբանը տուած է Մեծ Բերք:

Նոյն նշանաբանը պիտի տայ Նոր Բերք:

*ՆՇԱՆ ԹԻԻՍԻԻՉԵԱՆ*



## ԵՐՋԱՆԻԿ ԿԱՐՊՈՒՇԵԱՆ

Եղբ. Երջանիկ Կարպուշեան ներկայացուցիչն էր սերունդի մը, որ ՀՍԸՄ-ի մեծ ընտանիքին մէջ տարբերութիւն դրած չէ մեծ ու փոքր պարտականութիւններուն միջեւ եւ միշտ ալ գործած է տիպար մարդու, ազգայինի եւ ՀՍԸՄ-ականի բժախնդրութեամբ, համեստութեամբ եւ լուռ նուիրումով: Եղբ. Երջանիկ Կարպուշեան, աշխատանքի խոնարհ հերոսը մահացաւ անողոք հիւադութեան դէմ պայքարի ընթացքին:



Ան ծնած էր Քեսապ, 1928-ին, բնակած է իր ընտանիքին հետ Անտիոք, ապա փոխադրուած է Քեսապ:

Երկրորդ Աշխարհամարտին, պատանի էղբ. Երջանիկ կը յաճախէ Լաթաքիոյ Ֆրերներու գիշերօթիկ դպրոցը: 1946-ին ան կը մտնէ ՀՍԸՄ-ի ընտանիքէն ներս, ուր անխափան կը գործէ տասնեակ տարիներ, զանազան պատասխանատուութիւններով:

Երկար տարիներ մաս կը կազմէ ՀՍԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան, իբրեւ մարզական խումբերու պատասխանատու:

1970-ական տարիներուն, յաջորդական քանի մը շրջան ան կ'ընտրուի ՀՍԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ: 1979-ին եւ 1983-ին կը մասնակցի

ՀՄԸՄ-ի Բ. Եւ Գ. Պատգամաւորական ժողովներուն, Նիկոսիա եւ Աթէնք: Երկար տարիներ կը գործէ Բերիոյ Թեմի ազգային իշխանութեան Գաւառական Ժողովէն ներս, իբրեւ ներկայացուցիչ Սուրիոյ ծովեզերեայ շրջաններուն:

Բնաւորութեամբ բժախնդիր, աշխատասէր, համբերատար եւ հաւաքական աշխատանքներու պարտականութիւնները բաժնող մարդ, եղբ. Երջանիկ ՀՄԸՄ-ին անդամակցութեան օրէն մինչեւ իր տարաբախտ մահը գործեց անսահման զոհողութեամբ, իր աննկուն կամքով յաղթահարելով ամէն խոչընդոտ:

Յիշատակդ անմեռ մնայ, անգին եղբայր:

Հ.Մ.Ը.Մ.՝ հաւատք եւ յոյս, հայութեան, հայկականութեան ամուր խարիսխ, պատնէշ ու վճռակամ երթ դէպի լինելութիւն: Անսասան շքերթ դէպի յաղթանակ: Այս է Հ.Մ.Ը.Մ.-ը եւ կ'արժէ աւելի մօտէն եւ խորապէս ծանօթանալ այս մեծ կազմակերպութեան, գիտնալ թէ ինչո՞ւ գունդ առ գունդ կու գան խտացնելու Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերը, իբրեւ սկառուտ, մարզիկ կամ անդամ: Ի՞նչ կը սպասեն Հ.Մ.Ը.Մ.-էն, իրենց Հ.Մ.Ը.Մ.-ի պատկանելիութեան գիտակցութիւնը ի՞նչ ձեւով ունին, եւ վերջապէս, միւս կողմէն, ի՞նչ ձեւով եւ մտայնութեամբ պէտք է գործեն Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերուն պատասխանատուութիւնը ստանձնած Հ.Մ.Ը.Մ.-ականները:

*ՎԱՐԴԳԷՍ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ*

## ՐԱՖՖԻ ՊՇԱՔՃԵԱՆ

Ազգի նահատակ եղբ. Րաֆֆի Պշաքճեան ծնած է Հալէպ 1961-ին, Հալէպ: Նախնական ուսումը ստացած է Ազգային Զուարեան Վարժարանէն ներս, իսկ միջնակարգ եւ երկրորդական ուսումը ստացած է Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանէն ներս:



11 Յունիս 2016-ը սուգի օր մը եղաւ հալէպահայութեան եւ ՀՍԸՄ-ի մեծ ընտանիքին համար: Չարաքաստիկ այդ օրը մեզմէ առ յաւէտ իլլեց երիտասարդ ու հաւատաւոր ՀՍԸՄ-ական, 54-ամեայ եղբ. Րաֆֆի Պշաքճեանը՝ խոր վիշտի մատնելով իր հարազատները, գաղութին ազգային, միութենական եւ գաղափարական իր ընկերներն ու համայն հայութիւնը:

Եղբ. Րաֆֆիին ծնողքը փոքր տարիքէն զինք առաջնորդած է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն:

Ան եղած է գայլիկ, սկաուտ եւ մարզիկ: Երկար տարիներ ան մաս կազմած է ՀՍԸՄ-ի ֆութպոլի առաջին խումբին, որուն հետ աւելի քան քսան տարիներ ունեցած է տպաւորիչ ելոյթներ: Իր պատանեկան տարիներէն մինչեւ կեանքին վերջին ժամերը եղբ. Րաֆֆի նուիրուած էր ՀՍԸՄ-ին եւ սիրայօժար կը ծառայէր անոր շարքերուն:

Իր նկարագրին շնորհիւ ան կը վայելէր բոլոր միութենականներուն յարգանքը. հեզ էր բնատրութեամբ, բայց բժախնդիւր եւ խստապահանջ՝ թերութեանց նկատմամբ: Նկարագիրով խիզախ եւ յանդուգն, անաշտ իր տեսակէտներուն եւ որոշումներուն մէջ: Չէր հանդուրժեր կեղծիքը: Համարձակօրէն կը պաշտպանէր միութեան շահերը:

Թէեւ եղբ. Բաֆֆին ֆիզիքսպէս առ յաւետ բաժնուեցաւ մեզմէ, սակայն անոր պայծառ յիշատակը միշտ պիտի մնայ մեր մէջ, իբրեւ աշխոյժ ու նուիրեալ ՀՄԸՄ-ական:

Բիւր յարգանք վաստակիդ նահատակ եղբ. Բաֆֆի եւ յիշատակդ անմար, եղբա՛յր Բաֆֆի:

Հ.Մ.Ը.Մ.-ի պատկանելիութեան գիտակցութիւնը ամուր պէտք է ըլլայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.-ականի մօտ, ըլլայ ան սկառուտ, մարզիկ, պատասխանատու կամ պարզ անդամ:

Այս գիտակցութիւնն է, որ կը զօրացնէ Հ.Մ.Ը.Մ.-ը, զայն աւելի կազմակերպ, աշխոյժ եւ գործօն կը դարձնէ:

Պատկանելիութեան գիտակցութիւն կը նշանակէ գիտնալ թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.-ական ենք, ի՞նչ ստանալու եկած ենք Հ.Մ.Ը.Մ.-էն եւ ի՞նչ տալու եկած ենք մեր միութեան:


Բարարար չէ ունենալ միայն պատկանելիութեան գիտակցութիւն, այլ՝ պէտք է սիրել Հ.Մ.Ը.Մ.-ը խանդավառօրէն անով, քաջալերել անոր ձեռնարկները, ծափահարել եւ յուզուիլ անոր տողանցքներով, հպարտանալ Հ.Մ.Ը.Մ.-ով:

**ՊԵՏՐՈՍ ՇԵՄՄԵՍԵԱՆ**

## ՄԿՐՏԻՉ ԳՐԻԳՈՐԵԱՆ

**Ե**ղբ. Մկրտիչ Գրիգորեան ծնած է Արաբունար 1948-ին: Նախնական ուսումը ստացած է Հալէպ:

Վեց տարեկանին ան անդամակցած է ՀՍԸՄ-ի սկաուտական շարքերուն: Շրջան մը եղած է ֆութպոլիստ, ՀՍԸՄ-ի երկրորդական խումբերուն մէջ:



1960-ական տարիներու երկրորդ կիսուն եղբ. Մկրտիչ Գրիգորեան մաս կազմած է ՀՍԸՄ-ի Հալէպի հեծելարշաւի խումբին: Եղած է Հալէպի եւ Սուրիոյ հեծելարշաւի հաւաքականներու անդամ: 1967-ին, Սուրիոյ հաւաքականին հետ մասնակցած է արաբական երկիրներու ախոյեանութեան, Յորդանան, եւ մասնակից 12 երկիրներու շարքին հաւաքականը գրաւած է երրորդ դիրքը, իսկ անհատական մրցումներուն՝ 35 հեծելանւորներու շարքին հանդիսացած է հինգերորդ: 1972-1975 ան եղած է ՀՍԸՄ-ի Հալէպի հեծելարշաւի խումբի մարզիչ:

Գործի բերումով կը հաստատուի Գամիշլի: Մընտրուի ՀՍԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ:

Իր մահկանացուն կը կնքէ 2018-ին:

## ԿԱՐՊԻՍ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Ե դր. Կարպիս Գալայճեան ծնած է Տիգրանակերտ, 1925-ին: Չորս տարեկանին փախստական միջոցներով ծնողքին հետ հաստատուած է Հասիչէ, ուր մինչեւ 11 տարեկան ապրած է առանց ուսման: 1936-1941 ան կը յաճախէ Հալէպի Ազգ. Հայկազեան Վարժարան ապա՝ Լիսէ Ֆրանսէ: Հօրը մահուան պատճառով ուսումը կիսատ կը ձգէ եւ կը վերադառնայ Հասիչէ:

Այնուհետեւ, երկար տարիներ եդր. Կարպիսի կրթական եւ միութենական գործունէութեան հարազատ ասպարեզը կը դառնայ Ճէզիրէի անապատային շրջանի հայաբնակ գիւղաքաղաքներու շրջագիծը:

Գամիշլիի այդ օրերու Առաջնորդ Խորէն Սրբազանի (յետագային կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) առաջարկով ան կը պաշտօնավարէ Թէլպրաք կոչուող հայկական գիւղային վարժարանին մէջ: Ուսուցիչի պաշտօնին կողքին, անմիջական մտահոգութիւնը կըլլայ հիմնել ՀՍԸՄ-ի Թէլպրաքի մասնաճիւղը: Տեղին է նշել, որ Հալէպի մէջ ուսանողութեան շրջանին, ան կը դառնայ ՀՍԸՄ-ական եւ 1936-էն սկսեալ կը խաղայ երկրորդականներու կրտսերագոյն «Շանթ» խումբէն:

1947-ին ուսուցչութեան պաշտօն կը վարէ Հասիչէի հայկական վարժարանին մէջ: Հոս եւս ՀՍԸՄ-ի հանդէպ իր մէջ եռացող սերը հանգիստ չի տար իրեն եւ կը նախաձեռնէ արդէն գոյութիւն ունեցող սկստուտական

կորիզը զօրացնելու եւ զայն ՀՍԸՄ-ի մասնաճիւղի վերածելու աշխատանքին:

Գամիշլիի մէջ ՀՍԸՄ-ը արդէն գոյութիւն ունէր: Եղբ. Կարպիս անմիջապէս մաս կը կազմէ տեղւոյն մասնաճիւղին եւ 1949-ին կը դառնայ Վարչութեան ատենապետ մինչեւ 1961-ի ծանօթ դէպքերը: Ակումբը կը փակուի եւ կը կնքուի պետութեան կողմէ: Հազիւ տարի մը ետք սակայն, ՀՍԸՄ-ը կը վերսկսի իր աշխատանքներուն, այս անգամ տարբեր պայմաններու մէջ:

Եղբ. Կարպիս անսպառ եռանդով եւ անսահման նուիրումով ամբողջ 25 տարի ՀՍԸՄ-ականի գործունէութիւն կը տանի՝ յաճախ իբրեւ ատենապետ: Ան Շրջանային Վարչութենէն պաշտօնապէս լիազօրուած էր Ճեզիրէի բոլոր շրջանները այցելելու, կազմակերպական աշխատանք տանելու, հարցեր լուծելու եւ ցուցմունքներ տալու համար: Թէլպրաքէն Հասիչէ, Հասիչէէն Գամիշլի, Տէր Զօր, Արաբ Բունար եւ բազմաթիւ այլ գիւղեր շրջած է իբրեւ մարզիկ ապա վարչական Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ:

Եղբ. Կարպիս կը մեկնի Լիբանան, երկար տարիներ կը վառէ «Թռչնոց Բոյն»ի տնօրէնի պաշտօնը:

Կը պարզեատրուի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կողմէ «Ծառայութեան Շքանշան»-ով:

Կը մահանայ Հալէպ:

*ՈԳԵԿՈՉԱԿԱՆ  
(ԴԱՍԲԱՆԱԿԱՆՆԵՐ  
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ  
ԵՒ  
ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ)*



## Եղբ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ


Հալեպ, Երկուշաբթի, 8 Մայիս 1989

Սգակի՛ր ներկաներ,

Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքը մեծ կորուստ կրեց այսօր, սուգի մատնելով մեզ բոլորս: Հ.Մ.Ը.Մ.-ի պարտեզէն հաստարմատ ծառ մը եւս տապալեցաւ մահուան խորշակէն:

Կեանքի ու մահուան անողորմ ու յաւիտենական պայքարին տխուր մէկ պատկերն է սա թարմ հողաթումբը, որ կազմուեցաւ հիմա մեր բոլորին աչքերուն առջեւ: Գիտե՛նք, որ ի վերջոյ մահն է որ պիտի տանի վախճանական «յաղթանակ»ը մեր մահկանացուի ողորմելի իրականութեան վրան: Ո՞վ կրնայ մահուան գերակայութիւնը ժխտել մեր անցաւոր կեանքին մէջ, եթէ ոչ միայն մնայուն ու կենդանի գործը: Մահը կը խլէ միայն մեր անշունչ մարմինը, իսկ հոգին՝ մեր քրիստոնէայ մարդու ըմբռնումով ու հաւատքով կը դառնայ անմահ, եթէ կարենանք կեանքի փիլիսոփայութեան իմաստին թափանցել:

Հանգուցեալ մեր եղբայրը կը հաւատար կենդանի գործին հրաշքներուն: Գոնէ իրեն տարեկիցներս ու քիչ մը նուազ երէց տղաք, ականատես վկաներն եղանք անոր յիսնամեայ քրտինքին ու վաստակին: Այժմ հպար-



տուրքեամբ կրնանք վկայել թե ան՝ եղբ. Յովհաննէս Խաչատուրեանը եղաւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի փառքը կերտողներէն մէկը:

Իր սերունդի տղոցմէն քանի մը հոգի միայն մնացեր ենք այսօր, այստեղ, որ կրնանք իր մասին ճշգրիտ ու անկաշառ վկայութիւններ տալ իր կատարած աշխատանքին մասին, ա՛յն աշխատանքին, որ պտղաբերեցաւ շնորհիւ իր նկարագրային քանի մը ցայտուն գիծերուն:

Մենք միասին մեծցանք ու գործեցինք լման յիսուն տարի, Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական թէ վարչական մարզերուն մէջ: Այո՛, եղանք սկաուտ, մարզիկ եւ եղանք վարչականներ:

Իբրեւ սկաուտի՝ կայտառ էր ու խանդավառ. ունէր սկ. խումբ կառավարելու եւ դաստիարակելու իւրայատուկ կերպ: Աշխատանքի միջոցին խստապահանջ էր ու կարգապահ: Կը ձգտէր տալ միշտ իր լաւագոյնը, որուն համար կը զոհէր տուն-տեղ ու գործ: Աշխատանքէն դուրս ու մեր հաւաքոյթներուն կը դառնար ամենահեզ ու կատակաբան երեխան, իր ազնիւ ու չափազանց ընկերական բնաւորութեան շնորհիւ: Եղաւ ու մնաց Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական փողերախումբին մեծագոյն կազմակերպողն ու խմբապետը: Չենք սխալիր եթէ ըսենք՝ թէ շնորհիւ իր տքնաջան աշխատանքներուն եւ անհուն զոհողութիւններուն, սկաուտական «Ֆանֆառ»ը, ներգաղթի տարիներուն եւ անոնցմէ ետք, մեծ ճանաչում գտաւ Սուրիոյ եւ Լիբանանի ամբողջ տարածքին...: Կը յիշեմ իր յաղթական քալուածքը նուագախումբին առջեւէն Միջ-մասնաճիւղային խաղերուն եւ այլ տօնա-

կան օրերուն առիթով կազմակերպուած տողանցքներուն: Որպէս սկաուտ խմբապետի եւ Խորհուրդի անդամի, տարիներով վարեց միջ-մասնաճիւղային մեծ բանակումներ, արշաւներ, ուր ի յայտ կը բերեր կարող ունակ խմբապետի յատկութիւններ:

Եղաւ մարզիկ: Իր նախասիրած ճիւղը գունդ եւ սկաւառակ արձակելն էր, որոնց մէջ մնաց անմրցելի: Միջ-մասնաճիւղային բոլոր աթլէթիք խաղերու ընթացքին, դաշտերուն վրան կը տիրապետեր իր հուժկու եւ բարեձեւ մարմնով, ու երբ կ'արձակէր սկաւառակը, հիացումով կը դիտէինք օդին մէջ սուրացող այդ մետաղեայ մարմինը, որ անպայման պիտի իյնար ամենահեռաւոր կէտին վրայ:

Եղաւ վարչական՝ Տեղական թէ Շրջանային Վարչութեանց անդամ: Վարչական գործերու ընթացքին ամենասակաւախօսն էր: Կու տար իր կարծիքը՝ կարճ ու կտրուկ, բայց միշտ արդար ու ճշգրիտ: Միշտ ալ կը վերցնէր, առանց առարկութեան, գանձապահի փափուկ պաշտօնը, պաշտօն մը՝ զոր վարեց ամենապարկէշտ ձեւով: Պարկէշտութիւն, ահա՛ւասիկ այն բա՛ռը, որ ամենաշատը կը պատշաճի եղբ. Յովհաննէս Խաչատուրեանին, որ այս ուղղութեամբ դարձած էր խորհրդանիշ: Մաքո՛ւր, վստահելի, ու նաեւ նախանձախնդիր Հ.Մ.Ը.Մ.-ի հաշուական բոլոր գործերուն մէջ: Այնքա՛ն վստահելի էր, որ Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Իշխանութիւնը չվարանեցաւ իրեն վստահելու բազմաթիւ շինարարական աշխատանքներու գանձապահութիւնը:

Եկաւ աստն մը, երբ գործի բերումով, հօրը մահէն ետք քաշուեցաւ սկաուտական կեանքէն, ամուսնացաւ ու դարձաւ օրինակելի հայր, բայց չմոռցաւ երբեք Հ.Մ.Ը.Մ.-ի սկումբին ճամբան: Կը յիշեմ, օր մը իր բարի, տիգրանակերտցի հայրը միամտօրէն հարցուց ողբացեալ եղբ. Նշան Թիւսիւզեանին, որուն հետ ազգականական կապեր ունէր:

«Տղայ Նշան, դուն աս տղուն որքան ամսական կու տաս՝ որ սկումբէն ու դաշտէն ասդին չի գար: Ես տասնապատիկը կու տամ քու տուած փարայիդ, միայն թէ խանութ գայ, գործ սորվի եւ իմ տեղս անցնի»: Այսպիսին էր, ահաւասիկ մեր ողբացեալ Յովհաննէսը, Յովհաննէս Խաչատուրեանը:

Իմ բարի ու անխարդախ ընկեր, դժբախտաբար ինծի բաժին ինկաւ այս քանի մը անշուք բառերն արտասանելու իբրեւ դամբանականի: Սրտի պարտք համարեցի գոնէ հրաժեշտի երկու խօսք ըսել, վերյիշելու համար այն աղուոր ու պայծառ անցեալը, զոր անցուցինք ձեռք-ձեռքի տուած, միատեղ, Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերուն մէջ: Նոր սերունդը հիմա քեզ չի՛ ճանչնար, բայց չե՛նք ալ կրնար մեղադրել զայն, որովհետեւ անիկա բախտը չունեցաւ քու տաք շունչիդ տակ դաստիարակուելու եւ քեզ լաւապէս ըմբռնելու: Գէթ, Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբոյ Շրջ. Վարչութիւնը, միութեան 70-ամեակին առիթով, ազնիւ գաղափարն ունեցաւ, անցնող Նոյեմբեր ամսուն, «Ծառայութեան» շքանշանով մը պատուելու քեզ, քու անձիդ ընդմէջէն գնահատելով կատարած երախտաշատ գործը: Սակայն, դուն շա՛տ աւելիին արժանի էիր: Ասոնք

բոլորն ալ անցաւոր երեւոյթներ են, արտաքին պաճուճանքներ, որոնցմէ արդէն կը խրտչէիր միշտ:

Հաւատացիր ճշմարիտ կենդանի գործին եւ դուն, պատուով, հայ մարդու առնական ըմբռնումով ծառայեցիր ազգիդ, անոր պատանի եւ երիտասարդ սերունդներուն, որոնք քու մէջդ տեսան ազնուական հայր, պատուախնդիր սկ. խմբապետը: Դուն ասպետօրէն ու համեստօրէն գործադրեցիր Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ նշանաբանին ոգին:

Հողը թեթեւ գայ վրադ, է՛յ Յովհաննէս, թող այս քանի մը անպաճոյճ խօսքերս խունկ ու աղօթք դառնան, կազմելով գեղեցկագոյն զգացումներու ծաղկեպսակ մը քու թարմ շիրիմիդ վրան:


Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքին անունով, գայիկներուն, արի-արենոյշներուն, մարզիկներուն եւ վարչական հին թէ նոր ընկերներուդ անունով քեզի կ'ըսենք.

«Հանգիստ ոսկորներուդ: Թող օրհնեալ ըլլայ բարի յիշատակդ եւ անմահ մնայ կատարած գործդ: Իսկ ընտանիքիդ, զաւակներուդ եւ պարագաներուդ կը յայտնենք մեր անկեղծ մխիթարանքը, քանի որ եղար պատուական ամուսին ու հայր, եղար պատուաբեր ազգային մը, որ գիտցաւ տառապիլ իր ազգին ու հայրենիքին ցաւերով, ու մանաւանդ հաւատալ իր պատուական ժողովուրդին յարութեան եւ վերելքին:

Հո՛ղը թեթեւ, հէ՛յ Յովհ. Խաչատուրեան:

*ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՊԱՃԵԱՆԻ*

**Ե**ր. Յովհաննէս Արապաճեան ծնած է Հալէպ, 1928-ին: 13 տարեկանին կաւարտէ Ազգ. Կիւլպէնկեան վարժարանը: Ադրատութեան պատճառաւ չէ կրցած շարունակել իր երկրորդական ուսումը: Հակառակ յառաջադէմ աշակերտ մը ըլլալուն, մուտք գործած է գործի ասպարէզ՝ դառնալով վաճառականի մը օգնական, ապահովելու իր ապրուստը:



1945-ին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերուն, որպէս սկաուտ, իսկ եղբ. Յովհաննէս Խաչատուրեանի քաջալերանքով մաս կազմած է փողերախումբին, որպէս շեփորահար եւ թմբկահար:

1954-ին ստանձնած է փողերախումբի պատասխանատուութիւնը՝ մինչեւ 1965: Զանազան դժուարութիւններու պատճառով փողերախումբը լուծարուելէ ետք, լման կազմը փոխանցուած է սկաուտական շարքերուն:

1979-ին մեծ դերակատարութիւն կունենայ փողերախումբը վերակազմելու աշխատանքին մէջ, իրեն հետ ունենալով եղբ. Խաչիկ Գաբրիէլեանը եւ եղբ. Գօգօ Պզտիկեանը, որոնք որպէս ուսուցիչ հրաւիրած են եղբ.

Յակոբ Քեշիշեանը եւ Տիգրան Ժամկոչեանը: Յաջորդ տարին, Ս. Զատկուայ տօնին առթիւ, աւանդական Միջմասնաճիւղային տողանցքին փողերախումբը, որպէս յառաջատար, իր մասնակցութիւնը բերաւ 170 քայերով եւ եղբայրներով: Կը յիշեմ եղբ. Յովհաննէսը, երբ 1970-ին ստանձնեց Հ.Ս.Ը.Ս.-ի ընդհանուր բանակումի պատասխանատուութիւնը, որուն մասնակցելու պատիւը ունեցայ:

1993-ին ան արժանացած է Հ.Ս.Ը.Ս.-ի «Ծառա-յութեան» շքանշանին:

1947-ին անդամակցելով Քրիստափոր Պատանեկան Միութեան, հաւատարմօրէն ծառայած է իր շատ սիրած նուիրական գաղափարին: Անդամակցած է Համազգային Մշակութային Եւ Կրթական Միութեան: Երկար տարիներ եղած է Բերիոյ Հայոց Թեմի Տնտեսական Խորհուրդի անդամ: Յաճախ կը տեսակցէինք եւ իր խորհուրդները լրջօրէն մտիկ կ'ընէինք: Ան տեսաբար կը պատգամէր. «Միրեցէ՛ք ձեր միութիւնը եւ ընկերները՝ ձեր անձէն աւելի, որ կարենաք քաջօրէն օգտակար ըլլալ թէ՛ միութեան, թէ՛ հայրենիքին»:

Եղբ. Յովհաննէս քիչ խօսող էր, բայց իր յորդորներով երիտասարդ ուժերը կը մղէր միութենական աշխատանքի: Ունէր ղեկավարելու բացառիկ կարողութիւն, ինքնագովութենէն կը խուսափէր, ծայրայեղ գաղտնապահ էր:

Յիշատակդ միշտ վառ պիտի մնայ բոլոր Հ.Ս.Ը.Ս.-ականներու սրտերուն մէջ շատ սիրելի եղբ. Յովհաննէս:

«Հայ երիտասարդության կազմակերպության կենսական գործին մեջ մեծ է դերը Հ.Մ.Ը.Մ.-ին: Այսօրուայ հայ կեանքին, ու յատկապէս սփիւոքեան ներկայ իրավիճակին մեջ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը յառաջդիմութեան ու յարատեւութեան ի խնդիր «Բարձրացի՛ր» ու մանաւանդ «Բարձրացո՛ւր»ի հա-ւատքով կը շարունակէ անշեղօրէն ու հաւատարմօրէն իրագործել հայեցի դաստիարակութեան իրեն վստահուած կարեւոր աշխատանքները սիրով ու նուիրումով:

Հ.Մ.Ը.Մ.-ը հայ կեանքին մեջ լաւատեսութեան երեւոյթ է»:

Շահան Եսայ. Սարգիսեան

-Հ.Մ.Ը.Մ. իր սկառուտութեամբ հայակերտիչ ու մարդակերտիչ միութիւն է: Ներկայ ու ներկայութիւն: Նորոգուող ու վերանորոգուող: Հայ ժողովուրդը շատ քան կը պարտի անոր հրաթել քանակին: Թող ապրի՛ ու ապրեցնէ՛: Թող բարձրանայ՛ ու բարձրացնէ՛:

Կարծէք հայ մկրտուեցայ հայ ժողովուրդի եւ պատմութեան դարերուն մեջ, կնքահայրութեամբ Եռագոյնին:


Պարզապէս, հայ՛ եղայ: Այսինքն՝ գիտակցեցայ հայութեանս:

*ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ*



*ԵՂԲ. ԱԼԵՔՍԱՆ ԻՍԿԷՆՏԵՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ*

Եղբ. Ալեքսան Իսկենտերեան՝ բազմավաստակ դաստիարակ, օրինակելի ուսուցիչ եւ բարձր արժանիքներով օժտուած խմբապետ, մէկ խօսքով տիպար միութենականի եւ հայուն մոյշ մը, որ իր երկարամեայ ծառայութեան շրջանին դաստիարակած եւ պատրաստած է հարիւրաւոր խմբապետներ, որոնցմէ շատեր այսօրուան մեր սերունդի ղեկավարներն են, բոլորս երկիւղածութեամբ կը խոնարհինք իր անմահ յիշատակին:



Եղբ. Ալեքսան Իսկենտերեան ծնած է Հալէպ 1933-ին: Շատ փոքր տարիքէն կորսնցուցած է հայրը: Նախնական ուսումը հազիւ ստացած՝ Ազգ. Կիւլպենկեան վարժարանէն, կը նետուի կեանքի ասպարէզ, ընտրելով երկաթագործի արհեստը, ուր տարիներու ընթացքին մասնագիտանալով՝ կը նուաճէ բարձունքներ:

13 տարեկանին կանդամանկցի Հ.Մ.Ը.Մ.-ի Նոր Գիւղի սկաուտական կազմին եւ տարիներու ընթացքին աստիճանաբար կը բարձրանայ, ըլլալով «Կաքաւ» խումբի խմբապետ, ապա կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.-ի Նոր Գիւղ կազմի պատասխանատուութիւնը, պաշտօն մը որ տարիներով բժախնդրօրէն վարեց եւ առիթ ընծայեց իրեն մեծաթիւ պատանիներու եւ երիտասարդ ղեկավարներու

հետ անմիջական շփման մեջ ըլլալու, դրսևորելով իր դեկավարի արտասովոր կարողութիւնները, միաժամանակ իր օգտակար ներդրումը ունենալով այդ շրջանի բոլոր երիտասարդներու դաստիարակութեան եւ պատրաստութեան աշխատանքին մէջ: Ապա 1970-ական թուականներուն եղբ. Ալեքսանը կը տեսնենք որպէս Հալէպի Սկ. Խորհուրդի անդամ ու ատենապետ, իսկ 1980-ականներուն Հ.Ս.Ը.Մ.-ի վարչական, յետոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդի անդամ՝ եւ ատենապետ, հասնելով մինչեւ Հ.Ս.Ը.Մ.-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան: Իր ներշնչումը առած ըլլալով եղբ. Նշան Թիւսիւզեանէն, ան իր վարած գանազան պաշտօններու ընթացքին միշտ եղած է կեդրոնական եւ դեկավար տիրող դէմքը: Մեծ եղած է իր դերը Քեսապի Էքիզ Օլուխի մէջ՝ Հ.Ս.Ը.Մ.-ի բանակավայրի հողաշերտի գնման եւ շէնքին կառուցման աշխատանքին մէջ, ուր տարիներով բազմահազար հայորդիներ բանակեցին եւ անցուցին իրենց կեանքի ամէնէն հաճելի եւ օգտաշատ օրերը: Եղբ. Ալեքսան ամէն ճիգ ի գործ կը դնէր ամէն տարի սովորութիւն դարձած Զատկուան Աւանդական Տոհանցքները կազմակերպելու եւ մեծ դժուարութիւններ դիմակալելով հանդերձ անպայման յաջողցնելու զանոնք:

1996-ին կը մասնակցի Հ.Ս.Ը.Մ.-ի Պատգամաւորական 7-րդ Ընդհ. Ժողովին, Լիբանանի մէջ: Իսկ 1993-ին՝ Հ.Ս.Ը.Մ.-ի Կեդր. Վարչութեան ատենապետ եղբ. Միսաք Արզումանեանի ձեռամբ՝ կը ստանայ Հ.Ս.Ը.Մ.-ի «Ծառայութեան» շքանշան:

Եղբ. Ալեքսան Իսկէնտերեան Հ.Ս.Ը.Մ.-ի կողքին՝ նաեւ միշտ ներկայ եղած է Ազգային Իշխանութեան մէջ՝

զանազան պաշտօններով: Մօտ 20 տարի եղած է Ազգ. Զուարեան Վարժարանի հոգաբարձու եւ ետքը ատենապետ: Նաեւ տարիներով Կալուածոց Հոգաբարձութեան անդամ եւ ատենապետ: Այս պատճառաւ՝ մաս կազմած է ազգային կառոյցներու յատուկ՝ շատ մը շինարարական յանձնախումբերու: Եղած է Ազգ. Ծերանոցի ինսամակալ, նաեւ ընտրուած է Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Գաւառական Ժողովի անդամ: Իսկ վերջին շրջանին տարիներով կը ծառայէր Ազգ. Դատաստանական Խորհուրդին մէջ, ըլլալով Նախադատ Ատեանի եւ Հաշտեցման Մարմնի անդամ:

Եղբ. Ալեքսան ամուսնացած է Մարի Տարազճեանի հետ, եւ կազմած հայկական ընտանեկան տաքուկ բոյն մը, ուր Աստուած իրենց պարգեւած է 3 զաւակ՝ Մանուկ, Լեւոն եւ Դալար, որոնք իրենց հօր բարի օրինակին հետեւելով մինչեւ այսօր կը շարունակեն ծառայել Ազգային զանազան մարմիններու մէջ, Հ.Մ.Ը.Մ.-ի առընթեր:

Եղբ. Ալեքսան ուներ կեանքի անսահման փորձառութիւն եւ կը սիրէր գործը քան խօսքը: Ան շատ խստապահանջ եւ ուղղամիտ միութենական մըն էր, որ իր իսկ պարկեշտութեամբ եւ աշխատանքի յանձնառութեամբ յարգանք կը պարտադրէր բոլոր շրջապատին: Կը յարգէր ամենէն փոքրը եւ փոխադարձ կը սիրուէր ու կը յարգուէր բոլորին կողմէն: Ան միշտ ներկայ՝ եւ յառաջապահ ղեկավարն էր, ըլլա՛յ ժողովներու, ըլլա՛յ դաշտի վրայ միշտ պատրաստ էր անսակարկ ծառայելու:


Սկաուտին դաւանանքը Ս.Գիրքի նման կը սիրէր ու կը պարտադրէր բոլորին: Սկաուտին խօսքը նուիրական է, սկաուտը հաւատարիմ, հնազանդ, ուղղամիտ, ծառայատէր, բարեկիրթ է, ու միշտ կ'օգնէ ուրիշին: Վերջապէս սկաուտը մաքուր է մտածումով, խօսքով եւ գործով: Այս արտայայտութիւնները յարատեւ կը լսէինք իր բերնէն: Իր խրատները եւ թելադրութիւնները միշտ կը հնչէն մեր սկանջին մէջ, որպէս կեանքի գործնական ուսուցիչ, մենք երբեք չենք կրնար մոռնալ մեր այս հսկայ, նուիրեալ երեց եղբայրը:

-Հ.Մ.Ը.Մ.-ը ոչ թէ առաքելութիւն ունի, այլ առաքելութիւն է, հայաճնունդ մանուկներուն եւ երիտասարդներուն փոխանցելու համար ազգային միութեան ապրում մը, ոչ թէ խօսքով, այլ մարզական դաշտի վրայ, սկաուտական խումբի մէջ, օրերով միասին ապրուած բանակումի ընթացքին: Յուշերը կը պատկանին մեզի, բայց անոնք իրաւունք չեն երբ պէտք է գործել: Գործն է, երբ կը բացուի ապագային վրայ, երբ լուծումներ կը գտնէ ներկային մէջ, ուր ծնունդ կու տայ իրաւունքին: Հ.Մ.Ը.Մ.-ի յուշ-յիշատակը անպայման պէտք է պահել, սակայն այդ ընելու լաւագոյն եղանակը դեղնած թուղթերու թերթատումը չէ, այլ կենդանի մարզական կեանքը, տեւաբար աճող ու հայութեամբ բարախող սկաուտական կեանքը:

*ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ*

**ՇԱՆՕԹԱՆԱՆՔ ՄԵՐ ԱՆՅԵԱԼԻ  
ՎԵԹԵՐԱՆ ԽՄԲԱՊԵՏ՝  
ԵՂՔ. ՄԻՍԱՔ ՏԷԿԻՐՄԷՆՃԵԱՆԻՆ**

«Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» այս երկու բառերը իրաւամբ կ'առաջադրեն ընդարձակ ու շատ շքեղ ծրագիր մը, որուն գործադրութեան հետամուտ դարձաւ Հ.Ս.Ը.Մ.-ը աւելի քան իր մէկդարեայ շքեղ պատմութեամբ: Միութեան հիմնադիրները, Շաւարշ Քրիսեան, Գրիգոր Յակոբեան եւ Յովհաննէս Հինդլեան կ'երազէին առողջ միտքը տեսնել՝ առողջ մարմնին մէջ: Ըստ դասական առածին՝ մարմնակրթանքը, ի վերջոյ պիտի դառնար սրտի կրթութիւն եւ նկարագրի կերտում:



Սքանչելի է Հ.Ս.Ը.Մ.-ի նշանաբանը՝ «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր»ը, սակայն տպաւորիչ են նաեւ անոր երդումը, զոր իւրաքանչիւր գայլիկ կամ սկաուտ պարտի իրագործել իր պատասխանատուին առջեւ՝ «Պատուոյս վրայ կ'երդնում՝ ըլլալ հաւատարիմ Աստուծոյս եւ ծառայել ազգիս, հայրենիքիս...»:

Այս համառօտ նախաբանէն ետք, պարտք կը համարեմ անդրադառնալ Հալէպի մեր երբեմնի եւ արժանաւոր սկ. Խմբապետ եղբ. Միսաք Տէկիրմէնճեանի կենսագրութեան, որ աւելի քան 65 երկար տարիներ

անշահախնդրորեն ծառայեց՝ պանծալի իր կազմակերպութեան եւ անոր վեհ գաղափարականին:

Եղբ. Միսաք ծնած է Ճարապլուս, 1932-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Ճարապլուսի Ազգ. Մերոպեան վարժարանէն, ապա շարունակած է իր ուսումը Հալէպի Ազգ. Սահակեան վարժարանին մէջ, յետագային նետուած է գործի ասպարէզ:

1946-ին եղբ. Միսաք անդամակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի սկ. շարքերուն, խմբապետ ունենալով եղբ. Տօնապետ Ճապաղջուրեանը:

Յետագային եղբ. Միսաք դարձաւ Հ.Մ.Ը.Մ.-ի խմբապետ եւ Սուրիոյ շրջանային ընդհանուր խմբապետ: Եղբայր Տէկիբմէնճեան անդամակցած է նաեւ տեղական եւ շրջանային Սկ. Խորհուրդներուն: Հ.Մ.Ը.Մ.-ի կողմէ Սուրիահայ Օգնութեան Խաչի արծուիկներուն կապն էր: 1970-ին եղբ. Միսաք իր կուսակցական երդումը կատարելով մուտք գործեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերէն ներս, դառնալով ազնիւ, պարկէշտ գաղափարական հաւատաւոր ընկեր մը:

Եղբ. Միսաք աւելի քան 30 տարիներ հանդիսացած է Հալէպի արհեստակցական միութեան վարչական անդամ, եւ իր գործօն մասնակցութեամբ, իւրայատուկ ներդրում ունեցած է այդ միութեան կազմէն ներս՝ օգտակար դառնալով բոլոր արհեստակիցներուն՝ արար թէ հայ:

Եղբ. Միսաք 1988-ին իր մասնակցութիւնը բերած է Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցած Սկ. Բ. համագումարին: Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը գնահատելով իր

տարիներու ծառայութիւնը պարգեւատրած է զինք  
Հ.Մ.Ը.Մ.-ի «Ծառայութեան» շքանշանով. միաժամանակ  
արժանացած է Արարատեան կարգի վկայագրին:

Այս բարեղէպ առիթէն օգտուելով, մեր սրտագին  
ողջոյնները կը յղենք եղբ. Միսաքին, ցանկալով անոր  
երկար, բեղմնաւոր եւ երջանիկ տարիներ, մաղթելով որ  
ան միշտ մնայ պատնէշի վրայ կրկին ծառայելու իր  
սիրելի կազմակերպութեան՝ ի պահանջել յարկին, նաեւ  
մաղթելով արեւշատութիւն, քաջառողջութիւն եւ  
անսպառ եռանդ:


-Ոմանք կը մտածեն որ իրենց անցքը Հ.Մ.Ը.Մ. կը նշանակէ  
ժամանց մը՝ կատարելագործելու համար իրենց ֆիզիքա-  
կան կարողութիւնները եւ հռչակաւոր դառնալ՝ իրենց  
կիրարկած մարզական մէկ խաղով: Ուրիշներ, աւելի  
օժտեալները, համոզուած են որ ծառայել ակումբին՝ կը  
նշանակէ հասնիլ եւ գագաթին, եւ իտեալին: Երբորդ  
դասակարգ մը, որ ամենէն անանձնական է, ուրիշ  
մտահոգութիւն չունի՝ եթէ ոչ ի մի խառնուիլ խումբին, եթէ  
նոյնիսկ իր ներկայութիւնը անօգուտ նկատուի:

Եւ հիմա, իրաւունք չունի՞նք հարց տալու, թէ մեր  
երիտասարդութիւնը ի՞նչ կը սպասէ Հ.Մ.Ը.Մ.-էն եւ  
Հ.Մ.Ը.Մ. ի՞նչ կը սպասէ մեր երիտասարդութենէն: Երեք  
բառեր կը բաւեն մեր միտքը ամփոփելու համար.-  
Զոհողութիւն, զոհողութիւն եւ միշտ զոհողութիւն:

*ԺՈՋԷՅ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ*

*Եղբ. ԽՈՐԷՆ ՆԱԶԱՐԵԱՆ*  
*(1920-2010)*

Օնած է 1920-ին Խարբերդ, եկած է Հալեպ 1930-ին, Նախնական ուսումը ստացած է Ազգային Հայկազեան Վարժարանին մէջ, գոր աւարտելէ ետք՝ երկու տարի յաճախած է Մխիթարեան Վարժարանը:



1932-ին, եղբ. Թադէոս Թիւթելեանի քաջալերանքով մուտք գործած է ՀՄԸՄ-ի շարքերը: Եղած է գայլիկ քաղաքի մասնաճիւղին, որ այդ օրերուն Հալեպի միակ մասնաճիւղն էր, իսկ Նոր Գիւղի մասնաճիւղը յառաջացած է 1934-ին: Այդ օրերուն վարչութեան ատենապետը եղած է Լուտեր Մասպանաճեանը, իսկ իր խմբապետը՝ եղբ. Նշան Թիւյսիւզեանը, որուն տքնաջան աշխատանքով կարելի եղած է կերտել սերունդ մը, ազգային ոգիով եւ գիտակցութեամբ լիցքաւորուած:

Եղբ. Խորէն հետեւեալ ձեւով կը նկարագրէ այդ օրերը ըսելով.- «Երբ երեւակայութեանս թոյլքը կը սաւառնի դէպի այդ օրերը, հոգիս մեծ հրճուանքով կը լեցուի, որովհետեւ մենք իսկապէս ապրած ենք արի ՀՄԸՄ-ականի պանծալի վարքով եւ կենդանի պահած ենք վսեմ ու ազնիւ մարզականի գաղափարները»:



Ան մաս կազմած է նաև փողերախումբին: 1939-ին դարձած է վարիչ-առաջնորդ, ապա փոխ խմբապետ: 1957-ին նշանակուած է խմբապետ, երբ եղբ. Լեւոն Պապլուզեանը դադրած է խմբապետական պաշտօնէն: 1963-ին դարձած է շրջանային ընդհանուր խմբապետ, վարած է բանակումներ իբրև ընդհանուր խմբապետ: 1961-1971 եղած է վարչական: 1975-ին կազմուած է հալէպահայ միջ-սկաուտական խորհուրդը, որուն ատենապետ նշանակուած է ան: Խորհուրդը կ'ընդգրկէր ՀՍԸՄ-էն 3 սկաուտներ, իսկ ՀՄՄ-էն, ՀԲԸՄ-էն եւ Վասպուրականէն 2-ական սկաուտներ. Կազմը աշխատած է 10 տարիներ, որու ընթացքին չորս միութիւնները միասնաբար կազմակերպած են տօնակատարութիւններ տարբեր առիթներով, ինչպէս Ապրիլ 24, Վարդանանք, առաւել նաև հարց-պատասխանի մրցումներ: 12 տարի եղած է Ազգ. Կիւլպէնկեան վարժարանի հոգաբարձութեան ատենապետ: 1988-ին, արժանացած է ՀՍԸՄ-ի «Արժանեաց» շքանշանին:

Եղած է Քեսապի բանակավայրի առաջին հիմնադիրներէն, նաև ղեկավարած է բանակավայրի շինութեան առաջին յանձնախումբը:

Եղբ. Խորէն եղած է հաւատաւոր միութենական, իր ազգային եւ միութենական բազմավաստակ գործունէութեան ընթացքին միշտ ընդգծած է հայապահպանութեան եւ դաստիարակութեան կարեւորութիւնը, իր տիպար կեցուածքով օրինակ դառնալով եկող սերունդներուն:

## ՀԱՐՅԱԶՐՈՅՑ՝

ԵՂԲ. ԱՌԱՔԵԼ ԹԷՐԶԵԱՆԻ ՀԵՏ

Հ երթական այցելութեան մը ընթացքին, հետեւեալ շահեկան հարցազրոյցը ունեցանք գաղութիս վաստակաւոր ազգայիններէն, հասարակական արգասաւոր գործունէութեան տէր, վեթերան մարզիկ եւ ամբասիբ միութենական, գաղափարի համեստ բայց մեծ նուիրեալ եղբ. Առաքել Թէրզեանի հետ:



*Հ1.- Կարելի՞ է հակիրճ տողերու մէջ ներկայացնել ձեր կենսագրականը:*

Պ1.- Ծնած եմ 1927 թուականին, Հալէպ: Յաճախած եմ Ազգ. Զաւարեան վարժարան, մուտք գործած եմ Հ.Մ.Ը.Մ.-ի սկաւուտական շարքերը՝ 1938-ին որպէս նորընծայ սկաւուտ, ապա երիցական խումբ փոխանցուած եմ: Նոյն շրջանին կը խաղայի ֆութպոլի սկաւուտական խումբէն, իսկ 15 տարեկան հասակիս պատիւ ունեցայ ծառայութեան անցնելու իմ պաշտելի գաղափարականիս:

*Հ2.- Եղբ. Առաքել, դուք քանի՞ տարի ծառայած էիք Հ.Մ.Ը.Մ.-ին շարքերուն որպէս մարզիկ՝ բերդապահ եւ արջլեթ, նաեւ ինչպիսի՞ պաշտօններ ստանձնած էք Բերիոյ Ազգային Իշխանութեան մարմիններէն ներս:*

Պ2.-Հ.Մ.Ը.Մ.-էն ներս ծառայութիւնս եւ օժանդակութիւնս եղած է մօտաւորապէս 40 տարի: Կազմած եմ «Կամք» ֆութպոլի խումբը: Եղած եմ այդ խումբին բերդապահը: Այդ օրերուն, Միջ-մասնաճիւղային խաղերուն ընթացքին 1500 մէթր վազքի ախոյեանը դարձայ: Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը զիս գնահատեց 2003-ին Արտակարգ կարգի պատուա-նըշանով, իսկ Բերիոյ Հայոց Թեմէն ներս վարած եմ հետեւեալ պաշտօնները.- Քաղաքական եւ Գաւառական ժողովներու անդամ, ինչպէսեւ Կալուածոց եւ Դատաստանական խորհուրդներու անդամ, իսկ 2009-ին արժանացայ «Ասպետի Կարգ» շքանշանին եւ պարգեւատրուեցայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի ձեռամբ:

***Հ3.- Կարելի՞ է յիշել ձեր միութենական կեանքէն յատկանշական դրուագ մը, որ անջնջելի մնացած է ձեր յիշողութեան մէջ:***

Պ3.- Դրուագներ շատ են, բայց ամէնէն յիշատակելին այն է, որ երբ Նոր Գիւղի Նաւասարդեան դաշտի շինարարութեան գործին լծուեցանք, թիթեղներով պարիսպ շինելու աշխատանքի ընթացքին, եղբ. Նշան Թիւսիւզեանի բահը սխալմամբ եղբ. Լուտեր Մասպանաճեանի ճակատին դպաւ եւ դէմքը արիւնով ներկուեցաւ: Անմիջապէս բժիշկի հասցուցինք զինք: Վերքը կարելի է տք, յանձնարարեց որ 7 օր հանգստանայ, բայց եղբ. Լուտեր միայն 17 վայրկեան հանգստացաւ ու անմիջապէս դաշտ վերադառնալով կրկին գործի լծուեցաւ:

**Հ4.- Եղբ Առաքել, որո՞նք ձեզի մօտիկ միութենական ընկերներ ու եղբայրներ եղած են, որո՞նց հետ երկար ժամանակ գաղութին վերելքին համար գործակցեցաք:**

Պ4.- Կարելի չէ բոլորը յիշել, բայց անմոռնալի կը մնան հետեւեալ անունները՝ Լուտեր Մասպանաճեան, տոքթ. Գասպար Գասպարեան, Գէորգ Տօնապետեան, Գրիգոր Էպլիղաթեան, Պարգեւ Պօշկեզէնեան, Յարութիւն Պարսամեան, եւ շատ ուրիշներ: Թող ներեն այն ընկերներս եւ եղբայրներս, որոնց անունները չեմ նշած այստեղ:

**Հ5.- Ներկայիս ինչպէ՞ս կ'անցընէք ձեր առօրեան:**

Պ5.- 84 տարեկան եմ, տունէն դուրս չեմ ելլեր, գրեթէ կը ծառայեմ անկողինիս: Հեռատեսիլ կը դիտեմ՝ հետեւելով «Հ1» կամ «Երկիր Մետիա» կայաններուն: Կարդալ շատ կը սիրեմ, բայց աչքերս շուտ կը յոգնին: Յաճախ ինծի կ'այցելեն երեց ընկերներ եւ եղբայրներ, ինչու չէ երբեմն ալ երիտասարդներ, բոլորն ալ ողջ մնան, կ'աղօթեմ բոլորին համար:

**Հ6.- Ինչպէ՞ս կ'ուզէք եզրափակել ձեր խօսքը եւ ի՞նչ կը թելադրէք ներկայ սերունդին:**

Պ6.- Իմ ջերմ ցանկութիւնս է, որ իւրաքանչիւր միութենական կամ պատասխանատու պարտաճանաչութեամբ ու պատուով կատարէ իրեն վստահուած պարտականութիւնը եւ ամէն բանէ վեր դասէ կազմակերպութեան շահը: Ազգովին պէտք է տէ՛ր կանգնինք մեր զոյգ հայրենիքներուն՝ Հայաստանի

Հանրապետության եւ ասպնջական Սուրիական Հայրենիքին:

-Հ.Մ.Ը.Մ.-ի գաղափարականը միայն մարզական չէ, միայն սկաուտական չէ, այլ ԱՄԷՆ ԻՆՉ Է, հայութեան ամբողջութիւնը, հայութեան իտէալները, հայութեան ազատութեան հետ կապուած ամբողջ յոյսերը, հայութեան պայքարի ամբողջ իմաստը: Արտասահմանի մէջ այն բոլոր պատանիներն ու երիտասարդները, որոնք յետագային քաղաքական յանձնառութիւններու տակ կը մտնեն, Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերուն մէջ է, որ կը ստանան իրենց ազգային հիմնական դաստիարակութիւնը:

#### *ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԵԱՆ*

-Հ.Մ.Ը.Մ.-ի ծնունդի օրուան պայմանները նպաստաւոր չէին իր զարգացումին, այլ՝ զինք հիմնադրողներուն վճռականութիւնը եւ սեփական ժողովուրդին տեսլականը, որ Զաւէն Պատրիարքի խօսքերուն մէջ կը ձեւաւորուէր յստակութեամբ: «Բարոյական զինուորագրութիւն» մը պէտք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերուն մէջ ծառայողներուն հիմնական նպատակը, մտասուեռո՛ւմը:


Եւ թող ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.-ական չմոռնայ, թէ անհրաժեշտ է, որ ինք «Կազմակերպուի, ազնուանայ, որքան որ կրնայ լեցնել իր սիրտն ու միտքը, որովհետեւ ինք պիտի ըլլայ վաղուան սրբազան հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւներէն մէկը»:

#### *ԲԱՐԳԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝

### ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻԻՆ ՊԱՐՍՍՄԵԱՆԻ ՀԵՏ

Հայ ժողովուրդի կենսընթացի երթուղիներուն մէջ եղած են միութիւններ, որոնք իրենց առաքելութեամբ ու գերագոյն նպատակով դարձած են հայապահպանման վառ օճախ, ազգակերտումի դարբնոց, հայեցի դաստիարակութեան օրրան եւ ազգային վեհ գաղափարախօսութեանց ներշնչարան: Այդ հայանպաստ միութիւններէն մէկը կը հանդիսանայ



Հ.Մ.Ը.Մ.-ը: Աւելի քան 93 տարիներ Հ.Մ.Ը.Մ.-ը իր պայծառ դիմագիծով, հայատիպ գործունէութեամբ դարձաւ վաւերականօրէն հայ հայութիւնն ու Հայաստանը դարձնելով իր կեանքին առանցքն ու կիզակէտը եւ իր տեսլականին սեւեռակէտը: Հ.Մ.Ը.Մ.-ը ո՛չ միայն հայօրէն ապրեցաւ ու հայօրէն գործեց, այլեւ հայ ժողովուրդի գոյապայքարին մէջ ունեցաւ իր որոշադրիչ տեղն ու կենսական դերը՝ զայն հեռու պահելով ապազգայնացուցիչ ու օտարածին երեւոյթներէ: «Հ.Մ.Ը.Մ.-ը ո՛չ միայն հայակերտումի սրբազան գործին լծուած դպրոց եղաւ, այլ մեր ժողովուրդին մարդկային իրաւունքներու վերատիրացման համազգային պայքարին կարեւոր գործօններէն մին դարձաւ»:

(Արամ Ա. Կաթողիկոս)

Հ.Մ.Ը.Մ.-ի ազգանուէր գործունէութեան մէջ մեծ ծառայութիւն մատուցողներէն եղած է եղբ. Յարութիւն Պարսամեանը, որ անխոնջ ու բազմաշխատ նուիրեալ մը եղաւ: Հ.Մ.Ը.Մ.-ականները իրեն համար եղած էին իսկական հարազատ եղբայրներ, որոնց կը գուրգուրար իր անձէն աւելի: Համբերութեամբ կը լուծէր բոլոր հարցերը: Ատելութիւն բացարձակապէս չունէր: Փնտռուած անձնաւորութիւն մըն էր թէ՛ պետական եւ թէ՛ միութեան յարկերէն ներս: Ահա թէ ինչն՝ աւելի քան 50 տարիներ անշահախնդրօրէն ծառայեց Հ.Մ.Ը.Մ.-ին, հաւատալով անոր ազգանպաստ եւ հայանուէր գործունէութեան:

Եղբ. Յարութիւնին հետ մտերմիկ հանդիպումի մը ընթացքին սրտբաց եւ շահեկան զրոյց մը ունեցանք, եւ խնդրեցինք իրմէ հակիրճ տողերու մէջ ամփոփել իր ինքնակենսագրականը, զոր կը ներկայացնենք ստորեւ:

Ծնած եմ Խարբերդ 1927-ին, ապա ծնողքիս հետ Հալէպ հաստատուած եմ: Յաճախած եմ Կրթասիրաց վարժարան, որմէ ետք ուսումնա շարունակած եմ ֆրանսական «Փրեմ Բարդի Լայք» դպրոցը եւ ստացած՝ երկրորդական վկայականս: Յետագային մուտք գործած եմ գործի ասպարէզ:

1940-ին գրանցուած եմ Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերուն որպէս անդամ, իսկ 1975 թուականէն սկսեալ մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.-ի յաջորդական վարչութիւններուն: 1978-ին յետ քուէարկութեան անդամ դարձած եմ Հալէպի ֆուրպոլի ֆետերասիոնին: 1980-ին ընտրուած եմ Հալէպի Նահանգապետական Խորհուրդի անդամ եւ

վարած՝ սոյն պաշտօնը 12 տարի: 1996-2000 ստանձնած էմ Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը: Իսկ 1993-ին՝ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը պարգեւատրեց զիս «Ծառայութեան» շքանշանով միութեան մատուցած իմ երկարամեայ ծառայութեանս համար, ինչպէս նաեւ Սուրիոյ ֆութպոլի ֆետերասիոնի կողմէ պարգեւատրուած էմ յատուկ վկայականով եւ շքանշանով:

Մեծ ներդրում ունեցած էմ Հ.Մ.Ը.Մ.-ի մարզաւանի հողաշերտի ապահովման եւ ապա անոր շինարարական աշխատանքներու յաջողութեան մէջ:

Այդ հողաշերտի ապահովման գծով բազմակողմանի ջանքեր ծաւալած էմ, բազմիցս հանդիպումներ ունեցած էմ ըլլա՛յ Հալէպի քաղաքապետին, ըլլա՛յ նահանգապետին եւ ըլլայ կուսակցապետին հետ: Նոյն նպատակով յաճախակիօրէն Դամասկոս ժամանած էմ եւ հանդիպումներ ունեցած պետական եւ մարզական բոլոր քարձրաստիճան անձնաւորութեանց եւ պատասխանատուներուն հետ: Օրին հանդիպում ունեցայ նաեւ վարչապետին հետ, որ վաւերացուց այսօրուան մարզաւանի հողաշերտի սեփականաշնորհումը Հ.Մ.Ը.Մ.-ին: Հողատարածքը կը գտնուի Հայ Ծերանոցին կից, «Պոսթան Փաշա» շրջանին մէջ:

Բացի Հ.Մ.Ը.Մ.-էն ծառայութիւն մատուցած էմ նաեւ մեր ազգային կեանքէն ներս:

Եղած էմ Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Գաւառական Ժողովի անդամ, ինչպէս նաեւ մաս կազմած էմ Ազգային Վարչութեան Կալուածոց Հոգաբարձութեան:



Երկար տարիներ անդամ եղած եմ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի խնամակալութեան:

Բերիոյ Հայոց Թեմէն ներս պաշտօնավարութեանս ընթացքին գործընկերներս եղած են բազմաթիւ նուիրեալ ազգայիններ, որոնցմէ յիշատակութեան արժանի են. Գրիգոր Էպլիղաթեանը, Առաքել Թերզեանը, Սարգիս Ղազարեանը, Տիգրան Մակարեանը, Յարութիւն Գաֆաֆեանը եւ Յովհաննէս Մուշեղեանը: Իսկ Հ.Ս.Ը.Մ.-ի գործընկերներէս պարտք կը համարեմ յիշել բժշկ. Տիգրան Չափանեանը, բժշկ. Մանուկ Իսկէնտերեանը, եղբ. Գեորգ Կարապետեանը, եղբ. Պարգեւ Պօշկէզէնեանը, եղբ. Ալեքսան Իսկէնտերեանը եւ եղբ. Նշան Օղիկեանը:

Հ.Ս.Ը.Մ.-ի մարզական խումբերուն հետ այցելած եմ շատ մը շրջաններ եւ անվերապահ գնահատանքի արժանացած:

Անմոռանալի է Հ.Ս.Ը.Մ.-ի համագաղութային պասքէթպոլի տղոց մրցաշարքը, որ տեղի ունեցաւ Ֆրանսայի Վալանս քաղաքին մէջ, ուր Հալէպի Հ.Ս.Ը.Մ.-ը տիրացաւ ախոյեանութեան: Որպէս զանազան մարզախաղերու պատուիրակութեանց պատասխանատու այցելած եմ հայրենիք, Յորդանան եւ Եգիպտոս:

Իբրեւ երէց Հ.Ս.Ը.Մ.-ական մեր նոր սերունդին կը պատգամեմ հետեւեալը.

Հ.Ս.Ը.Մ.-ին մէջ ըլլալ կը նշանակէ ըլլալ մաքրամաքուր մթնոլորտի մէջ: Հ.Ս.Ը.Մ.-ը ոչ միայն մարզական միութիւն է, այլեւ հոգեձուլարան, ուր պատանին կը կոփուի, կը զարգանայ եւ կը թրծուի

հայկական վսեմ արժեքներով ու գաղափարա-  
բանութեամբ: Ուստի, կը թելադրեմ այսօրուան նոր  
սերունդին, որ ըլլան միշտ պատնէշի վրայ եւ բնաւ  
չընկրկին դժուարութիւններու կամ մարտահրաւերներու  
առջեւ, ինչպէս նաեւ ի սրտէ կը ցանկամ, որ  
«Բարձրացիր Բարձրացուր»ի սկզբունքով տեսաբար  
համերաշխութիւն եւ սէր տիրէ Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ  
ընտանիքէն ներս:

-Հ.Մ.Ը.Մ. թափանցեց հայ երդիքներէ ներս, ջերմացուց  
մարդոց սրտերը հայրենիքին հանդէպ, բաժնեկիցը դարձաւ  
անոնց տառապանքներուն եւ ուրախութիւններուն,  
համատեղեց զանոնք ապահով վայրերու մէջ, տիրութիւն  
ըրաւ անոնց, ժողովուրդին կուտքը դարձաւ եւ սիրուեցաւ  
պաշտուելու՝ աստիճան: Թիւով քիչ, բայց որակով  
հիասքանչ հայ ժողովուրդի արգանդին ծնունդն է Հ.Մ.Ը.Մ.-  
ը, որ շատ բան առաւ անկէ, սակայն նաեւ քիչ բան չտուաւ  
անոր: Հայ պատանիին ստրվեցուց ըլլալ չարքաշ ու արի,  
ագնիւ եւ վեհանձն, պարկեշտ եւ նուիրուող: Սերունդներ  
փրկեց ձուլումի երախէն եւ դարձաւ հայրենիք օտար  
երկինքներու տակ:

***ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ***

-Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտների հայրենանուէր ապագային  
հետեւողները ամենամեծ ներդրում են անում հայութեան  
զանձարանում, քանի՜ աւելի մեծ գանձ, քան հայ մանուկն  
ու պատանին, քան հայ անհատը, անհնար է երեւակայել:  
Յաջողութիւն Հ.Մ.Ը.Մ.-ի նուիրական աշխատանքներին՝  
միասնական Հայութեան, միասնական Հայրենիք կերտելու  
ճանապարհին:

***ՈԱԶՄԻԿ ԴՄԻՈՅԵԱՆ***

## *Եղբ. Պարգեի Պօշկեզէնեանի մահուան արթիւ*

Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբիոյ մեծ ընտանիքը սրտի խոր կսկիծով գուժեց միութեան երկար տարիներու ծառայող եւ նուիրեալ եղբայրներէն՝ Եղբ. Պարգեի Պօշկեզէնեանի մահը, որ անողոք հիւանդութեան պատճառով բաւական ծառայեց անկողինին: Ազգային եւ միութենական կեանքին նուիրուած եղբօր մը կորուստէն ետք պարտք կը զգանք անդրադառնալու անոր տարած աշխատանքներուն եւ գործունէութեան՝ յարգելու եւ անմար պահելու համար անոր յիշատակը:



Եղբ. Պարգեի ծնած է Հալէպ 1928 թուականին. Յաճախած է Ուսումնասիրաց վարժարանը: Փոքր տարիքէն եղած է Հ.Մ.Ը.Մ.-ական գայիկ, ապա սկաուտ, ինչպէս նաեւ նուիրեալ գաղափարի իսկական ընկեր: Որպէս Հ.Մ.Ը.Մ.-ական անդամ իր նուիրական կեանքը շարունակելով ստանձնած է պատասխանատու զանազան պաշտօններ՝ դառնալով վարչութեան անդամ, ապա ատենապետ:

Հ.Մ.Ը.Մ.-ի կողքին նաեւ ծառայած է Ազգային Իշխանութեան մէջ ստանձնելով զանազան պաշտօններ: 16 տարիներ շարունակ նուիրուած է Ազգ. Սահակեան վարժարանին, որպէս հոգաբարձու, ինչպէս նաեւ եղած է Ազգ. Տնտեսական Խորհուրդի եւ Կալուածոց Հոգաբար-

ձուրթեան անդամ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական եւ Հայ ծերանոցի խնամակալ: Ընտրուած է Բերիոյ Հայոց Թեմի Գաւառական ժողովի անդամ: Իր վաստակին ու նուիրեալ աշխատանքներուն առ ի գնահատանք արժանացած է Բերիոյ Հայոց Թեմի, ինչպէս նաեւ Հ.Ս.Ը.Մ.-ի «Ծառայութեան» շքանշաններուն:

Եղբ. Պարգեւին Համար Հ.Ս.Ը.Մ.-ը դարձաւ իր ամենասիրելի տունը եւ սեփական ընտանեկան յարկը վերածեց փոքր ակումբի մը, գաւակներուն հոգիներուն մէջ սերմանելով ազգային եւ միութենական գիտակցութիւն:

Այս տխուր առիթով Հ.Ս.Ը.Մ.-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալ եղբոր տիկնոջ, գաւակներուն եւ հարազատներուն, ինչպէս նաեւ իր միութենական ընկերներուն եւ եղբայրներուն:

Հողը թեթեւ գայ վրադ սիրելի եղբ. Պարգեւ:

-Հ.Ս.Ը.Մ. այն եզակի միութիւններէն է, որուն աշխատանքները տարածուած են ամբողջ աշխարհի մէջ: Հ.Ս.Ը.Մ.-ը հայկական ոգին պահեց Սփիւռքի սերունդներուն մէջ: Հ.Ս.Ը.Մ.-ը 1912 թուականէն սկսեալ հայ ազգային ոգին պահեց մանաւանդ այն երիտասարդութեան մօտ, որ երբեք Հայաստանը չտեսաւ: Այսօր այդ աւանդութիւնը կը շարունակուի:

*ԺԱԳ ՄՈՐԷՆ*  
*(Հ.Ս. Շարժումի նախկին ընդհ. քարտուղար)*

## ՎԵԹԵՐԱՆ

### ԵՂՔ. ԲԺԻՇԿ ՏԻԳՐԱՆ ՉԱՓԱՆԵԱՆ

**Ա**նշուշտ երկար կարելի է գրել սիրելի եղբոր մը մասին: Արդէն շատեր կանխեցին զիս: Բայց, ես ալ իմ կարգիս, փափաքեցայ հակիրճ խօսքով արտայայտել զգացումներս այդ ազնուական հայուն մասին:

Յարգարժան բժիշկը կը ճանչնայի տակաւին 1975-ական թուականներէն եւ յաճախ կ'այցելէի անոր դարմանատունը, որպէս երեց պատասխանատուի:



Եղբայր Տիգրան հաւատաւոր միութենական մըն էր, ինչպէս նաեւ ժրաջան ու նախանձախնդիր Հ.Ս.Ը.Մ.-ական մը: Իր հետ խօսելու ընթացքին, կը զգայի, որ սիրտը կը բաբախէր իր սիրելի ազգին ու մանաւանդ՝ իր պաշտելի միութեան համար անխառն սիրով: Եղբայր Տիգրանը երկար տարիներ ծառայած էր Հ.Ս.Ը.Մ.-ին ազգային բարձր գիտակցութեամբ եւ արժանացած՝ իր միութենական եղբայրներուն եւ համակիրներուն բարձր գնահատանքին:

Եղբ. Տիգրանը արժանաւորապէս կը վարէր Հ.Ս.Ը.Մ.-ի Տեղական եւ Սուրիոյ Շրջանային վարչութիւններու ատենապետի պատուակալ պաշտօնները:

Որպես բժիշկ՝ տարիներ շարունակ, բանակումներու նախօրէին մանրակրկիտ քննութեանց կենթարկէր բոլոր գայլիկներն ու սկառուները անխտիր:

Եղբայրը նաեւ կը վայելէր Սուրիոյ բժշկական միութեան անդամներուն ընդհանուր համակրանքն ու վստահութիւնը՝ հմուտ բժիշկ մը ըլլալուն պատճառաւ:

Եղբ. Տիգրանի գլխաւոր յատկութիւններէն մէկն էր իր նախաձեռնող ոգին, ինչպէս նաեւ իր անսահման ծառայասիրութիւնը իր սիրելի կազմակերպութեան: Հակառակ իր մեղմ ու համեստ բնավորութեան, ջղային էր, բայց ուղղամիտ, ու մանաւանդ շատ բժախնդիր իր ժամադրութիւններուն մէջ:

Գիտեմ միայն, որ եղբ. Տիգրանը իր երկրորդական ուսումը ստացած էր Հալէպի նշանաւոր Aleppo College-ին մէջ, ապա մեկնած Իտալիա եւ արժանացած բժշկական վկայականի:

Շատ ափսոս, որ եղբ. Տիգրանն ալ, ինչպէս շատ ուրիշներ, Ազգ. Գերեզմանատան մէջ չթաղուեցաւ, այլ հեռաւոր ամայի վայրի մը մէջ՝ Հալէպի պատերազմական ահաւոր վիճակին հետեւանքով: Եղբօր թաղման արարողակարգը տեղի ունեցաւ 8 Փետրուար 2014-ին, Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Թաղման կը մասնակցէին Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Սրբ. Արք. Սարգիսեան, ինչպէս նաեւ Գերապատիւ Տ. Վահան Ծ. Վրդ. Պերպէրեանն ու քահանայից դասը:

Տ. Տաթև Ա. քնյ. Միքայէլեանը լայն գիծերու մէջ ներկայացուց եղբ. Տիգրանի անխոնջ գործունէութիւնը

Հալեպի միութենական, ազգային եւ բժշկական ասպարեզներէն ներս:

Ափսոս, որ որոշ ազգայիններ, միութենականներ եւ պատասխանատուներ, ներկայ չէին թաղմանական արարողութեան:

Հանգի՛ստ ոսկորներուդ մեր անկեղծ եղբայր Տիգրան: Հողը թեթեւ գայ վրա՛դ:

...Մարմնացեալ խանդավառութիւն եւ կարգապահութիւն: Ինչո՞ւ չըսել վերածնունդ, միշտ յիշելով երէկը:

Հայկական յետին համրանքը իր բաժինն ունի երիտասարդական այս աննման կազմակերպութեան մէջ, հեռաւոր դաշտի մը վրան նետուած ըլլան անոնք թէ լերան մը ստորոտը, անխորտակելի հաւատք կը կաթի այս երիտասարդութեան աչքերէն: Աշխատանքի, չարքաշութեան, յարատեւութեան աւիշն է որ կը յորդի իրենց երակներէն...:

Ուրիշներ, աւելի՛ բախտաւորներ, դժուար թէ յաջողէին գլուխ հանել այսքան կուռ եւ ծաւալուն կազմակերպութիւն մը, առանց պետական միջոցներու:

Անոնք որ նուիրուած են Հ.Մ.Ը.Մ.-ի զարգացման աշխատանքին, անոնք միայն գիտեն թէ ինչ կը նշանակէ հազարաւոր անդամներու ցանց մը կազմակերպել ու պահել տարիներով: Հակառակ անհնարին դժուարութեանց, որոնց առջեւ շատոնց յուսահատած պիտի ըլլային վեհերոտ եւ նեղմիտ մարդիկ:

Այս հրաշքը կարելի եղած է գործել անոր համար, որ Հ.Մ.Ը.Մ.-ի վարիչներուն եւ անդամներուն հոգին միշտ կը խայտայ գարնանային շունչով մը:

*ՇԱԻԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ*

## *Հ.Մ.Ը.Մ.-ի ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ*

### *ԵՂՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՈՒՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ*

**Ե**րկար Տարիներ Հ.Մ.Ը.Մ.-ի մեջ ծառայած, ինչպես նաև Ազգ. Իշխանության մեջ զանազան պաշտոններ վարած՝ եղբ. Յարութիւն Արուշեանը, յատկանշուած էր իր լուռ ու մունջ աշխատելու պատրաստակամութեամբ եւ հլու հնազանդ նկարագրով: Ան յոյժ գիտակից անձն էր իր ստանձնած բոլոր պարտականութեանց, հաւատարիմ եւ անսակարկ ծառայելու միշտ պատրաստ:

Յարութիւն Արուշեան ծնած է 1931-ին Պիթիասի մեջ, Իսկէնտերունի մարզ: 8 տարեկանին ծնողքին հետ եւ բոլոր Մուսա լեոցի հայութեան հետ տեղահան կըլլայ դէպի Այնճար, ուր ֆրանսական իշխանութիւնը հողաշերտ կը յատկացնէր իւրաքանչիւր գաղթական հայ ընտանիքի՝ տուն կառուցելու համար: Ան փոքր տարիքէն արդէն կորսնցուցած էր իր հայրը, ու մայրը զինք կուղարկէ Կիպրոս, ուսանելու Մելգոնեան գիշերօթիկ վարժարանին մեջ, ուր կը մնայ 2 տարի:

Ճակատագրի չար բախտը դարձեալ կը հետապնդէ զիրենք, եւ Այնճարի մեջ տնաշինութեան համար իրենց յատկացուած հողաշերտը ճամբու վրայ յայտնուելով, Արուշեան ընտանիքը դարձեալ կը մնայ անտուն, եւ գաղթականի ցուպը ձեռին կը փոխադրուի Դամասկոս: Հոս պատանի Յարութիւնը կը ծանօթանայ յայտնի Հ.Մ.Ը.Մ.-ական Տիգրան Ոսկերիչեանի հետ, եւ կըլլայ սկաւուտ, ետքը աստիճանաւոր եւ պատասխանատու:



Նաև մարզիկ, որպես պասքեթպոլիստ: Ան այդ տարիներուն կ'աշխատէր բեռնատար մեքենայի վարորդ:

1953-ին վերջնականապէս կը փոխադրուի Հալէպ եւ կընտրէ կերպասի տպածոյի ասպարէզը, եւ տարիներ շարունակ այս ծիրին մէջ աշխատելով կը հիմնէ կերպասի տպագրութեան իր անձնական ֆապրիքը:

Հալէպի մէջ եղբ. Յարութին Արուշեան կը շարունակէ իր Հ.Մ.Ը.Մ.-ականի աշխատանքը գործելով զանազան յանձնախումբերու մէջ: Իր վստահելի նկարագրին համար ան ընդհանրապէս կը ստանձնէր զանձապահի պաշտօնը: Երկար տարիներ կըլլայ կիշէի յանձնախումբի անդամ, եւ ետքը վարչական: Ան միշտ պատրաստ էր իր նիւթական օժանդակութեամբ նեցուկ կանգնելու միութեան աշխատանքներուն:

1980-ական թուականներուն զինք կը տեսնենք Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան մէջ, ուր ընդհատումներով կը ծառայէ մօտ 6 տարիներ, մինչեւ 1995: Իսկ 1996-ին Շրջանային Վարչութիւնը գնահատելով իր երկարամեայ ծառայութիւնը, զինք կը պարգեւատրէ Հ.Մ.Ը.Մ.-ի «Ծառայութեան» շքանշանով:


Յարութին Արուշեան Հ.Մ.Ը.Մ.-ի կողքին եղած է Ազգ. Քարէն Եփփէ ճեմարանի խնամակալութեան անդամ, նաև երկար տարիներ Ս. Յակոբ եկեղեցւոյ թաղական:

Կեանքի վերջին տարիներուն անողորմ հիւանդութիւնը չիսնայեց զինք եւ պատճառ դարձաւ երկրաւոր այս կեանքէն առյաւէտ իր բաժանումին: Ան մահացաւ եւ թաղուեցաւ Այնճարի մէջ, 16 Յունուար 2013-ին:

*Հ.Մ.Ը.Մ.-Ը ՄԵՐ ԴԱՐԲՆՈՅԸ  
ՎԱԶԳԷՆ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ*

*ԻՆՉՊԷ՛Ս ՄԿՍԱՅ ՖՈՒԹՊՈՂ ԽԱՂԱԼ*

1926-ին եօթ-ութ տարեկան էի եւ Հալէպ՝ «Հայկազեան» վարժարանը կը յաճախէի, ամէն զբօսանքին աշակերտները ֆութպոլ կը խաղային բակին մէջ, ոչ թէ իրական ֆութպոլի գնդակով, այլ... 5-6 սանթիմէթը քառակուսի փայտի կտորով մը:



Ես միշտ կը դիտէի խաղը հետաքրքրութեամբ, մանաւանդ երբ եղբօրս (Արսէն Տէր Ղուկասեան) դասարանը կը խաղար:

Օրին մէկը, անկիւն մը կեցած, նորէն կը դիտէի, երբ այդ փայտի կտորը իմ կողմս եկաւ: Անմիջապէս ոտքովս հարուածեցի զայն, որ օդը բարձրացաւ, մօտ մէկ մէթը:

Շատ լաւ կը յիշեմ: Այդ օրուան հսկիչը պրն. Եղուարդ Տասնապետեանն էր, որ քովս կեցած էր: Ուրիշ տղաք ալ կային: Բոլորը ըսին, նաեւ պրն. Տասնապետեանը, որ «Այս տղան լաւ խաղացող մը կրնայ ըլլալ»: Եւ այդ վայրկեանին իմ մէջ մեծ սէր մը արթնցաւ ֆութպոլի հանդէպ:

Յաջորդ օրը ես ալ սկսայ խաղալ իրենց հետ: Յետոյ սկսանք խաղալ մեր տան բակին մէջ, մեր դրացի տղոց

հետ (Վարուժան Տետեանը, Աւօն, եղբայրս՝ Արսէնը, քեռիիս տղան՝ Հրանդ Քէշիշեանը եւ ես):

Բակին մէջտեղը աւագան մը կար: Ամէն մէկս իր կօլը ունէր անոր շուրջ: Պիտի ջանայինք իրարու դէմ կօլ նշանակել:

Շատ լաւ կը յիշեմ. ամէն մէկս կը վճարէինք մէկ պարզուտ գնդակին, որ թենիսի գնդակի մը մեծութիւնը ունէր: Վրան կը փաթթէինք լաթի կտորներ, որ աւելի երկար ժամանակ դիմանար: Կը խաղայինք առանց կօշիկի, բոպի՛կ: Երբեմն ոտքերնիս գետին զարնուելով՝ մեր ոտքի մասներուն եղունգները կը կտտրէին: Եւ օրերո՛վ չէինք կրնար խաղալ, կօշիկ չէինք կրնար հագնիլ:

Յետոյ սկսանք մեր երագին՝ մեր նեղ փողոցին մէջ խաղալ, անկէ ալ Յարութիւն Մարութեաննց թաղը փոխադրել մեր խաղավայրը. հոն՝ Ազիզիէն աւելի լայն ու մեծ թաղ էր, հարուստի՛ թաղ, եւ Յարութիւն Մարութեանը կը վճարէր գնդակին գինը, 3 պարզուտ: Այս գնդակը թենիսի գնդակին կրկին մեծութիւնը ունէր:

Այդ շրջանին՝ եղբօրս դասարանը ֆութպոլի խումբ մը ունէր, եւ շաբաթը քանի մը անգամ իրենց հետ դաշտ կէրթայի, խաղալու համար: Այս անգամ իրական ֆութպոլի գնդակ էր:

Շատ լաւ կը յիշեմ: Երբ նոր ֆութպոլ մը առնէին՝ աճուրդի կը հանէին, թէ ո՞վ առաջին անգամ պիտի հարուածէ գայն: Մինչեւ քառորդ մէճիտի կը բարձրանար գումարը:

Այս շրջանին, հայրս եղբորս ֆութպոլի կօշիկ մը առաւ մէկ ու կէս մէճիտի: Այդ օր ես շատ լացի՝ «Ես ալ կ'ուզեմ» ըսելով:

Այդ օրերուն, եղբայրս՝ Արսէնն ու ես Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտ արձանագրուեցանք, դրդումովը Արամ Տէր Ղուկասեանի (Հ.Մ.Ը.Մ.-ի գործօն անդամ) եւ Յակոբ Քէշիշեանի («Նահաս Յակոբ» կը կոչէին զինք), որ սկաուտ էր եւ կը խաղար սկաուտական Ա. խումբէն:

Տարիներ ետք ես ալ սկսայ խաղալ սկաուտական խումբէն, իսկ եղբայրս՝ Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբէն: Այն ատեն մեր սկաուտ խմբապետն էր Արսէն Դանիէլեանը, որ կազմեց կրտսեր սկաուտներու խումբ մը, որուն գրեթէ բոլոր խաղացողները, յետագային մաս կազմեցին Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբին:

Միշտ, եղբորս հետ Ա. խումբի փորձերուն կ'երթայի եւ միասին կը խաղայինք: Միշտ ալ հարց կու տայի ես ինձի, թէ՛ ե՞րբ պիտի կարենայի խաղալ Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբէն: Միակ մտածումս ա՛յս էր: Նաեւ, երբ առիթը գտնէի եւ գնդակ մը ձեռք ձգէի՝ շուտ մը դաշտ կը վազէի եւ առանձինս կը խաղայի:

Առիթը 1935-ին ներկայացաւ: Հալէպի խումբը Պէրուրթ պիտի երթար եւ զիս ալ միասին պիտի տանէր: Հոս՝ չեմ կրնար նկարագրել հոգեկան հրճուանքս եւ անսահման ուրախութիւնս: Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբէն պիտի խաղայի՝.....

Ճամբայ ելանք դէպի Պէրուրթ, շոգեկառքով եւ Ռայաքի գիծով, Ուրբաթ գիշեր եւ Պէրուրթ հասանք Շաբաթ կէսօրէ ետք: Պէրուրթ հազիւ հասած, չա՛ր բախտէս, հիւանդացայ: Ջերմ ունեցայ եւ չկրցայ խաղալ

մրցումին: Տարիներու երազս օղը ցնդեցաւ: Բայց յաջորդ տարին, 1936-ին, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի կազմէն խաղացի Պէյրութի մէջ, Ռասիմկի դէմ, Քաղաքապետարանի դաշտին վրայ: Անկէ յետոյ ճամբորդելը, օտար դաշտերու վրայ խաղալը ֆութպոլի ընթացիկ կեանքիս անբաժան մաս կազմեցին:

Պէյրութի մէջ միշտ Թուրիկին պանդոկը՝ Օթէլ Լիքս կ'իջնէինք: Դաշտ երթալու համար հանրակառք կ'առնէինք մինչեւ Տըրըն-Շըպպէք, անկէ ալ քալելով դաշտ կը հասնէինք:

Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբին մաս կազմելէս ետք սկսայ մտածել թէ՛ ե՞րբ պիտի խաղայի Հալէպի խառն խումբէն: Այդ պատեհութիւնը տրուեցաւ ինձի 1938 թուին:

Վերջին հանգրուանը կը մնայ Սուրիոյ ազգային խառն խումբը. թիրախս հիմա ան էր, եւ ես փորձերս կը բազմապատկէի՝ հոն հասնելու համար: (Վերջապէս այդ երազս ալ իրագործուեցաւ 1941-ին:

Այդ տարին Սուրիոյ ազգային խումբը կը բաղկանար հետեւեալ խաղացողներէն.- Տիգրան Բերդապահ (Հ.Մ.Ը.Մ.-Դամասկոս), Մանուէլ (Հ.Մ.Ը.Մ.-Հալէպ), Աբրահամ (Վասպուրական-Հալէպ), տեղացի մը (Պարա-տա-Դամասկոս), Տրդատ (Հ.Մ.Ը.Մ.-Դամասկոս), Արտա-ւազդ՝ Արտօ (Ինիոն Սբորթի-Հալէպ), Վազգէն (Հ.Մ.Ը.Մ.-Հալէպ), Ահմէտի Ճումասա (Ինիոն Սբորթի-Հալէպ), Սպայի (Նետի Արապի Հալէպ), Համազասպ (Հ.Մ.Ը.Մ.-Հալէպ), Արմէն (Հ.Մ.Ը.Մ.-Հալէպ):

Խաղին արդիւնքը..Սուրիա յաղթեց Լիբանանի՝ 2-1:

Այդ օր մեր բերդապահը՝ Տիգրան շատ լաւ խաղաց: Առանց իրեն կրնայինք պարտուիլ երեքի դէմ չորս կողով: Խաղը տեղի ունեցաւ ամերիկեան համալսարանի դաշտին վրայ: Համակիրները խաղէն ետք՝ Տիգրանը, Տրդատը եւ Վազգէնը ուսամբարձ տարին դաշտէն:

### **ԱՄԷՆԷՆ ՈՒՐԱՆ ԱՌԻԹ ՄՐՅՈՒՄՆԵՐԷՍ ՄԷԿԸ**

1941-ին, Հալէպի մէջ, կազմակերպուած էր մրցաշարք մը, առաջին կարգի խումբերուն միջեւ, երթ ու դարձի դրութեամբ: Այդ մրցաշարքի աւարտականին մնացինք մենք՝ Հ.Մ.Ը.Մ.-ը եւ Հալէպի նշանաւոր Ինիոն Մբորթիւր: Առաջին մրցումին, Ինիոնի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.-ը յաղթեց՝ 3-1 արդիւնքով: Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի պատմութեան մէջ առաջին անգամն էր որ Ինիոն կը պարտուէր մեզմէ: Կարելի չէ նկարագրել հայ ժողովուրդի ուրախութիւնը, մեր խաղացողները ուսամբարձ ակումբ կը հասնէին:

Երկու շաբաթ ետք՝ դարձի մրցումը, Հ.Մ.Ը.Մ.-ի դաշտին վրայ:

1941-ին խմբապետն էի: Շաբաթ գիշեր երազ մը տեսայ, որ՝ ֆութպոլ կը խաղանք: Մրցումէն ետք բաժակը կ'առնեմ, որ շատ ծանր է, բայց կը յաջողիմ վերցնել: Առտուն, նախաճաշին, երազս պատմեցի ինչորս եւ Արսէն եղբօրս: Հայրս ըսաւ որ՝ «Այսօր պիտի յաղթէք Ինիոնին»: Եղբայրս՝ թէ «Շատ դժուար է»: Այդ շրջանին եղբայրս ալ կը խաղար:

Ես սովորութիւն ունէի միշտ կանուխ դաշտ երթալու: Այդ օրերուն նորութիւն էր գրաւի գալ թէ ո՞վ պիտի յաղթէ: Շատ բարեկամներ ունէի Ինիոնի

համակիրներէն, եւ խաղէն առաջ գրաւի եկայ անոնցմէ մօտ տասը հատին հետ:

Խաղը սկսաւ, բայց ես երբեք չէի մտածեր այլեւս գրաւի մասին, այլ միայն՝ յաղթանակի՛ն: Կրակ կտրած էինք բոլորս: Եւ յաղթեցինք՝ 5-2 փառաւոր արդիւնքով:

Առանց վայրկեան կորսնցնելու թրիպիւն վազեցի, որ բաժակը առնեմ քաղաքապետէն:

Երբ թրիպիւնէն վար իջայ՝ արդէն ժողովուրդը դաշտը լեցուցած էր: Զիս ուսամբարձ մինչեւ հանդերձարան տարին: Հոն բաժակը մեր տողոց տուի, եւ բոլոր խաղացողներս, համակիրներու ուսերուն վրայ, ակումբ առաջնորդուեցանք:

Չեմ կրնար ներկայ թուղթին վրայ իմ հոգեկան անսահման հրճուանքս լրիւ արձանագրել: Նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.-ինը: Վերջապէս կրցած էինք տարիներու մեր հակառակորդը ծունկի բերել:

Այս յաղթանակը մենք կը պարտէինք մեր յոյսին, պայքարելու մեր կամքին: Վասն վերջնական յաղթանակի մաքառելու դաստիարակութիւնը տուած էին մեզի՝ մեր մեծերը: «Այսօրուան պարտութիւնը վաղը յաղթանակի կը վերածուի, երբ կամքը տեղի չի տար», կըսէին անոնք: Մեր ականջին օղ կը մնար եղբ. Լուտերին խօսքը. «պարտութիւններն են որ խումբը յաջողութեան կը տանին: Պէտք է պարտուիլ գիտնաս, որ կարենաս յաղթել: Վերջնական յաղթանակը հայ ժողովուրդին է: Յառաջ»:

***ՅԻՇՍՏԱԿԵԼԻ ԿԱՐԳ ՄԸ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԹՈՒԱ-ԿԱՆՆԵՐ***

1940-ին, Հալեպի Ինիոն Սփորթիւին հետ Եզիպտոս գացի: Խումբին մաս կը կազմէին Սուրիոյ եւ Լիբանանի լաւագոյն խաղացողները: Պէյրութէն՝ Եդիշէ, Նալպանտեան եւ ուրիշներ:

1945-ին, մէկ շրջան, Պէյրութի Հ.Ս.Ը.Մ.-էն խաղացի:

1945-1946, վեց ամիս մաս կազմեցի նաեւ Պէյրութի ֆրանսական բանակի խումբին:

1946-ին կազմեցի Սուրիոյ ժանտարմըրիի խումբը:

1947-ին Սուրիոյ եւ Լիբանանի ազգային խումբերը ճակատեցան Պէյրութի քաղաքապետարանի դաշտին վրայ: Սուրիա յաղթեց՝ 4-1: Երկու շաբաթ ետք փոխվրէժի մրցումը տեղի ունեցաւ Հալեպի Հ.Ս.Ը.Մ.-ի դաշտին վրայ, եւ նորէն Սուրիան տարաւ յաղթանակը՝ 2-1 արդիւնքով: Սուրիական խումբէն կը խաղային Հ.Ս.Ը.Մ.-ի Հալեպի կազմէն՝ Համազասպ, Արմէն, Վազգէն, Աֆարեան, Մանուէլ: Այդ տարին Հալեպի քաղաքապետութեան դաշտի յանձնախումբի անդամ ընտրուեցայ:

Անկէ տարի մը առաջ, 1946-ին Պէյրութի Հ.Ս.Ը.Մ.-ին հետ Կիպրոս գացինք՝ Հալեպի կազմէն Յակոբ Աֆարեանն ու ես, երկու մրցումի համար: Լիմասոլի խումբին յաղթեցինք 5-2, իսկ Նիկոսիոյ մէջ հաւասարութիւն արձանագրեցինք՝ 0-0:

Նոյն տարին Հալեպի «Նետի Արապի»ին հետ Պաղեստին գացինք Հ.Ս.Ը.Մ.-ականներս՝ Վազգէն, Արմէն, Համազասպ, հինգ մրցում խաղալու, տասը օրուան մէջ: Վերադարձին՝ Հ.Ս.Ը.Մ.-ի Հալեպի վարչութիւնը հարցուց ինձի. «Քեզ Դամասկոսէն կ'ուզեն, Պարատա խումբին մաս կազմելու, որ Պաղեստին պիտի



երթայ երեք մրցում խաղալու համար, ի՞նչ կըսես»: Պատասխանեցի որ՝ «Եթէ հրաման տաք՝ կ'երթամ»: Եւ Հինգշաբթի Դամասկոս գացի, անկէ՝ Ուրբաթ օր Պաղեստին հասանք: Կիրակի օր մեր առաջին մրցումն էր: Խաղէն ետք թղթակիցները հարցուցին ինձի թէ՝ «Դուն ո՞ր խումբէն կը խաղաս. դեռ առջի շաբաթ՝ հոս էիր Հալէպի խումբին հետ»: Պատասխանեցի՝ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-էն: Ըսին՝ «Չե՞ս յոգնիր այսքան մրցումներ խաղալով»:

1949-ին Հալէպի Շոգեկառքի Ընկերութեան խումբին հետ Պաղտատ գացի:

Յաղթական մրցումներու այս ուրախ շարքին՝ տխուր յուշ մըն է Սուրիոյ ազգային խումբին պարտութիւնը Թուրքիոյ ազգային խումբէն՝ Անգարայի մէջ, 1951-ին:

Անգարայի դաշտը բերնէ-բերան լեցուն էր մրցումէն մէկ ժամ առաջ իսկ: Այդ թուականին Թուրքիոյ ազգային խումբը առաջին անգամն ըլլալով կազմուած էր: Չինուորական նուագախումբը, հարի՛ւր հոգի, կը նուագէր անընդհատ: Երբ հնչեցուց թրքական քայլերգը եւ եօթանասունհինգ հազար հոգի արձակեցին գոռու-գոչումներ կիրքի խելայեղ արտայայտութեամբ՝ իմ վրայէս պաղ քրտինք մը իջաւ: Կարծեմ նոյնը պատահեցաւ բոլոր հայ խաղացողներուն: Ատելավառ էր մթնոլորտը եւ մենք մեր մորթին մէջ չէինք այլեւս: Մեզմէ ոչ ոք կրցաւ լաւ խաղալ: Եւ Սուրիա պարտուեցաւ 7-0 արդիւնքով:

Շաբաթ մը մնացինք Պոլիս, յետոյ անցանք Աթէնք: Զոն ալ պարտուեցանք Յունաստանի ազգային խումբէն՝ 8-0:

Վերջին մրցումս կատարեցի 1958-ին, Պէրուի մէջ:

Ֆուտպոլը միակ մարզը չեղաւ մարզական իմ հետաքրքրութիւններուս: Մասնակցեցայ Հ.Ս.Ը.Մ.-ի ողիմպիական խաղերուն: Բարձրութիւն ցատկելու, մէկ քայլ ոստումի, ինչպէս նաեւ չորս հարիւր մէթր վազքի, հարիւր տասը մէթր արգելարշաւի, չորս հարիւր մէթր դրօշարշաւի մէջ ձեռք ձգեցի առաջնութիւններ: Շահեցայ նաեւ, անգամ մը, թենիսի ախոյեանութիւնը՝ Հ.Ս.Ը.Մ.-ի Միջ-մասնաճիւղային խաղերուն:

Այս ամբողջ ժամանակաշրջանին, եթէ յաղթանակներ ապահովեցինք եւ մարզիկի կեցուածք ցուցաբերեցինք հայ թէ օտար դաշտերու վրայ, Հ.Ս.Ը.Մ.-ի թէ պետական դրօշի տակ, ատիկա եւս կը պարտինք Հ.Ս.Ը.Մ.-ի սկաուտական շարքերուն եւ ակումբներուն մէջ մեր ստացած դաստիարակութեան՝ առաւելաբար:

### ***ԻՆՉՊԷՄ ԴԱՐԲՆՈՒԵՑԱՆՔ Հ.Ս.Ը.Մ.-Ի ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՆ ԵՒ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՆ ՄԷՋ***

Սկաուտներս, շաբաթը անգամ մը, Կիրակի առաւօտները, դաշտ կերթայինք մարզանքի, եւ ընդհանրապէս, նորէ՛ն Կիրակի օրերը, քաղաքէն դուրս պտոյտի՝ հետախուզական նշաններով:

Շաբաթը անգամ մը ժողով կը գումարէինք ակումբը: Իսկ ամիսը անգամ մը ընդհանուր դասախօսութիւն կը տրուէր մեզի յայտնի դէմքերու, մտաւորականներու կողմէ, որոնք կը խօսէին մեզի սկաուտական բարոյա-

կանի մասին: Կը յիշեմ Սիմոն Տասնապետեանին խօսքը, որ՝ «ձեր ձեռքի գաւազանները ձեր զէնքերն են եւ ձեր այդ զէնքերով պիտի փրկենք մեր սիրելի Հայաստանը»:

Սկաուտներու կարեւոր գործերէն մէկն էր ֆութպոլի դաշտի քարերը մաքրելը, Կիրակի օր, երբ մրցում կար: Քանի որ դաշտը շա՛տ քարոտ էր, եւ երբ խաղացող մը իյնար՝ ձեռք-ոտք արիւնլուայ կըլլար:

Չմեռ ստեն մանաւանդ՝ դժուար գործ էր ստիկա: Սկաուտներուն հետ՝ վարչական անդամները եւ ֆութպոլի Ա. խումբի խաղացողները դաշտ կու գային առտուն, որ ջուրերը մաքրեն, ցամքեցնեն:

Նախ՝ ակօսներ կը բանայինք դաշտի տարածքին, մինչեւ ջրհորը, ապա՝ խոշոր աւելներով՝ ակօսներու մէջէն ջուրը կը մղէինք դէպի ջրհոր: Յետոյ, այդ ակօսներն ալ գոցելու համար, կառքերով հող կը բերէինք, կը լեցնէինք անոնց մէջ: Ամենավերջը՝ լողքարով կը հարթէինք, կը հաւասարեցնէինք դաշտին մակերեսը: Ճերմակ գիծերն ալ կը քաշէինք խաղավայրին շուրջ ու մէջը, եւ կէսօր կընէինք: Ժամը 2:00-ին ալ կը վերադառնայինք մրցում կատարելու:

Այդ թուականներուն ամէն խաղացող իր կօշիկը ինք կը գներ՝ 3-5 մէճիտի (այսինքն 3-5 ոսկի թղթադրամ): Այդ կօշիկը կը գործածէինք 2-3 տարի, անշուշտ, միշտ նորոգելով: Չմեռը, անձրեւի ջուրը ծծած այդ կօշիկը երկու քիլօ կը կշռէր, իսկ գնդակը՝ մէկ քիլոյէն աւելի: Անգամ մը, լա՛ւ կը յիշեմ, երբ գլուխով հարուածեցի գնդակը՝ տասը վայրկեանի չափ աչքերէս կայծակներ դուրս թռան:

Այդ ատենները, Հ.Մ.Ը.Մ.-ի անդամ ըլլալու համար պէտք էր հարիւր յիսուն դրուշ տարեկան ցենզ վճարել: Սկաուտները եւ միայն Ա. խումբի խաղացողները 75 դրուշ կու տային: Երբ մեր խումբէն մէկը վճարած չըլլար այդ գումարը եւ երբ եղբայր վարչականը, ժողովի ատեն ըսէր՝ «Ով որ չէ վճարած՝ պէտք է վճարէ, ապա թէ ոչ Կիրակի օր չի կրնար խաղալ», ժողովէն ետք իրարու կը նայէինք, կը հասկնայինք թէ ո՛վ չէ վճարած եւ իրեն պարտքի, փոխ դրամ կու տայինք՝ որ վճարէ իր ցենզը:

Կը պատահէր որ, խումբին մէջ, երկու-երեք հոգի գժտուած ըլլային, չխօսէին իրարու հետ: Բայց ժողովի գալով՝ բոլո՛րը միակամ կը մտածէին Կիրակի օրուան խաղին եւ անոր յաղթանակին մասին: Եւ մրցումի ատեն կը մոռնային իրարու հանդէպ ունեցած սրտնեղութիւնները, կ'եղբայրանային դարձեալ:

Ա՛յս ոգին էր որ կը կերտէր Հ.Մ.Ը.Մ.-ականը եւ անոր յաղթանակը:

Այս ոգին շատ զօրաւոր էր մանաւանդ անոնց մօտ՝ որոնք անցած էին սկաուտական շարքերէն: Խումբի այն խաղացողը, որ նախապէս սկաուտ եղած է, չէ պատահած երբէ՛ք, որ Հ.Մ.Ը.Մ.-ը ձգէ եւ ուրիշ միութեան մը միանայ:

Մրցումի համար Պէյրութ կու գայինք Ռայաքի ճամբով: Ուրբաթ գիշեր Հալէպէն կ'ելլէինք, Շաբաթ կ'էսօրէն ետք տեղ հասնելու եւ յաջորդ օրն իսկ խաղալու համար: Այդ ճամբով կ'ըլլար ամենէն աժան ճամբորդութիւնը: Եւ անձնապէ՛ս կը հոգայինք ճամբու մասնակի ծախսերը: Վարչութիւնը կը վճարէր միայն երթեւեկը եւ կ'եցութիւնը: Տարիներ ետք սկսանք գալ Թրիփոլիէն,

մինչեւ Թրիփուլի՝ շոգեկառքով, անկէ Պէյրութ՝ օթոպիստով: Կամաց-կամաց սովորութիւն դարձաւ Հալէպէն ուղղակի Պէյրութ՝ օթոպիստով, ապա միայն՝ փոքր ինքնաշարժներով, թաքսիով գալ: Պատահած է՝ որ Պէյրութէն Հալէպ ապրանքատար վակոնով վերադառնանք: Ի՞նչ ընել, երբ տեղ չկայ շոգեկառքին մէջ, եւ տղաքը, Երկուշաբթի առտու գործի պիտի երթան:

Մեր խումբը միշտ ածիլուած եւ մաքուր տարազով դաշտ կիջնէր: Կօշիկները ներկուած, գուլպան, տաբատը, շապիկը՝ արդուկուած: Այն խաղացողը որ կօշիկը չէր ներկած՝ ակումբը ներկարար մը կար, իսկոյն ներկել կուտար, եթէ չէր ածիլուած՝ ակումբի կից սափրիչը ողջ ըլլար: Ունէինք քանի մը պահեստի շապիկներ, գուլպաներ, տաբատներ:

Խաղէն առաջ, յաճախ, մեծ եղբայր մը գօտեպնդիչ խօսքեր կըսէր մեզի: Կը յիշեմ եղբ. Լուստերի մէկ պատգամը. «Եթէ կուզէք յաղթական դուրս ելլել դաշտէն՝ ձեր ճակատներէն քրտինքի հետ արիւն պէտք է ծորի», ըսել կուզէր որ մեր վերջին ճիգը թափէինք, մեր ամբողջ ուժը դնէինք գուպարին մէջ:

Եւ ինչ գոհողութիւններ չեն ըրած մեր տղաքը, այդ մրցումները շահելու համար: Մեր եղբայր Արմէն Աբգարեանը երեք անգամ իր ամուսնութիւնը յետաձգեց, քանի որ կարելոր մրցումներ ունէինք որոշուած այդ Կիրակի օրերը...:

Իսկապէս տղաքաբար կը սիրէինք զիրար, յանձն կառնէինք գոհողութիւններ ոչ միայն Հ.Մ.Ը.Մ.-ին՝ այլ նաեւ մէկս միւսիս համար:

1950-ական թուականներուն էր: Եղբ. Ինճէեան քանի մը ամիսէն Ամերիկա պիտի երթար վերջնակա- նապէս, որով վերջին անգամն էր որ կը մասնակցէր Միջ- մասնաճիւղային խաղերուն, որոնք տեղի կունենային Պէյրութի մէջ: Ես կը մասնակցէի 110 մէթր արգելարշաւի, չորսհարիւր մէթր վազքի եւ բարձրութիւն ցատկելու մրցումներուն: Ինճէեան՝ գունտ նետելու, արգելարշաւի եւ բարձրութիւն ցատկելու: Իւրաքանչիւրս իրաւունք ունէինք մասնակցելու երեք խաղերու, պայմանաւ որ երեքն ալ նոյն ճիւղէն չըլլային (օրինակ՝ կարելի էր երկու վազք, մէկ այլ տեսակի մրցում): Եղբ. Ինճէեան միշտ կը կորսնցնէր արգելարշաւի մէջ (ես կը շահէի) եւ այդ պատճառով չէր կրնար ելլել օրուան ախոյեան: Այդ շրջանին օրուան ախոյեանն էր Մարտիրոս Վարդան- եանը, որ կը շահէր հարիւր մէթր, երկու հարիւր մէթր վազքի եւ հեռացատկի մրցումները: Հասաւ 110 մէթր արգելարշաւի պահը՝ Ինճէեանը մէկ կողմ քաշելով՝ իրեն ըսի. «Այսօր դուն պիտի ըլլաս օրուան ախոյեանը»: Պահ մը կեցաւ, ապա հարցուց. «Ինչո՞ւ, դուն պիտի չմասնակցի՞ս»: «Պիտի մասնակցիմ, ըսի իրեն,- բայց լաւ մտիկ ըրէ ըսածս. աշխատէ որ Պէյրութցիներէն անցնիս: Ես վերջին տաս մէթրին ետեւ կը նայիմ. եթէ դուն ես անոնցմէ առաջ եկողը՝ կը ձգեմ որ առաջին ելլես»: Ինճէեան զիս համբուրեց, շնորհակալութիւն յայտնեց եւ ժպիտով լուսաւորուեցաւ դէմքը:

Շարուեցանք, մէկ շարքի վրայ: Աչք ըրի, ուժ տուի իրեն, «պատրաստ» եւ «ճամբայ»: Սկսանք վազել: Տասերորդ արգելակը անցայ եւ վեց մէթր մնացած ետիս նայեցայ... Ինճէեանն էր եկողը: Դանդաղեցայ եւ ձգեցի որ

ինք ելլէ առաջինը, ես՝ երկրորդ: Մարտիրոսը ասիկա տեսաւ եւ սիրտը շատ նեղուեցաւ ինձմէ: Իր քով գացի եւ պարզեցի պատճառը. «Ամերիկա մեկնելուն առթիւ՝ Ինձէեան եղբօրս յիշատակի նուէր մըն էր ասիկա, եւ ինք արժանի էր այդ նուէրին»: Մարտիրոս համոզուեցաւ, իրաւունք տուաւ ինձի: Ուրիշներ մեղադրեցին զիս, որ դէմ գացած էի սփորի ոգիին: Ո՞ր ոգիին, երբ մրցումը Հ.Մ.Ը.Մ.-ական եղբայրներու միջեւ էր, եւ մնացող մը՝ մեկնողի մը կը նուիրէր անո՞ր իրաւունքը...:

Հ.Մ.Ը.Մ.-ի դաշտն ու ակումբը նոյնքան եւ աւելի նուիրական էին մեզի համար, որքան հարազատ, հօրենական երդիքը:

Անգամ մը, տուն-տեղ ձգած, Նոր Տարուան օրը դարձեալ Պէյրուս էինք եկած, եւ իջեւանած, ինչպէս միշտ, Օթէլ Լիւքս:

Երեկոյեան տեսանք՝ որ ընկեր թուրիկը փառաւոր եւ ընդարձակ սեղան մը պատրաստեր է Նոր Տարուան հիւրերը ընդունելու:

Մենք, մեր տղաքը, վերի յարկը կը պանկէինք: Սկսանք մտածել թէ՛ ի՞նչ ընէինք, որ մենք ալ բոլորուէինք համեղ եւ առատ ուտելիքներով բեռնաւոր այդ սեղանին շուրջ...: Սկսանք բարձրաձայն խօսիլ, ճառեր արտասանել, որ վարեն լսեն, թէ՛ Նոր Տարիին հեռու ենք մեր տուներէն, ի՞նչ երանելի է ընտանեկան տաքուկ երդիքը, հոն ազատ-համարձակ կրնայինք պարել, երգել: Միշտ ականջնիս վար որ մեզ ե՞րբ պիտի հրաւիրեն՝ հետզհետէ ոտքերնիս աւելի ամուր կը զարնէինք գետին, կը բարձրացնէինք ձայներնիս՝ պոռալու աստիճան:

Հազի տասը վայրկեան անց՝ ականջնիս սրեցինք եւ լսեցինք՝ որ մէկը վարէն կը պոռար. ինքը՝ Թուրիկն էր. «Խայտառակնէ՞ր, վա՛ր իջէք նայիմ. չէ՞ք ամչնար, որ վերը նստած մնացեր էք»:

Ա՛լ կը կենա՞նք... Անմիջապէս վար վազեցինք. կէս ժամուան մէջ «մաքրեցինք» սեղանը, եւ վեր ելանք նորէն:

Հ.Մ.Ը.Մ.-ականի հի՛ն ու հարուստ յիշատակներ:

Կը մաղթեմ սրտանց, որ Հ.Մ.Ը.Մ.-ականի մաքուր, անձնագոհ ոգին ժառանգաբար անցնի սերունդէ սերունդ, իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.-ական շահի ժողովուրդին սէրն ու համարումը, եւ տարիներ ետք իրենց վաստակն ու յուշերը մերինին չափ, մերինէն աւելի՛ հարուստ ըլլան, ու պատուաբե՛ր:

-«Բարձրացի՛ր - բարձրացուր» ազնուագոյն սկզբունքով ճամբայ ելած Հ.Մ.Ը.Մ.-ը միայն պատկեր մը չէ, գունաւոր շապիկ, գուլպայ, փողկապ կամ սուլիչ չէ, դաշտերուն վրայ մարդ խանդավառող դերասան չէ, զօրաւոր մկանով մարզիկը չէ ան միայն, որովհետեւ այդ բոլորը ուրիշ ժողովուրդներ ալ ունին, աւելի կազմակերպուած՝ անշուշտ, աւելի հրապուրիչ գոյներով եւ միջոցներով: Հայերուս համար սակայն, Հ.Մ.Ը.Մ.-ը Հայաստան է: Հայ ժողովուրդը իր բոլոր խաւերով: Գաղթաշխարհի հայութիւնը արթուն պահող ուժն է Հ.Մ.Ը.Մ.-ը: Գաղութե՛-գաղութ կամուրջ կապած ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ է Հ.Մ.Ը.Մ.-ը:

*ՇԱՀԱՆԴՈՒԽՏ*



## ԱՐՄԷՆ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

20 Յունիս 1982-ին, Կիրակի կեսօրին, հողին յանձնուեցաւ եղբ. Արսէն Տէր Ղուկասեան, մէկը այն փայլուն մարզիկներէն, որոնք փառքը կազմեցին Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ին:

Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Տ. Սուրէն Եպս. Գաթարոյեան, վեր առաւ ողբացեալ եղբոր բարեմասնութիւնները, ի մասնաւորի անոր մարզիկի ոգին, որ զինք դարձուցեր էր բոլորին սիրելին: «Ակումբի դարաններուն մէջ, ըսաւ Սրբազանը, յաղթանակի այդ բազմաթիւ բաժակներուն իւրաքանչիւրին մէջ, Արսէնը ունի իր քրտինքին մէկ արդար բաժինը»:

Գերեզմանատան մէջ, յանուն Հ.Մ.Ը.Մ.-ի, դամբանական խօսեցաւ իր վաղեմի ընկեր եւ բարեկամ եղբ. Արսէն Դանիէլեան, որ իր կարգին թուեց երկրաւոր կեանքէն յաւիտենապէս հեռացող եղբոր նկարագրային ազնիւ գիծերը:

Հալէպահայ մարզասէրները, որոնք ապրած են 20-րդ դարու քառասնական թուականներուն, լաւ պիտի յիշեն Հ.Մ.Ը.Մ.-ի անգուգական ֆութպոլի առաջին խումբը, որուն փայլուն աստղերը հանդիսացան Արմէն, Արսէն, Վազգէն, Համազասպ եւ Աֆարեան: Յառաջապահ այս գիծը, իր ներդաշնակ ու տպաւորիչ խաղարկութեամբ հիացմունքի առարկան դարձեր էր ոչ միայն հայ, այլեւ օտարազգի մարզասէրներուն: Այս հնգեակին կեդրոնը կը փայլէր ողբացեալը, իր բարձրորակ նրբին

խաղարկութեամբ, մանաւանդ իր անգապելի խոյանքներով:

Արսէն Տէր Ղուկասեան յաճախած է Հալէպի Շըպէնի ֆրանսական լեզուներ: Ունէր հիմնաւոր բարձր զարգացում: Եղած է ելեկտրական ընկերութեան երկարամեայ պաշտօնեայ: Անողոք հիւանդութիւն մը, երկար տարիներ զինք գամեց անկողնին: Այդ վայելչակազմ մարզիկէն մնացած էր միայն ափ մը կմախք:

1981-ի Դեկտեմբեր ամսուն, Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կողմէ, ի պատիւ նախկին Հ.Մ.Ը.Մ.-ականներուն կազմակերպուած թէյասեղանին ներկայ գտնուեցաւ նաեւ Արսէն Տէր Ղուկասեան, որ արտասուախառն ուրախութեամբ վերյիշեց իր անվերադարձ տարիները:

Թող այս երկու տողը, երախտագիտական համեստ արտայայտութիւն մըլլայ այն փայլուն Հ.Մ.Ը.Մ.-ական մարզիկին, որ տասնեակ տարիներ դարձաւ Սուրիոյ եւ Լիբանանի ողջ տարածքին՝ մարզասէրներուն կուռքը, բայց որ այսօր, իր հարազատ միութենականներուն մօտ իսկ, մնացած էր... գրեթէ անձանօ թ...:

Հանգիստ քու յոգնաբեկ ոսկորներուդ, հեզահամբոյր եւ անմոռանալի Արսէն:

## ԳԷՈՐԳ ՇԱՀԻՆԵԱՆ

Հալէպ, 20 Յունուար 1982


### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պատուարժան՝

Սուրիոյ Շրջ. Վարչութիւն եւ Շրջ. Սկ. Խորհուրդ

Յարգելի՛ Տիարք,

Եօթանասունամեայ ծերունիի հոգեկան անհուն հրճուանքով ստացայ ձեր դրկած 19 Դեկտ. 1981-ի թէյասեղանի հրաւիրատոմար: Ուրախութիւնս իր գագաթնակէտին հասաւ, երբ տեսայ իմ երբեմնի հին միութենական ընկերներս՝ հաւաքուած մեր սիրելի ակումբի սրահին մէջ:



Յարգելի եղբ. վարչականներ, երախտագիտական ջերմ զգացումներով տոգորուած շնորհակալ եմ ձեր յղացած այս գեղեցիկ գաղափարէն, որպէս հին Հ.Մ.Ը.Մ.-ականներ մեզ մէկտեղեցիք եւ մեզի տուիք այն գեղեցիկ վայելքը, գոր չէր կրնար տալ որեւէ մէկ ճոխ սեղան կամ նոր միջավայր մը:

Ես՝ ինքզինքս, իսկապէ՛ս հպարտ զգացի -արդէն միշտ հպարտացած եմ- Հ.Մ.Ը.Մ.-ի մարզիկ ըլլալու թէպէտ մեր օրերուն նիւթական պայմանները բաւական

տարբեր էին, սակայն մենք, հաճոյքով մեր մեքենաները բեռցած՝ վագած ենք դաշտ կամ ակումբ, հոգ չէ թէ գիշերը անքուն ետ ճամբայ ելլեու գնով... յարգած եւ սիրած ենք մեր դեկավարները, օգտուած ենք անոնց դաստիարակիչ դասախօսութիւններէն կամ շինիչ ցուցմունքներէն: Պատի՛ւ եւ փառք այն վեթերաններուն, որոնցմէ ոմանք արդէն առ յաւետ բաժնուած են մեզմէ՝ եղբ. Լուտեր Մասպանաճեան, եղբ. Միհրան Կարապետեան, եղբ. Նշան Թիւսիւզեան, ասոնց կողքին՝ տոքթ. Յակոբ Գասապեան, եղբ. Կարապետ Աղճայեան, շաղեցին մեզ Հ.Մ.Ը.Մ.-ի սուրբ խմորով, վառ պահեցին հայու յամառ ոգին եւ յարատելելու կուռ կամբք: Հոն սեղանի շուրջ նստած, շարժապատկերի յաջորդականութեամբ աչքիս առջեւէն տողանցեցին մեր երբեմնի օրերը... Ֆութպոլի մրցումներ, միջ-մասնաճիւղային ողիմպիականներ, հպարտալի յաղթանակներ, ուրախութիւններ ակումբէ ներս, ուր միշտ տիրած է եղբայրական սէրն ու գուրգուրանքը:

Արդարե՛ւ, յուզիչ էր պատկերը ակումբէն ներս, ոմանք՝ քալելու անկարող, ոմանք անթացուպով, ոմանք ալ՝ խօսքով լեցուն. բայց արտայայտուելու անկարող:

Սակայն, Շնորհակալութի՛ւն եւ պատի՛ւ ձեզի սիրելի նոր Հ.Մ.Ը.Մ.-ականներ, որովհետեւ այդ օր դո՛ւք կրցաք իջնել մեր հոգիներէն ներս, արցունքով լեցուցիք մեր աչքերը եւ ձեր այդ հրաւերով առիթ տուիք մեզի անգամ մը եւս հաղորդուելու Հ.Մ.Ը.Մ.-ի անգուրգական սկիհէն եւ մեր կարգին, մենք եւս կրկին խթանեցինք մեր զաւակներն ու թոռները, որպէսզի կառչած մնան Հ.Մ.Ը.Մ.-ի մշտադալար կաղնիին...:

Այսուհետև, սիրելի նոր-սերունդի զաւակներ, որպէս երեց եղբայր, կը թելադրեմ ձեզի՝ սիրել մէկզմէկու, որովհետև սերը միութիւն է, իսկ միութիւնը զօրութիւն է: Ահա սոյն հաւատամքով ու նշանաբաններով ձեռք-ձեռքի տուէք եւ դիմագրաւեցէք բոլոր մարտահրաւերներն ու խոչընդոտները...:

Միշտ երախտապարտ՝

*Գէորգ Շահինեան*

-Տեսայ մեր նոր տղաքը, որոնք գիտակից իրենց կոչումին, հաւատարիմ, Հ.Մ.Ը.Մ.-ի վեհ սկզբունքին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր», հաւատարիմ իրենց նախորդներու սքանչելի օրինակին, կանգնած էին պարտականութեան ճամբուն, պատուաբեր գործերու մէջ եւ պատասխանատու դիրքերու վրայ, պատրաստ՝ ծառայութեան յօգուտ եւ ի պատիւ զիրենք ծնող ժողովուրդին:

Կը սիրեմ մեր կազմակերպութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.-ը, իբրեւ մեր ազգային կեանքի մէկ ամուր կայանը, ուրկէ մեր նոր սերունդը առած նոր ուժ ու թափ, գտած՝ թափ ու կշիռ, կը նետուի ազգային եռուն կեանքի, պատասխանատու գործի ասպարէզ:

Ահա այդ կայան հասած այս օրերու մեր տղաքն են որ իրենց ճիգին ու թոյիչքին մէջ պէտք ունին մեր աջակցութեան: Չենք կրնար կասեցնել անոնց թափը, մեր անտարբերութեամբ, սակայն կրնանք արագացնել ու ամրացնել զայն համակրալիք վերաբերումով, հաւանող նայուածքներով, եւ աջակցութիւն կարկառող ձեռքով:

Միրենք զանոնք, ժպտիք անոնց: Օգնենք անոնց որ օգնեն իրենց յաջորդներուն: Տանք անոնց որ տան իրենց հետեւորդներուն: «Բարձրացի՛ր-բարձրացուր»

*ՃՈՐՃ ՄԱՐՏԻԿԵԱՆ*

## ԵՂԲ. ՀԱՄԱԶԱՄՊ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ (ՀԱՄՕ)

Օ նած է 1922-ին Հալէպ, յաճախած է Ազգ. Հայկազեան վարժարանը:

Փոքր տարիքէն անդամակցած է Հ.Ս.Ը.Մ.-ին մաս կազմելով սկաուտական շարքերուն:

Տակաւին դպրոցական գրասեղաններու ետին՝ Համոյի միտքն ու աչքերը սեւեռած էին կլոր գնդակին, յաճախ նոյնիսկ խոյս տալով դպրոցէն ու վազելով կլոր գնդակի ետեւէն:

Ֆութպոլի իր ասպարէզը սկսած է 1939-ին, մաս կազմելով Հ.Ս.Ը.Մ.-ի ֆութպոլի Ա. խումբին, որուն ընդմէջէն Համոն կերտած է իր ֆութպոլիստի կոչումը:

Եղբ. Համոն եղած է փինկ փոնկի փայլուն խաղացող մը եւ իսլաճ զանազան ախոյեանութիւններ Հ.Ս.Ը.Մ.-ի ի նպաստ: Եղած է նաեւ տիպար եւ օրինապահ սկաուտ մը՝ փոխ առաջնորդի աստիճանով:

Իսկ ի՞նչ կը պատմէ Համոն ֆութպոլի իր առաջին քայլերու մասին, լսենք. «Զինուորագրուելով Հ.Ս.Ը.Մ.-ի սկաուտական շարքերուն մաս կը կազմէի նաեւ սկաուտական ֆութպոլի Պատուոյ Ա. խումբին: Նաւասարդեան Միջ-մասնաճիւղային խաղերու նախօրեակին, Կիրակի առաւօտ մը. փորձի պահուն հեռուէն մեզի կը հետեւէին եղբայրներ՝ Լուտեր Մասպանաճեան, Արսէն Դանիէլեան եւ Կարալիս Աղճայեան, դադարին զիս իրենց մօտ կանչելով պահանջեցին, որ ընդհատեմ փորձս եւ հագուիմ հագուստներս: Անակնկալի մատնուելով շփո-

թած երբ պատճառը հարցուցի, եղբ. Լուսեր ճակատես համբուրելով ըսաւ. «Համօ, պատրաստուիր, վաղը կէսօրէ ետք պիտի կրես Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայա-ցուցչական խումբի շապիկը»: Տակաւին 17 տարեկան էի, եւ պիտի խաղայի Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբէն, ինչ որ մեծագոյն երազն էր ամէն ֆութպոլիստի:

«Յաջորդ օր՝ Երկուշաբթի, Հ.Մ.Ը.Մ. (Հալէպ) եւ Հ.Մ.Ը.Մ. (Պէյրութ) բաժակի հանդիպումն էր, մրցման Ա. կուրը նշանակելու բախտը կընծայուէր ինձի, գլխու հարուածով, շշմեցնելով Պէյրութի կազմի բերդապահը՝ Տիգրանը:

«Ա. կիսախաղի աւարտին, բերդապահ Տիգրան մօտենալով ինձի ըսաւ. «Օօ, դուն որտեղէն բուսար...»: Այդ մրցումին Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի կազմը 2-1 արդիւնքով յաղթական դուրս եկաւ:

«Այսպէս կը սկսէր մարզական կեանքս իբրեւ հանրաճանաչ ֆութպոլիստ»:

Նախկին Հ.Մ.Ը.Մ.-ական եղբ. Յարութին Գայապալեան, որ միշտ հետեւած է Հ.Մ.Ը.Մ.-ի մրցումներուն, կը պատմէ հետեւեալը Համոյի մասին. «Չեմ կարծեր, որ իրեն նման ձախ թելի յառաջապահ մը ցարդ յայտնուած ըլլայ Սուրիոյ կանաչ դաշտերուն վրայ, իր անկիւնային հարուածները անզսպելի եւ շշմեցուցիչ էին, եւ ահ ու դողի կը մատնէին ժամանակի մրցակից խումբերու բերդապահները»:

Իսկ Հ.Մ.Ը.Մ.-ի անցեալին եւ մրցակից կազմերու մասին յաւելեալ մանրամասնութիւններ քաղելու

տրամադրութեամբ կը հանդիպինք եղբ. Համոյին եւ կը կատարենք ստորեւ տրուած հարցազրոյցը:

**Հ.- Եղբ. Հասօ, ձեր ժամանակակից Հ.Մ.Ը.Մ.-ի Պատուոյ Ա. կազմը ովքե՞ր կը ներկայացնէին:**

Պ.- Ստեփան Մելիքսէթեան, Ճեմիլ Քեահքէճեան, Մանուէլ Գաթրճեան, Վազգէն եւ Արսէն Տէր Ղուկասեաններ, Մանուկ Յովհաննէսեան (Մանուկ մուխը մարեմ), Յակոբ Աֆարեան, Գեորգ Կրպոյեան (Քասասայ), Լեւոն Սարգիսեան, Երուանդ Յովհաննէսեան եւ Ալեքսան Փիզունեան:

**Հ.- Եղբ. Հասօ Սուրիոյ Հաւաքականին մաս կազմա՞ծ էք:**

Պ.- Այո՛, անշուշտ եւ այցելած եմ բազմաթիւ երկիրներ, ինչպէս՝ Յունաստան, Թուրքիա, Եգիպտոս, Յորդանան, Լիբանան եւայլն:

**Հ.- Քանի՞ տարի մաս կազմած էք Սուրիոյ հաւաքականին:**

Պ.- Չորս տարի:

**Հ.- Իսկ Հ.Մ.Ը.Մ.-ի կազմը քանի՞ տարի շահեցաւ Սուրիոյ ախոյեանութիւնը:**

Պ.- 9 տարի:

**Հ.- Այլ խումբերու հետ եւս ֆութպոլի միջազգային խաղերու մասնակցութիւն բերա՞ծ էք:**

Պ.- Այո՛, մաս կազմած եմ Սուրիոյ բանակի խումբին, որ այդ օրերուն կը կոչուէր Շրթաթ էլ Ճէշ, նաեւ քանիցս ընդառաջած եմ Լիբանանի քոյր մասնաճիւղի



հրաւերներուն եւ կրած Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայացուցչական խումբին շապիկը:

**Հ.- Եղբ. Համօ՛, պիտի խնդրէինք ձեզմէ յատկանշական դէպք մը պատմել ձեր ֆութպոլի կեանքէն:**

Պ.- Այդ օրերուն, Հալէպ քաղաքի զօրաւորագոյն խումբերէն մին կը նկատուէր Union Sportiv-ի կազմը, Արտաւազդով կամ աւելի ճիշդ Մարութեան եղբայրներով: Այդ խումբը անպարտելի դարձած էր: Ես նոր սկսած էի ֆութպոլի կեանքիս: Հ.Մ.Ը.Մ. x Սփորթիւ հանդիպումին յաջողեցայ Հ.Մ.Ը.Մ.-ի արձանագրած հինգ կոլերէն երկուքը նշանակել, եւ մենք տարինք փառաւոր յաղթանակ մը:

Մրցումէն ետք Արտաւազդ մօտենալով ինձի ըսաւ. «Համօ դուն մեր խումբի քայքայման պատճառ հանդիսացար»: Եւ իրապէս Սփորթիւի աստղը կամաց-կամաց մարելու սկսաւ:

**Հ.- Եղբ. Համօ՛, ինչպէ՞ս կը գնահատէք Սուրիական ֆութպոլը անցեալին եւ ներկայիս:**

Պ.- Անցեալին ֆութպոլը հմայք էր, արուեստ էր եւ խաղացողներու անհատական ձիրքերը երեւան կը հանէր, իսկ ներկայի ֆութպոլը հիմնուած է ոյժի, ծրագրման եւ հաւաքական խաղի վրայ: Ամէն մէկը ունի իր գեղեցկութիւնն ու առանձնայատկութիւնը:

**Հ.- Եղբ. Համօ՛, ի՞նչ ունիս փոխանցելիք Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայ ֆութպոլիստներուն:**

Պ.- Ներկայի խաղացողներուն իմ ջերմ թելադրանքս է՝ լրջօրէն հետեւիլ փորձերուն եւ մարզիչի ցուցմունք-

ներուն: Յանկալի արդիւնքի կրնան հասնիլ միայն յարատեւ փորձերով: Հետեւողական ճիգերով կը կերտուի մարզիկի ապագան:

**Հ.- Շնորհակալութիւն եղբ. Համօ, ի՞նչ կ'ուզէիք աւելցնել:**

Պ.- Ի սրտէ շնորհակալութիւն «Գանձասար»ի խմբագրութեան, որ այս գեղեցիկ առիթը ընծայեց ինծի ծանօթանալու հալէպահայութեան:

Մեր կարգին խորին շնորհակալութիւններ նաեւ եղբ. Յարութիւն Գայապալեանին, որ իր վերյիշումներով մեծապէս օգտակար դարձաւ մեր այս զրոյցին:

-Մեծ է դերը Հ.Մ.Ը.Մ.-ին: Այդ դերը լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է ազգային բարձր գիտակցութիւն, այսինքն մեր ուժերուն, մեր արժէքին, մեր ընթացքին եւ նպատակին պայծառ ըմբռնում: Յարգանք, պատկառանք եւ տեղը այս աշխարհի մէջ՝ ուժով կը ստացուի, կը պարտադրուի եւ կը ներշնչուի: Իսկ ուժեղ են առոյգը, առողջն ու կորովին:

Կը հետեւի թէ Հ.Մ.Ը.Մ. ազգային հիմնարկութիւն է, եւ այս կցորդ գաղափարներէն ազգային է հիմնականը, հանրութեան համակրութիւնը աստով է պայմանաւոր եւ աստոր մէջ է հանրային արժէքը:

**ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ**

## ՄԱՆՈՒԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

### Մամուկ Մկրտիչեան

Հալէպ քաղաքին մարզական կեանքէն ներս, ֆութպոլի սիրահարներուն համար սովորութիւն դարձած էր Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի ներկայացուցչական խումբին ձախ յետսապահ Մանուկ Յովհաննէսեանը «Մուխը Մարէ Մանուկ» կոչել: Թէեւ շատերը չէին գիտեր, թէ այս «Մուխը Մարէ» յորջորջումը ուրկէ՛ ուր եկած ու փակած էր Մանուկին նուրբ, անմեղութիւն խորհրդանշող անունին քով: Բայց ի՞նչ էր մեղքը այդ մարդոց, եթէ ֆութպոլի դաշտերուն վրայ թէ ֆութպոլի շուրջ դարձած խօսակցութիւններու ընթացքին այդ ածականով ճանչցած, այդ ածականով սիրած ու ծափահարած էին Մանուկը եւ ան միայն այդ անունով դրոշմուած էր իրենց մտքին մէջ: Նոյնիսկ եթէ պատահէր, որ խօսակցութեան մը ընթացքին Մանուկը յիշատակէին իր իսկական անուն-մականունով՝ ան շատերուն համար պիտի մնար անձանօթ: Մինչ Մանուկը, գիւղացիի հոգեբանութեամբ մեծցած այդ տղան, որ շատ պարզ ու համեստ հոգի մը ունէր, երբեք առարկութիւն չէր կատարէր այդ յորջորջումին համար եւ կարծես ինքն ալ գոհ էր այդ յորջորջումէն: Ուրեմն անցնինք:



1940-ական թուականներուն, Հալէպ քաղաքի ֆութպոլի կեանքէն ներս Իւնիոն Սփորթիւ կոչուող ֆութպոլի խումբը տիրական ոյժ մըն էր: Մանաւանդ պայքարը սուր էր երկուքին միջեւ:

Իւնիոն Սփորթիւի կազմէն կը խաղային Արտաւազդ, Աբրահամ, Ապտալլա Թաուիլ, Ֆէթթուհ, Ահմէտ Ճումասա եւ ուրիշներ: Այդ շրջանին, երբ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ դեռ արհեստավարժ խումբեր չկային, ի մտի ունինք միայն Դամասկոսի զինուորական խումբը, Արտաւազդ Մարութեան մեծ ժողովրդականութիւն ունէր եւ կը վարձատրուէր իր խաղերուն համար:

Արտաւազդը ունէր ֆութպոլիստի մը համար անհրաժեշտ գրեթէ բոլոր յատկութիւնները: Մանաւանդ ան շատ խելացի ու խորամանկ խաղցող մըն էր, երբ հակառակորդին բերդին առջեւ, նեղ պարագաներու մէջ, երբ հակառակորդ յետսապահներով շրջապատուած կըլլար, գիտէր ստեղծել ու հիացնել հանդիսականը: Անոր հասակը, ֆիզիքական կազմը տեղին էին, բայց իր նուրբ խաղը, իր թաքթիքը բացարձակօրէն յենուած չէին ֆիզիքական յատկութիւններու միջամտութեան վրայ: Մանաւանդ տրիպլըներու իր ոճը այնքան կարճ ու անակնկալ էր, որ կարծես գնդակը մագնիսուած էր իրեն ու կերթար իր ետեւէն:

1943 թուականն էր: Հալէպի քաղաքապետութեան բաժակի գծով իրարու դէմ պիտի մրցէին Հ.Մ.Ը.Մ.-ի եւ Իւնիոն Սփորթիւի ֆութպոլի կազմերը: Մրցումը տեղի պիտի ունենար Հ.Մ.Ը.Մ.-ի Ազիզիէի թիթեղապատ դաշտին վրայ: Մրցումէն առաջ, հանդերձարաններէն

ներս, երբ խաղացողները իրենց պատասախանատուներուն վերջին թելադրանքները կը ստանային, Հ.Մ.Ը.Մ.-ի պատասխանատուն՝ եղբ. Լուտեր Մասպանաճեանը մէկ կողմ կը կանչէ խումբին յետսապահ խաղացող Մանուկ Յովհաննէսեանը ու կը սկսի պատուէր տալ անոր: Այստեղ խօսքը կուտանք Մանուկին. -

«Երբ եղբ. Լուտերը զիս հեռացուց խումբէն, տպաւորութիւնս այն եղաւ, որ խաղարկութեանս շուրջ թելադրանքներ պիտի ընէ, բայց անակնկալի եկայ, երբ ան բոլորովին այլ հարցով ու այլ շեշտով սկսաւ իր խօսքը: Եղբայր Մանուկ զիս լաւ մտիկ ըրէ, այսօր մրցումին գլխաւոր պարտականութիւնը պիտի ծանրանայ ուսերուդ վրայ, որովհետեւ խաղին ճակատագիրը առաւելաբար կախեալ պիտի ըլլայ քեզմէ: Եթէ դուն կարենաս լաւ կատարել վրադ դրուած պարտականութիւնը այն ատեն մեր յաղթանակը շատ հաւանական կը դառնայ: Ուստի. -

«Մանուկ, այսօր խաղին ընթացքին պարտականութիւնդ միայն Արտաւազդը բռնել պիտի ըլլայ: Դուն միայն Արտաւազդով պիտի զբաղիս: Ուր որ երթայ դուն ետեւէն պիտի երթաս, պիտի չձգես, որ ան շարժի: Մանուկ, կը հասկնաս ըսածս, կը հասկնաս միտքս, այսօր դուն Արտաւազդին աքցանի մէջ պիտի առնես:

«Կանգնեցաւ, շունչ մը առաւ ու աչքերուս մէջ նայեցաւ: Կարծես ուզեց գիտնալ իր խօսքին տպաւորութիւնը: Իրականութեան մէջ ես եղբայր Լուտերին կարգ մը բառերուն իմաստը չէի հասկցած, բայց ամէն անգամ, որ

ինձի հարց կուտար, թե հասկցա՞ր, ես թե՛ գլխու դրական շարժումով մը եւ թե խօսքով կըսէի՝ այո՛ եղբայր Լուտեր, հասկցայ: Վերջաւորութեան ան խօսքին շեշտը աւելի զօրացնելով շարունակեց.

«Մանուկ, այսօր դուն Արտաւազդին մուխը պէտք է մարես: Այսօր դաշտին վրայ Արտաւազդը որպէս խաղացող պէտք չէ գոյութիւն ունենայ, եթէ հասկցար միտքս՝ գնա՛ գործիդ:»

Վերջին պատուէրը ծանր էր. Սահակեան վարժարանի երկրորդ թէ երրորդ դասարանէն ելած տղան թէեւ լաւ չէր հասկնար եղբայր Լուտերին բառերուն նշանակութիւնը, բայց ան մտածումներու մէջ ինկած՝ գլուխը վեր կ'առնէ ու ինքնավստահ, վճռական շեշտով մը կը պատասխանէ,

-Այո՛ եղբայր Լուտեր, այսօր ես Արտաւազդին մո՛խը պիտի մարեմ եւ կօշիկներն ալ ձեռքը պիտի տամ...

Խաղին առաջին վայրկեաններուն իսկ Մանուկ ուժգին հարուած մը կ'իջեցնէ Արտաւազդի ոտքին, որ գնդակը առած կը փորձեր ճեղքել Հ.Ս.Ը.Մ.-ի յետսապահ գիծը: Երկուքը իրար ծուռ-ծուռ կը նային: Քանի մը վայրկեան անց, այս անգամ օդէն եկած գնդակի մը առիթով Մանուկին եւ Արտաւազդին միջեւ տեղի կ'ունենայ զօրաւոր բախում մը, Արտաւազդ կ'իյնայ գետին, ան չի բաւարարուիր իրաւարարին ի նպաստ իրեն տուած ազատ հարուածով, այլ կ'ազդարարէ. -

-Մանուկ, մաքուր խաղցի՛ր, այլապէս...

Մանուկ պատասխան չի տար, քթին տակեն կը ինդայ, բայց անոր պոչը չի ձգեր: Մանուկին սրունքները երկար են ու յաճախ աքցանի դեր կը խաղան, արգելք կըլլան Արտաւազդին խաղին: Արտաւազդ պահ մը կը մտածէ, քիչ մը չոր քիչ մըն ալ ջղային ձայնով կը յարէ.

-Լակոտ, ի՞նչ կը դառնաս շուրջս, ի՞նչ կ'ուզես ինձմէ... Շատ եղաւ ըրածդ:

Լակոտ բառը կը բզզայ նոր գիւղի հոգիով մեծցած այդ տղուն ականջին մէջ: Ծուռ-ծուռ կը նայի ու հեզնական ձայնով կըսէ. -

Խաւաճաւ Արտօ, Ինձի հրահանգուած է, որ այսօր քու մուխդ պիտի մարեմ, այն ատեն կը հասկնաս ի՞նչ կ'ուզեմ քեզմէ եւ ո՞վ է Լակոտը:

Այդ օր Հ.Մ.Ը.Մ.-ը յաղթեց Ինիոն Սփորթիւին ու բաժակը առաւ Սուրիոյ հերոս զակին Իպրահիմ Հանա-նոյի ձեռքէն, իսկ այդ օրուրնէ սկսեալ Մանուկին անու-նին քով «Մուխը մարէ Մանուկ» ածականը աւելցաւ ու անով դարձաւ հանրածանօթ:

-Հոգեկան ստորոգելիներով զինուած, Հ.Մ.Ը.Մ. դիւրին հարթեց իր ճամբուն վրայ ցցուած խոչընդոտները, իր քայլերը ուղղեց դէպի լաւը, բարին ու լոյսը, բռնեց վաղուան հայերը կազմող սերունդին ձեռքէն, յոյս ու ինքնավստահութիւն ներշնչեց կեանքին իմաստը նոր հասկնալ փորձող եւ խարխափումի մէջ եղող սերունդին, իր մականին տակ կոփեց ու կոփեց զայն իր որդեգրած իտէալին ու առաջադրութիւններուն համաձայն, քիչ ժամանակէն ազգին ընծայ տալու համար մարմնով առողջ ու հոգիով ազնուացած նոր էակներ:

**ԳՐԻԳՈՐ ՃՈՂՈՂԵՆՍ**

## *Անմահանուն Մարզիկներ*

### *ՍՈՒՐԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԳԵՐԱՍՏՂԸ ԱՐՏԱԻԱԶԴ*

**Ս**եպտ. 7 1984-ին, Պեյրուֆի մեջ մահկանացուն կնքեց Սուրիոյ մարզական կեանքի մեծագոյն դեմքերէն, հոչակաւոր ֆուլթպոլիստ՝ Արտաւազդ Մարութեանը, որ կը ճանչցուէր «ԱՐՏՕ» անունով, 72 տարեկան հասակին:

Իր մահով կաննետանայ սուրիական ֆուլթպոլի գերաստղը, որ 30-ական թթ. յաջողած էր ինքզինք պարտադրել որպէս կեդրոնի յառաջապահ (սանթր) եւ բոլոր մրցումներու ընթացքին նշանակել մէկէ աւելի կոլեր. անպայման յաղթանակի առաջնորդելով իր խումբը, այսպէսով ալ դառնալով կոլի թագաւորը մեր մրցադաշտերուն, աւելին՝ արժանանալով Սուրիոյ «Ֆուլթպոլի թագաւորը» կոչումին:

Ան խաղցած էր Լիբանանի մէջ երկար տարիներ, ընդառաջելով լիբանանեան հայ եւ օտար խումբերու հրաւերներուն եւ նշանակած էր հիանալի կոլեր: Պեյրուֆի հայերէն, արաբերէն եւ ֆրանսերէն օրաթերթերը, իրենց մարզական էջերուն վրայ կամ սիւնակներուն մէջ, երկար գովասանքներով կ'արտայայտուէին հայազգի խաղացողին մասին: Իր համբաւը տարածուած էր մինչեւ Պաղեստին եւ Եգիպտոս: Արաբական այս երկու երկիրներուն մէջ եւս աննման ֆուլթպոլիստը դաշտ իջած էր եւ երկարօրէն ծափահարուած՝ ֆուլթպոլի սիրահարներուն կողմէ:



Արտաւազդ Մարութեան ծնած է Խարբերդ, 1912-ին: 1927-ին, Հալէպի մէջ ֆութպոլ խաղալ սկսած է թաղային խումբերէ: Իր խաղընկերները եղած են Անդրանիկ Օստուկեան, Մանուկ Թոնդեան (Տէր Վրթանէս): Իր յառաջացումը եղած է շատ արագ եւ ուշադրութիւնը գրաւած է նորակազմ «Ինիոն Սպորթի»ի պատասխանատուներուն, որոնք շուտով երկրորդ խումբէն ներս առած են զինք:

Տարի մը մարզուելէ ետք, 1928-ի վերջերը ընդունուած է առաջին խումբէն ներս, ուր ցոյց տուած է իր ճարտարութիւնն ու ինքնածին կարողութիւնները: 1930-ին անցած է Պէլրութ, իբրեւ ուսանող Միսիոն Լայիք Կրթական Հաստատութեան: Ուսանողական տարիներուն խաղցած է Ռընեսանս խումբէն. մաս կազմած է նաեւ ուրիշ խումբերու:

Այդ տարիներուն Ֆետերասիոն գոյութիւն չունէր եւ մարզիկ մը կրնար խաղալ բոլոր խումբերուն մէջ: Այսպէս՝ Փիէռ Ճեմայէլ բազմիցս զինք տարած է Ժեզուիթներու խումբը, որուն յետսապահն էր Շառլ Հելուն, Լիբանանի ապագայ Հանրապետութեան Նախագահը:

Ֆութպոլի զուգահեռ՝ Արտաւազդ զարգացուցած է նաեւ թենիսը եւ 1934-էն 1940 մնացած է բոլոր ճիւղերու Հալէպի ախոյեանը:

Իր մարզական կեանքին ամենէն յիշատակելի մրցումը տեղի ունեցաւ Հալէպի մէջ, Ռումանիոյ ախոյեան Սէ.ԷՖ.ԷՐ.-երկաթուղայիններու խումբին դէմ, որ մեր քաղաքը կը ժամանէր Թուրքիոյ եւ Եգիպտոսի

ախոյեան խումբերուն յաղթելէ ետք: Յիշեալ խումբը, Պալքաններու ախոյեան, նոյն տարին պարտութեան մատնած էր Ուրուկուէյի, Պրազիլի եւ Արժանթինի լաւագոյն խումբերը:

1936-ի գարնան, գեղեցիկ օր մը, Հալէպի Հ.Ս.Ը.Ս.-ի թիթեղապատ դաշտին վրայ հիւր խումբը մրցեցաւ «Իւնիոն Սպորթի»ի հետ, հազարաւոր մարզասէրներու ներկայութեան: Այս մրցումին ներկայ գտնուելու բախտը ունեցած ըլլալով, կրնանք անվարան յայտարարել՝ թէ իրապէս ֆութպոլի թագաւորի մը վայել խաղարկութիւն մը ցոյց տուաւ Արտաւազդ Մարութեանը, որուն նշանակած առաջին կոլէն ետք ժողովուրդը խուժեց մրցադաշտ եւ խեղթելու աստիճան ամուր գրկեց զինք: Ուսերու վրայ տարուեցաւ խաղավայրին մէկ ծայրէն միւսը: Շուրջ 10 վայրկեան ընդմիջումէ մը ետք մրցումը շարունակուեցաւ եւ Արտաւազդի խումբը 3-0 արդիւնքով տարաւ յաղթանակը: Պուքրէշի ձայնասփիւռը նոյն գիշեր կը յայտարարէր. «Սէ. ԷՖ. ԷՐ.-ը յաղթելէ ետք Մերձաւոր Արեւելքի բոլոր խումբերուն, պարտուեցաւ Հալէպ անունով քաղաքի մը մէջ, որ կը գտնուի թրքական սահմանին վրայ»:

1938-ին, Եգիպտոսի Վարչապետ Մուսթաֆա Նահաս Փաշայի եւ Թագաւորական ընտանիքի անդամներուն ներկայութեան, Սուրիական խումբը կը մրցի Եգիպտոսի ախոյեան ԱՀԼԻ-ի հետ, որ իր կազմին մէջ ունէր հոչակաւոր Սաիտը եւ Կինտին, որ 17 վայրկեանի մէջ չորս կոլեր կը նշանակէ Սուրիական խումբին դարպասէն ներս: Սուրիացիք առանց վիատելու, Արտաւազդի ղեկավարութեամբ կը նշանակեն կոլ մը:

Երկրորդ կիսախաղին սքորը կը հասնի 5-1: Բայց հոն էր աննման Արտաւազդը: Հայ մարզիկը յաջորդաբար կը նշանակէ չորս կոլեր ու մրցումը վերջ կը գտնէ 6-5 արդիւնքով, ի նպաստ ԱՀԼԻ-ի:

Եզիպտոսի մարզասէր ժողովուրդը, Սուրիացիներու այս արդիւնքէն խանդավառ, մինչեւ պանդոկ ուսամբարձ կը տանին Արտաւազդը եւ իր ընկերները: 1942-ին կը խաղայ Սուրիոյ Ազգային խումբէն:

Մեծանուն ֆութպոլիստը, Թենիսի համբաւաւոր ախոյեանը եւ անուանի աթլետը, Սուրիոյ ֆութպոլի Ազգային խումբին խմբապետը, 1942-ի աշնան, իրաւ մարզիկներու նման հրաժեշտ տուաւ իր մարզական կեանքին՝ մասնաւորաբար ֆութպոլին, երբ հասած էր փառքի գագաթնակետին, տիրանալէ ետք թենիսի ախոյեանութեան 17 բաժակներու եւ աթլետիզմի 38 մետալներու:

Երբ Հալէպի ֆրանսատառ ԼԷՔԼԷՐ ՏԻԻ ՆՈՐ օրաթերթը, 1942 թուին, Բ. Աշխարհամարտի ամենաթեժ օրերուն, առաջին էջի վրայ, խոշոր վերնագիրներու տակ, յայտարարեց Սուրիոյ Ֆութպոլի թագաւորին «կլոր գնդակ»ին հրաժեշտ տալը, հարիւրաւոր մարզասէրներ նոյն օրն իսկ դիմեցին հայազգի Նիքոլա Ճանճիին պատկանող վերոյիշեալ թերթին խմբագրատունը եւ միաբերան պահանջեցին՝ որ Հալէպի մարզասէր հասարակութեան անունով պարտադրուի հայ մարզիկին վերադարձը մրցադաշտ:

Ահաւասիկ ամփոփ կենսագրութիւնը մեծանուն հայ ֆութպոլիստին, որ երիտասարդ տարիքին տիրապետեց

կլոր գնդակի թեքնիքին եւ թաքթիքին, նրբութիւններուն եւ կոլ նշանակելու գաղտնիքին, սիրուած, յարգուած, առասպելական մարզիկը, անհուսաարելիներու մէջ առաջինը:

Ու հիմա, երբ անդարձ բաժնուած է կեանքէն անփոխարինելի Արտաւազդը, մեզի՛ ապրողներուս կը մնայ վառ պահել իր յիշատակը, յետ մահու արժանի գնահատանքը ընծայել հայ նոր սերունդին փոխանցելով իր պատգամը- Պետք չէ միայն խաղալ, այլ նաեւ պայքարիլ:

-Հ.Մ.Ը.Մ. արժանի է փառքի ու ողջոյնի, որովհետեւ ան գիտցաւ միշտ բարձրի՛ն նայիլ, բարձրանալ եւ բարձրացնել, եթէ երբեմն միշտ դէպի վեր բարձրանալ ուզեց եւ չհասաւ, սակայն շնորհիւ իր կամքին, յաղթահարեց բազմաթիւ բազմաթիւ դժուարութիւններ, որպէսզի երբեք վար չհասնի բարձունքէն: Միշտ մնաց պատնէշի վրայ, կարծես հայ ժողովուրդի վերջին 40 տարիներու արթուն պահակը ըլլար:

Հ.Մ.Ը.Մ.-ով հայ ժողովուրդը դարձաւ մարմնով ուժեղ ու գեղեցիկ, նկարագրով մաքուր եւ անկեղծ եւ հուսատքով բարձր ու ազնիւ:

Հ.Մ.Ը.Մ. վազեց միշտ դէպի գործ, շնորհիւ իր կարգապահութեան, հնազանդութեան, չարքաշուրթեան եւ հայրենասիրութեան:

*ԶԱԲԷՆ ՄՍՊՈՒՆՃԵԱՆ*

## ՎՈԱՄՇԱՊՈՒՀ ՈՄԿԱՆԵԱՆ (ԴԵՐՁԱԿԵԱՆ)

**Օ** նեալ 1904-ին, Պոլիս, հօր անուն՝ Ոսկան, մօր անուն՝ Ամպեր Ազկիլեան:

20 տարեկանին Հալեպ եկած է իր ազգականներու՝ Գեղամ Ազկիլեանի եւ Սուրեն Գալէնտերի մօտ, որոնք Հ.Մ.Ը.Մ.-ի գլխաւոր դեկավարներէն էին եւ զինք կը համոզեն ըլլալու ֆութպոլի խումբին բերդապահը (goal-keeper), զոր շատ սիրով եւ մեծ հաճոյքով կ'ընդունի: Գրեթէ 10 տարի, ժամանակակից մրցակից խումբերէն բաժակներ խլելով, Հալեպի Հ.Մ.Ը.Մ.-ի անունը համբաւաւոր կը դարձնէ:



Պէյրուսէն յաղթական վերադարձին զինք ուսամբարձ բաժակը ձեռքին կը բերեն ակումբ:

Ազիզիէ, հին, Հ.Մ.Ը.Մ.-ի թիթեղապատ դաշտը, մասնաւորապէս իր եւ իր բարեկամներուն ձեռքերով եւ ճակտի քրտինքով կառուցուած էր: Այստեղ էր որ տարիներ շարունակ մարզիկներ եւ սկաուտներ մարզուեցան ազգային շունչով եւ վայելեցին Հ.Մ.Ը.Մ.-ի անմոռանալի փայլուն օրերը:

Աւելի ուշ՝ պետական պաշտօնի բերմամբ կը ստիպուի հեռանալ խումբէն, քանի գործը յաճախ քաղաքէն դուրս էր, բայց սիրտը ձգելով միութեան մէջ:

Կամուսնանայ 1931-ին, նոյնպէս պոլսեցի՝ Արմենուհի Հիսարլեանի հետ: Կը բախտաւորուի 1 աղջիկ եւ 1 տղայ զաւակներով, որոնք յետագային Հ.Ս.Ը.Մ.-ի լաւագոյն անդամներու շարքին տեղ կը գրաւեն՝ դառնալով արծուիկ եւ սկաւուս: Սակայն ժամանակ մը ետք, անոնք ալ կեանքի պարտադիր պայմաններու բերմամբ չեն կրնար յարատեւ շարունակել իրենց միութենական կեանքը, բայց միշտ կը մնան հաւատարիմ Հ.Ս.Ը.Մ.-ականներ, ինչպէս որ յորդորած ու կտակած էր իրենց հայրը:

1973-ի Յունուար 6-ին յախտենապէս կը բաժնուի այս կեանքէն եւ իր հարազատներէն՝ յետ կարճատեւ հիւանդութեան:

-Հ.Ս.Ը.Մ.-ի գոյութիւնը կախում չունի իր խումբերուն եւ մարզիկներուն տարած յաղթանակէն կամ կրած պարտութենէն:

Պարտութիւններէն կրնան մտահոգուիլ անոնք, որոնց գոյութեան միակ յենարանը եւ նպատակը իրենց խումբերուն յաղթանակներն են:

Հ.Ս.Ը.Մ.-ը սրբացած, բիրեղացած նպատակին ձգտող միութիւն է: Անոր համար պարտութիւններն ու յաղթանակները կարեւորութենէ գուրկ են:

Հ.Ս.Ը.Մ.-ի յաղթանակը Հայ հոգիի, Հայ նկարագրի եւ Հայ բազուկի ազնուացումն ու ուժեղացումն է:

*ԼՈՒՏԵՐ ՄԱՍՊԱՆԱՃԵԱՆ*


## ԱՐԺԱՆԱԻՈՐ Հ.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆՆԵՐ

### ՎԱՐՈՒԺԱՆ ԵՐԷՅԵԱՆ

(1919-1983)

1983 թուի Մարտի 29-ին, Երեքշաբթի կեսօրին, Հալեպի Ազգ. Գերեզմանատան մեջ, հողին յանձնուեցաւ մարմինը եղբ. Վարուժան Երեցեանի:

Նախորդ գիշեր, իր մտերիմ բարեկամ՝ Հ.Մ.Ը.Մ.-ի վարչութեան անդամ եղբ. Յարութին Պարսամեանի կառատունէն ելլելով, (ուր յաճախ կերթար ժամանակ անցընելու՝ այս վերջին տարիներս) դէպի տուն վերադարձին, կուրծքի գլխաւոր շնչերակին խցկումին հետեւանքով (անհրիզմ) կիսամեռ կիյնայ Լատինաց եկեղեցոյ դիմացի մայթին վրան: Պատահաբար, ճիշդ ա՛յդ պահուն, իր մօտէն անցնող եւ իր լաւ բարեկամ արաբ քրիստոնեայ փաստաբան Ապպուտ Ղրիոն, զինք անմիջապէս կը փոխադրէ մօտակայ «Սեւլում հիւանդանոց»ը, ուր, շատ չանցած, կաւանդէ հոգին:



Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ մեջ, Բերիոյ Հայոց Թեմի օրուայ Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սուրէն Ս. Արք. Գաթարոյեան, իր դամբանականին մեջ թուեց ննջեցեալ եղբոր կարգ մը ցայտուն բարեմասնութիւնները, վեր առնելով, ի մասնաւորի, անոր

անսահման նուիրումը՝ Հ.Մ.Ը.Մ.-ին եւ պաշտամունքի հասնող սերը՝ դէպի ֆութպոլը:

Գերեզմանատան մէջ, յանուն Հալէպի մարզական դաշնակցութեան, կարճ դամբանական մը խօսեցաւ արաբ երիտասարդ մը, դրուատելով ողբացեալին մատուցած ծառայութիւնները Սուրիոյ մարզական կեանքի վերելքին ի խնդիր: Ապա, Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, ինչպէս նաեւ Հալէպի մասնաճիւղի վարչութեան անունով, երկու խօսք ալ վիճակուեցաւ տողերս գրողին:

Կը մէջբերեմ քանի մը կարճ պարբերութիւններ.

- Այժմ, այս հողակոյտին տակ, վերջնականապէս իր հանգիստը գտաւ «անհանդարտ» Հ.Մ.Ը.Մ.-ական մը, կենսուրախ, լուստես, 55 տարուան մարզական բեղուն անցեալով, սկաուտ, մարզիկ, մարզիչ, իրաւարար եւ տարիներու վարչական եղբ. Վարուժան Երեցեանը: Տակաւին, քանի մը ժամ առաջ իրեն կը սպասէի գրասենեակս: Պիտի գար եւ իր հետ բերէր իր հիւանդութեան շուրջ բժշկական կարգ մը տեղեկագրեր: Իր խնդրանքն էր, որ իր հիւանդութեան պարագան նիւթ դարձնէի, անպաշտօն կերպով, Հ.Մ.Ը.Մ.-ի Պատգամաւորական Ընդհ. Ժողովին (Աթէնք, Ապրիլ ամսուն սկիզբը), որպէսզի ճար մը մտածուէր զինք ֆրանսա կամ Ամերիկա փոխադրելու՝ գործողութեան համար:

- «Նալպանտեանը քեզի կը ձայնակցի, անպայման: Տրանսայի, Ամերիկայի տղա քն ալ օգտակար կըլլան ինձի», կըսէր այնքան վստահ կերպով...: Ափսո՛ւ, սակայն, որ Ընդհ. Ժողովը չկայացած՝ գնա՛ց: Գնաց՝ իր հետ



տանելով Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի մարզական կեանքին, ի մասնաւորի ֆութպոլի Առաջին խումբին յիսնամեայ պատմութիւնը եւ յիշատակներու այն անսպառ աշխարհը, որուն մասին կը խօսէր ու կը պատմէր չցամբող աղբիւրի մը նման, այնքան ճարտասան լեզուով...:

... Ատենէ մը ի վեր կը նախագգայի, որ այս տղուն օրերը համրուած էին, հետեւաբար՝ ետեւէն ինկած էի, որ իր արխիւները, ինչ որ ունէր քովը (նկար, մետալ, յուշադրօշ, բաժակ եւայլն) նուիրէր Հ.Մ.Ը.Մ.-ի թանգարանին: Կը թախանձէի, նամանաւանդ, որ իր եւ իր հօր հարուստ կեանքին պատմութիւնն ալ գրի առնէր, օր առաջ.

- Չէ՛մ կրնար գրել, կըսէր ուսը թօթուելով:

Օր մըն ալ առաջարկեցի, որ խօսէր եւ ձայներիզի առնել տար իր պատմածները, այսպիսով՝ թէ՛ պատմութիւնը կը փրկուէր եւ թէ՛ իր հիւթեղ լեզուն կ'ապրէր: Համաձայնեցաւ, աւելին՝ խանդավառուեցաւ: Պատրաստեցի իր խօսելիք նիւթերուն ցանկը եւ յանձնեցի իրեն: Քանի մը օր ետք բերաւ քատեթ մը: Ուրախութենէն կը խայտար: Պիտի բերէր, յաջորդաբար, ուրիշներ եւս: Աւա՛ղ, որ անաւարտ մնաց սկսուած գործը:

«... Հէ՛յ Վարուժան, անմրցելի կատակաբան էիր, սակայն մահուան կատակը, այսօր, յաղթեց քեզի: Մոլեռանդ Հ.Մ.Ը.Մ.-ական էիր եւ մնացիր այդպիսին, մի՛շտ պատնէշի վրայ: Մարդիկ, քանիցս, քեզ զրկեցին անոր գուրգուրանքէն, անձնական հաշիւներէ տարուած: Դուն՝ հեռացար պաշտօնէդ, վշտացած, հոգիդ փուլ եկած, սակայն, եկան ուրիշ տղաք, որոնք քեզ կրկին հրաւի-

րեցին աշխատանքի եւ ի պատի՛ւ քեզի, վերադարձա՛ր, հլու-հնազանդ, մանուկի մը նման խանդավառ, որովհետեւ կը հաւատայիր թէ Հ.Մ.Ը.Մ.-ը, վերջին հաշուով, քո՛ւկդ ալ էր, քու միտդ ու ոսկո՛րդ էր դարձեր եւ մարդիկ իրաւունք չունէին այդքա՛ն անարդար ըլլալու քեզի հանդէպ: Այո՛, կը վերադառնայիր պաշտօնիդ եւ շուտով կը վերագտնէիր ինքզինքդ եւ կը մտնէիր իսկական տարերքիդ մէջ, կը դառնայիր նախկին շէնշող, գործունէայ եւ լաւատես Վարուժը...»:

Վերջին սա քանի մը տարիներուն, սրտի պարտք կը զգայի այս տղուն հանդէպ, անպայմանօրէն երկու տող մը գրելու իր կեանքին մասին, որ ձեւով մը մասնակի պատմութիւնը պիտի ըլլար Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի մարգական հարուստ եւ լայնածաւալ գործունէութեան, որուն մասին, շա՛տ-շատեր, տակաւին տեղեակ չեն մինչեւ այսօր: Սակայն, ի՛նչ արած, որ ժամանակիս անբաւարարութիւնը եւ այլ արգելիչ պատճառներ, ուղղակի՛օրէն կը տառապեցնեն զիս գործադրելու որոշումս, ո՛չ միայն իրեն օգտակար դառնալու, այլեւ՝ ուրիշ եղբայրներու եւս, որոնք, կարծէք վարակուած են, մինչեւ այսօր ալ, անտարբերութեան ախտէն, իսկ շատեր՝ գրելու անվարժութենէն: Տնտնալու ժամանակը չէ՛: Հա՛րկ է հաւաքել նիւթեր եւ ճշմարիտ լոյսի տակ խմբագրել Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի բովանդակալից պատմութիւնը, քանի տակաւին, մեր շուրջ կը գտնուին հագուագիւտ լաւատեղեակներ, որոնցմէ մէկն ալ ողբացեալն էր, որ, ահաւասիկ իր հետ տարաւ թանկագին յուշեր, մեզ ձգելով անմխիթար վիճակի մէջ:

Իր մահէն ետք, իր հարազատները, ընդառաջելով ինդրանքներուս, ինծի յանձնեցին նկարներու քանի մը ալպոմներ, յուշադրօշներ, բաժակներ եւ կրծքանշաններ, որոնք պիտի յանձնուին, վաղ թէ ուշ, Հ.Մ.Ը.Մ.-ի թանգարանին, Հալէպ կամ Պէյրութ:

Հիմա, ձեռքիս տակն են անոնք՝ իր անձնական ալպոմները, որոնք, ցաւօք, յուսախաբ ըրին զիս: Նկարները, մեծ մասով, դժբախտաբար, փակցուած են ուղղակիօրէն՝ էջերուն՝ խեժով, մաս մըն ալ դասաւորուած՝ առանց ժամանակագրական կարգի: Շատ քիչ նկարներու ետեւը ձգած է հատուկտոր արձանագրութիւններ՝ նշելով թուականները եւ առիթները, ու... ա՛յսքան: Եւ ըսել, թէ այս տղան, լման կեանք մը ապրած է մարզական աշխարհին մէջ՝ մաս կազմելով, յաջորդաբար, Հ.Մ.Ը.Մ.-ի վարչութեանց, ֆութպոլի, հեծիկի յանձնախումբերու, եւ պետական համապատասխան ֆետերասիոններուն: Մեկնած է յաճախ, Սուրիոյ բոլոր շրջանները՝ մարզական առաքելութեամբ: Ընկերացած է Սուրիոյ խառն խումբերուն՝ դէպի արտասահման, ուր ճանչցած է բազմաթիւ դէմքեր, հայ թէ օտար, եւայլն, եւայլն: Եւ այս բոլորին մասին, այսքա՛ն բեղուն գործունէութեան շուրջ ո՛չ մէկ յստակ տեղեկութիւն, յուշագրութիւն կամ բաւարար չափով նկարներ: Հիմա, տեսակ մը այս «աւերակոյտ»էն պիտի ջանամ վերականգնել՝ յիշողութեամբ կամ կարգ մը գրութիւններու օգնութեամբ, իր կեանքին մէկ աղօտ պատմութիւնը, որ թերեւս համեստ աստղծ մը կազմէ Հ.Մ.Ը.Մ.-ի վաղուան պատմութեան համար:

Վարուժան Երեցեան ծնած է Հալէպ, 1919-ի Յունուարի 6-ին: Իր նախակրթութիւնը ստացած է Հալէպի Ազգ. Հայկազեան Վարժարանը, զոր աւարտած է 1933-ին: 1933-1934-ին յաճախած է Թեր-Սէնթ, ապա 1934-1938 տարիներուն, Միսիոն Լայիք Ֆրանսէզ երկրորդական վարժարանները:

1938-ին կը մտնէ Սուրիոյ Երկաթուղիի Ընկերութիւնը, ուր, նախ արհեստաւոր, ապա շոգեշարժի մէքենավար կը դառնայ: Տարիներ ետք կը նշանակուի վայրաշարժերու կեդրոնական կայանի (Տէփօ) տնօրէն, իսկ իր ծառայութեան վերջին քանի մը տարիներուն կը փոխադրուի Կեդրոնական Գրասենեակ՝ ստուգող-քննիչի պաշտօնով:

1939-ին կը փոխադրուի Ռայաք, անկէ՝ Տերա՛ա, Թրիփոլի, ապա Հալէպ, ուր կը հաստատուի վերջնականապէս:

1956-ին կ'ամուսնանայ, բայց կը մնայ անգաւակ: Ինք՝ միակ արու գաւակն էր հալէպահայ նախկին ազգային գործիչ եւ պարբերական մամուլի աշխատակից՝ սեօլեօզցի (Պրուսա) Գրիգոր Երեցեանին, որ ինքն ալ քառասուն տարի պաշտօնավարած էր, իր տղուն նման, նո՛յն Երկաթուղիի Ընկերութեան մէջ եւ մահացած՝ խոր ծերութեան մէջ, Հալէպ: (Երեցեան ընտանիքին անունը սերտօրէն կապուած է մեծանուն գրող Յ. Օշականի հետ): Աւելցնեմ, որ Վարուժան իր մայրենի լեզուին պէս կը խօսէր ֆրանսերէն, արաբերէն եւ թրքերէն:

Փոքր տարիքէն մտած է Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերը: Եղած է նախ սկաուտ: Մասնակցած է բանակումներու: Սիրած

է ֆութպոլը՝ ի մասնաւորի: Օտար վարժարան յաճախած  
ատեն խաղացած է նաեւ պասքէթպոլ: Ռայաքի մէջ մաս  
կազմած է ֆրանսացի օդանաւորդներու խումբին: Ինչ կը  
վերաբերի Հ.Մ.Ը.Մ.-ին, խաղացած է սկաուտական  
«Պատուոյ Առաջին»էն, ապա փոխանցուած է Հ.Մ.Ը.Մ.-ի  
Ա. խումբ, միշտ բերդապահի պաշտօնով: Այս կազմը  
եղած է, գրեթէ, անպարտելի: Ունեցած է ճկուն մարմին:  
Աչքի զարկած է իր անվախ նետուածքներով, որով՝  
դարձած է աչքառու մարզիկ մը: Տարիներ ետք կընդգրկէ  
մարզումի ասպարէզը: Օրը-օրին կը հետեւի միջազգային  
մարզական կեանքին, անյագօրէն կարդալով օտար  
մարզական թերթեր:

1966 թուի Հոկտեմբերին, Սելանիկի մէջ կը հետեւի  
ֆութպոլի մարզիչներու դասընթացքին՝ ստանալով  
համապատասխան վկայագիր, ընծայուած Հիւսիսային  
Յունաստանի ֆութպոլի մարզիչներու ֆետերասիոնին  
կողմէ: Նմանապէս, 1967-ի Մարտի 23-ին կը վկայուի,  
որպէս ֆութպոլի մարզիչ, այս անգամ Համարաբական  
Մարզական Վերին Մարմնին կողմէ: Նաեւ, 1981-ի  
Հոկտեմբերին, իր գիտելիքները կը բարելաւէ հետեւելով  
Դամասկոսի մէջ կայացած ֆութպոլի մարզիչներու  
վերապատրաստման դասընթացքներուն, իսկ նոյն  
տարուան Դեկտեմբեր ամսուն կը ստանայ մարձողի  
վկայական՝ Իտալիոյ Պերկամօ քաղաքէն:

Ողբացեալը, զօրացած իր գիտելիքներուն մէջ, կը  
սկսի նախ մարզել Հ.Մ.Ը.Մ.-ի երկրորդական խումբերը,  
ապա՝ ֆութպոլի Առաջին կազմը: Այս խաղի թէքնիքին  
մէջ ունէր խոր հմտութիւն: Օժտուած էր տեսնելու եւ  
դատելու բացառիկ կարողութեամբ, ինչ որ մարզիչի մը

համար հազուադիւտ առաւելութիւն է: Իրեն յանձնուած որեւէ խումբ, կարճատեւուման մը մէջ, կը հասցնէր որոշ մակարդակի մը: Իսկ խաղերուն արդիւնքնէ՛րը... ընդհանրապէս յաղթանակներ կըլլային: Գիտէ՛ր, իր իւրայատուկ գուարթախօսութեամբը եւ ճարտասան լեզուովը, գրաւել խաղացողները եւ շահիլ՝ անոնց համակրանքն ու սէրը: Հմուտ ռազմավարի մը նման կը հետեւէր, ուշի-ուշով, խաղի ամէն փուլերուն: Կէտեւեփէր, անդադար կը չափէր դաշտին մէկ կողմէն միւսը եւ անվերջ ուղղութիւններ կու տար վայրկեանի պահանջին համաձայն: Ձախորդութեան պարագային... կը հիւանդանար:

Ժողովական մարդ չէր եւ չէ՛ր ալ կրնար ըլլալ: Իր տեղը խաղավայրն էր, միայն ու միայն: Ի բնէ կը սիրէր վիճիլ, վիճաբանիլ: Հազար առուէ ջուր կը բերէր համոզելու համար դիմացինը՝ իր տեսակետները մատչելի դարձնելու համար: Յաճախ կը պնդէր իր ըսածներուն վրան եւ ահաւասիկ՝ անհասկացողութիւններ եւ սրտնեղութիւններ: Կը վշտանար, կը վշտացնէր, սակայն... այդ պահուն միայն: Քիչ ետք, ամէն ինչ կը վերածուէր գուարթախօսութեան: Այս բոլորով հանդերձ, կը կրէր մանուկի մը հոգին: Շատ դիւրագգաց էր: Երբ սաստիկ նեղուէր՝ կարտասուէր ալ: Կը սիրէ՛ր իր գործը, կը պաշտէր իր միութիւնը, զոր տեսակ մը իր հոգեւոր ծնողքը կը նկատէր եւ այդ իսկ պատճառով ալ իր ամբողջ կարելիութիւնները սպաս դրած էր անոր հօրացման եւ բարձրացման համար: Եւ այսպէս, մինչեւ իր անժամանակ մահը, անսակարկ նուիրումով, ապշեցուցիչ յամառութեամբ, առանց նիւթական դոյզն ակնկալութեան,

քառորդ դարեւ աւելի մարզեց իրեն վստահուած ֆութպոլի յաջորդական բոլոր մակարդակի խումբերը:

Որքան ֆութպոլի, նոյնքան ալ սիրահար էր հեծիկին: Երկա՛ր տարիներ հետեւեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի հեծելանուորդներու մարզումին եւ զանոնք պատուով առաջնորդեց յաղթանակե-յաղթանակ, ո՛չ միայն Հալէպի շրջանին մէջ, այլեւ Սուրիոյ, Լիբանանի եւ Եգիպտոսի շրջավազքերուն, նոյնիսկ Թուրքիա առաջնորդելով սուրիական ազգային խումբը: Իր ձեռնասուններն եղան անուանի հեծելանուորդներ Զօհրայ Տէր Պօղոսեան, Արմէն Քաջեան, Ալպէռ Էքմէքճեան, Սամուէլ Ազարիկեան, Հրաչ Տատոյեան եւ ուրիշներ, որոնք առաջնակարգ տեղ գրաւեցին Սուրիոյ եւ Լիբանանի շրջավազքերուն, պատուաւոր արդիւնքներ արձանագրելով նաեւ Եգիպտոսի շրջավազքին: Շնորհիւ իր հմտութեան, դարձաւ փնտռուած մարդը՝ սուրիական մարզաշխարհին մէջ: Պատուով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.-ը Հալէպի, նաեւ Սուրիոյ ֆութպոլի եւ հեծիկի ֆետերասիոններուն մէջ, այս գիծով ալ մօտիկ ծանօթութիւններ հաստատեց արաբ թէ եւրոպացի մարզական կեանքի անուանի պատասխանատուներուն հետ: Իր համոզկեր լեզուով կը կարգադրէր շատ մը թնճուկ հարցեր: Ունէր բազմաթիւ հետաքրքրաշարժ եւ զուարճալի դրուագներ (գիրք մը լեցնելու չափ) մարզական կեանքէն առնուած, որոնք նիւթը կը կազմէին իր ամէնօրեայ խօսակցութիւններուն եւ դասախօսութիւններուն, զորս կը պատմէր, համով-հոտով, ո՛ր որ ալ գտնուէր:

Կը սիրէր, յաճախ, կատակով ըսել.

«Երբ որ մեռնիմ՝ գնդակ մը եւ հեծիկ մը դրէք գերեզմանիս վրան...»: Իր այս մէկ նախադասութեամբ, արդէն, դրսեւորած կըլլար իր ամբողջ ներաշխարհը՝ շաղախուած մարզական սիրով եւ հայու նախանձախնդիր ոգիով:

Սուրիական երկաթուղագծի պատմութեան նուիրուած ուսումնասիրութեան մը մէջ, իր մասին ձգած եմ հետեւեալ յիշատակութիւնները:

- ... Վայրաշարժի նախկին հայ մեքենավարները, պատերազմի տարիներուն (1942-1945), երբ անգլիական գրաման ոյժեր եւս ձեռք դրին երկաթուղագծին վրայ եւ բոլոր փոխադրամիջոցներն սկսան գործածուիլ զինուորական նպատակներու համար (ինչպէս՝ կենդանիներու փոխադրութիւն՝ Թուրքիայէն դէպի Պաղեստին եւ Լիբանան, ռազմամթերքի փոխադրութիւն՝ դէպի Իրաք, Հնդկաստան եւ Թուրքիա), իրենց խոհեմութեամբ, երբեմն՝ յանդգնութեամբ կրցան ապահով տեղ հասցնել իրենց յանձնուած ճամբորդներն ու ապրանքները, յաճախ հանդիպելով, ճամբու ընթացքին, թշնամի օդանաներու յարձակումներուն: Այդ քաջասիրտ տղոց շարքէն կու տանք անունները Վարուժան Երեցեանի, օթոմոթրիսի վարորդներ՝ Ալեքսան Բիւզանդեանի, Երուանդ Մաթոսեանի, Մանուէլ Քէշիշեանի եւ Հայրապետ Խաչերեանի:

(Գեղարդ, Գ. Հատոր, Հալէպ, Էջ 392)

- Գալով Ընկերութեան մարզական կեանքին, մինչեւ երկրորդ աշխարհամարտը, յիշատակութեան արժանի ոչինչ կը գտնենք:



1943-1944 թուականներուն է, որ օր մը, Երուանդ Յովհաննէսեան (Աշխատանոցի վերակազմներէն) եւ Վարուժան Երէցեան (վայրաշարժի մեքենավար)-երկուքն ալ Հալէպի Հ.Ս.Ը.Մ.-ի ֆութպոլի առաջին խումբի խաղացողներ- կը ներկայանան գլխաւոր Աշխատանոցի ֆրանսացի տնօրէն՝ Մաժիին եւ կ'առաջարկեն Պէրյուրի Տէ-Աշ-Փէ-ին (DHP) նման ֆութպոլի խումբ մըն ալ կազմել Հալէպ: Արդարեւ, այդ օրերուն, Պէրյուրի Տէ-Աշ-Փէ-ն կը համարուէր Լիբանանի լաւագոյն խումբերէն մէկը, որմէ կը խաղային Պէրյուրի Հ.Ս.Ը.Մ.-ի աչքառու խաղացողներէն՝ Շիշէ Մանուկեանը, Կիրակոսը, Ներսէսը, Ժոզէֆ Նալպանտեանը եւ ուրիշներ: Մաժին իր հաւանութիւնը կու տայ տղոց, որմէ ետք անմիջապէս գործի կ'առնուին այդ օրերու Սուրիոյ ախոյեան Հալէպի Հ.Ս.Ը.Մ.-ի անուանի խաղացողներէն՝ Լեւոն Սարգիսեանը (բերդապահ), Համազասպ Արզումանեանը (ձախ թելի յարձակող), Յակոբ Աֆարեանը (աջ թելի յարձակող), Մանուկ Յովհաննէսեանը (յետսապահ): Եթէ ասոնց վրան աւելցնենք Փարամազ Նարզագեանը, Երուանդն ու Վարուժանը, կունենանք, գրեթէ, Հ.Ս.Ը.Մ.-ի Առաջին խումբի լրիւ կազմը: Միայն շապիկի փոփոխութիւն մը եւ Հ.Ս.Ը.Մ.-ը կը դառնայ Հալէպի Տէ-Աշ-Փէ-ն:

Նորակազմ Տէ-Աշ-Փէ-ն արդարացուց տրուած հաւաստիացումները: Արդարեւ, մասնակցելով միջքաղաքային մրցումներուն, անիկա ապահովեց բազմաթիւ յաղթանակներ... եւայլն:

... Նմանապէս, Վարուժան Երէցեան, 1954-էն 1980 թուականը գործեց երկաթուղիի «մարզական կոմիտէ»ի փոխ-ատենապետի պաշտօնով, ինչպէս նաեւ, որպէս

Հալեպի ֆութպոլի ֆետերասիոնի անդամ, ներկայացնելով այնտեղ երկաթուղիի բանուորական խումբը:

Ջանացիք, հապճեպ ակնարկով մը, ուրուագծել յիսուն տարուան մարզական բեղուն կեանքի մը մէկ աղօտ պատկերը, առանց մտնելու թուականներու եւ մրցաշարքերու անվերջանալի աշխարհին մէջ: Վարուժան, այս ամբողջ ժամանակաշրջանին, տուաւ իր լման ունեցածը, որպէս թեքնիք, ժամանակ եւ առողջութիւն, ի շահ՝ Հ.Մ.Ը.Մ.-ի վերելքին եւ անոր հզօրացման: Ան հաւատա՛ց Հ.Մ.Ը.Մ.-ի նուիրական առաքելութեան, որուն համեստ նուիրեալներէն մէկն ըլլալու պատուին արժանացաւ ամբողջ կեանք մը գոհելով, առանց նիւթական դոյզն վաճատութեան, ինչ որ իրաւ Հ.Մ.Ը.Մ.-ականի մը ամենանուիրական արժանիքը կը կազմէ, անկասկածօրէն:

Թող այս քանի մը անպաճոյճ խօսքերը մեր խոր երախտիքին անկեղծ արտայայտութիւնը հանդիսանան յիշատակին առջեւ այն անձնուրաց «խենթ»ին, որ խօսքէն աւելի գո՛րծը նկատեց ազնուագոյն պարտականութիւնը իւրաքանչիւր հայ մարդու՝ Սփիւռքի մէջ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը մարզանքի ճամբով դաստիարակելու եւ առաջնորդելու դէպի մէկ ու միակ նպատակը՝ դէպի հայ ժողովուրդին լինելութիւնը:

Հողը թեթեւ, անկրկնելի՛ Վարուժան...:

Կը փակենք մեր այս գրութիւնը՝ արտատպելով նախկին եգիպտահայ հանրաձանօթ մեծ մարզիչ եւ Հ.Մ.Ը.Մ.-ական ողբացեալ Գրիգոր Նիզիպլեանի մէկ

յօղուածին վերջին պարբերութիւնը, քաղուած՝ «Յուսաբեր»էն:

*«Հոս կարելի է յիշատակել իրողութիւն մը, որ յաճախ կը մոռցուի մարզական թղթակիցներու կողմէ: Մարզիկը, իր ձեռք ձգած արդիւնքներուն համար գովելի է եւ արժանի՝ մեր գուրգուրանքին եւ քաջալերութեան, բայց ինչո՞ւ կը մոռնանք մարզիչը, Հ.Մ.Ը.Մ.-ական մարզիչը, որ կ'աշխատի առանց որեւէ ակնկալութեան եւ դրամական վարձատրութեան, հաւատարիմ՝ իր կոչումին: Ահա այս մոռցուածներէն է Վարուժան Երեցեանը, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի ամենափայլուն օրերու ֆութպոլի խումբին բերդապահը: Այս հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.-ականն է, որ կը զբաղի մեր հեծելանուորդներով եւ իր խղճամիտ աշխատանքին արդիւնքն են Արմէն Քաջեանի եւ Ալպէռ Էքմէքճեանի ձեռք ձգած գովելի արդիւնքները: Վ. Երեցեան այն «ընտրեալ»ներէն է, որոնց՝ ուրախութիւնը եւ տխրութիւնը մեծապէս կ'ախտում ունին Հ.Մ.Ը.Մ.-ի յաջողութիւններէն ու ձախորդութիւններէն: Երջանիկ կըլլան հաւատարիմ Վարուժանները, երբ իրենց աշխատանքը յաջողութեամբ կը պսակուի...»:*

**ՀԱՆՐԱԴՊՈՒՄ՝**  
**Հ.Մ.Ը.Մ.-Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆԱԽԿԻՆ ԱՍՏՂԵՐԷՆ**  
**ԵՂԲ. ԱԲՐԱՀԱՄ ԱԻԸՆԵԱՆԻ ՀԵՏ**

**Ե**ղբ. Աբրահամ Աւրնեան ծնած է Անտիոք, 1930 թուականին: Նախնական ուսումը ստացած է տեղոյն վարժարանին մէջ: 1939-ին ընտանիքին հետ փոխադրուած է Հալէպ, ուր վեց ամիս մնալէ ետք, ֆրանսական իշխանութեան որոշումով Աւրնեան ընտանիքը կը տեղափոխուի Տէր Զօր: Տէր Զօրի մէջ յաճախած է Ս. Հռիփսիմեանց եկեղեցոյ վարժարանը: Նոյն շրջանին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական շարքերուն: Ֆրանսացիներուն Սուրիայէն հեռանալէ ետք՝ եղբայրը իր ընտանիքին հետ կը վերադառնայ Հալէպ, ուր կը նետուի գործի ասպարէզ, միեւնոյն ժամանակ շարունակելով իր միութենական աշխատանքը: Երկար տարիներ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի ֆութպոլի Ա. խումբին, որպէս խաղացող, ապա՝ մարզիչ: Հ.Մ.Ը.Մ.-ի մէջ վարած է վարչական պաշտօններ: Եղած է Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի մասնաճիւղի վարչական, ապա Շրջանային Վարչութեան անդամ: Վարած է նաեւ ազգային զանազան պաշտօններ, ինչպէս Ազգ. Ուսումնասիրաց վարժարանի հոգաբարձու, Ազգ. Գաւառական ժողովի անդամ, Քաղաքական ժողովի անդամ, իննամա-



կալ Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի եւ Հայ Ծերանոցի: Արժանացած է Հ.Մ.Ը.Մ.-ի «Ծառայութեան» շքանշանին:

Ստերմիկ հանդիպումի մը ընթացքին եղբ. Աւրնեանի հետ ունեցանք շահեկան զրոյց մը, գոր կը ներկայացնենք ստորեւ:

***Հ1.- Ինչպէ՞ս եղած է ձեր Հ.Մ.Ը.Մ.-ական առաջին քայլերը:***

Պ1.- 10 տարեկանիս անդամակցած եմ Տէր Զօրի Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական շարքերուն: 1940-ական տարիներուն Տէր Զօրը անշուք գիւղ մըն էր, սակայն ունէր մօտ 400 հայկական տուն: 1940-ին մեր ընտանիքը, ֆրանսացիներու կողմէ երբ Հալէպէն «աքսորուեցաւ» Տէր Զօր, հոն տեսանք, որ Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղ մը կը գործէ արդէն 1937-էն ի վեր: Հիմնադիրներն էին՝ Ճանիկ Առաքելեանը, Ղեւոնդ Նալպանտեանը եւ ուրիշներ: Հ.Մ.Ը.Մ.-ականի առաջին քայլերս սկիզբ առին Տէր Զօրի մասնաճիւղի սկաուտական խումբին մէջ: Այդ օրերուն անդամներու թիւն էր մօտ 75 քոյրեր եւ եղբայրներ, որոնք իրենց հաւաքները կանոնաւոր կերպով կը կատարէին ամէն Կիրակի: Հալէպէն յիսնապէտ Օհան անունով եղբայր մը, որ կը գործէր Տէր Զօրի ֆրանսական զօրանոցին մէջ, միշտ կը հաւաքէր մեզ՝ սկաուտական զանազան գիտելիքներ փոխանցելու, եւ կը սորվեցնէր բուրգերու ձեւեր: Մեր հաւաքները կըլլային իր մօտ, զօրանոցին մէջ, իսկ հանդիսութիւնները տեղի կունենային հին թատերասրահի մը մէջ: Այդ օրերուն ունէինք ֆուրպոլի խումբ մը, որ 1945-ին տիրացաւ Միջ-մասնաճիւղային խաղերու ախոյեանութեան: Այդ խումբին ֆուրպոլիստներէն

յատկապէս կը յիշեմ Սարգիս Նալպանտեանը եւ Լեւոն Երանոսեանը:

***Հ2.- Իսկ ինչպէ՞ս եղած են ֆութպոլի ձեր առաջին օրերը:***

Պ2.- 1945-ին, երբ վերադարձանք Հալէպ, Գուշակճեան եղբայրներու քաջալերանքով եւ անդամակցեցայ Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի մասնաճիւղի սկաուտական շարքերուն: Այդ շրջանին հետեւեցայ ֆութպոլի փորձերու եւ արագօրէն զարգացաւ իմ խաղարկութիւնս: Այդ օրերուն աղքատութիւն էր, դրամ չունէինք նոյնիսկ մեր մարզական կօշիկը գնելու. հետեւաբար ֆութպոլը կը խաղայինք բոպիկ: Այս մէկը մեզ աւելի կը զօրացնէր: Պատասխանատուներս յետսապահի կարողութիւններս նկատելով՝ զիս հրաւիրեցին սկաուտական ֆութպոլի խումբ, որմէ ետք երեք տարի մաս կազմեցի սկաուտական «Պատուոյ Ա.» խումբին: Այդ շրջանին հետեւեցայ սկաուտական ժողովներուն եւ ֆութպոլի փորձերուն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայացուցչական խումբին անդամակցիլս:

***Հ3.- Այդ օրերուն ի՞նչ էր ֆութպոլի խումբին վիճակը:***

Պ3.- Պէտք է ըսել, որ 1940-էն մինչեւ 1950 թուականները Հալէպի Հ.Մ.Ը.Մ.-ի ֆութպոլի պատմութեան լաւագոյն տարիներն էին: Ունէինք 14 երկրորդական խումբեր, որոնց ինն կու գային սկաուտական խումբերէ: Այդ օրերուն սկաուտական իւրաքանչիւր խումբ ուներ իր ֆութպոլի կազմը: Մնացեալ հինգը ֆութպոլի ընթացիկ խումբեր էին ոչ

սկաուտ մարզիկներէ կազմուած: Սկաուտական ֆութպոլի խումբերու լաւագոյն տարրերէն կը կազմուէր սկաուտական «Պատուոյ Առաջին» խումբը, իսկ այս խումբին լաւագոյնները յետագային պատիւը կ'ունենային հրաւիրուելու եւ մաս կազմելու ներկայացուցչական Ա. խումբին: Փաստօրէն, ներկայացուցչական խումբ հասնելու ճամբան բաւական երկար եւ դժուար էր:

**24.- Դուք մաս կազմած էք նաեւ Սուրիոյ հաւաքականին. ի՞նչ կը փոխանցէք այդ օրերու յիշատակներէն:**

Պ4.- Այո՛, 1954-էն 1958 թուականներուն հրաւիրուած եմ մաս կազմելու Սուրիոյ ֆութպոլի հաւաքականին, որուն հետ մասնակցութիւնս բերած եմ միջազգային զանազան մրցաշարքերու, ըլլան անոնք երկրին մէջ եւ կամ Սուրիոյ սահմաններէն դուրս, ինչպէս՝ Իրաք, Եգիպտոս, Սուտան եւ այլ երկիրներ:

**25.- Ինչպէ՞ս կըրցաք ձեր խաղարկութիւնը զարգացնել որպէս ֆութպոլիստ:**

Պ5.- Մեծ աշխատանքով ու զոհողութեամբ: 1945-ին պատասխանատու եղբայրներ ներկայ գտնուեցան սկաուտական խումբի փորձին, եւ ընտրեցին քանի մը խաղացողներ՝ մաս կազմելու «Պատուոյ Ա.» խումբին: Այդ տղոց մէջ կային Երուանդ Տէմիրճեանը, Նշան Սուրասեանը, Գրիգոր Անտոնեանը, Տիգրան Չափանեանը եւ ուրիշներ: Սկաուտական «Պատուոյ Առաջին» խումբի անդամակցութեանս տարիներուն մեր խումբի մարզիչն էր եղբ. Վազգէն Տէր Ղուկասեանը: Երեք տարիներ «Պատուոյ Ա.» Խումբէն խաղալէ ետք, 1948-ին

զիս միացուցին ներկայացուցչական Ա. խումբին, որուն մաս կազմեցի 13 տարիներ շարունակ: 1956-էն ետք նշանակուեցայ խումբի խմբապետ:

**26.- Իսկ որպէս մարզիչ ի՞նչ տուած էք Հ.Մ.Ը.Մ.-ին:**

Պ6.- Որպէս խաղացող դաշտերէն հեռանալէս ետք, 1963-1965 թուականներուն ստանձնեցի ներկայացուցչական խումբին մարզիչի պաշտօնը: 1980-ին կրկին անգամ ստանձնելով խումբի մարզիչութիւնը յաջողեցայ խումբը բարձրացնել Ա. դասակարգ:

**27.- Յատկանշական ի՞նչ դէպք կը յիշէք ձեր մարզական օրերէն:**

Պ7.- Ֆութպոլիստ եղած օրերուս խումբին հետ մասնակցութիւնս բերած եմ Սուրիոյ Միջ-մասնաճիւղային մարզախաղերուն, եւ այլ առիթներով յաջողած ենք տիրանալ մրցաշարքի ախոյեանութեան:

**28.- Այդ Շրջանին ձեր արձանագրած յաջողութիւններուն գաղտնիքը ո՞ր պէտք է փնտռել:**

Պ8.- Շատ պարզ է, որ մեր յաջողութիւններուն գաղտնիքը մեր հնազանդութեան եւ կարգապահութեան մէջն էր: Շաբաթը երեք անգամ կը կատարէինք խիստ փորձեր: Փորձերու ընթացքին շատ կը յոգնէինք, մինչեւ որ մեր շապիկներէն սկսէր քրտինք հոսիլ: Մեր սերունդին համար Հ.Մ.Ը.Մ.-ը անսակարկ գոհողութեան խորհրդանիշ էր: Մենք մեր փորձերը կը կատարէինք առտու կանուխ, գործի չգացած, որպէսզի մեր գործերէն ետ չմնայինք: Անշուշտ, շատ մեծ դեր ունէին մեր նուիրեալ պատասխանատուները, որոնք շուքի մը պէս



կը հետեւէին մեզի, միշտ մեզի հետ կըլլային: Կարելի բոլոր միջոցներով թիկունք կը կանգնէին մեզի եւ համերաշխ մթնոլորտ կը ստեղծէին խումբէն ներս:

***Հ9.- Ի՞նչ եղաւ Հ.Մ.Ը.Մ.-ը եղբ. Աբրահամին համար:***

Պ9.- Հ.Մ.Ը.Մ.-ը ամէն ինչէ առաջ եղաւ դպրոց, որուն անդամակցողը պէտք է շարունակէ սկաուտութեան եւ մարզախաղերու ճամբով ստանալ ազգային բիրեղ ոգին եւ առողջ դաստիարակութիւն: Մարզիկները պէտք է հեռու մնան շահախնդիր մօտեցումէն, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.-ը մեզմէ այդ կը պահանջէ: Այս բոլորը կ'իրագործուին գոհողութեամբ եւ անսակարկ նուիրումով:

-Հ.Մ.Ը.Մ.-ը իր հիմնադրութեան օրէն ի վեր մեր մարզական եւ սկաուտական շարժումները ազգայնացուց, եւ այդ պատճառով հայ ազգը ինքզինք հարազատ կը զգայ այս միութեան:

Տղաք, Հ.Մ.Ը.Մ.-ը երբ հազարներով կը տողանցէ, հայ ժողովուրդը ձեր մէջ կը տեսնէ հայկական բանակը, անկախութիւնը եւ զայն խորհրդանշող Եռագոյնը: Անոնք ձեր մարզական մրցանիշներով եւ յաղթանակներով շատ ալ չեն հետաքրքրուիր, այլ անոնք ձեզ կը տեսնեն ուխտաւորները այն բանակին, որ զինուորն է հայոց պայքարին, որուն նպատակն է հայ մնալ եւ հետապնդել Ազատ, Անկախ Հայաստան ստեղծելու իտեալը:

***ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ***

*ՀԱԼԷՊԻ Հ.Մ.Ը.Մ.-Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
ԼԱԻԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏՆԵՐԷՆ*

*ԵՂԲ. ԳՕԳՕ ՔԻԼԷՃԵԱՆ*

**Ե**ղբ. Գոգո Քիլեճեան, վերթերան եղբայր մը, որ յաջողած է ոսկի տառերով արձանագրել իր անունը Սուրիոյ մարզական պատմութեան մէջ, մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ.-ի Ֆութպոլի կեանքէն ներս: Անոր գնդակի խելացի եւ ուժեղ հարուածները միշտ վտանգած են մրցակից կազմերու դարպասները: Քաջալերուելով իր մեծ եղբօրմէն, փոքր տարիքէն հետեւած է Ֆութպոլի մարզաձեւին: Ան սկսած է խաղալ թաղերու մէջ, ապա մէկ տարիով մաս կազմած է Հ.Մ.Ս.-ի Ֆութպոլի խումբին: 1959-ին, եղբ. Աբրահամ Աւրնեանի քաջալերանքով, մուտք գործած է Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանիքէն ներս եւ մաս կազմած՝ «Համազասպ» խումբին, որմէ ետք անմիջապէս փոխանցուած է առաջին խումբ եւ վայելած՝ Սուրիոյ ախոյեանութեան եւ հանրապետութեան նախագահի բաժակի փառքը: Եղբայր Գոգոյին անուան կը հանդիպինք Հ.Մ.Ը.Մ.-ի 90-ամեակին առթիւ «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրուած քոյրերուն եւ եղբայրներուն անուններուն կողքին, սակայն այքերը վնասուած ըլլալուն պատճառով ան բացակայեցաւ հանդիսութենէն: Սուրիոյ Շրջ. Վարչութեան օրուան ատենապետ եղբ. Ռաֆֆի Տէր Աբրահամեան եւ վարչա-



կան եղբ. Արմեն Քեօշկերեան այցելեցին եղբ. Գօգօ Քիլէճեանին եւ զարդարեցին անոր կուրծքը Հ.Մ.Ը.Մ.-ի «Օտաայութեան» շքանշանով:

1960-ական թուականներուն Հ.Մ.Ը.Մ.-ի ֆուրպոլի Ա. խումբը տիրացած է բազմաթիւ տիտղոսներու եւ բաժակներու, որոնց մասին եղբ. Գօգօ կը պատմէ հետեւեալը.

«Ներքին զանազան բաժակներու կողքին, 1962-ի հանրապետական բաժակի աւարտական մրցումին, 3/2 արդիւնքով պարտութեան մատնելով Դամասկոսի Ահլի խումբը, արժանացանք առաջնութեան բաժակին, եւ ես այդ մրցումին նշանակեցի կոլ մը: Ինչպէս նաեւ 1965 թուականին տիրացանք Սուրիոյ ախոյեանութեան»:

Անդրադառնալով յարձակողական գիծի իր խաղընկերներուն մասին, ան հետեւեալ գնահատումը կը կատարէ.

«Դաշտին մէջ երբ եղբ. Անդրանիկ Մալեանին հետ ըլլայի, մրցակից կազմը միշտ մտահոգ վիճակի մէջ կը գտնուէր, կացութիւնը նոյնն էր նաեւ եղբ. Սերոբ Մերտխանեանի պարագային, որ այդ շրջանին Սուրիոյ լաւագոյն ձախ թելի խաղացողը կը համարուէր, երբ միասին ըլլայինք, ինքզինքս ապահով կը զգայի, որովհետեւ գիտէի թէ ան հակառակորդը վտանգող յաջող գնդակներ պիտի ուղարկէ ինծի»:

Սուրիոյ բոլոր բերդապահները սարսափ ապրած են երբ եղբ. Քիլէճեան գնդակը ստանձնելով յայտնուած է իրենց դարպասին մօտ:

Ան հպարտութեամբ կը յիշէ Սուրիոյ հաւաքականին հետ ապրած իր օրերը:

«Հպարտ եմ, որ որոշ շրջան մը կրած եմ Սուրիոյ հաւաքականի տարազը եւ մաս կազմած՝ Իրաքի, Լիբանանի, Պուլկարիոյ, Իտալիոյ, Եգիպտոսի եւ Հայաստանի դէմ կայացած մրցումներուն: Գլխաւոր դէպքը գոր չեմ կրնար մոռնալ, Թուրքիոյ հաւաքականին դէմ, Պոլսոյ մէջ, կատարած մեր մրցումն էր: Նախքան հանդիպումը, զոյգ երկիրներու քայլերգներու ժամանակ, սրտիս տրոփը անսովոր էր եւ քրտինքս կը հոսէր գետի մը նման: Հանդիպումին ես պատիւ ունեցայ նշանակելու կողմը, եւ այն պահուն երբ որպէս ուրախութեան արտայայտութիւն, ծունկի գալով ուզեցի գետինը համբուրել, անմիջապէս անդրադարձայ, որ այդ հողը թրքական է, ուստի ընդոստ ոտքի կանգնեցայ ու խաչակնքելով շարունակեցի ուրախ եւ յաղթական վազքս»:

Եղբ. Գօգօ Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայ Ֆութպոլիստներուն կը պատգամէ հետեւեալը.

«Յարգը գիտցէք ձեր կուրծքերուն վրայ կրած Հ.Մ.Ը.Մ.-ի նշանակին, միշտ գուրգուրանքով պահեցէք զայն ձեր տաքուկ սիրտերուն մէջ, որովհետեւ միութեան անունը ամէն բանէ վեր է»:

Հուսկ, եղբ. Գօգօ, յուզումով կ'արտայայտէ իր սրտին վերջին խօսքը:

«Շատ կը փափաքէի ներկայ գտնուիլ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 90-ամեակի յոբելենական հանդիսութեան, բայց աչքերս չարտօնեցին ինծի վայելելու այդ վայրկեանները: Սակայն՝ ուրախութիւնս անսահման

եղաւ, երբ Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբիոյ Շրջ. Վարչութեան ատենապետ եղբ. Ռաֆֆի Տէր Աբրահամեանն ու վարչական եղբ. Արմէն Քէօշկէրեան այցելեցին եւ զարդարեցին կուրծքս Հ.Մ.Ը.Մ.-ի «Ծառայութեան» շքանշանով: Այս առթիւ, ջերմապէս շնորհակալութիւն կը յայտնեմ Հ.Մ.Ը.Մ.-ի պետական վարչութեան անդամներուն, որոնք միշտ մօտէն հետաքրքրուած են ինձմով: Նաեւ ի սրտէ յաջողութիւն կը մաղթեմ Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքի աշխարհատարած մասնաճիւղերուն»:

-Հ.Մ.Ը.Մ. միայն իր զինուորեալներու էութեան մէջ չէ, այլ՝ մեր ապրող ժողովուրդի յաիտենապէս երիտասարդ չափահաս եւ պէտր սերունդներուն մէջն է, զինք ծնող ու ապրեցնող ոգիով, հաւատքով, անսահման նուիրումի պատրաստակամութեամբ: Համազգային տրոփումով հանրային մեր կեանքը ակօսող, բոլոր կազմակերպութիւնները միջոց եւ օժանդակ կը դառնան ապրեցնելու մեր անհատական արժէքները, դարձնելով զանոնք ընդհանրական ճիգ ու վաստակ: Հ.Մ.Ը.Մ., բազմաճիւղ ու բազմագոյն այդ միութիւններուն մէջ հանդիսացաւ թերեւս գաղափարական այն միակ հաստատութիւնը, որուն արմատները ամէնէն աւելի խոր թաղուեցան ու տարածուեցան հայ հոգիին մէջ:

*ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷԼԵԱՆ*

## ԵՂԲ. ՄԵՐՈՐ ՄԵՐՏԽԱՆԵԱՆ

Եղբ. Մերոբ ծնած է 1946-ին: Փոքր տարիքէն անդամակցած է ՀՍԸՄ-ի շարքերուն, որպէս գայլիկ: Ֆութպոլի կէանքը սկսած է սկաուտական «Արամազդ» խումբին մէջ, որմէ ետք փոխանցուած է «Համագասպ» խումբ:



1965-ին առաջին անգամ ըլլալով ան իր մասնակցութիւնը բերած է ՀՍԸՄ-ի ներկայացուցչական կազմին, ուր որպէս խաղցող ծառայած է տասը տարի եւ որոշ շրջան մը ստանձնած խմբապետի պաշտօն:

1972-1973 թուականներուն հրաւիրուած է Սուրիոյ հաւաքական, իսկ զինուորական ծառայութեան շրջանին մաս կազմած է սուրիական բանակի ֆութպոլի խումբին: Ութը տարի մաս կազմած է Հալէպի ֆութպոլի հաւաքականին:


2003-ին Սուրիոյ Շրջանային Վարչութեան տնօրինումով, եղբ. Մերոբ արժանացած է «Ծառայութեան» շքանշանին:

## ՀՐԱԶ ՉԱԼԵԱՆՆ ԱԼ ԳՆԱՅ...

- Լսեցի՞ր, Հրաչ Չալեանն ալ գնաց...

Խօսողը՝ Հ.Մ.Ը.Մ.-ական երեց եղբայր մըն էր, կեցաւ ճամբուս վրայ՝ ցաւ կար ձայնին մէջ, խռովք դէմքին վրայ: Բայց՝

Սէւ, տխուր բօթը լսեցի կամ ոչ՝ նոյնն է: Լաց մը աւելի կամ լաց մը պակաս՝ նոյնն է. բան մը չի փոխուիր, մահը իր ճամբով պիտի երթայ... ու մի՛ հարցնէք, թէ Հրաչը ինչպէ՞ս գնաց, ո՞ր գնաց, կամ՝ ինչո՞ւ գնաց: Այլ պիտի երթար ու գնաց: Բայց,



Հայու դագաղ մըն ալ անցաւ օտար ավերէն՝ հեռո՛ւ իր ծննդավայր հայաշունչ Հալէպէն, հեռո՛ւ, հեռո՛ւ իր միութենական ընկերներէն ու այն միջավայրէն, որ միայն հայ ու հայութիւն կը բուրէր: Հայու դագաղ մըն ալ անցաւ՝ առանց սկառուտական շեփոքի, առանց բարեւին այն տղոց, որոնց հետ տասնեակ տարիներու կեանք ունեցաւ, որոնց հետ միայն սիրտ ու սէր եղաւ:

Հալէպ քաղաք, դուն որ հայ ազգային կեանքին օրրանը եղար, դուն որ տուն տեղ տուիր, դուն որ սիրտ ու ջերմութիւն տուիր հալածուած, ջարդուած հայ մարդուն, ինչո՞ւ այսպէս եղար: Ինչո՞ւ քու ծոցիդ մէջ հասակ առած, ազգային ոգի առած տղաքը եղան այսպէս՝ բաժան-բաժան, ցիրուցան, մոռցուած, օտարութեան մէջ՝ օտար դարձած:

Այն տղաքը՝ փունջ մը վարդ ու գարդ, հոյլ մը յոյս ու լոյս այն տղաքը, որոնց երկար շարքին մէջ գտնուեցաւ նաեւ Հրաչ Չալեան, շատ բան տուին իրենց ազգին, հայութեան:

Այս տղաքը եղան յոյսի ծիածան, յաղթանակի խոյանք, հպարտութեան դրօշ ու տարիներով՝ Հ.Մ.Ը.Մ.-ի փառքը կերտեցին: Այս տղաքը, համակ սիրտ ու սէր այս տղաքը, Հ.Մ.Ը.Մ.-ի ակումբը իրենց համար ըրին տուն ու խորհրդատուն: Հ.Մ.Ը.Մ.-ի խաղերը իրենց համար եղան դաս ու դասարան: Հ.Մ.Ը.Մ.-ի նպատակը իրենց համար եղաւ հաւատամք, տեսլական ու այս տղաքը տարիներով վազեցին այդ նպատակին ետեւէն ու տարիներով իրենց կարելին տուին այդ տեսլականին յաջողութեան համար:

Այս տղաքը, համեստ, երբեմն անանուն այս տղաքը ա՛լ կը պակսին. ալ կը փնտռենք այս տղաքը, անոնց ոգին, անոնց մաքուր սիրտը՝ անոնց զոհողութեան գիտակցութիւնը, որ կազմուեցաւ Հալէպի ընկերային տաք միջավայրին մէջ՝ Նշաններու, Լուտերներու, Գապաքեաններու շունչին տակ: Ու ամէն անգամ, որ Հրաչ մը կը կը պակսի, նոր ցաւ մը կաւելնայ արդէն վիրաւոր մեր սրտին վրայ: Օտարութեան մէջ հայօրէն ապրելու, յարատեւելու մեր յոյսն է՝ յոյսին աղբիւրներն են, որոնք կը նուազին, կը պակսին:

Հրաչն ալ գնաց: Հաւատանք կամ ոչ՝ համակ եռանդ, շարժում, բողոք եղող այդ տղան ալ գնաց՝ լուռ, անակնկալօրէն, Նիւ Եորքի աղմկոտ ճամբաներուն վրայ:

Հրաչ Չալեանը ծնած էր Հալէպ, 1930-ին: Ան նախա-կրթարանի ուսումը Ազգային Հայկազեան վարժարանէն



առնել է ետք կանցնէր Ալեքո Գուլէճ: Ան փոքր տարիքէն կը մտնէր Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերէն ներս: Նախ կըլլար գայլիկ, սկաուտ եւ յետոյ՝ գայլիկներու Պալու: Ու տակաւին՝ կը խաղար թենիս, փինկ-փոնկ եւ Նուպար Գոնտրաճեանի հետ, 4 անգամ կը շահէին Հալէպի զոյգի ախոյեանութիւնը: Նոյն ատեն կը հետեւէր ֆութպոլի եւ կարճ ատեն մը կը խաղար Հ.Մ.Ը.Մ.-ի Ա. խումբէն: Բայց բազում ձիրք ունեցող այս տղուն միութենական գործունէութեան գլխաւոր դաշտը պիտի հանդիսանար պասքէթպոլի ասպարէզը: Ան մօտ 10 տարի մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.-ի պասքէթպոլի Ա. խումբին: Լաւ խաղացող մըն էր՝ յոգնութիւն, յուսահատութիւն չգիտցող: Յետոյ, երկար ժամանակի համար եղաւ նոյն խումբին մարզիչը, իսկ մէկ տարի ալ մարզեց Հ.Մ.Ը.Մ.-ի պասքէթպոլի աղջկանց կազմը: Ինչպէս նաեւ Հրաչը մօտ 10 տարի եղաւ Հ.Մ.Ը.Մ.-ի պասքէթպոլի յանձնախումբի անդամ եւ այն քիչերէն էր, որոնք արժանացած էին պասքէթպոլի իրաւարարութեան պետական վկայականին:

Հրաչ Չալեան, որպէս մարզիկ թէ որպէս պատասխանատու, եղաւ իր պարտականութեան գիտակից մարդ: Ան սիրեց Հ.Մ.Ը.Մ.-ը, զոհողութեան առջեւ տատամտում չունեցաւ, իր կարելին չխնայեց ու շատ բան տուաւ սերունդ պատրաստելու աշխատանքին:

1967-ին կանցնէր Նիւ Եորք: Հոն ալ՝ հետեւեցաւ Համազգայինի աշխատանքներուն եւ շրջան մը վարեց այդ միութեան վարչութեան ատենապետութիւնը: Վերջապէս բազում ձիրք ունեցող եւ համակ եռանդ եղող այս տղան աչքերը փակեց 27 Նոյեմբեր 1992-ին, ետին ձգելով

իր կինը, երկու մանչ զաւակները եւ բեղուն գործունէութիւն:

Հրաչ, ներողամիտ կըլլաս, եթէ չկրցայ լաւապէս ներկայացնել պատկերը միութենական կեանքիդ: Բայց վստահ եմ, եթէ օր մը գրուի Հ.Մ.Շ.Մ.-ի Հալէպի պատմութիւնը, դուն կ'ունենաս քու արդար տեղդ այդ պատմութեան մէջ:

Ու հիմա՝ այս տխուր պահուն, երբ օրէնք դարձած հրաժեշտի վերջին խօսքը պէտք է յայտնեմ, ես, թէեւ սիրտս տխուր, բայց հպարտօրէն կըսեմ.- Հրաչ, յարգանք նուիրումիդ, հանգիստ ոսկորներուդ ու թող այս քանի մը խօսքը ըլլայ ծաղկեփունջ՝ դրուած դեռ թարմ հողակոյտիդ վրայ:

-Եթէ մարմնամարզը կը ծառայէ միայն մարմնի առողջացումին, առանց նոյն ճիգը սպառելու հոգիի առողջացումին վրայ, այդ՝ առողջ ու հոգեզուրկ մարմինները ոչ թէ բարիք, այլ ճշմարիտ չարիք մը կը դառնան որեւէ ժողովուրդի համար:

Իսկ հոգին ողջ կը մնայ մարմիններուն մէջ, եթէ կա՛յ ու կը մնայ, եթէ բոլորին մէջ կ'ապրի՝ ու կը ստեղծագործէ այն «անտեսանելի»ն, մեր գոյութեան ու յարատեւումի այն հզօր կռուանը, ցեղային այն անյաղթ Ոգին, որ կու գայ հեռաւոր հազարամեակներու խորերէն:

*ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ*

Հալեպի Հ.Ս.Շ.Ս.-ը կորուստ մը ունեցաւ յանձինս հեծելանուորդ եղբ. Գեորգ Իսպէնճեանի: Ծնած է Հալեպ 1928-ին, Ուրֆացի ծնողքէ, նախնական ուսումը ստացած է տեղւոյն Յիսուսեան (Վարդանանց) վարժարանը եւ տիրապետած՝ ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներուն: Արհեստով մեքենավար, իսկ բնաւորութեամբ շատ համեստ, ընկերային: Միշտ կը պատմէր իր անցեալի քաջագործութեանց մասին, բոլոր շրջանակներէ սիրուած եւ յարգուած էր, 18 տարեկանին սկսած է իր նախասիրած ասպարէզին՝ հեծիկի մարզաձեւին Տարօնի Արծիւ ակումբին մէջ, ապա անցած է Հ.Ս.Շ.Ս.-ի շարքերը, իբրեւ մարզիկ եւ մարզիչ: Մինչեւ վերջին շունչը անբասիր ծառայած է իր միութեան, միշտ բարձր պահելով անոր դրօշն ու շապիկը: 1951-1954 Հալեպի ախոյեան հանդիսացած է: 1955-ին Եգիպտոսի միջազգային մրցումին, որուն մաս կազմած են 17 երկիրներ, միակ սուրիացին ըլլալով կրկին ախոյեան եղած է: Իսկ 1963-1964, 2 տարի Քուէյթ մնացած շրջանին քանիցս յաղթանակներ տարած է՝ ստանալով բաժակներ Քուէյթի ամիրայապետին ձեռամբ: 1959 թուին, Սուրիա-Եգիպտոս Միացեալ Հանրապետութեան շրջանին, Դամասկոսի մէջ կրկին բաժակակիր կը հանդիսանայ 15 մրցակիցներու մէջ: 1951-ին, Պէյրութի-Թրիփոլիի-Պաալպէքի եւ Տուր Շուվէրի մեծ մրցումները ընդգրկող Լիբանանի առաջին շրջավազքին, կրկին կը տիրանայ յաղթանակի եւ առաջնութեան: Ստացած է բազմաթիւ բաժակներ, շքանշաններ եւ հեծիկներ, առ ի գնահատանք իր

յաջողութիւններուն եւ յաղթանակներուն: Արաբական աշխարհի Հ.Մ.Ը.Մ.-ական այս լաւագոյն հեծելանուորդը իր շրջանին ունէր նաեւ միջազգային համբաւի տիրացած իր լաւագոյն մարզիկ ասպարեզակիցները, որոնք բոլորն ալ նոյն միութեան շապիկը հագած են, օրինակ՝ Արմէն Քաջեանը, Զոհրապ Տ. Պօղոսեանը, Ալպէր Էքմէքճեանը, Շամլեանը, Սամօ Ազարիկեանը, Վարուժան Երեցեանը եւ ուրիշներ: Անոնք կերտած են փառաւոր յաղթանակներ, տասնեակ տարիներ միութեան եւ երկրին դրօշը բարձր պահելով: Շատեր արդէն մահացած են, ուրիշներ հեռացած, բայց անցեալի փառաւոր պատմութիւնը կը յիշէ զանոնք: Երանի, բիւր երանի այդ հերոսներուն, որոնք եկան ու անցան:

Իսպէնճեան 1965 թուի Օգոստոսին ամուսնացած է օրդ. Ծաղիկ Հորմուսեանին հետ, Ս.Ք.Մանկանց եկեղեցւոյ մէջ, պսակի օրը, մուտքին՝ իր մարզիկ ընկերները հեծիկի անիւներով կամարներ սարքած են, եւ երկու զոյգերն ու հարսնէւորները այդ կամարներու տակէն անցած են ուրախ մթնոլորտի մէջ: Բախտաւորուած են 3 մանչ զաւակներով, անոնցմէ Յակոբն ու Սարգիսը հետեւած են իրենց հօր ասպարեզին եւ նուաճած են շատ մը յաղթանակներ, բաժակներ եւ շքանշաններ՝ կրտսեր խումբերու մէջ, զորս մարզած է եղբ. Ռաֆֆի Նազարեանը երկար տարիներ շարունակ, Հ.Մ.Ը.Մ.-ի հովանիին տակ:

Սիրելի՛ եղբ. Գեորգ, Հիմա որ դուն անդենականին կը պատկանիս, երկնքի մէջ քու պարզ եւ անմեղ հոգիդ կը սաւառնի միշտ քու շատ սիրած ծննդավայրիդ եւ միութեանդ վերեւ, ուր ծառայեցիր յարատեւ եւ


անշահախնդիր, մօտ կէս դար հազարաւոր քիլոմէթր ճամբաներ կտրեցիր անվախ եւ քաջաբար՝ ջախջախիչ յաղթանակներ տանելով շատ դժուարին եւ նեղ օրերու մէջ, եւ միշտ ճակատաբաց դուրս գալով: Քու զաւակներդ ալ հետեւեցան քու ուղիիդ, նաեւ մարզեցիր մատղաշ նոր սերունդը, սորվեցուցիր թէ այս երկու անիւները ինչպիսի՞ հրաշքներ կրնան գործել: Ման եկար աշխարհի չորս ծագերը եւ միջազգային գետնի վրայ բազմաթիւ մարդոց ծանօթացար, յարզեցիր եւ յարգուեցար: Իսկ հիմա որ ֆիզիքսպէս առյաւէտ բաժնուած ես մեզմէ, վստահ եղիր՝ որ հոգեպէս միշտ մեզի հետ ես, ընդունէ այս խօսքերը խունկի եւ աղօթքի փոխարէն: Հողը վրադ թեթեւ ըլլայ, յիշատակդ մշտավատ մնայ...:

...Շատ մը ուրիշ միութիւններէ աւելի նուիրական է Հ.Մ.Ը.Մ.-ի կոչումը եւ կարելոր՝ անոր կատարելիք դերը: Անիկա նորահաս հայ սերունդին կազմակերպութիւնն է: Միակը իր տեսակին մէջ, որ կը ձգտի վաղուան հայը պատրաստել այսօրուան հայկականներէն: Որ կաշիատի անոնց ջամբել հայրենասիրականի միացած ֆիզիքսական, բարոյական եւ հոգեկան առողջ դաստիարակութիւն մը: Եւ որ կը հանդիսանայ անոնց ուղեցոյցը դպրոցէն դուրս, կէանքի մէջ, ուր այնքան առատ են խայծերն ու փորձութիւնները եւ այնքա՛ն այլասերող, այնպէ՛ս սպաննիչ:

*ԿԱՐՕ ԳԷՈՐԳԵԱՆ*

## ԼԵՒՈՆ ԷՍՍԷՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Ք**առասուն օրեր առաջ սեւ եւ ցուրտ հողին յանձնեցինք մեր հարազատ երէց Հ.Մ.Ը.Մ.-ական՝ Եղբ. Լեւոն Էսմերեանի մարմինը: Ան պատանի տարիքին անդամակցած էր Հ.Մ.Ը.Մ.-ի շարքերուն ու ինքզինք նուիրած այս սրբութիւն սրբոց միութեան:



Ան եղաւ սկաուտ, մարզիկ, ֆութպոլիստ, ապա՝ Հ.Մ.Ը.Մ.-ի վարչական եւ վարչութեան ատենապետ: Եղբ Լեւոն կարժեւորէր իր ստանձնած պաշտօնն ու հանգամանքը: Անմնացորդ նուիրումով, պարկեշտութեամբ եւ անաչառօրէն գործեց միութեան վերելքին համար, նաեւ սերտ յարաբերութիւններ ու բարեկամութիւններ մշակած էր պետական բարձրաստիճան անձնատրութիւններու հետ, ինչ որ մեծապէս կը նպաստէր միութեան վերաբերող պետական բազում խնդիրներու հանգուցալուծման:

Հանգուցեալը ծնած է 1938-ին, Ռաս Ուլ Այն, ուր յաճախած է տեղոյն Ազգային Վարժարանը, ապա փոխադրուած Հալէպ՝ շարունակելու իր ուսումը Ամերիկեան Գոլէթին մէջ: Ամուսնացած է եւ ունի երեք զաւակ, որոնք կը ծառայեն մեր պանծալի միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.-ին, իրենց հօր օրինակով:

Իր կարճատեւ հիւանդութիւնը զինք շուտով հաս-  
ցուց իր սիրելի կողակիցին, գոր կորսնցուցած էր միայն  
տասը օրեր առաջ:

Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան եւ  
բոլոր անդամներուն անունով մեր խորազգաց ցաւակ-  
ցութիւնները կը յայտնենք Էսմէրեան ընտանիքին եւ  
անոր հարազատներուն:

Յիշատակդ բարի եւ յաւերժական՝ սիրելի եղբայր  
Լեւոն:

-Հ.Մ.Ը.Մ.-ական դաստիարակութեան նպատակն է անհա-  
տին մէջ յառաջ բերել ձգտում մը դէպի կատարելութիւն, որ  
անոր խառնուածքին եւ ուժերուն թափած ջանքերուն  
ուժգնութեան ու յարատեւութեան չափով իրեն մատչելի  
ըլլայ:

Այս դաստիարակութեամբ սնած, կատարելութեան որոշ  
աստիճանի հասած անհատին է որ Հ.Մ.Ը.Մ. կը հրամայէ,  
իւր կարգին, նմաններուն ուսուցանել իր սորվածը, իր  
ստացածէն բան մը տալ ուրիշին:

Բարձրանալ ու բարձրացնել կամ տարբեր բացատ-  
րութեամբ ստանալ ու տալ, ահա՛ ամենապարզ ձեւի տակ  
արտայայտութիւնը Հ.Մ.Ը.Մ.-ական ոգիին:

*Ս. ՏԱՄԼԱՄԱՅԵԱՆ*

## ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

### ԵՂԲ. ՄԱՆՈՒԿ ԳԱԶԷԼԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

**Ո**րքան ալ որ Սուրիոյ դաժան պայմանները հաշտեցուցած էին մեզ մահուան գաղափարին հետ եւ դարձուցած նուազ զգացական, սակայն մեր սիրելի Հ.Ս.Ը.Մ.-ական եղբօր եւ երդուեալ ընկերոջ՝ հանգուցեալ Մանուկ Գազելեանի անվերադարձ մեկնումը այս աշխարհէն, նոր ու խոր կսկիծ մը յառաջացուց մեր հոգիներէն ներս, սուգի մատնելով Հ.Ս.Ը.Մ.-ական եղբայրներն ու հաւատաւոր ընկերները:



Ըլլալով գաւակը Հայկական Յեղասպանութեան արհաւիրքը ապրած ծնողքի մը, փոքր տարիքէն իր մէջ սերմանուած էր ազգին, ու հայրենիքին նկատմամբ անհուն սէր, եւ մանաւանդ՝ ոսոխին դէմ պայքարելու վճռակամութիւն, իր ուխտին հանդէպ անվերապահ պաշտամունք եւ զոհողութեան վսեմ հոգի:

Ծնած էր 1943-ին, յաճախած էր Հալէպի Ազգ. Զաւարեան վարժարանը, որուն զուգընթաց 1952-ին անդամագրուած էր Հ.Ս.Ը.Մ.-ի շարքերուն որպէս գայիկ, ապա փոխանցուած սկաուտական շարքեր: Հոս է որ իր մէջ կերպարուած է եւ կեանք առած ընկերասիրութեան



եւ ազգասիրութեան ազնիւ զգացումները, նշանակուած է սկաուտական խումբի խմբապետ, միաժամանակ մարզական գետնի վրայ եղած է յաջող ֆութպոլիստ մը, երբեմնի «Պատուոյ Առաջին» նշանաւոր խումբին մէջ, ապա շուրջ մէկ տասնամեակ խաղացած է Հ.Մ.Ը.Մ.-ի ֆութպոլի ներկայացուցչական առաջին կազմէն:

Սկաուտական ճիւղէն ներս յառաջխաղացք արձանագրելով, ստանձնած է Նոր Գիւղի սկաուտական կազմի խմբապետի պաշտօնը, ապա դարձած է Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբիոյ Շրջանային Խորհուրդի անդամ, ինչպէս նաեւ Շրջանային Վարչութեան մէջ իրեն վստահուած է վարչութեան հաշուապահի պաշտօն:

Հ.Մ.Ը.Մ.-ի կողքին երկու շրջան ծառայած է «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան որպէս խնամակալ, եւ տակաւին «Տիգրանեան» ընտանեկան պարտէզին ստեղծման եւ կազմակերպման առաջին օրէն իսկ մաս կազմած է հիմնադիր խումբին:

Սակաւախօս, խօսքէն աւելի գործին հաւատացող միութենական մըն էր, ընկերային, հնարամիտ, ճարպիկ եւ յատկապէս մարտունակ ոգի ունեցող եղբայր ու ընկեր Մանուկը խոր ազդեցութիւն ձգած էր իր խումբի սկաուտ եղբայրներուն վրայ, եւ պատահական չէր, որ իր ստանձնած Զի խումբին եղբայրները ունենային մարտունակ եւ պայքարունակ նկարագիր, այս մէկը արդէն բաւարար է ըմբռնելու եւ հասկնալու եղբայր Մանուկին հոգին ու բնատրուծինը:

Հայրենիքին կարօտով, իր ազգին ու Հ.Մ.Ը.Մ.-ին աւելի քան վաթսուն տարի անսակարկ նուիրումով

ծառայելուն որպես գնահատանք, Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչությունը, միութեան հիմնադրութեան 85-ամեակին առիթով, 2003-ին զինք պարգևատրած է «Ծառայութեան» շքանշանով:

Ողբացեալ եղբ. Մանուկ, գաւակներդ, Հ.Մ.Ը.Մ.-ական եղբայրներդ, գաղափարի ընկերներդ քաջ կը ճանչնան արժանիքներդ, եւ առ ի երախտագիտութիւն ընդմիջտ պիտի ապրեցնեն իրենց մէջ քու անմեռ յիշատակդ. պիտի ընթանան անձիդ օրինակով, ինչ որ պիտի դառնայ քու մեծագոյն վարձատրութիւնդ եւ մեր բոլորին մխիթարութիւնը: Հայրենիքի հողը թեթեւ է ու ջերմ, ննջէ հանգիստ սիրելի եղբայր, քու այնքան սիրած հայրենիքիդ գրկին մէջ:

-Հ.Մ.Ը.Մ. եզակի է իր ծնունդով, նոյն դրօշին տակ միացուցած ըլլալով թէ՛ սկառուտական եւ թէ՛ մարզական շարժումներ, ազգային-գաղափարական առաջնորդող ուղիով:

Հ.Մ.Ը.Մ. եզակի է իր տարողութեամբ: Այսօր աշխարհի վրայ չկայ միութիւն մը, որ 5 ցամաքամասերու 89 քաղաքներու մէջ գործէ նոյն ոգիով եւ գաղափարական ներշնչումով՝ կեդրոնական մէկ մարմինի հովանիին տակ:

Հ.Մ.Ը.Մ. եզակի է իր առաքելութեամբ: Ան մարզական կամ սկառուտական սովորական միութիւն մը չէ, այլ մարդակերտումի եւ հայակերտումի նուիրուած գաղափարական շարժում մըն է:

*ԲԻԻԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆ*

Եղբ. Գօգօն երեց սերունդի հաւատաւոր անդամներէն եղած է, աշխատած է անձայն եւ առանց տաղտուկի: Ան համեստ էր նկարագրով եւ պարկեշտ՝ իր աշխատանքով: Ո՞վ չէր ճանչնար եղբայր Պգտիկեանը, որպէս հիմնադիր Հ.Մ.Ը.Մ.-ի շեփորախումբին, նախ որպէս նուագող, ապա ուսուցիչ ու դէկավար, որ մինչեւ վերջին վայրկեան պատնէշի վրայ էր: Իր երկարամեայ ծառայութեան համար Հ.Մ.Ը.Մ.-ի Սուրբոյ Շրջ. Վարչութիւնը զինք պարգեւատրեց «Ծառայութեան» շքանշանով:



Եղբ. Գօգօ Պգտիկեան Հ.Մ.Ը.Մ.-ի մէջ իր անձնուէր ծառայութեան կողքին, եղաւ հաւատաւոր, պարկեշտ եւ անկեղծ, իսկական գաղափարի ընկեր:

Եղբ. Գօգօն ծնած է 1933-ին, ունի երկու մանչ եւ մէկ դուստր, որոնք ցայսօր կը շարունակեն ծառայել իրենց հօր որդեգրած ուղիին:

Եղբ. Գօգօ, յիշատակդ միշտ վառ պիտի մնայ բոլորիս սրտին մէջ, հողը թեթեւ գայ վրադ, խունկ եւ մոմ քու անբիծ եւ անմոռանալի յիշատակիդ:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Յառաջաբան-----	3
Անմահները-----	6
Անդրանիկ Աթթարեան-----	14
Կարպիս Պարիկեան-----	26
Մովսէս Էլէճեան-----	45
Յարութիւն Տէրվիշեան-----	61
Սարգիս Ճապաղջուրեան-----	69
Օհան Մանուկեան-----	86
Մանուէլ Մարքէեան-----	96
Գրիգոր Մովսէսեան-----	101
Վարդգէս Զօպեան-----	105
Պարոյր Գայապալեան-----	108
Արամ Տէր Ղուկասեան-----	111
Յուշեր, Յիշատակներ Հալէպէն-----	117
Ռաֆֆի Տէր Յակոբեան-----	122
Միհրան Կարապետեան-----	124
Գեորգ Խաչատուրեան-----	126
Երջանիկ Կարպուշեան-----	128
Րաֆֆի Պչաքճեան-----	130
Մկրտիչ Գրիգորեան-----	132
Կարպիս Գալայճեան-----	133
Յովհաննէս Խաչատուրեան-----	136
Յովհաննէս Արապաճեան-----	141

Ալեքսան Իսկէնտէրեան -----	144
Միսաք Տէկիբմէնճեան -----	148
Խորէն Նազարեան -----	151
Առաքել Թերզեան -----	153
Յարութիւն Պարսամեան -----	157
Պարգեւ Պօշկէզէնեան -----	162
Բժիշկ Տիգրան Չափանեան -----	164
Յարութիւն Արուշեան -----	167
Վազգէն Տէր Ղուկասեան -----	169
Արսէն Տէր Ղուկասեան -----	184
Գէորգ Շահինեան -----	186
Համազասպ Արզումանեան -----	189
Մանուկ Յովհաննէսեան -----	194
Սուրիոյ Տութպոլի Գերաստղը Արտաւազդ -----	199
Վռամշապուհ Ոսկանեան -----	204
Վարուժան Երէցեան -----	206
Աբրահամ Աւրնեան -----	219
Գօգօ Քիլէճեան -----	225
Սերոբ Մերտիսանեան -----	229
Հրաչ Չալեան -----	230
Գէորգ Իսպէնճեան -----	234
Լեւոն Էսմէրեան -----	237
Մանուկ Գազէլեան -----	239
Գօգօ Պզտիկեան -----	242